ISSN 2738-2761

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

2025

Հոդվածների ժողովածու

2

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

2

ՎԱՆԱՁՈՐ
2025

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ФОНД «ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА»

МАГИСТР

2

ВАНАДЗОР
2025

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

“VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TUMANYAN” FOUNDATION

MASTER STUDENT

2

VANADZOR
2025

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Վարդուհի Հովսեփյան, կ. գ. թ. , դոցենտ (գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, խմբագրական խորհրդի նախագահ),
Մարտուն Թովմասյան, ֆ.-մ. գ. թ., դոցենտ, (պատասխանատու քարտուղար),

Գևորգյան Պ. Հ., մ. գ. դ., պրոֆեսոր, **Վարդանյան Զ. Ս.**, կ. գ. դ., պրոֆեսոր, **Օհանյան Հ. Հ.**, տեխ. գ. թ., դոցենտ, **Ղազարյան Ա. Հ.**, ք. գ. թ., դոցենտ, **Բաբուռյան Հ. Ռ.**, բ. գ.թ., դոցենտ, **Մամիկոնյան Հ. Ա.**, ֆ.- մ. գ. թ., դոցենտ, **Մազմանյան Մ. Մ.**, հ. գ. թ., դոցենտ, **Ղուլյան Յ. Վ.**, պ. գ. թ., դոցենտ, **Ալոյան Ժ. Լ.**, բ. գ. թ., դոցենտ, **Գյուլզատյան Դ. Վ.**, բ. գ. թ., դոցենտ, **Բարսեղյան Ն. Ս.**, տնտ. գ. թ., դոցենտ, **Հարությունյան Ռ. Հ.**, ա. գ. թ., դոցենտ, **Նազարյան Վ. Ռ.**, մ. գ. թ., դոցենտ, **Բարսեղյան Ա. Ա.**, մ. գ. թ., դոցենտ, **Դանիելյան Ա. Կ.**, բ. գ. թ., **Մատինյան Հ. Ա.**, պ. գ. թ.

ՄԱԳԻՍՏՐՈՍ-2 // ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ /: Խմբագրակազմ – Վանաձոր, 2025. – 236 էջ:

Ժողովածուն ամփոփում է «ՎՊՀ» հիմնադրամի 2024-2025 ուստարվա մագիստրատուրայի ուսանողների ավարտական որակավորման աշխատանքների թեմաներով գրված գիտական այն հոդվածները, որոնք երբևէ չեն հրատարակվել: Հոդվածները խմբագրակազմի կողմից գրախոսվել, խմբագրվել և երաշխավորվել են տպագրության:

ISSN 2738-2761

© Հեղինակային խումբ, 2025
© «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ, 2025

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Вардуи Овсепян, кандидат биологических наук, доцент (проректор по научной части, председатель редакционного совета),
Мартун Товмасян, кандидат физико-математических наук, доцент, (ответственный секретарь)

П. О. Геворкян, доктор пед. наук, профессор., **З. С. Варданян**, доктор биол. наук., профессор., **Г. Г. Оганян**, канд. техн. наук, доцент, **А. Г. Казарян**, канд. хим. наук, доцент, **Э. Р. Бабурян**, канд. филол. наук, доцент, **А. А. Мамиконян**, канд. физико-математич. наук, доцент, **М. М. Мазманян**, канд. психол. наук, доцент, **Ю. В. Гулян**, канд. историч. наук, доцент, **Ж. Л. Алоян**, канд. филол. наук, доцент, **Д. В. Гюлзатян**, канд. филол. наук, доцент, **Н. С. Барсегян**, канд. экономич. наук, доцент, **Р. Г. Арутюнян**, канд. географ. наук, доцент, **В. Р. Назарян**, канд. пед. наук, доцент, **А. А. Барсегян**, канд. пед. наук, доцент, **А. К. Даниелян**, канд. филол. наук, **Г. А. Матинян** канд. историч. наук

МАГИСТР-2 // Министерство образования, науки, культуры и спорта РА, Фонд «Ванадзорский государственный университет имени О. Туманяна» /. Редколлегия – Ванадзор, 2025. –236 с.

В сборник включены неизданные статьи студентов магистратуры Фонда «ВГУ» 2024-2025 уч. года по темам их окончательных работ по специальности. Статьи рецензированы, отредактированы и рекомендованы для печати по решению редколлегии.

ISSN 2738-2761

© Авторская группа, 2025
© Фонд «Ванадзорский государственный университет имени О. Туманяна», 2025

EDITORIAL BOARD

Varduhi Hovsepyan, Candidate of Biological Sciences, Associate Professor (Vice-Rector for Scientific Affairs, Head of the Editorial Board),
Martun Tovmasyan, Candidate of Physical and Mathematical Sciences, Associate Professor (Executive Secretary)

P. H. Gevorgyan, Doctor of Pedagogical Sciences, Professor, **Z. S. Vardanyan**, Doctor of Biological Sciences, Professor, **H. H. Ohanyan**, Candidate of Technical Sciences, Associate Professor, **A. H. Ghazaryan**, Candidate of Chemical Sciences, Associate Professor, **H. R. Baburyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **H. A. Mamikonyan**, Candidate of Physical and Mathematical Sciences, Associate Professor, **M. M. Mazmanyan**, Candidate of Psychological Sciences, Associate Professor, **Yu. V. Ghulyan**, Candidate of Historical Sciences, Associate Professor, **Zh. L. Aloyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **D. V. Gyulzatyan**, Candidate of Philological Sciences, Associate Professor, **N. S. Barseghyan**, Candidate of Economic Sciences, Associate Professor, **R. H. Harutyunyan**, Candidate of Geographical Sciences, Associate Professor, **V. R. Nazaryan**, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, **A. A. Barseghyan**, Candidate of Pedagogical Sciences, Associate Professor, **A. K. Danielyan**, Candidate of Philological Sciences, **H. A. Matinyan**, Candidate of Historical Sciences

MASTER STUDENT-2 // RA Ministry of Education, Science, Culture and Sport, “Vanadzor State University after H. Tumanyan” Foundation /. Editorial Board – Vanadzor, 2025. – 236 p.

The collection summarizes the scientific articles of “VSU” Foundation master’s students of the 2024-2025 academic year on the topics of their thesis, which have not been published before. The articles were reviewed, edited and recommended for publication by the decision of the editorial board.

ISSN 2738-2761

© Authors’ group, 2025
© “Vanadzor State University after H. Tumanyan” Foundation, 2025

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ПРОГРАММНАЯ ИНЖЕНЕРИЯ

SOFTWARE ENGINEERING

Մեքենայական ուսուցման մեթոդների միջոցով գրական ստեղծագործություններն ըստ ժանրերի դասակարգող համակարգի նախագծում

Վարդանյան Հայարփի
Բնական գիտությունների ֆակուլտետ,
«Ծրագրային ճարտարագիտություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
տեխ. գ. թ., դոցենտ Հ. Օհանյան

Հանգուցային բառեր. *էլեկտրոնային գրքեր, թվային գրադարաններ, բնական լեզուներով տեքստերի մշակման ծառայություններ, դասակարգում*

Ներածություն

20-րդ դարի վերջից տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը հանգեցրեց նոր կրիչների ստեղծմանը, ինչի արդյունքում փոխվեցին նաև գրքերի ընթերցման ավանդական ձևերը: Ֆիզիկական (թղթային) գրքերին զուգահեռ սկսեցին զարգանալ նաև այլ ձևաչափեր, այդ թվում՝ աուդիոգրքերն ու էլեկտրոնային գրքերը:

Վերջին տարիներին էլեկտրոնային գրքերի պահանջարկի աճը պայմանավորված է մի շարք գործոններով: Մասնավորապես՝ գաջեթների (սմարթֆոններ, պլանշետներ, e-reader-ներ) և բազմալեզու էլեկտրոնային գրքերի տարածումը բարձրացրել է գրքերն էլեկտրոնային տարբերակով ընթերցելու համաշխարհային պահանջարկը: Թվային կրթական պլատֆորմների (Moodle, Zoom, MS Teams և այլն) նախագծումը և զարգացումը, ուսուցման որակը և արդյունավետությունը բարելավելու համար խորացված ուսուցման մոդելների ներդրումը, ինչպես նաև էլեկտրոնային գրքերի բաժանորդագրության ծառայությունների (znanium.ru, litres.ru և այլն) աճը նույնպես նպաստել են էլեկտրոնային գրքերի շուկայի ընդլայնմանը: Վերջիններս ապահովում են հեշտ հասանելիություն մեծածավալ թվային գրադարանների՝ մշտապես թարմացվող բովանդակությամբ և մատչելի գներով, այդպիսով խթանելով ընթերցողների հետաքրքրությունը և շուկայի զարգացումը:

Համաձայն վերջին վիճակագրական տվյալների՝ էլեկտրոնային գրքերի շուկայի ծավալը 2024 թվականին կազմել է 17.20 միլիարդ ԱՄՆ դոլար, և ակնկալվում է, որ մինչև 2029 թ. այն կհասնի 21.73 միլիարդ

ԱՄՆ դոլլարի՝ արձանագրելով միջինում 4.78 % տարեկան աճ 2024-2029 թթ. ժամանակահատվածում: Ուստի, աճի նման միտումների պայմաններում կարելի է ենթադրել ինչպես թվային գրադարաններից օգտվող օգտատերերի թվի աճ, այնպես էլ տարբեր հեղինակների նոր գրական ստեղծագործությունների աճ՝ էլեկտրոնային տարբերակով [2]:

Համակարգի նախագծման արդիականություն

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը կազմակերպություններին հնարավորություն է տալիս կիրառել ինչպես արհեստական բանականության (AI) պատրաստի լուծումներ, այնպես էլ զարգացնել նեյրոնային ցանցերի վրա հիմնված սեփական լուծումները՝ սպասարկման, վերլուծության և կառավարման խնդիրների լուծման նպատակով: Վերջին տարիներին նկատելիորեն աճել է նաև տարբեր ոլորտներում նեյրոնային ցանցերի կիրառումը, ինչը հնարավորություն է տվել բարձրացնել տվյալների մշակման և որոշումների ընդունման գործընթացների արդյունավետությունը: Նման զարգացումները վերափոխում են նաև էլեկտրոնային գրքերի տարածման, թվային գրադարանների կառավարման գործընթացները:

Մշտապես թարմացվող թվային գրադարաններն ընդգրկում են ինչպես ակադեմիական և գիտական հոդվածներ, այնպես էլ էլեկտրոնային գրքեր, որոնց թվում կարևոր տեղ են զբաղեցնում նաև գրական ստեղծագործությունները: Գրքերի և հոդվածների քանակի մշտական աճի պայմաններում հաճախ դժվար է միայն վերնագրի կամ նկարագրության հիման վրա որոշել ստեղծագործության ժանրը: Արդյունքում մեծ քանակի տեքստերի, այդ թվում նաև գրական ստեղծագործությունների բովանդակության վերլուծությունն ու դասակարգումը դառնում է անհրաժեշտություն, հետևաբար դրանց ժանրային դասակարգման համար նախատեսված համակարգերը կարող են էականորեն պարզեցնել թվային գրադարանների կատալոգներում էլեկտրոնային գրքերի դասակարգման գործընթացը:

Նպատակ

Աշխատանքի նպատակն է մեքենայական ուսուցման մեթոդների կիրառմամբ գրական ստեղծագործություններն ըստ ժանրերի դասակարգող համակարգի նախագծումը:

Որպես հետազոտության օբյեկտ դիտարկվում են էլեկտրոնային ձևաչափով ներկայացված գրական ստեղծագործությունները, իսկ ուսումնասիրության առարկան բնական լեզվով տեքստերի մշակման և

մեքենայական ուսուցման մեթոդների վրա հիմնված գրական ստեղծագործությունների ժանրային դասակարգման գործընթացն է:

Խնդիրներ: Բնական լեզվով տեքստերի մշակումն առ այսօր հիմնականում կենտրոնացած է անգլերենի, իսպաներենի, ֆրանսերենի և լայն տարածում ունեցող այլ լեզուների վրա: Հետևաբար սահմանափակ ռեսուրսներ, այսինքն՝ ոչ լայն տարածում ունեցող լեզուներով գրական ստեղծագործությունների ժանրային դասակարգման խնդիրը մնում է ոչ բավարար մակարդակով հետազոտված: Ուստի կարելի է առանձնացնել նպատակից բխող հետևյալ խնդիրները.

1. առարկայական ոլորտի ուսումնասիրություն,
2. նմանատիպ հարթակների ուսումնասիրություն,
3. համակարգի պահանջների հստակեցում,
4. պլանավորվող համակարգի նախագծում:

Առարկայական ոլորտի վերլուծություն

Գրական ստեղծագործությունների ժանրային դասակարգման արդյունավետ տեղեկատվական համակարգ մշակելու համար կարևոր է ուսումնասիրել առկա տեխնոլոգիական լուծումներն ու գործիքները, որոնք հնարավորություն են տալիս իրականացնել բնական լեզվով տեքստերի վերլուծություն: Շուկայում առկա են բնական լեզուներով տեքստերի մշակման ծառայություններ, որոնք հաճախ ինտեգրված են խոշոր տեխնոլոգիական ընկերությունների էկոհամակարգերում: Այս ոլորտում կիրառվող առաջատար ծառայություններից են Amazon Comprehend-ը, IBM Watson Natural Language Understanding-ը, Google Natural Language AI-ը և այլն:

1. *Amazon Comprehend* (Amazon ընկերություն). բնական լեզուներով տեքստերի մշակման ծառայություն (NLP) է, որն օգտագործում է մեքենայական ուսուցման մեթոդներ տեքստում բովանդակային տեղեկատվության որոնման համար:

Առավելություններ. Ծառայության առանձնահատուկ առավելություններից է տոքսիկության (տեքստային փաստաթղթերում վիրավորական բովանդակության) հայտնաբերումը և տրամադրությունների երանգի վերլուծությունը (դրական, բացասական, չեզոք կամ խառը): Այն ճանաչում է ավելի քան 100 լեզու՝ ապահովելով լեզվաբանական լայն աջակցություն, ինչպես նաև կատարում է շարահյուսական վերլուծություն (Part of Speech), որը կարևոր է խոսքի մասերի ճշգրիտ հայտնաբերման համար [4]:

Թերություններ. Այնուամենայնիվ, չնայած իր բազմաթիվ առավելություններին, Amazon Comprehend-ն ունի նաև որոշ սահմանափակումներ: Մասնավորապես, այն չի աջակցում հայերեն և ռուսերեն լեզուների տեքստային վերլուծությանը: Հարկ է նշել նաև, որ որոշ հնարավորություններ հասանելի են միայն վճարովի բաժանորդագրությամբ, ինչը կարող է սահմանափակել օգտատերերի հասանելիությունը տարբեր ֆունկցիոնալություններին:

2. *IBM Watson Natural Language Understanding-ը* (IBM). բնական լեզուներով տեքստերի մշակման ծառայություն է, որն օգտագործում է խորը ուսուցում՝ հստակ կառուցվածք չունեցող տեքստային տվյալներից իմաստի և մետատվյալների դուրսբերման համար: Ծառայությունը հասանելի է ինչպես ամպային տարբերակով, այնպես էլ տեղային՝ սեփական սերվերներում տեղակայման հնարավորությամբ:

Առավելություններ. Ծառայության առավելություններից է անվճար դեմո տարբերակի տրամադրումը, որը թույլ է տալիս օգտատերերին անմիջապես կայքում փորձարկել ծառայության հնարավորությունները՝ առանց որևէ պարտավորության կամ գրանցման:

Թերություններ. Ծառայությունն ունի սահմանափակ ֆունկցիոնալ որոշ լեզուների (օրինակ ռուսերենի) հետ աշխատելու համար, իսկ հայերենն ընդհանրապես չի աջակցվում [6]:

3. *Natural Language AI-ը* (Google ընկերություն) բնական լեզուներով տեքստերի մշակման և վերլուծության ծառայություն է: Այն նախատեսված է տարբեր ոլորտների մասնագետների համար, քանի որ տրամադրում է նաև գործիքներ տվյալների ավտոմատ վերլուծության համար: Ծառայության հիմնական բաղադրիչներից է պատրաստի շաբլոններ (ձևանմուշներ) տրամադրող Natural Language API-ն, որոնց միջոցով հնարավոր է կիրառել բնական լեզվի ըմբռնումը մի շարք վերլուծական գործառույթների համար:

Առավելություններ. Natural Language API-ն թույլ է տալիս իրականացնել սուբյեկտների ճանաչում, բովանդակության դասակարգում, շարահյուսական վերլուծություն և այլն: Այս հնարավորությունները հասանելի են ոչ միայն անգլերեն, այլ նաև մի շարք այլ լեզուներով, ինչի շնորհիվ գործիքն ավելի լայն կիրառություն է գտնում բազմալեզու միջավայրերում:

Թերություններ. Ծառայությունն ունի որոշ սահմանափակումներ: Մասնավորապես, Natural Language API-ն կարող է ճիշտ ճանաչել տվյալը

որպես գրականություն կամ էլեկտրոնային գիրք, սակայն ծառայության կողմից առաջարկվող բովանդակության դասակարգման տարբերակները (գրքերի դասակարգումը ըստ ժանրերի կամ ուղղությունների) սահմանափակ են [1; 3]:

Աղյուսակ 1-ում ներկայացված է թվարկված ծառայությունների համեմատական վերլուծության արդյունքը, որտեղ ֆունկցիաների ընտրությունը կատարվել է՝ հիմնվելով ծառայությունների հաճախ կիրառվող հնարավորությունների և պաշտոնական փաստաթղթերի վրա:

Աղյուսակ 1

NLP ծառայությունների ֆունկցիոնալ հնարավորությունների համեմատական վերլուծություն

Ֆունկցիաներ	***Amazon Comprehend***	***IBM Watson Natural Language Understanding***	***Natural Language AI***
Տեքստային փաստաթղթերի դասակարգում	+	+	+
Էությունների առանձնացում	+	+	+
Ռուսաց լեզվի աջակցություն	-	+/-	+
Հայոց լեզվի աջակցություն	-	-	-
Դեմո տարբերակի առկայություն	-	+	+
Բանալի արտահայտությունների առանձնացում	+	+	+
Տրամադրությունների երանգի վերլուծություն	+	+	+
Շարահյուսական վերլուծություն	-	+	+
Լրացուցիչ հնարավորությունների քանակ (այլ ֆունկցիաներ)	2	5	6

Հաշվի առնելով աղյուսակ 1-ում ուսումնասիրված ծառայությունների ֆունկցիոնալ հնարավորությունները՝ կարելի է եզրակացնել, որ նշված ծառայություններից լավագույնն է Google-ի Natural Language AI-ը: Այն նույնիսկ կարող է ճանաչել գրքի ժանրը, սակայն գրքի ճանաչելի ժանրերի թիվը բավականին քիչ է և թույլ չի տալիս այն օգտագործել էլեկտրոնային գրքերի շուկայում:

Բացի այդ՝ քննարկվող թեմայի շուրջ առկա աշխատանքների մեծ մասը նվիրված է անգլերեն լեզվով էլեկտրոնային գրքերի դասակարգ-

մանը: Այդպիսի աշխատանքներում դիտարկվում է գրքերի ժանրային դասակարգումը գրքերի շապիկների պատկերների, նկարագրությունների հիման վրա՝ առանց ստեղծագործությունների տեքստերի, անոտացիաների օգտագործման և առանց հեղինակների ու վերնագրերի նշման [5; 7; 8]:

Հիմք ընդունելով կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները՝ անհրաժեշտ է մշակել համակարգ, որը հնարավորություն կտա գրական ստեղծագործությունները դասակարգել ըստ ժանրերի: Այդպիսի համակարգը հնարավորություն կտա արագ և արդյունավետ մշակել մեծածավալ գրականություն՝ խնայելով ժամանակ և ռեսուրսներ:

Հարկ է նշել, որ շատ գրքեր բազմաժանր են, ինչը դժվարացնում է դրանց հստակ դասակարգումը: Ճշգրիտ արդյունքների ստացմանը կարող է խոչընդոտել նաև որոշ լեզուների համար որակյալ կամ բավարար քանակի ռեսուրսների (գրական տեքստերի հավաքածուներ ժանրային պիտակներով) պակասը:

Գրական ստեղծագործություններն ըստ ժանրերի դասակարգող համակարգը կարող է կիրառվել տարբեր ոլորտներում.

1. առցանց գրախանութներում՝ գրական ստեղծագործությունը բեռնելուց հետո ընթերցողներին ստեղծագործության ժանրի տրամադրման համար,
2. թվային գրադարաններում՝ մեծ ծավալով թվայնացված գրականություն ունեցող հաստատություններում, գրքերը թեմատիկ բաժինների դասակարգելու համար,
3. թարգմանության ոլորտում՝ թարգմանիչներին գրքի ժանրը նախապես իմանալու հնարավորության տրամադրման համար, որպեսզի թարգմանության համար կարողանան ընտրել համապատասխան ոճ և տերմինաբանություն,
4. որոնման համակարգերում՝ հատկապես մեծ տեքստային բազաներում բովանդակության հայտնաբերման գործընթացն արագացնելու համար,
5. հոդվածների դասակարգման ոլորտում՝ ակադեմիական կամ հրապարակային հոդվածներն ըստ ոլորտի թեմատիկ կերպով դասակարգելու համար, նվազեցնելով անհամապատասխանությունների քանակը, որոնք հաճախ առաջանում են ձեռքով կատարվող աշխատանքների արդյունքում,
6. արխիվների թվայնացման և կառավարման ոլորտում՝ հին և նոր

գրական նյութերը ժանրային բաժանմամբ պահպանելու, պիտակավորելու և որոնելի դարձնելու համար,

7. պլագիատների (ինքնատիպության) ոլորտում՝ ժանրային դասակարգումը կարող է հանդիսանալ արժեքավոր գործիք պլագիատների հայտնաբերման գործընթացում՝ որպես նախնական դասակարգիչ, որն օգնում է ավելի մանրամասն վերլուծություն իրականացնել և այլն:

Գրական ստեղծագործություններն ըստ ժանրերի դասակարգող համակարգը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին:

Ֆունկցիոնալ պահանջներ

1. Նախապես ուսուցանված մոդելի հիման վրա ստեղծագործությունների ժանրային դասակարգում:

2. Գրական ստեղծագործության ժանրի ճանաչում (օգտատերը բեռնում է գիրքը (գրքերը), այնուհետև համակարգը վերլուծում է տեքստը և որոշում գրքի (գրքերի) ժանրը): Իրականացվում է ստացված արդյունքի ցուցադրում:

Ոչ ֆունկցիոնալ պահանջներ

1. Համակարգը պետք է մշակի pdf ֆորմատի ֆայլեր:

2. Համակարգը պետք է աշխատի մինչև 5 մեգաբայթ ֆայլերի հետ, քանի որ ավելի մեծ չափի ֆայլերի մշակումը կարող է դանդաղեցնել համակարգի աշխատանքը:

Գրական ստեղծագործություններն ըստ ժանրերի դասակարգող համակարգի մոդել

Վերը նշված հնարավորությունները և ֆունկցիոնալությունները ներկայացնենք համակարգի IDEF0 դիագրամի միջոցով (նկար1):

Նկար 1-ում ներկայացված է նկարագրված գործընթացի ընդհանուր կառուցվածքը:

Տրամագիրը ցուցադրում է ամբողջական գործընթացը, որը միավորում է մուտքային տվյալների հավաքագրումը, դրանց բազմաշերտ վերլուծությունը և արդյունքների ձևավորումը:

Նկար 2-ի տրամագիրն արտացոլում է համակարգի ներկայացման ամբողջական կառուցվածքը:

Նկար 3-ում մանրամասն ներկայացված է տեքստի նախապատրաստման գործընթացը:

Նկար 4-ում ներկայացված է ուսուցման համար տվյալների պատրաստման գործընթացը:


A0
Գրադարան
ստեղծագործությունների
տեսակների
մասին տվյալներ
Գրադարանի
տվյալների բազան
Գրադարանի
ստեղծագործությունների
տեսակների
մասին տվյալներ



Նկար 2. Տրամագիր (A1)



Նկար 3. Տրամագիր (A1.1) տեքստի նախապատրաստման գործընթաց



Նկար 4. Տրամագիր (A1.2) տվյալների պատրաստման գործընթաց

Այսպիսով՝ գրական ստեղծագործություններն ըստ ժանրերի դասակարգող համակարգը հիմնականում նախատեսված է օգտատերերին իրենց գրքերն ու փաստաթղթերը բեռնելուց հետո ժանրը տեսնելու հնարավորության տրամադրման համար: Բեռնված ֆայլերը նախապես ենթարկվում են նախնական մշակման: Մշակման արդյունքում ստացված տվյալների հիման վրա այնուհետև կատարվում է ուսուցում՝ դրանք նախապես ուսուցման և թեստավորման խմբերի բաժանելուց հետո: Այդ մոդելը հետագայում կիրառվում է դասակարգման գործընթացում:

Եզրակացություն

Վերլուծելով բնական լեզուներով տեքստերի մշակման առկա ծառայությունները և դրանց հնարավորությունները գրական ստեղծագործությունների ժանրային դասակարգման տեսանկյունից՝ կարելի է եզրակացնել, որ թվային տեխնոլոգիաների զարգացման պայմաններում մեծածավալ տեքստային բովանդակության առկայությունը պահանջում է դրանց մշակման համար արդյունավետ լուծումներ:

Ուստի սույն աշխատանքում ներկայացվում է մեքենայական ուսուցման մեթոդների հիման վրա գրական ստեղծագործությունների ժանրային դասակարգման գործընթացի ավտոմատացման համար նախատեսված համակարգի նախագծման գործընթացը:

Գրականություն

1. Natural Language API. [Электронный ресурс]
   URL: https://cloud.google.com/natural-language
2. https://www.mordorintelligence.com/ru/ industry-reports/e-book-market
3. Natural Language API. [Электронный ресурс]
   URL: https://cloud.google.com/natural-language/docs/languages
4. Amazon Comprehend. [Электронный ресурс]
   URL: https://aws.ama zon.com/ru/comprehend/features/
5. Chiang H., Ge Y., Wu C. Classification of Book Genres by Cover and Title
   URL: http://cs229.stanford.edu/proj2015/127_report.pdf
6. IBM Watson Natural Language Understanding.
   URL: https://www.ibm.com/products/natural-language-understanding
7. Kundu C., Zheng L. Deep multi-modal networks for book genre classification based on its cover
   URL: https://arxiv.org/abs/2011.07658v1
8. Mikolov T., Chen K., Corrado G., Dean J. Efficient Estimation of Word Representations in Vector Space.
   URL: https://arxiv.org/abs/1301.3781

Проектирование системы жанровой классификации литературных произведений с использованием методов машинного обучения

Варданян Айарпи
Факультет естественных наук,
«Программная инженерия»,
Руководитель магистерской диссертации:
кандидат технических наук, доцент Э. Оганян

Резюме

Ключевые слова: *электронные книги, цифровые библиотеки, сервисы обработки текстов на естественном языке, классификация*

Анализируя существующие сервисы обработки текстов на естественных языках и их возможности с точки зрения жанровой классификации литературных произведений, можно сделать вывод, что в условиях развития цифровых технологий наличие большого объема текстового контента требует эффективных решений для его обработки. Таким образом, в настоящей работе представлен процесс проектирования системы, предназначенной для автоматизации жанровой классификации литературных произведений на основе методов машинного обучения.

Design of a Genre Classification System for Literary Works Using Machine Learning Methods

Vardanyan Hayarpi
Faculty of Natural Sciences,
"Software Engineering",
Academic Supervisor: H. Ohanyan
PhD in Technical Sciences, Associate Professor

Summary

Key words: *e-books, digital libraries, natural language text processing services, classification*

By analyzing existing natural language text processing services and their capabilities from the perspective of literary works genre classification, it can be concluded that in the context of the development of digital technologies, the presence of large-scale textual content requires effective solutions for its processing. Therefore, this work presents the design process of a system intended for automating the genre classification of literary works based on machine learning methods.

ՔԻՄԻԱ

ХИМИЯ

CHEMISTRY

Քիմիա առարկայի դասավանդման պրոցեսում գունավոր ռեակցիաների ուսումնասիրությունը և կիրառումը ավագ դպրոցի բնագիտական հոսքում

Կոծինյան Տաթևիկ
Բնական գիտությունների ֆակուլտետ,
«Քիմիա»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
ք. գ. թ. Ն. Ավանեսովա

Հանգուցային բառեր. *գունավոր ռեակցիաներ, ինդիկատորներ, ֆենոլներ, քրոմոֆոր, պիգմենտներ, ջրածնային ցուցիչ*

Նախաբան

Դասավանդման փորձը ցույց է տալիս, որ ավագ դպրոցում որևէ առարկայից խորացված ուսուցման ժամանակ անհրաժեշտ է լինում սովորողներին ներկայացնել լրացուցիչ նյութեր՝ անհրաժեշտության դեպքում այն զուգակցելով միջառարկայական կապերով: Վերջինս թույլ է տալիս էապես բարձրացնել ուսուցման արդյունավետությունը և այն դարձնել առավել հետաքրքիր:

Քիմիայի ուսուցման գործընթացում լաբորատոր փորձերը կարևոր տեղ են զբաղեցնում: Դրանք հնարավորություն են տալիս աշակերտին դիտել, ուսումնասիրել, ճանաչել, հիշել, կիրառել, բացահայտել և, վերջապես, ստանալ արդյունք: Երբեմն լաբորատոր փորձերն այնքան են հետաքրքրում աշակերտին, որ նա սկսում է ինքնուրույն պրպտել և գտնել նոր տեղեկություններ նյութի կամ երևույթի մասին: Այս տեսակետից հետաքրքիր է իրականացնել և ուսումնասիրել մի շարք գունային փոփոխությամբ ընթացող որակական ռեակցիաները: Որակական ռեակցիաները հնարավորություն են տալիս որոշակի մոլեկուլների, իոնների, ֆունկցիոնալ խմբերի հայտնաբերումը հետազոտվող նմուշում: Այս ռեակցիաներն ուղեկցվում են արտաքին ազդակներով: Դրանք են՝ գույնի փոփոխությունը, բոցի գունավորումը, նստվածքի առաջացումը, ջերմության անջատումը կամ կլանումը: Գույնի փոփոխությամբ ընթացող ռեակցիաներն այլ կերպ անվանում են գունավոր ռեակցիաներ: Կիրառելով գունավոր ռեակցիաներ՝ կարելի է հայտնաբերել և ուսումնասիրել մի շարք անօրգանական և օրգանական նյութերի հատկությունները [14]:

Գունավոր երևույթներ տեղի են ունենում նաև ինդիկատորներ կիրառելիս: Դժվար է պատկերացնել քիմիական լաբորատորիա, որտեղ չեն օգ-

տագործվում հայտանյութեր՝ ինդիկատորներ: Հայտանյութեր են կոչվում այն քիմիական նյութերը, որոնք հնարավորություն են տալիս որոշելու քիմիական ռեակցիայի ավարտը կամ ջրածնի իոնների կոնցենտրացիան լուծույթում: Հայտանյութերը լինում են թթվահիմնային, օքսիդավերականգնման, կոմպլեքսաչափական, ադսորբցիոն և լյումենենսցենտ: Թթվահիմնային հայտանյութերը փոխում են իրենց գույնը միջավայրի ջրածնային ցուցիչի (pH) փոփոխումից:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված նյութի գույնը: Ուսումնասիրելով գույնի տեսության սկզբունքները՝ հնարավոր է հասկանալ, թե ինչո՞ւ անգույն աղը կարող է փոխել իր գույնը՝ լուծելով ջրում կամ այլ լուծիչում, ինչո՞ւ է գործվածքը գունաթափվում արևի լույսի տակ, ինչո՞ւ է հայտանյութը փոխում իր գույնը՝ կախված միջավայրից, և այլ երևույթներ: Գույնի տեսության գլխավոր սկզբունքը հետևյալն է. գույնը առաջանում է լույսի քվանտի և էլեկտրոնների փոխազդեցության հետևանքով: Նյութի գույնը որոշվում է մոլեկուլում էլեկտրոնների դասավորվածությամբ: Ցանկացած նյութ ունի գույն, քանի որ կլանում է որոշակի երկարության ալիքներ: Սակայն մարդու համար տեսանելի են բավականին նեղ տիրույթում ընկած ալիքները՝ 400-750 նմ երկարության ալիքները [12, 65]:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ, թե ինչպես կարելի է բարձրացնել ավագ դպրոցում քիմիայի որոշ դասաթեմաների ուսուցման արդյունավետությունը՝ այդ թեմայից լրացուցիչ նյութերի տրամադրման միջոցով:

Մեր կողմից ուսումնասիրվել են.

1. ֆենոլների և նրանց ածանցյալների գունավոր ռեակցիաների առանձնահատկությունները,
2. գունավոր բնական նյութերի օգտագործումը լաբորատորիայում որպես թթվահիմնային ինդիկատորներ:

Հոդվածի բովանդակությունը

Մեր կողմից ուսումնասիրվել են գունավոր երևույթներ, որոնց մասնակցում են օրգանական նյութերը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ավելի մանրամասը կանդրադարնանք օրգանական նյութերում գույնի առաջացման մեխանիզմին:

Ուսումնասիրելով մի շարք օրգանական նյութերի գույնը՝ 1869 թ. Օ. Վիտն առաջարկել է քրոմոֆորային տեսությունը, համաձայն որի՝ գույնը պայմանավորված է գույնի առաջացման համար պատասխանատու քրոմոֆոր խմբերի առկայությամբ: Դրանք են -C=O, -C=N, -N=N, -C=C և այլն: Իսկ աուքսոքրոմններ՝ -OH, -SH, $-NH_2$, $-OC_6H_5$ խմբերը ուժեղացնում են նյութի գունավորման աստիճանը [6, 15]:

Երկրորդ կարևորագույն գործոնը, որն ազդում է նյութի գունավորման վրա, զուգորդված կրկնակի կապերի առկայությունն է մոլեկուլում: Ընդ որում որքան երկար է զուգորդված շղթան, այնքան, որպես կանոն, ավելի գունավորված է նյութը: Եթե C_6H_5-CH=CH-C_6H_5 ստիլբենը անգույն է, ապա C_6H_5-$(CH=CH)_2$-C_6H_5 դիֆենիլհեքսատրիենը դեղին է, իսկ C_6H_5-$(CH=CH)_6$-C_6H_5 դիֆենիլդոդեկահեքսաեն նարնջագույն է [11;10]:

Դա իր արտահայտությունն է գտել նաև բնական նյութերի, ինչպես նաև մրգերի և բանջարեղենի գունավորման մեջ: Այսպես, մրգերի և բանջարեղենի վառ կարմիր կամ նարնջագույն գույնը պայմանավորված է π-կապերի երկար զուգորդված շղթաների առկայությամբ: Օրինակ՝ գազարի նարնջագույն լինելը բացատրվում է նրա մեջ β-կարոտինի՝ վիտամին A-ի նախավիտամինի առկայությամբ (նկար 1):



ա



բ

Նկար 1. ա. β-կարոտինի, բ- ռետինոլ (վիտամին A)

Նույնը կարելի է ասել ձմերուկի, լոլիկի կարմիր գույնի մասին, որը պայմանավորված է ψ-կարոտինի գույնով (նկար 2) [3, 12]:

Նկար 2. ψ-կարոտինի

Ի տարբերություն ոչ հագեցած օրգանական նյութերի՝ հագեցած օրգանական նյութերի մեծ մասն անգույն են: Այստեղ ատոմները միմյանց միանում են շնորհիվ σ-կապերի: Էլեկտրոնները մնում են նույն էներգետիկ մակարդակում, քանի որ գրգռված վիճակի անցնելու համար անհրաժեշտ է մեծ քանակությամբ էներգիա: Դա է պատճառը, որ հագեցած ածխաջրածինները կլանում են մանուշակագույն ճառագայթները և գունավորված չեն:

Գունավորման համար ոչ պակաս կարևոր է նաև ածխածնային շղթայի բևեռացում, այսինքն՝ մոլեկուլի տարբեր հատվածներում դրական և բացասական լիցքերի առաջացումը:

Ի տարբերություն ալիֆատիկ ածխաջրածինների՝ արոմատիկ և հետերոցիկլիկ միացությունները պարունակում են փակ զուգորդված օղակներ: Այս միացություններում π-էլեկտրոնները առաջացնում են ընդհանուր էլեկտրոնային ամպ: Արոմատիկ միացություններում π-էլեկտրոնների թվի մեծացումը բերում է գույնի առաջացմանը, քանի որ տեղի է ունենում գրգռման էներգիայի փոքրացում, և կլանումը տեղաշարժվում է երկարալիքային տիրույթ [12, 35]: Դրա օրինակներից է պոլիֆենոլի գունավորումը, որը կախված է նաև միջավայրից: Պոլիօքսիարիլենների լուծույթները, որոնք ունեն մուգ շագանակագույն կամ սև գույն, իներտ միջավայրում աղաթթվի ներկայությամբ նստեցնելիս առաջացնում են նրբադիսպերս սպիտակ կախույթ: Ժամանակի ընթացքում պոլիմերը անջատվում է նստվածքի ձևով և ձեռք է բերում իր նախկին գույնը: Այդ երևույթը բացատրվում է այն հանգամանքով, որ կախույթի առաջացման ժամանակ խախտվում է π և p էլեկտրոնների ապատեղայնացումը, որով պայմանավորվում է պոլիմերի գունավորումը: Հետագայում էլեկտրոնային ամպը նորից ապատեղայնացվում է, և նյութը ձեռք է բերում իր նախնական գույնը [8, 137]:

Գույնի փոփոխություն նաև նկատվում է, երբ տեղի է ունենում օրգանական նյութի փոխազդեցությունը երկրորդական ենթախմբի մետաղի իոնի հետ: Այս դեպքում առաջանում են կայուն կոմպլեքս միացություններ, որոնց գույնը կախված է լիգանդի և կոմպլեքսագոյացնողի տեսակից: Մետաղը տրամադրում է դատարկ d-օրբիտալ, իսկ օրգանական նյութի ատոմը, սովորաբար ազոտը կամ թթվածինը՝ իր զույգ էլեկտրոնները, որի հետևանքով տեղի է ունենում գունային փոփոխություն: Օրինակ՝ դեղին ալիզարինը տարբեր մետաղների հետ առաջացնում է տարբեր գույն ունեցող կոմլեքս միացություններ. Al^{3+}-ի հետ՝ կարմիր, Cr^{3+}՝ գորշ, Fe^{3+}՝ մանուշակագույն [4, 56]:

Այսպիսով, որպեսզի օրգանական նյութը գունավորվի, կարևոր են հետևյալ պայմանները՝

- զուգորդված կապերի առկայությունը, ընդ որում կրկնակի կապերը կարող են առաջանալ ոչ միայն ածխածնի ատոմների միջև,
- քրոմոֆոր և աուքսոքրոմ խմբերի առկայությունը,
- արոմատիկ օղակների առկայությունը,
- կոմպլեքս միացության առաջացման հնարավորությունը,
- բևեռնացման հատկությունը, որը նկատվում է, երբ զուգորդված շղթայի ծայրերում գտնվում են տեղակալիչներ, որոնք նպաստում են էլեկտրոնների տեղափոխմանը,
- օրգանական նյութի մոլեկուլում ատոմները պետք է դասավորված լինեն նույն հարթությունում:

Այս բոլոր գործոնները հանգեցնում են նրան, որ լույսի քվանտը ազդում է մոլեկուլում էլեկտրոնների համակարգի վրա, և էլեկտրոնը ձեռք է բերում լրացուցիչ էներգիա: Այս էներգիայի մի մասը ծախսվում է մոլեկուլի շարժման և տարածման վրա, իսկ մեծ մասը ծախսվում է էլեկտրոնների գրգռված վիճակի անցնելու վրա:

Ակնհայտ է, որ թթվահիմնային հայտանյութերում գույնի փոփոխումը կախված է տեղափոխությունից, որի ընթացքում տեղի է ունենում քրոմոֆոր խմբերի փոփոխություն կամ նոր քրոմոֆոր խմբերի առաջացում: Հնագույն թթվահիմնային հայտանյութը լակմուսն է, որը հայտնի էր դեռ Հին Հռոմում և Հին Եգիպտոսում: Այն օգտագործում էին որպես մանուշակագույն ներկ, որի բաղադրատոմսը ժամանակի ընթացքում մոռացվել էր: 1667 թ. Ռոբերտ Բոյլը ստացավ լակմուս մանուշակի և տրոպիկական քարաքոսի հյութից և առաջարկեց այդ հյութով ներծծել թուղթը: Այսպիսով, սկսեցին ինդիկատորային թղթերը օգտագործել քիմիական փորձարկումների ժամանակ: Հետագա ուսումնասիրությունները պարզեցին, որ շատ գունավոր բույսեր և պտուղներ կարող են հանդես գալ որպես հայտանյութեր: Հետաքրքիր է նշել, որ ժամանակին ընդունված էր բացիկներ գրել ծաղիկների թերթերի վրա թթուների կամ հիմքերի լուծույթներով՝ կախված նրանից, թե ինչ գույն էին ցանկանում ստանալ:

Բույսերի գույնը պայմանավորված է բուսական պիգմենտներով: Բուսական բջիջներում պիգմենտները հանդիպում են կանաչ քլորոֆիլի, դեղնակարմրավուն կարոտինոիդի, կարմիր և կապույտ անտոցիանի, դեղին ֆլավոնների և ֆլավոնոլների ձևով: Այս նյութերը իրենցից ներկայացնում են խոշոր օրգանական մոլեկուլներ, որոնք պարունակում են քրոմոֆոր և

առքսոքրում խմբեր: Որպես հայտանյութեր գլխավորապես օգտագործվում են այն բույսերը, որոնք պարունակում են անտոցիաններ: Բույսերի բջջահյութում անտոցիանները լինում են լուծված կամ բյուրեղների ձևով և բույսերի հյուսվածքներին, գլխավորապես պսակաթերթերին, պտղին, տերևներին տալիս են գունավորում:

Բջիջներում անտոցիանները հանդիպում են գլյուկոզիդային ձևով՝ միանալով գլյուկոզին և գալակտոզին: Անտոցիանները ֆենոլային միացություններ են, ունեն C_{18} ածխաջրածնային կմախք, 2 բենզոլային օղակ՝ միմյանց միացած C_3 շղթայով, որը թթվածնի ատոմի հետ առաջացնում է պիրինային օղակ, որտեղ առկա են կրկնակի կապ և դրական լիցք, որտեղ R_1-ը և R_2-ը կարող են լինել H, OH, OCH_3 խմբեր (նկար 3) [13, 75]:



Նկար 3. Անտոցիանների ընդհանուր բանաձևը

Ծաղիկների և պտուղների բազմերանգությունը պայմանավորված է անտոցիանների բազմատեսակությամբ, որոնք տարբերվում են հիդրոքսիլ խմբերի թվով: Այն, թե ինչ գույն ձեռք կբերի բույսը, կախված է կառուցվածքից, ջրածնային ցուցիչից, էկոլոգիական և կլիմայական սթրեսներից: Միջավայրից կախված առաջանում են տարբեր գունավորումներ՝ թթվային միջավայրում՝ կարմիր, չեզոք միջավայրում՝ մանուշակագույն, իսկ ուժեղ հիմնայինում՝ դեղնականաչավուն: Հաճախ անտոցիանները հանդիպում են մետաղների հետ կոմպլեքս միացությունների ձևով. այս դեպքում բույսը գլխավորապես ներկվում է կապույտ գույնով: Անտոցիանները բջիջներում կարող են առկա լինել մշտապես կամ առաջանալ բույսի զարգացման ընթացքում: Անտոցիանների ակտիվ զարգացումը տեղի է ունենում ցածր ջերմաստիճանային պայմաններում, ուլտրամանուշակագույն ճառագայթների ինտենսիվ ազդեցության ժամանակ, երբ դանդաղում է քլորոֆիլի սինթեզը, ազոտ, ֆոսֆոր, կալիում տարրերի դեֆիցիտի դեպքում, բույսի ինտենսիվ աճի կամ ծերացման ժամանակ:

Անտոցիանները պաշտպանում են բույսերը ցածր ջերմաստիճանի և

արևի լույսի վնասակար ազդեցությունից: Դրանք կլանում են ուլտրամանուշակագույն և կանաչ ճառագայթները: Կլանված էներգիան մասամբ վեր է ածվում ջերմային էներգիայի, և բույսերի ջերմաստիճանը փոքր բարձրանում է, որը նպաստում է ֆոտոսինթեզի գործընթացի աճին խիստ կլիմայական պայմաններում: Այդ երևույթով է պայմանավորված ալպիական բույսերի վառ գունավորումը: Անտոցիաններով հարուստ են գունավոր բույսերը և պտուղները՝ հապալասը, մոշը, սև հաղարջը, բալը, կարմիր կաղամբը և այլն: Այս բույսերը կարող են օգտագործվել որպես բուսական հայտանյութեր [7; 3-12]:

Հետազոտության մեթոդները, փորձարարական վերլուծությունը և արդյունքները

Մեր կողմից իրականացվել և ուսումնասիրվել են ֆենոլի, բազմատոմ ֆենոլների և նրանց ածանցյալների կոմպլեքսագոյացման ռեակցիաները երկաթի (III) քլորիդի հետ: Դասագրքերում այս ռեակցիաների վերաբերյալ տրված են սուղ տեղեկություններ: «Քիմիա» 11-րդ դասարանի դասագրքում ուղղակի նշված է. «Ֆենոլի հայտնաբերման համար հաճախ օգտագործում են դրա ռեակցիան $FeCl_3$-ի հետ, որի հետևանքով առաջանում է մանուշակագույն համալիր միացություն»:

Գունային փոփոխությունների պատճառները ուսումնասիրելու համար պատրաստվել են՝

- ֆենոլի, ռեզորցինի, հիդրոխինոնի, պիրագալոլի, կաթնաթթվի, կիտրոնաթթվի 1 %-անոց ջրային լուծույթներ,
- երկաթի (III) քլորիդի 1 %-անոց ջրային լուծույթ:

2-3 մլ հետազոտվող լուծույթին ավելացրել ենք 1 մլ երկաթի (III) քլորիդի լուծույթ և հետևել գունային փոփոխությանը:

Աղյուսակ 2-ում և նկար 2-ում ներկայացված են մի շարք հետազոտվող օրգանական նյութերի և երկաթի (III) քլորիդի փոխազդեցության հետևանքով գունային փոփոխությունները:

Չնայած նրան, որ բենզոլի մոլեկուլում էլեկտրոնային ամպերը ապատեղայնացված են, սակայն այդ հանգամանքը բավարար չէ, որ փոխազդելով $FeCl_3$-ի հետ՝ առաջացնի կոմպլեքս միացություն: Ի տարբերություն բենզոլի՝ ֆենոլն առաջացնում է մանուշակագույն կոմպլեքս (նկար 4):

Աղյուսակ 1

Ֆենոլի և նրա ածանցյալների գունային փոփոխությունները

Օրգանական նյութ	Կառուցվածք	Վերջնական գույնը
Բենզոլ		չի փոխվում
Ֆենոլ		մանուշակա-գույն
Պրոպանաթթու		չի փոխվում
Կաթնաթթու		դեղնականաչ
Պենտանաթթու		չի փոխվում
Կիտրոնաթթու		դեղնականաչ



Նկար 4. Ֆենոլի հայտնաբերման որակական ռեակցիան

Համեմատելով բենզոլի և ֆենոլի կառուցվածքը՝ կարելի է եզրակացնել, որ գունային փոփոխությունը տեղի է ունենում շնորհիվ քրոմոֆորային -OH խմբերի և կոմպլեքսագոյացման [9, 57]: Դրա ապացույցն է պրոպիոնաթթու-կաթնաթթու, պենտանաթթու-կիտրոնաթթու զույգերի համեմատությունը: Պրոպանաթթուն և պենտանաթթուն չեն առաջացնում կոմպլեքս միացություններ $FeCl_3$-ի հետ, քանի որ դրանց մոլեկուլներում բացակայում են էլեկտրոդոնոր խմբեր, իրենք ունեն շատ թույլ կոորդինացիոն ունակություն:

Կաթնաթթուն և կիտրոնաթթուն առաջացնում են երկաթի լակտատ և ցիտրատ.

$$C_6H_8O_7 + FeCl_3 \rightarrow FeC_6H_5O_7 + 3HCl$$

Ռեակցիաների արգասիքների վերլուծությունը վկայում են -OH խմբի քրոմոֆորային բնույթի և կոմլեքսագոյացման մասին:

Նյութի գույնը կախված է ոչ միայն էլեկտրոնների ապատեղայնացումից, քրոմոֆորային խմբերի առկայությունից, այլ նաև դրանց դիրքից և քանակից (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Բազմատոմ ֆենոլների և Fe^{3+} իոնի կոմպլեքսների գույները

Բազմատոմ ֆենոլներ	**Կառուվածք**	**Գույնը**
Ռեզորցին		Մանուշակագույն
Հիդրոխինոն		Դեղին
Պիրրագալոլ		Կարմիր

Հիդրոխինոնը սկզբում գունավորվում է կանաչ, որը շատ արագ վեր է ածվում դեղին խինոնի: Կանաչ գունավորումը վկայում է, որ հիդրոխինոնը արագ օքսիդանում է՝ առաջացնելով միջանկյալ նյութ՝ խինհիդրոն: O-, մ-, պ- -OH խմբերի դիրքից կախված տեղի է ունենում գույնի բարձրացում, այլ կերպ՝ գիպսոքրոմային տեղաշարժ: Նման երևույթ նկատվում է և պիրագալոլի դեպքում, որը պարունակում է 3 -OH խումբ:



Նկար 5. Ֆենոլի և նրա ածանցյալների ու Fe^{3+} իոնի կոմպլեքսների գունային փոփոխությունները
1) ֆենոլ, 2) ռեզորցին, 3) հիդրոխինոն, 4) պիրոգալոլ, 5) կաթնաթթու, 6) կիտրոնաթթու

Օրինակ անտրացենը՝ անգույն է, տետրացենը՝ , նարնջագույն է, պենտացենը՝ կապույտ է  և այլն:

Հարց է առաջանում, թե ինչպես իրենց կդրսևորեն բազմակորիզ ֆենոլները:

Ուսումնասիրել ենք α- և β- նաֆթոլների ռեակցիաները $FeCl_3$-ի հետ: α-նաֆթոլը՝ , տալիս է մանուշակագույն գունավորում, իսկ β-նաֆթոլը՝ , սկզբում տալիս է կանաչ գունավորում, իսկ հետագայում անջատվում է սպիտակ նստվածք: Այս փորձերը նույնպես վկայում են, որ -OH խմբի դիրքը ազդում է ռեակցիայի ընթացքի վրա [5, 148]:

Ֆենոլներ ածանցյալները կիրառում են որպես դեղամիջոցներ և մտնում են մի շարք սննդամթերքի բաղադրության մեջ: Որպես ֆենոլների ծանցյալներ ուսումնասիրել ենք սալիցիլաթթուն, ացետիլսալիցիլաթթուն, սալոլը, տանինը, վանիլինը և պարացետամոլը [2, 111]:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ կոմպլեքս միացությունների առաջացման մեխանիզմը կախված է քրոմոֆորային խմբերի առկայությունից, իրենց դասավորվածությունից, բենզոլային օղակների առկայությունից և քանակից:

Որպես ուսումնասիրության օբյեկտ օգտագործվել են նաև մի շարք գունավոր բույսեր և պտուղներ՝ նպատակ դնելով դրանց թուրմերը օգտագործել որպես թթվահիմնային ինդիկատորներ: Գրականության մեջ ուսումնասիրված են մի շարք գունավոր բույսեր և պտուղներ (սև և սպիտակ խաղող, սև և կանաչ սալոր, կարմիր և սպիտակ սոխ, սմբուկ) [1, 72]:

Թուրմը պատրաստելու համար 3-5 գ մանրացված նյութին ավելացրել ենք 50 գ ջուր և 2-3 րոպե եռացրել: Ստացված թուրմը սառեցրել ենք և ֆիլտրել: Քանի որ թուրմերը արագ բորբոսնում են, ավելացրել ենք 2:1 հարաբերությամբ էթանոլ: Մաքուր սրվակներում լցրել ենք հինգական կաթիլ 5 % աղաթթվի և 1 % կալիումի հիդրօքսիդի լուծույթ և ավելացրել 2-3 կաթիլ հետազոտվող թուրմ: Աղյուսակ 3-ում և նկար 6-ում ներկայացված են գունային փոփոխությունները:

ա)

բ)

գ)

Նկար 6. Բուսական թուրմերի գունային փոփոխությունները տարբեր միջավայրերում
ա - չեզոք,
բ - թթվային,
գ - հիմնային

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, գույնի նկատելի փոփոխությունը տեղի է ունենում գունավոր թուրմերի դեպքում: Լաբորատորիայում ստացված գունավոր թուրմերը կարելի է օգտագործել որպես ինդիկատորային թուղթ: Այս փորձերը անվտանգ են և կարող են իրականացվել դպրոցի լաբորատորիաներում և նույնիսկ տան պայմաններում: Դրանք մեծ հետաքրքրություն են առաջացնում աշակերտների մոտ և սեր սերմանում «Քիմիա» և «Կենսաբանություն» առարկաների նկատմամբ:

Եզրակացություն

Հնարավորություն է առաջանում ոչ միայն համապատասխան դասաթեման դարձնել առավել ամբողջական, այլ նաև իրականացնել միջառարկայական կապեր ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի միջև:

Այսպիսով՝ ավագ դպրոցում ֆենոլների և նրանց ածանցյալների գունավոր ռեակցիաների վերաբերյալ լրացուցիչ նյութերի տրամադրումը թույլ է տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել դրանց հիմքում ընկած երևույթների վերաբերյալ, դասապրոցեսը դարձնել առավել հետաքրքիր, որը հնարավորություն է տալիս էապես բարձրացնել ուսուցման արդյունավետությունը: Հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ գունավոր էքստրատկտները կարելի է օգտագործել քիմիական լաբորատորիաներում որպես թթվահիմնային ինդիկատորներ: Մասնավորապես, սովորողները լրացուցիչ գիտելիքներ են ձեռք բերում թեմայի ուսուցման վերաբերյալ, իրականացվում են միջառարկայական և ներառարկայական կապեր, որոնք ունեն դիդակտիկական կարևոր նշանակություն:

Աղյուսակ 3

Թուրմերի գունային փոփոխությունները

№	Բուսական թուրմ			Թուրմի գունավորում		
				Չեզոք միջավայր	Թթվային միջավայր	Հիմնային միջավայր
1.	Վարդ	Մուգ		Բաց վարդագույն	Կարմիր	Կարմիր - շագանակագույն
2.		Բաց		Բաց դեղին	Նարնջագույն	Դեղին - նարնջագույն
3.	Թութ			Բաց վարդագույն	Վարդագույն	Դեղին - կանաչ
4.	Կարկադե			Բաց վարդագույն	Բաց վարդագույն	Բաց դեղին
5.	Տորոնի արմատներ			Դեղին	Դեղին	Կարմիր
6.	Ռեհան			Բաց դարչնագույն	Նարնջագույն	Շագանակագույն
7.	Քաջվարդ մուգ			Բաց վարդագույն	Կարմիր	Դեղին - նարնջագույն
8.	Սալոր			Բաց վարդագույն	Վարդագույն	Կանաչ

Գրականություն

1. Ավանեսովա Ն., Ջաղինյան Ա., Մի շարք բուսական թուրմերում անտոցիանների գունային փոփոխությունների ուսումնասիրումը՝ տարբեր գործոնների ազդեցության պայմաններում:
2. Ավանեսովա Ն., Հովսեփյան Ա., Կոծինյան Տ., Ֆենոլների և նրանց ածանցյալների որակական գունավոր ռեակցիաների ուսումնասիրումը:
3. Դանագուլյան Գ., Բազմերանգ արոմատիկություն, Երևան, «Աստղիկ» գրատուն, 2018, էջ 121-125:
4. Պետրոսյան Գ., Ադամյան Ռ., Կոմպլեքս միացություններ, Երևան, ԵՊՀ հրատ., 2023, 164 էջ:
5. Аверина А. В., Снегирева А. Я. Лабораторный практикум по органической химии, Москва: Высшая школа, 1971, - 224 с.
6. Бородкин В. Ф. Химия красителей, Москва: Химия, 1981, - 248 с.
7. Докучаев С. Р. Растительные индикаторы, Восток, 2012, с 3-12
8. Лиогонький Б. И., Тугов И. И., Вайнштейн Э. Ф., Аванесова Н. Р. Влияние межмолекулярного взаимодействия на формирование свойств полисопряженных систем, Докл АН СССР т. 292, N1, 1987, с. 137-141.
9. Паравян Н. А. Что же там происходит? Химия и жизнь, №3, 197, с. 57-58.
10. Петров А. А., Бальян Х. В., Трощенко А. Т. Органическая химия, Москва: Высшая школа, 1981, - 592 с.
11. Тюкавкина Н. А., Бауков Ю. И. Биоорганическая химия, Москва: Медицина, 1985, - 480 с.
12. Фадеев Г. Н. Химия и цвет, Москва: Просвещение, 1986, - 145 с.
13. Шоева О. Ю. Антоцианы: секреты цвета, Химия и Жизнь, N1, 2013, с. 75-93.
14. https://www.imdproc.am/p/qimia19-9 (24.03.25).

Изучение и применение цветных реакций в процессе обучения предмета химии в старших классах естественнонаучного профиля

Коцинян Татевик
Факультет естественных наук,
«Химия»,
руководитель магистерской диссертации:
кандидат химических наук, Н. Аванесова

Резюме

Ключевые слова: *цветные реакции, индикаторы, фенолы, хромофор, пигменты, водородный показатель*

Данная статья посвящена изучению изменения цвета органических соединений: в частности, процессам комплексообразования фенолов и их производных с хлоридом железа, а также изучению ряда природных веществ, в состав которых входят растительные пигменты – антоцианы. Рассмотренные факторы, которые влияют на ход протекания реакций комплексообразования и их производных с хлоридом железом.

Study and Application of Color Reactions in the Process of Teaching Chemistry in Senior Classes of the Natural Science Profile

Kotsinyan Tatevik
Faculty of Natural Sciences,
"Chemistry",
Academic Supervisor: N. Avanesova
Candidate of Chemical Sciences

Summary

Key words: *color reactions, indicators, phenols, chromophore, pigments, hydrogen index*

This article is devoted to the study of color changes in organic compounds, in particular to the processes of complex formation of phenols and their derivatives with ferric chloride, as well as to the study of several natural substances that contain plant pigments – anthocyanins. Factors influencing the course of complex formation reactions of phenols and their derivatives with ferric chloride are considered.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИЯ

HISTORY

Ռուսական դիվանագիտությունը ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին

Հակոբյան Լիլիթ
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ,
«Պատմություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
պ. գ. դ., պրոֆեսոր Ֆ. Մովսիսյան

Հանգուցային բառեր. *Ֆրանսիա, հեղափոխություն, դիվանագիտություն, ռուս հասարակություն, Սիմոլին*

Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին ռուսական դիվանագիտությունը կենտրոնացած էր մի քանի առանցքային նպատակների վրա՝ Եվրոպայում պահպանել քաղաքական կայունություն, կանխել հեղափոխության տարածումը, ամրապնդել Ռուսաստանի ազդեցությունը Արևելյան Եվրոպայում: Եկատերինա II-ը ֆրանսիական հեղափոխությունը դիտարկում էր որպես միապետական կարգի լուրջ սպառնալիք: Կայսրուհին խուսափում էր հեղափոխական Ֆրանսիայի դեմ ուղղակի ռազմական գործողություններից, քանի որ Ռուսաստանի համար ավելի կարևոր էր համարում Թուրքիայի և Շվեդիայի դեմ պատերազմում հաղթանակը և Լեհաստանի բաժանումը: Պավել I-ն ատում էր հանրապետական Ֆրանսիան, որի դեմ Անգլիայի հետ դաշնակցած ձևավորեց հակաֆրանսիական երկրորդ խմբավորումը:

XVIII դարի ֆրանսիական հեղափոխությունը ոչ միայն համակարգային փոփոխությունների իրականացրեց երկրի ներքին կյանքում, այլև խորը ազդեցություն ունեցավ եվրոպական քաղաքական ու դիվանագիտական համակարգի վրա: Ֆրանսիայում սկսված հեղափոխությունը միանգամից գրավեց Եվրոպական երկրների ուշադրությունը, քանի որ հեղափոխական գաղափարները լուրջ սպառնալիք էին հանդիսանում միապետական պետությունների համար: Դրանից ելնելով՝ Եվրոպայի խոշոր պետությունները՝ Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան և Պրուսիան, արագ արձագանքեցին ֆրանսիական միապետությունում ընթացող իրադարձություններին: Նրանք ձևավորեցին հակաֆրանսիական խմբավորում և հեղափոխական Ֆրանսիայի դեմ պայքար սկսեցին ինչպես ռազմական, այնպես էլ դիվանագիտական ճանապարհով:

Ռուսաստանի առաջադեմ հասարակական շրջանները ջերմորեն ողջունեցին ֆրանսիական հեղափոխությունը: Պետերբուրգում Բաստիլի

գրավման լուրը բացառիկ խանդավառությամբ ընդունեցին «առևտրականները, վաճառականները, քաղքենիները և որոշ երիտասարդներ՝ բարձր խավից»: Իշխաններ Բորիս և Դմիտրի Գոլիցին եղբայրները Փարիզում մասնակցեցին միապետության խորհրդանիշ համարվող Բաստիլի բերդի գրոհին [11, 124]: Շատ ռուս առաջադեմ մարդիկ, այդ թվում՝ պատմաբան Ն. Մ. Կարամզինը, մեկնեցին Փարիզ՝ հեղափոխությանը անմիջապես հետևելու համար: Ապագա պետական և զինվորական գործիչ Պ. Ա. Ստրոգանովը 1790 թ. օգոստոսի 7-ին դարձավ յակոբինյան ակումբի անդամ: Նա հույս էր տածում, որ մի օր Ռուսաստանը կտեսնի ֆրանսիական հեղափոխության օրինակով վերափոխված: Հեղափոխության տպավորության տակ հրապարակախոս Ֆ. Վ. Կրեչետովը կոչ էր անում «մեծ խռովության, այնպիսի, որ դեռ երբեք չի եղել», վերացնել ինքնակալությունը և հաստատել հանրապետություն, որպեսզի «բոլորս հավասար լինենք» [11, 137]:

«Петербургские ведомости» և «Московские ведомости» թերթերը թարգմանաբար տպագրեցին «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը» և մինչև 1791-1792 թթ. կառավարության կողմից սահմանած սահմանափակումները, պարբերաբար գրում էին Ֆրանսիայում տեղի ունեցող իրադարձությունների, հեղափոխականների առաջ քաշած «բոլոր մարդիկ ծնվում են ազատ և իրավունքների առումով կատարյալ հավասարության մեջ» դրույթի մասին: Թերթերը հրապարակում էին Սահմանադիր ժողովի խոսնակներ Գ.Միրաբոյի, Ա. Բարնավի և այլոց ելույթների քաղվածքները կամ սղագրությունները [11, 135], գրում էին «հարբած կանանց» ամբոխի մասին, ովքեր ներխուժել են Վերսալի պալատում թագուհու ննջասենյակը [10, 671]:

Հեղափոխության սկզբնական օրերին Մոսկվայի նահանգապետ Լոպուխինը գրում էր, որ Ֆրանսիայից «…երբեք այնքան օտար գրքեր չեն ներմուծվել Ռուսաստան» [5, 334]: Ներմուծվող գրականության և թերթերի տպաքանակը աննախադեպ շատ էր և հասնում էր 2000-4000 օրինակի:

Մինչ ռուսական առաջադեմ հասարակությունը ոգևորված էր ֆրանսիական հեղափոխության «ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսով, միապետությունը ուշադրությամբ հետևում էր հեղափոխական Ֆրանսիայում տեղի ունեցող իրադարձություններին: Դրանց մասին Փարիզում ռուսաց դեսպան Ի. Մ. Սիմոլինը մշապես տեղեկություններ էր ներկայացնում Պետերբուրգ: Նա փորձառու դիվանագետ էր, մինչ այդ դիվանագիտական աշխատանք էր կատարել Վիեննայում, Կոպենհագենում, Ռեգենսբուրգում, Ստոկհոլմում և Լոնդոնում:

Սկսած 1785 թ. Ի. Մ. Սիմոլինը Փարիզում, դիվանագիտական առաքելության ընթացքում, կարողացել էր սերտ կապեր հաստատել թագավորական ընտանիքի և ֆրանսիական ազնվականության վերնախավի հետ [1, 39]:

Ֆրանսիական հեղափոխության տարիներին ռուսական դիվանագիտությունը ղեկավարում էր փոխկանցլեր կոմս Ի. Ա. Օստերմանը, որին օգնում էին գաղտնի խորհրդական Պ. Ն. Բակունինը և Ա. Ա. Բեզբորոդկոն: Վերջինս վայելում էր Եկատերինա II-ի անսահման վստահությունը, սկսած 1781 թ. փաստացի իրականացնում էր Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և ավելի ազդեցիկ դիրք ուներ, քան փոխկանցլեր Ի. Ա. Օստերմանը:

Բաստիլի գրավման լուրն առնելուն պես Եկատերինա II-ը շտապեց նախազգուշական միջոցներ ձեռնարկել՝ կանխելու «ֆրանսիական վարակի» տարածումը Ռուսաստանում: Ռուս երիտասարդները, ովքեր հայտնվել էին Բաստիլի հրապարակում 1789 թ. հուլիսի 14-ի հիշարժան օրը, կամ ովքեր գրանցվել էին փարիզյան ակումբներում, ետ կանչվեցին հայրենիք: Առավել ակտիվ գործիչներից Ն. Ի. Նովիկովը բանտ նետվեց, Ա. Ն. Ռադիշչևը երկար ժամանակ անցկացրեց աքսորավայրում [12, 243]: Եկատերինա II-ն «անմիջապես դեն նետեց լիբերալիզմի դիմակը, հենց որ հասկացավ լուսավորչական ուսմունքի օբյեկտիվ հետևանքները» [4, 68-69]:

Եկատերինա II-ը խորապես բացասաբար էր տրամադրված հեղափոխության հանդեպ, նա հեղափոխական Սահմանադիր ժողովը որակում էր «1200 գլխանի հիդրա», իսկ դրա անդամներին անվանում «խելագարների և չարագործների բանդա»: [5, 395]: 1790 թ. ֆրանսիական հեղափոխությունը զինված ճանապարհով ճնշելու օգտին հանդես էին գալիս Եկատերինա II-ը, Անգլիայի վարչապետը, Ավստրիայի, Պրուսիայի և Շվեդիայի միապետները: Ռուսաց կայսրուհին շահագրգռված էր ֆրանսիական հեղափոխությունն արագ ճնշելու հարցում, բայց Թուրքիայի ու Շվեդիայի հետ պատերազմները խանգարում էին նրան ամբողջովին կենտրոնանալ ֆրանսիական հեղափոխության վրա [5, 328]:

Ռուսական արքունիքը ֆրանսիացի տարագիր ազնվականներին ընդունում էր առանձնակի ջերմությամբ [5, 39], կես միլիոն ռուբլի էր հատկացնում Պրովանսի և Արտուայի կոմսերին: Եկատերինա II-ը ֆրանսիացի վտարանդիներին գրում էր. «Ինձ համարեք արքայազների, թագավորի եղբայրների անշահախնդիր և անկեղծ բարեկամը, և ձեր միապետի բոլոր հավատարիմ ծառաների հաստատուն ու մշտական հենարանը» [1, 39]:

Կայսրուհին ուշադրությամբ հետևում էր Ֆրանսիայում տեղի ունեցող իրադարձություններին, Լուի XVI-ին համարում էր թույլ միապետ, միջակություն, վրդովում էր նրա վարած քաղաքականությունից, որին վերաբերվում էր արհամարհանքով: Ֆրանսիան սահմանակից չէր Ռուսաստանին, ուստի նրան չէր կարող անմիջական վտանգ սպառնալ, որքան Ավստրիային և Պրուսիային: Այնուհանդերձ Եկատերինա II-ն անհրաժեշտ համարեց միջամտել Ֆրանսիայում տեղի ունեցող գործընթացներին և 1791 թ. մայիսի 22-ին մի ծրագիր կազմեց ընդդեմ հեղափոխության: Նա հայտարարեց, որ Ֆրանսիայում տեղի ունեցող իրադարձությունները վերաբերում են Եվրոպայի բոլոր թագադրված միապետերին, որոնք պետք է միավորվեն դաշինքով և վերադարձնեն Լուի XVI-ին իր իրավունքները: Կայսրուհին նկատի ուներ ոչ միայն ֆրանսիական հեղափոխության պարտությունը, այլև այն, որ Ֆրանսիան պետք է վերադարձներ իր ավանդական տեղը որպես հակակշիռ Անգլիային և Պրուսիային Եվրոպական ուժային համակարգում: Այդ դաշինքում Շվեդիային ներգրավելու համար Եկատերինա II-ն առաջարկում էր Գուստավ III-ին դրամական հատուցում տալ [10, 674]:

Կայսրուհին դժգոհ էր, որ Լուի XVI-ը զիջումներ է անում հեղափոխականներին և համաձայնվել է սահմանադրության ընդունել: Այդ մասին նա բարոն Գրիմին ուղղված նամակներից մեկում գրում էր. «Այսպիսով ահա սըր Լուի XVI-ը ստորագրել է այս ծիծաղելի սահմանադրությունը» [10, 683]:

Չնայած Լուի XVI-ից խոր հիասթափությանը, Եկատերինա II-ը գտնում էր, որ Ֆրանսիայի երիտասարդ թագավորին անհրաժեշտ է օգնության ձեռք մեկնել: 1791 թ. աշնանը նա իր ֆավորիտ իշխան Պ. Ա. Զուբովին գրում էր. «Մենք պետք է վերականգնենք միապետությունը, թագավորի իշխանությունը. առանց խորհրդարանների: Այստեղ մենք չենք կարող առանց զենքի ուժի, որտեղ կռիվ է անհրաժեշտ, բանակցությունները գրեթե ապարդյուն են: Ազնվականները պետք է կռվեն՝ իշխանները, ըստ նրանց, պատրաստ ունեն 6 հազար մարդ: Այն պետությունը, որը պետք է սպասի օտարերկրյա զորքերին, որպեսզի վերականգնի իր բարեկեցությունը, դժբախտ պետություն է» [13, 208-211]:

Կայսրուհու այս նամակից պարզվում է, որ նա այդ պահին պատրաստ չէր զորք ուղարկել հեղափոխական Ֆրանսիայի դեմ և մտադիր էր այլ եղանակներով աջակցել հակահեղափոխական ուժերին: Դրանից կարճ ժամանակ անց նա եվրոպական միապետերին առաջարկում էր Ֆրանսիայի դեմ զինված զավթախուժում իրականացնել: «Մենք չպետք է,– գրում էր նա,– բարեպաշատ թագավորին զոհաբերենք բարբարոսնե-

ին, Ֆրանսիայում միապետական իշխանության թուլացումը վտանգի է ենթարկում մնացած բոլոր միապետներին»: Այդ վախը Եկատերինա II-ին և եվրոպական մյուս միապետներին մղում էր հեղափոխական Ֆրանսիայի զավթախուժում իրականացնել: «Իմ կողմից, գրում էր կայսրուհին, ես պատրաստ եմ իմ ամբողջ ուժերով դիմադրել: Ժամանակն է գործել և որպեսզի փրկել Ֆրանսիան, մի բան է մնում անելու՝ դա թագավորի իշխանությունը վերականգնելն է, որի համար կա միայն մեկ ուղի՝ զենքը» [1, 40; 11, 138]:

Եկատերինա II-ի հանձնարարությամբ Ի. Մ. Սիմոլինը զբաղվում էր Դիվանագիտական կոմիտեի հետ հարաբերություններ հաստատելով, որը դարձել էր «Ֆրանսիայի ամբողջ քաղաքականության կենտրոնը»: Նա Միրաբոյին անվանում էր այդ կենտրոնի «հոգին», ում կարծիքը «մեծ կշիռ ունեի»: Այդ պատճառով ռուսաց դեսպանը լուրջ էր տրամադրված Միրաբոյին իր կողմը գրավելու հարցում: Ի. Մ. Սիմոլինն իր նամակներից մեկում գրում էր. «Փարիզում փողի միջոցով կարելի է ստանալ ամեն ինչ, բայց Միրաբոն ամենամատչելին չէ»: Եկատերինա II-ը դեսպանին հորդորում էր «դրսևորել առատաձեռնություն, եթե նա չի մեռել» [1, 41]:

Ռուս դեսպանի և Միրաբոյի միջև կապող օղակ էր հանդիսանում դիվանագիտության ապագա ղեկավար Շ. Մ. Թալեյրանը, որի մասին Ի. Մ. Սիմոլինը գրում էր կայսրուհուն. «Ես իմ կողմն եմ տրամադրել պարոն դը Միրաբոյի մերձավոր բարեկամին, որը նրան ղեկավարում է այն ամենում, ինչը առնչություն ունի արտաքին քաղաքականության հետ»: Այդ «շատ խելոք մարդը» ամբողջությամբ ռուսական արքունիքի կողմը կլինի, եթե իր ծառայությունների դիմաց վարձատրություն ստանալու նրա հույսը «իրականացվի հենց սկզբից» [9, 449]: Միրաբոն կարող էր օգտակար լինել Ի. Մ. Սիմոլինին, բայց 1791 թ. ապրիլի 2-ին Միրաբոն անժամանակ մահացավ, և ռուս դեսպանը չկարողացավ իրականացնել նրան օգտագործելու իր ծրագիրը:

Ռուսական դիվանագիտությունը Ֆրանսիայում ուներ ակտիվ լրտեսական ցանց, որի միջոցով ստանում էր իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը: Ի. Մ. Սիմոլինինը Եկատերինա II-ին հայտնում էր, որ պատրաստվում է 60 հազար լիվր տալ «բարեկամներին», ովքեր տեղեկություններ են բերում իր համար և վարձատրությունից հետո պատրաստ են «դրական, օգտակար և էական» ծառայություններ մատուցել իրեն [1, 43]:

Այդ ընթացքում ռուս կայսրուհին հետաքրքրված էր Ֆրանսիայի հետ մերձեցմամբ, որովհետև Թուրքիայում ընթանում էր պատերազմ, և նա կարիք ուներ հուսալի քաղաքական դաշնակցի: Բայց որոշ ժամանակ անց, երբ Ռուսաստանը հաղթանակ տարավ, Եկատերինա II-ը փոխեց իր

մոտեցումը Ֆրանսիայի և Ի. Մ. Սիմոլինին հանդեպ: Նա իր նամակներից մեկում գրում էր. «Ես ստացել եմ շատ տհաճ լուր, որ Սիմոլինը դարձել է մոլի դեմագոգ, և այժմ հիանում է այն բոլոր անհեթեթություններով, որոնք կատարում է անպետք Ազգային ժողովը: Ես կարծում եմ, որ նրան ճշմարիտ ուղուց հանել է պարոն դը Օթենը» [1, 43]: Եկատերինա II-ը նկատի ուներ Թալեյրանին, ով մինչ հեղափոխությունը Օթենի եպիսկոպոսն էր:

1791 թ. հունիսին Շվեդիայի դեսպան բարոն Ա. Ֆերզենի աջակցությամբ [6, 277-278] Լուի XVI-ը ընտանիքով, ռուսական անձնագրերով, որը նրանց հատկացրել էր Ի. Մ. Սիմոլինինը, փորձեց փախչել Փարիզից, բայց սահմանամերձ Վարրեն քաղաքում ճանաչվեց ու վերադարձվեց Փարիզ [7, 179-180]:

Եկատերինա II-ն անհրաժեշտ էր համարում «իր բոլոր ուժերը լիարժեք պատրաստության մեջ պահել, որպեսզի պատշաճ սահմաններում զսպի ֆրանսիական կատաղության և այլասերվածության վարակի հետագա տարածման չարիքը ավելի մոտ իրեն, մասնավորապես, աշխարհի որոշ մասերում և հատկապես Արևելքում» [3]: Նրա աչքում Ֆրանսիական հեղափոխությունը ճնշելու գործը վստահված էր ուրիշներին: Դրանով պայմանավորված հակահեղափոխական պատերազմի հենց սկզբից դաշնակիցները Ռուսաստանից ակնկալում էին ռազմական և ֆինանսական օգնություն, որը, սակայն, Եկատերինան պատրաստ չէր տրամադրել: Միայն 1792 թ. ամռանը նա դաշնակիցներին 500.000 ռուբլի օգնություն տրամադրեց, որը դաշնակիցները համարեցին անբավարար:

Միևնույն ժամանակ Ռուսաստանի, Պրուսիայի և Ավստրիայի միջև բարդ բանակցություններ էին ընթանում, որոշվում էր կռվող բոլոր կողմերի «փոխհատուցման» բարդ հարցը: Բանակցությունների առաջին փուլը ներառում էր Պրուսիայի և Ավստրիայի միջև 1790 թ. հուլիսի 27-ին Ռայխենբախում կնքված համաձայնագիրը: Դրանով Ավստրիան պարտավորվում էր դադարեցնել Թուրքիայի դեմ պատերազմը և զենքի ուժով վերականգնել Բելգիայի նկատմամբ իր իշխանությունը: Բելգիական հեղափոխության ճնշումը դարձավ եվրոպական պետությունների կողմից առաջին զինված փորձն ընդդեմ հեղափոխական Ֆրանսիայի առաջացրած ազգային-ազատագրական շարժման:

Դրանից ոգևորված՝ ավստրիական կայսր Լեոպոլդ II-ն առաջարկեց Աախենում համաեվրոպական վեհաժողով հրավիրել Ֆրանսիական հեղափոխության դեմ զինված պայքար սկսելու համար: Վեհաժողով չկայացավ, Անգլիան և Ռուսաստանը մի շարք պատճառներով հրաժարվեցին դրանից: Անգլիայի վարչապետ Ուիլյամ Պիտտի և Եկատերինա II-ի դրդմամբ 1791 թ. օգոստոսի 27-ին Սաքսոնիայի Պիլնից պալատում կայսր

Լեոպոլդ II-ը և Պրուսիայի թագավոր Վիլհելմ II-ը հռչակագիր ստորագրեցին Ֆրանսիայի թագավորին օգնություն ցույց տալու մասին: 1792 թ. փետրվարի 7-ին Ավստրիան և Պրուսիան դաշինք կնքեցին՝ պարտավորվելով Ֆրանսիայի դեմ դուրս բերել 40-50 հազար զորք [11, 140]:

1792-1793 թ. Եկատերինա II-ը չէր կարողանում ամբողջությամբ կենտրոնանալ ֆրանսիական հեղափոխության վրա, որովհետև ավելի շատ զբաղված էր Լեհաստանի բաժանման հարցով: Նա չէր կարող զորքով միանալ հակահեղափոխական խմբավորմանը, սակայն ջանքեր չէր խնայում խմբավորումն ավելի ընդլայնելու համար: Շվեդիայի հետ խաղաղություն հաստատելուց հետո Եկատերինա II-ը փորձում էր համոզել Գուստավ III-ին միանալ հակահեղափոխական խմբավորմանը: Նա, օժտված լինելով դիվանագիտական տաղանդով, փորձում էր Ավստրիայի ու Պրուսիայի ուշադրությունը շեղել Լեհաստանից կամ գոնե հնարավորինս շատ տարածքներ ձեռք բերել ի հաշիվ նրանց: Այդ մասին վկայում է իր քրոջը գրած նամակը. «Ես գլուխ եմ ջարդում, որ պրուսական ու գերմանական արքունիքները իրենց ուշադրությունը կենտրոնացնեն ֆրանսիական գործերի վրա...» [5, 334]:

Լուի XVI-ի անհաջող փախուստից հետո Եկատերինա II-ը սկսեց ավելի լրջորեն հետևել Ֆրանսիայում ընթացող իրադարձություններին: Հին ռեժիմի սոցիալական կառուցվածքի ամբողջական փլուզումը, Ֆրանսիայից ազնվականների արտաքսումը, սեպտեմբերյան մահապատիժները, միապետության վերացումը չափազանց ջախջախիչ հարվածներ հասցրեցին երկրի կառավարմանը [10, 696]: Եկատերինա II-ը նամակագրական կապ էր պահում Ֆրանսիայի թագուհի Մարի Անտուանետի հետ, ում սիրալիր խոսքեր էր գրում և հաճոյախոսություններ անում, բայց չէր պատրաստվում որևէ պատասխանատվություն ստանձնել [3]:

Մարի Անտուանետը տեղեկացնում էր Եկատերինա II-ին. «Հուլիսից խնդրում և աղաչում եմ կայսրին, որ զբաղվի մեր գործերով, ... միաժամանակ եղբորս առաջարկեցի զինվորական համագումար հրավիրել, որը կօգնի հավաքել բոլոր ուժերը... Զինված համագումարի նախագիծն, ինձ թվում է, երկրի համար կայուն ու երջանիկ արդյունքի հասնելու միակ միջոցն է» [10, 66-67]:

Եկատերինա II-ը Մարի Անտուանետին պատասխանում էր. «Ֆրանսիայի թագավորի հարցը բոլոր միապետների խնդիրն է: Եվրոպան շահագրգռված է, որ Ֆրանսիան վերականգնի իր արժանի տեղը մեծ տերությունների շարքում: Ներկայումս 10.000 բանակը բավական է Ֆրանսիայի ծայրից ծայր արշավելու համար: Նման բանակ ստեղծելու համար կես միլիոն փողը բավական է, նմանատիպ փոքր քանակության զումար կա-

րելի է ստանալ Ջենովայից: Ժամանակի ընթացքում Ֆրանսիան կվճարի այդ պարտքը... Ողջ Ֆրանսիան այժմ ընկղմված է լիակատար անարխիայի մեջ, և լավ հաշվարկված ձեռնարկումը անխուսափելիորեն պետք է պսակվի հաջողությամբ» [15, 67]:

Եկատերինա II-ի պատասխանից նկատելի է, որ Ռուսաստանը պատրաստ էր միանալ հակահեղափոխական խմբավորմանը, սակայն ո՛չ ֆինանսապես, և ո՛չ էլ զորքով չի պատրաստվում աջակցել Ֆրանսիային: Դրա պատճառը ավելի քան պարզ էր. Ռուսաստանը այդ ժամանակ զբաղված էր Թուրքիայի և Շվեդիայի դեմ պատերազմներով, Լեհաստանի վերահաս բաժանումով և ամբողջ ուշադրությունը կենտրոնացրել էր այդ խնդիրների վրա:

1792 թ. ապրիլի 20-ին Ավստրիային պատերազմ հայտարարած հեղափոխական ֆրանսիական բանակները մի քանի հաղթանակներ տարան: Դրանք լուրջ անհանգստություն պատճառեցին եվրոպական տերություններին և Ռուսաստանին, որովհետև ֆրանսիացիները հայտարարում էին, որ իրենց կողմից գրավված բոլոր տարածքներում հաստատվելու է ինքնիշխանություն: Այդ կապակցությամբ Եկատերինան գրում էր. «Պետք է վերագտնել մեծ պետությանը վայել դիրքը: Ֆրանսիայում այնպիսի քաոս է, որ հեղաշրջումը անխուսափելի է... Այս հակահեղափոխական շարժումը, անկասկած, չպետք է ուղղված լինի ոչ այլ ինչի, քան միապետական իշխանության վերականգնմանը... Հավասարակշռված ուժերը, ինչպիսիք են ազնվականությունը, հոգևորականը և դատական դասը, չեն միավորվում իրենց մեջ նման օրինական ցանկությամբ ոգեշնչված առաջնորդների շուրջ: Այդքա՞ն արդար, այդքա՞ն չափավոր» [10, 703] :

1793 թ. հունվարի 21-ին Լուի XVI-ի մահապատժի ենթարկելու լուրը հասավ Սանկտ Պետերբուրգ հունվարի 29-ին՝ Ռուսաստանի և Պրուսիայի միջև Լեհաստանի բաժանման մասին պայմանագրի ստորագրումից հետո, որը Եկատերինա II-ին ստիպեց վճռական քայլ կատարել Ֆրանսիայի դեմ ռազմական գործողություններ սկսելու ուղղությամբ: Կայսրուհին հայտարարեց հեղափոխական Ֆրանսիայի հետ հարաբերությունների ամբողջական խզման մասին: Ավելի վաղ դադարեցվել էր Պետերբուրգում Ֆրանսիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Էդմոն Ժենեի առաքելությունը՝ պատճառաբանելով, որ ֆրանսիայի թագավորը բանտարկված է այն կառավարության կողմից, որը Ժենեին ուղարկել է Ռուսաստան [10, 703]:

Է. Ժենեի գործունեությունը և նամակագրությունը ամբողջովին հասանելի էին ռուսական դիվանագիտությանը: Ֆրանսիայում Ռուսաստանի դեսպան Ի. Մ. Սիմոլինը ավելի շուտ էր ստանում Է.Ժենեի ուղար-

կած նամակների պատճենները, քան նամակների իրական հասցեատերերը: Այդ կարգի տեղեկության տիրապետելը Ի. Մ. Սիմոլինի համար վճռական նշանակություն ուներ, քանի որ Պետերբուրգ էր ուղարկում անչափ կարևոր լուրեր [1, 40]:

1792 թ. հուլիսին Է. Ժենեն արտաքսվեց, և երկու երկրների միջև դիվանագիտական հարաբերությունները փաստացի խզվեցին: Կայսրուհու՝ 1793 թ. փետրվարի 8-ի հրամանագիրը պաշտոնապես օրինականացրեց այս իրավիճակը: Եկատերինա II-ը չեղյալ հայտարարեց 1787 թ. ֆրանս-ռուսական առևտրային պայմանագիրը, արգելեց բոլոր առևտրային հարաբերությունները Ֆրանսիայի հետ: Նա Ֆրանսիայից հետ կանչեց բոլոր ռուս դիվանագետներին և բոլոր ֆրանսիացիներին ուղարկեց իրենց հայրենիք, բացառությամբ նրանց, ովքեր երդվեցին հավատարմության երդում տալ ֆրանսիական միապետությանը: Արգելվեց թերթերի և գրքերի ներմուծումը Ֆրանսիայից [10, 704]:

Լուի XVI-ի մահապատժից հետո անգլիացիները նույնպես ակտիվ գործողություններ ձեռնարկեցին: Ֆրանսիայի դեսպանին հրամայվեց անհապաղ լքել երկիրը: Ի պատասխան դրա՝ 1793 թ. հունվարի 21-ին հեղափոխական Կոնվենտը պատերազմ հայտարարեց Անգլիային: Դա ամրապնդեց Ռուսաստանի դիրքերը, քանի որ անգլիացիները հայտնվեցին պատերազմական վիճակում՝ չհասցնելով Ռուսաստանի հետ պայմանագիր կնքել: Կոմյունիկեից վեց օր անց հակահեղափոխական պատերազմի ժամանակ ռուսական կողմը Սանկտ Պետերբուրգում Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ բանակցությունների մեջ մտավ անգլո-ռուսական պայմանագրի կնքման շուրջ: Այդ բանակցությունները ռեկորդային ժամանակում ավարտվեցին: Լոնդոնում Ռուսաստանի բանագնաց Ս.Ռ.Վորոնցովի կողմից: 1793 թ. մարտի 14-ին ստորագրվեց առևտրային պայմանագիր, որով թարմացվեց 1766 թ. վաղուց ժամկետանց պայմանագիրը և մեկ այլ փաստաթուղթ, որը պարտավորեցնում էր կողմերին օգնել միմյանց պատերազմում: Սրանով սահմանվում էր չկնքել առանձին խաղաղություն Ֆրանսիայի հետ, փակել բոլոր նավահանգիստները ֆրանսիական նավերի համար և խոչընդոտել Ֆրանսիայի առևտուրը չեզոք երկրների հետ:

Չնայած ձեռք բերված համաձայնություններին՝ երկու տերությունները շատ տարբեր պատկերացումներ ունեին այն մասին, թե ինչ ընթացք պետք է ունենա պատերազմը: Այս անգամ Եկատերինա II-ը պատրաստ էր զորք հատկացնել, բայց իր պայմաններով. ռուսական կորպուսը պետք է տեղ հասցվեր անգլիական նավերով՝ ֆրանսիական 5-6 հազար կորպուսի հետ միասին: Դանցիգում կենտրոնացած ռուսական զորքերը պետք է Նորմանդական կղզիներում միավորվեին ֆրանսիական վտա-

բանդիների ուժերի հետ, գերագույն գլխավոր հրամանատարը լինելու էր կոմս դ'Արտուան: Գործողության նպատակն էր զորք տանել Բրետան կամ Նորմանդիա և ապահովել զորքերի առաջխաղացումը Ֆրանսիայում: Նահանգների ընտրությունը պատահական չէր, Եկատերինայի կարծիքով, հենց այդ նահանգների բնակչությունը կարող էր հակադրվել հեղափոխական Փարիզին:

Այդ «ծառայությունների» համար Եկատերինա II-ը 600 հազար ռուբլի վարկ էր պահանջում դաշնակիցներից և ակնկալում էր, որ Բրիտանիան կկրի ամբողջ ծախսերը, որոնք հետագայում փոխհատուցելու էր Ֆրանսիան: Կայսրուհին, հիմնավորելով վարկավորման իր խնդրանքը, նշում էր, որ արդեն մեծ գումարներ է ծախսում աքսորում գտնվող ֆրանսիացի ազնվականների կարիքների ապահովման վրա: Նա նաև նշում էր, որ Անգլիան կկարողանա գուումարները ետ ստանալ ոչ միայն ֆրանսիական փոխհատուցումներով, այլև Ֆրանսիայի գաղութային ունեցվածքի բռնակցմամբ:

Եկատերինա II-ի ստանձնած քաղաքական առաջնորդի դերը Անգլիան վճռականորեն մերժեց՝ հրաժարվելով վարկ հատկացնել, և պահանջեց իր տրամադրության տակ դնել ռուսական կորպուսը: Ինչ վերաբերում է բանակին, դեռևս հնարավոր էր համաձայնության հասնել փոխգործակցության հիման վրա, սակայն երկու երկրների տեսակետները Ֆրանսիայի ապագայի վերաբերյալ չափազանց շատ էին տարբերվում՝ քաղաքական փոխգործակցության հիմք դառնալու համար:

Ի վերջո, 1795 թ. փետրվարի 7-ին ստորագրվեց Անգլիայի հետ պաշտպանական դաշինքի պայմանագիր: Դրա առաջին գաղտնի հոդվածի համաձայն՝ Եկատերինա II-ը ցամաքային զորքեր ուղարկելու փոխարեն, պատրաստակամություն էր հայտնում 12 մարտանավից և 6 ֆրեգատից բաղկացած նավատորմ ուղարկել Հյուսիսային ծով՝ «Լա Մանշում կամ օվկիանոսում նավարկության և ռազմական գործողությունների համար» [3]:

Հակաֆրանսիական խմբավորումից Պրուսիայի, Հոլանդիայի, Իսպանիայի դուրս գալուց հետո հեղափոխական Ֆրանսիայի դեմ պայքարում մնացին Անգլիան, Ավստրիան և Ռուսաստանը: Եկատերինա II-ը, ավարտելով լեհական «գործերը», սկսեց հավաքել 60.000 կորպուս՝ Ֆրանսիայի դեմ ուղարկելու նպատակով:

1795 թ. Ռուսաստանը նոր դաշինք ձևավորեց Անգլիայի և Ավստրիայի հետ, բայց Եկատերինայի մահը և Պրուսիայի հակասական քաղաքականությունը խանգարեցին հակահեղափոխական խմբավորման ամբողջական կայացմանը: Անգլիան հրաժարվեց ճանաչել Լուի XVI-ի եղբորը՝

Պրովանսի կոմսին, որպես Ֆրանսիայի թագավոր՝ դրանով հույս ունենալով մոտ ապագայում ունենալ տարածքային ձեռքբերումներ Ֆրանսիայի հաշվին: Նույնը չի կարելի ասել Ռուսաստանի մասին, որը որևէ տարածքային հավակնություններ չէր դրսևորում Ֆրանսիայի հանդեպ: Դրանով պայմանավորված՝ Ռուսաստանը ձգտում էր Պրովանսի կոմսին ճանաչել գահաժառանգ:

Վերլուծելով Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը 1792-1796 թթ.՝ դժվար է համաձայնվել այն մտքի հետ, որ Եկատերինա II-ի գլխավոր նպատակը Ֆրանսիական հեղափոխության դեմ պայքարն էր, Լեհաստանը ավելի քիչ նշանակություն ուներ, իսկ Թուրքիայի հետ պատերազմից հետո ֆինանսական աղետալի վիճակը և ռեսուրսների սպառումը խանգարեցին Ռուսաստանին որոշակի քանակությամբ զորք ուղարկել ընդդեմ հեղափոխական Ֆրանսիայի: Եկատերինա II-ը դժվար երկընտրանքի առաջ էր կանգնած, որի կապակցությամբ դեռևս 1791 թ. դեկտեմբերի 4-ին գրում էր. «Կայսրը և թագավորը, որոնք իշխում են Գերմանիայում, ինձ համար միասին ավելի վախեցնող են, քան հին Ֆրանսիան իր ողջ հզորությամբ և նոր Ֆրանսիան՝ իր անհեթեթ սկզբունքներով» [14, 430]:

1796 թ. նոյեմբերին Եկատերինա II-ի մահը կանխեց Անգլիայի և Ավստրիայի հետ կնքած դաժինքի զինված ներխուժումը Ֆրանսիա [5, 453]: Կայսրուհու մահից հետո Ֆրանսիայում իշխանության եկած Դիրեկտորիայի անդամ Լազար Կառնոն առաջարկեց անմիջապես կապ ստեղծել Ռուսաստանի հետ, որի մասին շուտով հայտնի դարձավ Պետերբուրգում: Դիրեկտորիայի արտաքին հարաբերությունների նախարար Շ. Մ. Թալեյրանը հասկանում էր, որ կառավարող հնգյակը ձգտում է համաձայնության հասնել Ռուսաստանի հետ, որպեսզի մեկուսացնի Անգլիային, Ավստրիային զրկի ռուսական օգնությունից, վերացնի ֆրանսիական հանրապետության արտաքին դիվանագիտական մեկուսացումը: Նա գտնում էր, որ ֆրանսիական գործարար շրջանների շահերը պահանջում են մերձենալ Ռուսաստանի հետ, քան «քաղաքական հաշվարկները»:

Կայսրուհու մահից հետո Ռուսաստանի գահն անցավ Պավել I-ին, ում Շ. Մ. Թալեյրանը համարում էր «ամենաքիչ ճարպիկ և ամենաշատ քմահաճ բռնակալ» [1, 95]: Նրա կարծիքով ռուսաց միապետը ցանկանում է հակաֆրանսիական երկրորդ խմբավորում ստեղծել, բայց դրա համար դաշնակիցներ չունի: Պավել I-ը, հակառակ իր մոր որոշման, Հռենոս չուղարկեց 60 հազար բանակային կորպուսը, իսկ նավատորմիղը ետ կանչեց Անգլիայից: Դրանով առաջին հակաֆրանսիական խմբավորումը դադա-

րեց գոյություն ունենալուց: Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորումը դարձավ Դիրեկտորիայի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը:

1797 թ. Բեռլինում սկսվեցին ռուս-ֆրանսիական ոչ պաշտոնական բանակցություններ, որի ժամանակ ֆրանսիական կողմը ցանկանում էր երկու երկրների միջև վերականգնել նորմալ քաղաքական և առևտրական հարաբերություններ: Իր հերթին Ռուսաստանը ձգտում էր Ֆրանսիայի հետ համաձայնության օգնությամբ ամրապնդել կայսրության միջազգային ազդեցությունը և չվատացնել հարաբերությունները եվրոպական միապետությունների հետ [1, 96-97]:

Բանակցությունները կողմերից ոչ մեկին ցանկալի արդյունք չտվեցին, ռուս-ֆրանսիական մերձեցումը չկայացավ [2, 346]:

1798 թ. գարնանը Ռուսաստանը սկսեց դաշնակիցներ փնտրել հանրապետական Ֆրանսիայի դեմ պատերազմելու համար: Կռահելով նրա մտադրությունը՝ Շ. Մ. Թալեյրանը ասում էր, որ Եկատերինա II-ը իր կառավարման տարիներին այնքան թշնամական գործողություններ չիրականացրեց Ֆրանսիայի դեմ, որքան կարճ ժամանակում՝ Պավել I-ը: Նա գտնում էր, որ հնարավոր չէ Ռուսաստանի դեմ ուղղել նրա բոլոր հարևանների ուժերը, ուստի առաջարկում էր մտածել Ռուսաստանում պալատական հեղաշրջում կատարելու նպատակով Պետերբուրգ և Մոսկվա ուղարկել հատուկ գործակալներ:

Պավել I-ը, ի վերջո, հասավ իր նպատակին: 1798 թ. վերջին նրա և Ու. Պիտտի ջանքերով ձևավորվեց հակաֆրանսիական երկրորդ խմբավորում, որի մեջ, բացի Ռուսաստանից և Անգլիայից, մտան նաև Ավստրիան, Թուրքիան և Նեապոլիտանական թագավորությունը: Պավել I-ը խորապես ատում էր հանրապետական Ֆրանսիան: Նա գահին անցնելիս 1799 թ. հունիսի 16-ին արձակած մանիֆեստում հայտարարում էր, որ անհրաժեշտ է հնարավոր բոլոր միջոցներով հակադրվել «ատելի ֆրանսիական հանրապետությանը», որը սպառնում է ամբողջ Եվրոպային «օրենքի, իրավունքի, սեփականության և բարքերի կատարյալ ոչնչացմամբ» [8, 399]:

Նապոլեոն Բոնապարտի եգիպտական արշավանքի ընթացքում՝ 1799 թ. հունվարին, ստորագրվեց ռուս-թուրքական պայմանագիր՝ ընդդեմ Ֆրանսիայի, որը Եվրոպայի համար արտասովոր երևույթ էր և Շ. Մ. Թալեյրանի դիվանագիտության պարտությունը: Այդ կապակցությամբ Պավել I-ի մանիֆեստում ասվում էր. «Մեր դաշնակիցների հետ միասին ցանկություն ունենալով ոչնչացնելու Ֆրանսիայում գոյություն ունեցող

անօրինական իշխանությունը, մենք ոտքի ելանք դրա դեմ մեր բոլոր ուժերով» [2, 350]:

1799 թ. բրյումերի 18-ի հեղաշրջման արդյունքում, որով ավարտվեց ֆրանսիական հեղափոխությունը, առաջին հյուպատոս հռչակված Նապոլեոն Բոնապարտը փորձեց Ռուսաստանի հետ դաշինք կնքել: Դրա համար Շ. Մ. Թալեյրանը նրան համարում էր «դիվանագիտական արվեստի վարպետ» [8, 402]:

Այսպիսով ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին Ռուսաստանը Ֆրանսիայում միապետական կարգերը վերականգնելու համար էական քայլեր չձեռնարկեց և վարում էր իր շահերի բավարարմանը միտված քաղաքականություն՝ նպատակ ունենալով ամրապնդել դիրքերը Եվրոպայում:

Գրականություն

1. Բորիսով Յու., Շառլ-Մորիս Թալեյրան, Երևան, 1989:
2. Մանֆրեդ Ա., Նապոլեոն Բոնապարտ: Երևան, 1975:
3. Виноградов Б. Екатерина II и французская революция: Дипломатия Екатерины Великой. «Новая и новейшая история». № 6, Москва, 2001.
4. Гордон А. Просвещение в России: Преобразование России. Международная конференция «Екатерина Великая - эпоха российской истории». Санкт-Петербург, 1996.
5. История дипломатии в девяти томах. Под ред. В. Потемкина, том I, Москва, 1941.
6. Карллейль Т. Французская революция. История. Москва. 1991.
7. Крапоткин П. Великая французская революция. Москва. 1979.
8. Лактионов А. История дипломатии. Москва. 2009.
9. Литературное наследство. Под ред. П. Лебедев-Полянский. Том 29-30. Русская культура и Франция. Москва, 1937.
10. Мадариага Д. Россия в эпоху Екатерины Великой. Москва, 2002.
11. Манфред А. Великая французская буржуазная революция. Москва, 1956.
12. Сахаров А. История России. С начала XVIII до конца XIX века. Москва. 1998.
13. Сборник императорского русского исторического общества. Под ред. Г. Карпов и Г. Штендман, том 42, Санкт-Петербург, 1885.
14. Соловьев С. Собрание сочинений, т. 2, Ростов-на-Дону, 1997.
15. Хрестоматия по новой истории 1789-1870. Москва, 1941.

Русская дипломатия во время Французской революции

Акопян Лилит
Факультет гуманитарных наук,
«История»,
руководитель магистерской диссертации:
доктор исторических наук, профессор Ф. Мовсисян

Резюме

Ключевые слова: *Франция, революция, дипломатия, русское общество, Симолин*

Во время Французской революции российская дипломатия сосредоточилась на нескольких ключевых целях: поддержании политической стабильности в Европе, предотвращении распространения революции и укреплении влияния России в Восточной Европе. Императрица избегала прямых военных действий против революционной Франции, считая победу в войне с Турцией и Швецией и раздел Польши более важными для России.

Russian Diplomacy during the French Revolution

Hakobyan Lilit
Faculty of Humanities,
"History",
Academic Supervisor: F. Movsisyan,
Doctor of Historical Sciences, Professor

Summary

Key words: France, revolution, diplomacy, Russian society, Simolin

During the French Revolution, Russian diplomacy focused on several key goals: maintaining political stability in Europe, preventing the spread of the revolution, and strengthening Russian influence in Eastern Europe. The empress avoided direct military action against revolutionary France, as she considered victory in the war against Turkey and Sweden and the partition of Poland more important for Russia.

Մասոնության ծագումը Ռուսաստանում և նրա ազդեցությունը ներքաղաքական զարգացումների վրա

Հակոբյան Սերգեյ
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ,
«Պատմություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
պ. գ. դ., պրոֆեսոր Ֆ. Մովսիսյան

Հանգուցային բառեր. *մասոնություն, Ռուսաստան, օթյակ, Ելագին, Նովիկով, Ալեքսանդր I, Կովալևսկի*

Մասոնությունը մարդկության պատմության ամենահետաքրքիր և ուշագրավ երևույթներից մեկն է, որը մինչ օրս տարբեր կերպ է ընկալվում, բնութագրվում և գնահատվում ոչ միայն հասարակության տարբեր շերտերի, այլև պատմաբանների կողմից: Դա պայմանավորված է նրանով, որ մասոնական օթյակները, իրենց ձևավորումից սկսած ընդհուպ մինչև մեր օրերը, գործում են գաղտնի, չեն բացահայտում իրենց անդամներին, չեն արձագանքում իրենց ուղղված ոչ դրվատանքին և ոչ էլ քննադատությանը:

Դա առիթ է տալիս մասոնների հակառակորդներին նրանց ներկայացնել որպես նեռի և սատանայի պաշտամունքի ծառաներ, որը խորապես սխալ գնահատական է ու կատարյալ մոլորություն: Իրականում մասոնությունը մարդասիրական, փիլիսոփայական և համաշխարհային միություն է, որն իր վերջնական նպատակը համարում է բոլոր մարդկանց միավորումը ազատության, հավասարության և եղբայրության հիման վրա, առանց ռասայի, ազգության, հավատքի ու մշակույթի տարբերության, միասնական գլոբալ դաշինքի մեջ: Մասոնությունը չի պատկանում որևէ երկրի, այն բնույթով ինտերնացիոնալ է, իսկ մասոնները «մարդիկ են, ովքեր կերտում են համաշխարհային պատմությունը» [12]:

Ռուսաստանում մասոնության հայտնվելը, պատմագրությունում տեղ գտած վարկածի համաձայն, կապվում է Պյոտր I-ի հետ, ում Անգլիայում գտնված ժամանակ ձեռնադրել է մասոն անգլիական մասոնության հայտնի դեմքերից մաթեմատիկոս և ֆիզիկոս Քրիստոֆեր Ռենը: Վերադառնալով հայրենիք՝ Պյոտր I-ը Կրոնշտադտում մասոնական օթյակ է հիմնել, որի Գերհարգելի Վարպետ ընտրվել է իր մերձավոր օգնական և խորհրդատու Ֆրանց Լեֆորտը, Առաջին Վերահսկիչ՝ փոխծովակալ Պատրիկ Գորդոնը, իսկ Երկրորդ Վերահսկիչ՝ ցարն ինքը: Որոշ ժամա-

նակ անց Ֆ. Լեֆորտը մաթեմատիկայի և նավագնացության դպրոցին կից հիմնել է «Նեպտուն» գաղտնի ակումբ, որի մեջ, բացի մի քանի ռուս պաշտոնյաներից, մտել են նաև շոտլանդացի Ջ. Բրյուսը և շոտլանդացի մաթեմատիկոս Հ. Ֆարվարսոնը [11, 88]: Այս մասին ռուսական արխիվներում փաստաթղթային հիմնավորում չկա [5, 357]:

Ռուսաստանում մասոնության տարածվելը Պյոտր I-ի հետ կապելը պատահական չէ և դիտարկվում է լայն քաղաքական և մշակութային փոփոխությունների համատեքստում: XVIII դարի սկզբին Պյոտր I-ի իրականացրած բարեփոխումները միտված էին արևմտյան արժեքների ու կառույցների ներմուծմանը: Դրանով պայմանավորված՝ ռուսական վերնախավն սկսեց առավել ակտիվ շփվել եվրոպական մշակույթի և քաղաքական մտքի հետ: Դրանց ազդեցության տակ ռուս փիլիսոփա Գ. Ֆ. Բուժինսկին, պատմաբան Վ. Ն. Տատիշչևը, գրող Ա. Դ. Կանտեմիրն իրենց ստեղծագործություններում մասոնական մի շարք դատողություններ են արել [22, 38-47]:

Ռուսաստանում մասոնության տարածման փաստաթղթային առաջին հիմնավոր հիշատակումը վերաբերում է 1731 թ. հունվարի 14-ին, ըստ որի՝ «Լոնդոնի Մեծ Օթյակի» Մեծ Վարպետ լորդ Լավելը կապիտան Ջոն Ֆիլիպսին նշանակել է Ռուսաստանում Գավառային Մեծ Վարպետ [6, 30]: Դա վկայում է այն մասին, որ մինչ այդ եղել են մասոններ և գործել են օթյակներ, այլապես Գավառային Մեծ Վարպետ չէր նշանակվի: Մասնավորապես 1728 թ. Ռուսաստանում զինվորական ծառայության անցած շոտլանդացի գնդապետ մասոն Ջեյմս Քեյթը գեներալ-մայորի կոչում է ստացել: 1732 թ. նա Պետերբուրգում մասոնական օթյակ էղեկավարել և 1741 թ., նշանակվելով Ռուսաստանում Գավառային Մեծ Վարպետ, լայն գործունեություն է ծավալել մասոնության տարածման գործում [11, 89-90]:

1747 թ. պրուսական զինվորական ծառայությունից վերադարձած երիտասարդ կոմս Ն. Ա. Գոլովինը գաղտնի գրասենյակում հարցաքննության ժամանակ խոստովանել է իր և մի խումբ ռուս սպաների մասոն լինելու մասին, հայտնել կոմսեր Զաքար և Իվան Չեռնիշևներ եղբայրների անունները:

Մասոնությունը Ռուսաստանում սկզբնավորվել է XVIII դարի առաջին կեսին՝ հիմնականում եվրոպական դիվանագետների և վաճառականների միջոցով: Սկզբնական շրջանում Պետերբուրգում և Մոսկվայում հիմնված ռուսական մասոնական օթյակների անդամներն արտասահմանցիներ էին՝ զինվորական ծառայության անցած սպաներ և վաճառականներ: Այդ օթյակներն սկզբում ծառայել են որպես եվրոպացի մասոն-

ների հանդիպման վայրեր, բայց աստիճանաբար դրանցում ընդգրկվել են նաև ռուս ազնվականներ:

XVIII դարի երկրորդ կեսին Ռուսաստանում մասոնական օթյակների հիմնումն ընթանում էր չափազանց դանդաղ: 1750-1770 թթ. գործում էին մոտ 30 օթյակներ, հիմնականում Պետերբուրգում, Մոսկվայում, Արխանգելսկում, Ռիգայում և Միտավում [11, 499-501]: 1751 թ. Ռիգայում գործում էր «Հյուսիսայի աստղ», իսկ Պետերբուրգում՝ «Լռակյացություն» օթյակը: 1756 թ. կոմս Ռ. Ի. Վորոնցովը Պետերբուրգում ռուսական օթյակ էր ղեկավարում, որի 35 անդամները գերազանցապես սպաներ և ազնվականներ էին [15, 51]: 1762 թ. Պետերբուրգում գործում էր «Երջանիկ համաձայնություն» օթյակը:

Կայսրուհի Ելիզավետա Պետրովնայի օրոք Դանիայում և Շվեդիայում ռուսաց դեսպան Ն. Ի. Պանինը դիվանագիտական գործունեության տարիներին անդամագրվել էր մի քանի մասոնական օթյակների: Կայսրուհու մահից հետո՝1761 թ. դեկտեմբերին, ռուսաց գահն անցավ Պյոտր III-ին, ով, ըստ գերմանական աղբյուրների, մասոն էր: Նա Պետերբուրգի օթյակին աշխատելու համար շենք նվիրեց, որի անդամներին հաճախ հրավիրում էր Օրանիենբաումի իր կեցավայրը [15, 65]: Պյոտր III-ի կառավարման տարիներին ազնվականության պարագլուխը մասոն Ն. Ի. Պանինն էր, ում կայսրը նշանակեց գահաժառանգ անչափահաս Պավելի դաստիարակության գործը: Ն. Ի. Պանինի անձնական քարտուղար և վստահելի անձ Դ. Ի. Ֆոնվիզինի պատմելով, Նիկիտա Պանինի հարազատ եղբայր գեներալ Պավել Պանինը, Ե. Ն. Ռեպնինը, Ե. Ռ. Դաշկովը և ուրիշները մտադիր էին դավադիր ճանապարհով գահընկեց անել Եկատերինա II-ին և գահ բարձրացնել Պավելին: Կայսրուհին խափանեց նրանց դավադրությունը, Պավելը խոստովանությունը ներեց, ով դրանից հետո ամբողջովին զբաղվեց անձնական գործերով: Ն. Ի. Պանինը պահպանեց իր պաշտոնը, անգամ ֆինանսական հարուտ վարձատրություն ստացավ, բայց գահը ժառանգած Պավելը նրան պաշտոնանկ արեց: Ազնվականության պարագլուխ կրկին դարձավ գեներալ Ն. Ի. Սալտիկովը, ով մասոն չէր, Ն. Ի. Պանինի խմբավորումից չէր ու ամբողջությամբ նվիրված էր պետությանը [15, 71]:

1770-ական թթ. սկզբում ռուսական մասոնությունում ձևավորվեցին երկու հիմնական ուղղություններ՝ ելագինյան միություն և ռայխելյան համակարգ, որոնք միմյանց հետ մրցակցում էին: Այդ տարիներին Պետերբուրգում հիմնվեցին «Ապոլոն», «Աստրեա», «Կոնկլավ», «Կոնկորդիա», «Իզիդա», «Հյուսիսայի աստղ», «Հյուսիսային բարեկամներ», Ռիգայում՝ «Միներվա», Վիլնյուսում՝ «Բարեկամություն» օթյակները [7, 265-269]:

1772 թ. Պետերբուրգում «Անգլիայի Մեծ Օթյակի» արտոնագրով հիմնվեց «Պետերբուրգի Մեծ Օթյակը», որը Կապիտուլ էր և նախատեսված էր մասոնության բարձր աստիճաններ շնորհելու համար: Այդ օթյակի անդամներն էին կոմսեր Յ. Ա. Բրյուսը, Ա. Կ. Ռազումովսկին, Ա. Ս. Ստրոգանովը, իշխաններ Յ. Վ. Դոլգորուկին, Գ. Պ. Գագարինը, Ա. Բ. Կուրակինը, Մ. Մ. Շչերբատովը, Ի. Վ. Նեսվիցկին, Ա. Ա. Ռժևսկին, Ի. Ն. Բոլտինը, Ն. Մ. Բորոզդինը և ուրիշներ [15, 69]: Նրանք Եկատերինա II-ի 1763 թ. հրամանագրով Արտաքին գործերի կոլեգիայի նախագահ նշանակված Ն. Ի. Պանինի խմբավորման մարդիկ էին, կայսերական պալատին մոտ կանգնած մարդիկ և լուրջ դերակատարում ունեին երկրի ներքաղաքական գործընթացներում:

Եկատերինա II-ի օրոք ռուսական օթյակների մեծ մասը գործում էին անգլիական մասոնության սկզբունքով, եռաստիճան համակարգով և ղեկավարվում էին 1770 թ. հիմնված Պետերբուրգի «Գավառային Մեծ Օթյակի» կողմից:

XVIII դարում Ռուսաստանում մասոնության տարածման գործում նշանակալի դեր ունեցավ ռուս պետական գործիչ, պատմաբան, փիլիսոփա, գրող Իվան Պերֆիլևիչ Ելագինը: Նա 1770 թ. Բեռլինի «Ռոյալ Յորք» օթյակից թույլտվություն ստացավ բացելու Գավառային մեծ օթյակ և դարձավ դրա մեծ վարպետը: 1772 թ. Ի. Պ. Ելագինը դիմեց Անգլիայի Առաջին Մեծ օթյակին և երկրորդ անգամ թույլտվություն ստացավ բացելու Գավառային մեծ օթյակ: Սանկտ Պետերբուրգում նրա ղեկավարած Գավառային մեծ օթյակին անդամագրվեցին ժամանակի հայտնի դեմքեր, սենատոր, գեներալ կոմս Ռ. Ի. Վորոնցովը, իշխան Ն. Վ. Նեսվիցկին, գեներալներ Ա. Լ. Շչերբաչովը, Ս. Վ. Պերֆիլևը, Վ. Ի. Լուկինը և ուրիշներ [11, 125]:

1776 թ. այս օթյակի Առաջին վերահսկիչը Պ. Ի. Պանինն էր, ով նույն թվականին Շվեդիայի գահաժառանգ, օթյակի Մեծ Վաչպետ Կառլ Ջյուդերմանլանդցու հետ պայմանավորվեց ռուսական օթյակներում «խիստ դիտարկման» համակարգ ներդնելու մասին: Արդյունքում Պետերբուրգում հիմնվեց «Կապիտուլ ֆենիքս», որի ցմահ տեղապահ, Ի. Պ. Ելագինի հրաժարականից հետո, նշանակվեց իշխան Գ. Պ. Գագարինը: Մասոնական բարձր աստիճաններ շնորհող «Կապիտուլ ֆենիքսի» անդամ կարող էին դառնալ 16 սերունդ ազնվական արյուն ունեցողները, որոնց առնվազն 4 սերունդ նախնիները չպետք է լիներին մավրեր, թուրքեր և հրեաներ: Այս կապիտուլին անդամակցեցին կոմսեր Ալեքսանդր և Իվան Ապրակսինները, Անդրեյ և Իվան Շուվալովները, Ա. Ս. Ստրոգանովը, Ա. Ս. Մուսին-Պուշկինը [21, 72]:

Ի. Պ. Ելագինի գլխավորած Գավառային Մեծ օթյակի ղեկավարու-

թյամբ 1770-ական թվականներին Ռուսաստանում գործում էին 14 օթյակներ, որոնց անդամների ընդհանուր թիվը հասնում էր 400-ի [11, 127; 15, 70]: Օթյակներում ղեկավար պաշտոնները զբաղեցնում էին ազնվականության ներկայացուցիչները՝ հիմնականում սենատորները, գեներալները, գնդապետները, պետական պաշտոնյաները և, շատ հազվադեպ, վաճառականները:

Ի. Պ. Ելագինը սահմանեց մասոնական ծեսեր, աստիճաններ, ձեռնամուխ եղավ նոր օթյակների հիմնադրմանը՝ փորձելով ամուր կապեր հաստատել անգլիական օթյակների հետ: Նրա հիմնած օթյակները գործում էին իր սահմանած կանոնակարգերով (որը ռուսական մասոնության պատմությունում հայտնի է համակարգով), որը սկզբում կրկնում էր անգլիական մասոնության ավանդույթները, իսկ հետո սկսեց իր վրա կրել այլ համակարգերի ազդեցությունը:

Ի. Պ. Ելագինը մասոնությունը ընկալում էր ոչ միայն որպես բարոյական կատարելագործմանն ուղղված շարժում, այլ նաև կայսրության բարեփոխման, լուսավորության և կրթության տարածման միջոց: Նա փորձում էր մասոնական գաղափարները հարմարեցնել ռուսական իրականությանը՝ միաժամանակ պահելով եվրոպական ավանդույթների հիմքը: Ի. Պ. Ելագինը հանդիսանում է ռուսական մասոնության կայացման վաղ փուլի առանցքային դեմքը, մասոնության կազմակերպիչը, գաղափարախոսը և համակարգողը [13, 61]:

Ռուսական մասոնության կյանքում 1776 թ. տեղի ունեցավ արմատական բեկում. ելագինյան և ռայխելյան համակարգերը միավորվեցին: Այդ տարիներին երևան եկավ քաղաքական ուղղվածություն ունեցող մասոնության «շվեդական» ուղղությունը, որն ակտիվ գործունեություն ծավալեց գահաժառանգ Պավել Պետրովիչի աջակցությամբ:

Ռուսական մասոնության զարգացման նոր փուլը կապված է Մոսկվայի հետ, որտեղ տեղափոխվեց ռուսական մասոնության գործունեության կենտրոնը: Դրանում մեծ դեր խաղած լուսավորիչ, հրատարակիչ, հասարակական գործիչ Նիկոլայ Իվանովիչ Նովիկովը, ով Պետերբուրգի «Աստրեա» և «Ուրանիա» օթյակների անդամ էր: Ամերիկյան պատմաբան Ռիչարդ Փրայսը Նովիկովին բնութագրում է այսպես. «Նա անխնա դատապարտեց «արատը» և նախանձախնդրորեն առաջ մղեց օգտակար գիտելիքը, քանի որ, իր համոզմամբ, մարդկությունը կարող է բարելավվել միայն մարդու կատարելագործման միջոցով... Այս շեշտադրումը... միշտ եղել է նրան բնորոշող հատկանիշ» [21, 314]:

Ն. Ի. Նովիկովի ծառայությունը այն է, որ նա փաստացի առաջինն ապահովեց մասոնության գաղափարների տարածումը ռուսական գա-

վառների տասնյակ քաղաքներում [3, 314]: Նա մասնությանը վերաբերվում էր որպես հասարակական գործունեության միջոցի: Եթե անգլիական ավանդական մասոնության ջատագով Ի. Պ. Ելագինը մասոնությունն ընկալում էր որպես հոգևոր և միստիկ համակարգ, ապա գերմանական Ռոզենկրոյցերական մասոնության ներկայացուցիչ Ն. Ի. Նովիկովը մասոնությունն ուղորդում էր դեպի լուսավորական և սոցիալական գործունեություն և այն ընկալում էր որպես գաղափարական և հասարակական շարժում: Ն. Ի. Նովիկովն օգտագործում էր մասոնությունն իբրև գործիք՝ հասարակությունը բարելավելու, լուսավորելու և կրթելու համար: Նա միակն էր, ով մասոնությունը բերեց դեպի քաղաքացիական կյանք և քաղաքականության սահման [14, 134]:

1780 թ. Ն. Ի. Նովիկովի ջանքերով Մոսկվայում հիմնվեց 9 անդամից բաղկացած գաղտնի գիտական «Հարմոնիա» օթյակ, որի անդամներ դարձան գլխավոր դատախազ Ա. Ա. Չերկասսկին, պետական գանձարանի Մոսկվայի բաժանմունքի ղեկավար Ն. Ն. Տրուբեցկոյը, նրա եղբայր գեներալ Յ. Ն. Տրուբեցկոյը, լուսավորիչ Մ. Մ. Խերասկովը, ալքիմիկոս Ա. Մ. Կուտուզովը, Մոսկվայի համալսարանի տնօրեն Ի. Պ. Տուրգենևը և ուրիշներ [4, 88-91]:

1781 թ. Յ. Կ. Շվարցի նախաձեռնությամբ հիմնադրվեց «Բարեկամական գիտական ընկերություն»: Նույն թվականին նրա առաջարկությամբ գոյություն ունեցող օթյակների առաջնորդները, առանց իրենց կազմակերպչական կառուցվածքը փոխելու, միավորվեցին «Հարմոնիա» օթյակի մեջ:

1781 թ. Մոսկովայի մասոնների պատվիրակ Ի. Կ. Շվարցը մեկնեց Բեռլին և անձնական ջանքերի շնորհիվ կարողացավ ստանալ գերմանական ազդեցիկ մասոնների նախնական համաձայնությունը՝ Ռուսաստանի Գավառային մեծ օթյակի կախվածությունը շվեդական մասոնության համակարգից դուրս բերելու ուղղությամբ: Մեկ տարի անց Ի. Նովիկովը, Ի. Կ. Շվարցը և Ի. Յա. Բեբերը մասնակցեցին 1782 թ. հուլիսի 16-ի Վիլհելմսբադի համաձայնագրի կայացմանը: Այն հաստատեց ֆրանսիացի մասոն Ժան-Բատիստ Վիլլերմոզի կազմած «Խիստ պահպանման կանոնադրությունը», որով մասոնությունը անցում կատարեց դեպի բարոյական կատարելագործման, եղբայրության և լուսավորության գաղափարները [24, 247]:

XVIII դարի վերջին ռուսական մասոնությունը սկսեց աստիճանաբար վերածվել ոչ միայն բարոյական ինքնակատարելագործման կազմակերպության, այլև ինտելեկտուալ և հասարակական շարժման: 1786-1792 թթ. հանդիսացան ռուսական մասոնության զարգացման ամենաբարենպաստ

տարիները, երբ ազատ որմնադիրների օրդենը դարձավ հասարակական շարժման և մշակույթի ամենավճռորոշ ուժերից մեկը: Դա առաջին հերթին պայմանավորված էր մոսկովյան «մարտինականների» գործունեության հետ, որոնք օրենքի առաջ բոլորի հավասարության, կրթության և բարոյականության միջոցով հասարակության աստիճանական բարելավման գաղափարները հակադրում էին ցարական ինքնակալությանը: Ռուս մասոններն, ըստ էության, վերահսկվում և ուղղորդվում էին արտասահմանյան կենտրոնների կողմից, հանդիսանում էին դրանց գործակալները և իրականացնում ստացված հանձնարարությունները [9, 131]:

Ազատ որմնադիրների եղբայրության՝ մտքի և խոսքի ազատության, անհատի ինքնազարգացման, հումանիզմի և լուսավորության գաղափարները հակասում էին Ռուսաստանի ինքնակալ վարչակարգին ու ուղղափառ եկեղեցու դոգմաներին: Ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին Ռուսաստանում ձևավորվեց մտայնություն, որ մասոնությունն անքակտելի կապեր ունի հեղափոխական գաղափարախոսության հետ և կարող է սպառնալիք դառնալ միապետության կայունությանը: Օթյակների գործունեությունը չվերահսկող ռուսական կառավարությունը մասոնությունը դիտարկում էր ոչ թե որպես ազատ եղբայրների միություն, այլ՝ գաղտնագործունեությամբ զբաղվող կազմակերպություն, որը կարող վտանգել միապետության դիրքերը և հեղափոխական գաղափարներ տարածել [23, 137]:

Ռուսական կայսրությունը սկսեց զգուշանալ ազատ որմնադիրների եղբայրությունից, որը XVIII դարի վերջին ուներ մոտ 140 օթյակներ և շուրջ 7500 անդամներ [7, 253]:

Գնահատելով մասոնությունից ակնկալվող վտանգները՝ Եկատերինա II-ը ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին հրամայեց ուժեղացնել պայքարը մասոնների դեմ: 1792 թ. Ն. Ի. Նովիկովը ձերբակալվեց և 4 տարի մնաց Շլիսելբուրգի բանտում: 1793-1794 թթ. կայսրուհին արքունիքից հեռացրեց մասոն պաշտոնյաներ Ա. Լ. Նարիշկինին, Ն. Վ. Ռեպնինին, Ի. Գ. Չեռնիշևին, գահաժառանգ Պավելին մեկուսացրեց մասոններից և համոզվելով, որ նա կապեր չունի Ն. Ի. Նովիկովի հետ, շտապեց փակել մասոնական օթյակները: Մյուս մասոնների նկատմամբ համեմատաբար ավելի մեղմ պատիժ սահմանվեց, իշխաններ Ի. Ի. Տրուբեցկոյը և Ա. Ի. Տուրգենևը աքսորվեցին իրենց հեռավոր կալվածքները, իսկ Ի. Վ. Լոպուխինին թույլատրվեց մնալ Մոսկվայում հսկողության տակ:

Ռուս մասոնները գահաժառանգ Պավելի մեջ տեսնում էին իրենց շարժման հովանավորը, որի գլխավոր դաստիարակ Ն. Ի. Պանինը Գավառային մեծ օթյակի վարպետ էր: Նրա ազդեցության շնորհիվ Պավել I-ի

գահակալության տարիներին մասոնները մասամբ վերականգնվեցին Եկատերինա II-ի կողմից իրենց հասցված հարվածից: Պավել I-ի հրամանով Ն. Ի. Նովիկովը բանտից ազատվեց և կայսրուհու թաղման օրը պալատում ընդունելության արժանացավ: Նա հանեց Ի. Վ. Լոպուխինի նկատմամբ հսկողությունը, թույլ տվեց Ի. Ի. Տրուբեցկոյին և Ա. Ի. Տուրգենևին ազատ ապրել ցանկացած տեղ, աքսորից ազատ արձակեց մասոն Ա. Ն. Ռադիշչևին: Նա մասոններ Վ. Պ. Կոչուբեյին, ապա Ա. Վ. Կուրակինին նշանակեց փոխկանցլեր, Պ.Ա.Պալենին՝ արտաքին գործերի կոլեգիայի անդամ և Պետերբուրգի նահանգապետ, Պ. Վ. Լոպուխինին՝ գեներալ-դատախազ, բարձրացրեց մի քանի մասոնների կոչումները, հրամայեց ազատ արձակել Մ.Ի. Նևզորովին, կարճ ժամանակով իրեն մոտեցրեց Ն. Ի. Նովիկովին [7, 106-107]:

1798 թ. նոյեմբերի 7-ին Պավել I-ը Պետերբուրգում հանդիսավորությամբ ընդունեց Մալթիական օրդենի Մեծ կոմանդորի տիտղոսը՝ վերցնելով օրդենը իր հովանավորության տակ [7, 171]: Չնայած մասոնների նկատմամբ դրսևորած արտաքուստ բարեհաճ վերաբերմունքին, Պավել I-ը մասոնական օթյակներին ազատ գործողությունների հնարավորություններ չտվեց: Ներքին և արտաքին քաղաքակության մեջ նրա կտրուկ շրջադարձը լուրջ հարված էր ազնվականության շահերին, որոնց վերնախավից շատերը, այդ թվում՝ Ն. Ի. Պանինը, հեռացվեցին կառավարության առանցքային պաշտոններից: 1779 թ. վերջին դրան հետևեցին կայսրին գահաժառանգով փոխարինելու, նրան վարկաբեկելու, խելագար ներկայացնելու և գահազրկելու լուրջ գործընթացներ: Դրան տեղյակ էր գահաժառանգ Ալեքսանդրը, ով կապեր ուներ 12 դավադիրների հետ: Անձնական դրդապատճառներով Պավել I-ից դժգոհ էր 60 մարդ: Դավադրության գլխավոր կազմակերպիչը Պետերբուրգի գեներալ-նահանգապետ մասոն Պ. Ա. Պալենն էր, անդամները՝ պետական լուրջ գործիչներ ու զինվորականներ, որոնց գաղտնի աջակցում էր անգլիական դեսպանորդ մասոն Չառլզ Ուիթվորտը: 1801 թ. մարտի 11-ին Պավել I-ը դարձավ մասոնական դավադրության զոհ [7, 177-187; 15, 117-122]:

Ռուսաստանի գահը ստանձնած Ալեքսանդր I-ը հայտարարեց, որ իր օրոք երկրի կառավարումը կլինի այնպիսին, ինչպիսին իր տատիկի ժամանակ էր: Նա վերականգնեց Եկատերինա II-ի կողմից ազնվականությանը և քաղաքներին տրված շնորհագիրը, ներում շնորհեց արտասահմանում թաքնվող ազնվականներին, ազատականացրեց նրանց մուտքն ու ելքը Ռուսաստան, վերացրեց գաղտնի առաքման բաժինը, արտասահմանից ստացվող գրականության նկատմամբ արգելքը, թույլատրեց բացել մասնավոր տպարաններ:

Եթե Եկատերինա II-ի և Պավել I-ի շրջապատում մասոնները կազմում էին նրանց մերձավորների մի մասը, ապա Ալեքսանդր I-ի շրջապատը բացառապես մասոնական էր: Նա մասոն Դ. Պ. Տրոշչինսկու գլխավորությամբ ստեղծեց 12 հոգուց բաղկացած Մշտական խորհուրդ, որը մինչև 1810 թ. իրեն ծառայեց որպես խորհրդատվական մարմին: Նա մասոն Մ. Մ. Սպերանսկուն նշանակեց արդարադատության նախարար, ով մի շարք բարեփոխումներ իրականացրեց պետական կառավարման համակարգում և այլ ոլորտներում: Ալեքսանդր I-ը ներքին և արտաքին խնդիրների լուծման նպատակով ստեղծեց իրեն հավատարիմ 7 ընկերներից կազմված Գաղտնի խորհուրդ, որի մեջ մտան մասոններ Ն. Ն. Նովոսիլցովը, Ա. Ս. Ստրոգանովը, Ա. Ա. Չարտորիյսկին, Վ. Պ. Կոչուբեյը: Կայսրը հրաժարվեց կոլեգիալ կառավարումից և ստեղծեց 8 նախարարություններ, որոնցից 4-ը գլխավորում էին մասոններ Ն. Ս. Մորդվինովը, Ա. Վ. Վորոնցովը, Վ. Պ. Կոչուբեյը և Ա. Ի. Վասիլևը: Ա. Վ. Վորոնցովը միաժամանակ զբաղեցնում էր կանցլերի պաշտոնը, իսկ Ա. Ս. Ստրոգանովը, Ն. Ն. Նովոսիլցովը և Ա. Ա. Չարտորիյսկին նշանակվեցին փոխնախարարներ [7, 263; 15, 126]:

1803 թ. Ալեքսանդր I-ը թույլատրեց մասոնական օթյակների գործունեությունը, որտեղ ակտիվ աշխատանքներ էին տանում Ի. Վ. Լոպուխինը, Մ. Ի. Նևզորովը, Օ. Ա. Պոզդեևը և Ա. Ֆ. Լաբզինը: 1804 թ. Մոսկվայում ստեղծված օթյակը կոչվեց Ալեքսանդր I-ի անունով, ով օտարերկրյա օթյակի անդամ էր [14, 49] և մասոն էր ձեռնադրվել նաև պրոֆեսոր Ի. Վ. Վեբերի ղեկավարած Պետերբուրգի «Կապիտուլ ֆենիքս»-ում [15, 130]:

1812 թ. հայրենական պատերազմը որոշակի ազդեցությունը ունեցավ ռուսական մասոնության քաղաքական ընթացքի վրա: Շատ ռուս սպաներ, ովքեր մասնակցել էին նապոլեոնյան տիրապետությունից եվրոպական ժողովուրդների ազատագրման համար պայքարին, հայրենիք էին վերադարձել՝ ներշնչված ազատության, հավասարության և եղբայրության գաղափարներով: Այդ գաղափարները ռուս հասարակության մեջ տարածվում էին հիմնականում գաղտնի ճանապարհով՝ մասոնական օթյակների, գրական-ընթերցողական խմբակների և բարեգործական ընկերությունների գործունեության քողի տակ: Շատ ազատամիտ մտավորականներ անդամակցում էին քաղաքական նպատակով գործող «Միասնական փրկության ընկերություն», «Հյուսիսային ընկերություն», «Հարավային ընկերություն» և այլ կազմակերպությունների, որոնք մասոնական բնույթ ունեին, իսկ անդամներից շատերն ազատ որմնադիրներ էին: Դրանից անհանգստացած՝ Ալեքսանդր I-ը 1822 թ. օգոստոսի 1-ի հրամանա-

գիր ստորագրեց, որով Ռուսաստանում արգելվում էին «բոլոր գաղտնի ընկերությունները, անկախ այն բանից, թե դրանք ինչպես են գործել՝ մասոնական օթյակի, թե այլ անվանումով» [15, 162]:

Մասոնական շատ օթյակները համագործակցեցին Ալեքսանդր I-ի հետ, բայց արմատական ազնվականությունը պահպանեց իր գաղտնի կազմակերպությունները և 1825 թ դեպտեմբերի 14-ին Պետերբուրգում ապստամբեց ցարական ինքնակալության դեմ: Ապստամբ դեկաբրիստների նպատակն էր տապալել ինքնակալությունը և հաստատել լիբերալ կառավարում: Դեկաբրիստների առաջնորդներից Պավել Պեստելը, Կոնդրատի Ռիլեևը, Ալեքսանդր և Նիկիտա Մուրավևները, Սերգեյ Տրուբեցկոյը, Մատվեյ և Սերգեյ Մուրավև-Ապոստոլը և ուրիշներ մասոն էին: Սենատի հրապարակում ապստամբությունը ճնշողների մեջ նույնպես կային մասոններ՝ Բ. Պերովսկին, Օ. Պրյանիշնիկովը, Ա. Նեյդգարդը, Ե. Գոլովինը և ուրիշներ [15, 165]:

Գահի բազմած Նիկոլայ I-ն անձամբ հարցաքննեց ապստամբության առաջնորդներին և դաժանորեն պատժեց խռովարարներին, որոնցից 5-ը կախաղան բարձրացվեցին [20, 224-225, 285]: 1826 թ. նրա հրամանագրով ռուսական բոլոր մասոնական օթյակները պաշտոնապես արգելվեցին: Դեկաբրիստների ապստամբությունից հետո մասոնությունը Ռուսաստանում ձաղոխվեց որպես կազմակերպված և ազդեցիկ շարժում: Այն ընկալվեց որպես պետականության համար սպառնալիք և ենթարկվեց խիստ ճնշումների, որի արդյունքում «մասոնությունը դադարեց լինել քաղաքական ազդակիր» [9, 376]:

XX դարի սկզբին ռուսական մասոնությունը վերածնվեց նոր պայմաններում և ունեցավ ավելի կազմակերպված ու քաղաքական ակտիվ բնույթ, քան XIX դարի երկրորդ կեսին: Դա պայմանավորված էր Ռուսաստանի հասարակական և քաղաքական կյանքի փոփոխություններով, որին նպաստեցին, հատկապես, 1905 թ. հեղափոխությունը և առաջին Պետական Դումայի հրավիրումը: 1905 թ. Նիկոլայ II-ը սահմանադրական զիջումներ արեց, որն առերևույթ ազատություն տվեց քաղաքական կազմակերպություններին: Այս բարենպաստ պայմաններում մասոնությունը սկսեց վերակազմակերպվել՝ նպատակ ունենալով Ռուսաստանը դարձնել ազատ և իրավական պետություն [2, 17]:

Ռուսաստանում քաղաքական մասոնության ձևավորման գործում մեծ դեր խաղաց պատմաբան, սոցիոլոգ, ազգագրագետ Մ. Մ. Կովալևսկին, ով Փարիզում վտարանդիության տարիներին անդամակցել էր մասոնությանը: 1905 թ. օգոստոսին վերադառնալով Ռուսաստան՝ նա դարձավ Դեմոկրատական բարեփոխումների կուսակցության առաջնորդնե-

րից մեկը և իր մտերիմ ընկերներ, Փարիզի ռուսական «Տիեզերք» №288 օթյակի անդամներ, պրոֆեսորներ Յ. Ս. Ղամբարովի, Ե. Վ. դե Ռոբերտիի, բժշկագիտության դոկտոր Ի. Զ. Լոռիս-Մելիքովի և Անիչկովի հետ ձեռնամուխ եղավ մասոնության տարածմանը: 1906 թ. նոյեմբերի 15-ին Պետերբուրգում Մ. Մ. Կովալևսկու նախաձեռնությամբ և ղեկավարությամբ հիմնվեց ռուսական քաղաքական մասոնության առաջին օթյակը՝ «Բևեռային աստղ»-ը, որի անդամների մեծ մասը ներկայացնում էր կադետների կուսակցությունը: [1, 290]:

1906-1908 թթ. Մ. Մ. Կովալևսկու ջանքերով հիմնվեցին նաև «Վերածնունդ», «Հյուսիսափայլ», «Աստրեա», «Ֆենիքս» օթյակները: Այդ տարիներին «Русская Старина», «Море», «Русский франкмасон», «Ребус» ամսագրերը բացահայտ մասոնական քարոզչություն էին իրականացնում: 1909 թ. դեկտեմբերին Մոսկվայում հիմնվեց «Ռուսաստանի ժողովուրդների միասնության ընկերություն», որը մասոնական գործունեություն էր իրականացնում [16, 18-19; 17, 36]:

1912 թ. ամռանը հիմնվեց «Ռուսաստանի ժողովուրդների Մեծ Արևելք» պարամասոնական քաղաքական կազմակերպություն, որի 40 բաժանմունքներում ընդգրկված էին 600-800 անդամներ [15, 264]: Կազմակերպությունը մինչև 1917 թ. ղեկավարեցին ձախ կադետներ, Պետական Դումայի անդամներ Ն. Վ. Նեկրասովը և Ա. Մ. Կոլյուբյակինը, այնուհետև՝ էսեռ Ա. Ֆ. Կերենսկին, մենշևիկ, Ժամանակավոր կառավարության գործերի կառավարիչ Ա. Յ. Գալապերինը: 1907-1917 թթ. Ռուսաստանում մասոնական բոլոր օթյակներում ընդգրկված էին 400-450 մասոններ [19, 29]:

1917 թ.հունվար-փետրվարին ռուսական քաղաքական մասոնությունն անցում կատարեց դեպի քաղաքական խմբավորում [14, 33-35; 17, 148]՝ ի դեմս մասոններ, Պետական դումայի նախագահ Մ. Վ. Ռոձյանկոյի, Կենտրոնական ռազմաարդյունաբերական կոմիտեի ղեկավար օկտյաբրիստ Ա Ի Գուչկովի, Համառուսական զեմստվոների միության նախագահ իշխան Գ. Ե Լվովի: Այս խմբավորումը, համագործակցելով «Ռազմական Օթյակի» անդամներ, ցարական բանակի գլխավոր շտաբի պետ Մ. Ալեքսեևի և ռազմաճակատների հրամանատարներ մի խումբ գեներալ մասոնների հետ, իրականցրին պալատական հեղաշրջում և ստիպեցին Նիկոլայ II-ին հրաժարվել գահից [8, 71]: Իշխանության եկած Ժամանակավոր կառավարության կազմը (1917 թ մարտի 2 - հոկտեմբերի 25) բացառապես մասոնական էր [10, 114-115]:

Մինչև 1917 թ. վերջը Ռուսաստանում հիմնվեցին մոտ 50 օթյակներ: 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո «Ռուսաստանի ժողովուրդների Մեծ Արևելքի» նախկին անդամները լքեցին Ռուսաստանը, վտա-

բանդվեցին եվրոպական երկրներ, հիմնականում Ֆրանսիա, որտեղ հիմնեցին իրենց օթյակները [7, 282-299; 10, 312-328]: Այսպիսով մասոնությունը Ռուսաստանում իր հիմնադրման օրվանից մինչև 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը բոլոր միապետերի օրոք որոշակի ազդեցություն է ունեցել երկրի ներքաղաքական զարգացումների վրա:

Գրականություն

1. Аврех А. Масоны и революция. Москва. 1990.
2. Берберова Н. Люди и ложи. Русские масоны XX столетия. Нью Йорк. 1986.
3. Боголюбов В. Новиков и его время. Москва. 1916.
4. Вернадский Г. Русское масонство в царствование Екатерини II. Санкт-Петербург. 1999.
5. Карпачев С. Масоны. Москва. 2007.
6. Карпачев. С. Тайны масонских орденов. Москва. 2007.
7. Курбатов В. Тайное общество масонов. Москва. 2007.
8. Николаевский Б. Русские масоны и революция. Москва. 1990.
9. Платонов О. Масоны в русской истори XX века. Москва. 2014.
10. Платонов О. Терновый венец России. Москва. 2000.
11. Пыпин А. Русское масонство:XVIII и первая четверть XIX в. Москва. 1916.
12. Ридли Дж. Фримасоны. Люди, творящие мировую историю. Москва. 2007.
13. Романченко Н. Материалы по масонству в России. Москва. 1907.
14. Серков А. История ресского масонства 1845-1945. Москва. 1997
15. Соловьев О. Русские масоны. Москва. 2007.
16. Соловьев О. Масонство в России. Вопросы истории, 1988, №10, с.18-19.
17. Старцев В. Русские масоны XX века. Вопросы истории, 1989, № 6, с. 36.
18. Старцев В. Русское политическое масонство начала XX века. Санкт-Петербург. 1996.
19. Серков А. История русского масонства 1845-1945. Москва. 1997.
20. Хасс Л. Еще раз о масонстве в России начала XX века. Вопросы истории. Москва. 1990. № 1. с. 29.
21. Щеголев П. Декабристы. Москва. 1926.
22. Южин-Сумбатов А. Воспоминания, записи, статьи. Москва. 1941.
23. Русская мысль в век Просвещение. Москва. 1991.
24. Vernadsky G. The History Of Russia. London. 1944.
25. Bayard J. Symbolisme maçonnique traditionnel. Paris. 1981.

Зарождение русского масонства и его влияние на развитие политической мысли

Акопян Сергей
Факультет гуманитарных наук,
«История»,
руководитель магистерской диссертации:
доктор исторических наук., профессор Ф. Мовсисян

Резюме

Ключевые слова: *масонство, Россия, Европа, кадеты, ложа, идея*

В первой половине XVIII века масонство, проникнув в Россию, постепенно распространилось в Петербурге, Москве и других крупных городах, были созданы десятки масонских лож. Русское масонство состояло преимущественно из дворян и высших военных чинов.В период правления Екатерины II, Павла I и Александра I дворяне-масоны занимали ключевые посты в системе государственного управления и оказывали определённое влияние на внутриполитические события. В начале X века в России сформировалось политическое масонство, сыгравшее серьезную роль в упразднении монархии.

The Origin of Russian Freemasonry and its Influence on the Development of Political Thought

Hakobyan Sergey
Faculty of Humanities,
"History",
Academic Supervisor: F. Movsisyan,
Doctor of Historical Sciences, Professor

Summary

Key words: *Freemasonry, Russia, Europe, cadets, lodge, idea*

In the first half of the 18th century, Freemasonry, which had penetrated Russia, gradually spread to Petersburg, Moscow and other large cities, dozens of Masonic lodges were created. Russian Freemasonry was mainly composed of nobles and high-ranking military officers. During the reigns of Catherine II, Paul I, and Alexander I, Masonic nobles held key positions in the government system and had a certain influence on domestic political developments. At the beginning of the 10th century, political Freemasonry was formed in Russia, which seriously contributed to the abolition of the monarchy.

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ОБЩЕСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

PUBLIC MANAGEMENT

ՀՀ համայնքների կառավարման հիմնախնդիրները և զարգացման հնարավոր ուղիները միջազգային փորձի համատեքստում

Սողոմոնյան Նարեկ
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Հանրային կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
դոցենտ Ռ. Հարությունյան

Հանգուցային բառեր. *համայնքի կառավարում, ՏԻՄ համակարգ, հանրային ծառայություն, ապակենտրոնացում, թվայնացում, թվային կառավարում*

Ներածություն

Համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ստեղծման բարեփոխումների ֆոնի վրա բավականին լուրջ փոփոխություններ են կատարվել կառավարման ապակենտրոնացման ուղղությամբ՝ մասնավորապես լուրջ քայլեր են արվել ֆինանսական անկախության ձեռքբերման, հանրային ծառայությունների բարելավման, ՏԻՄ մարմինների դերի, հանրային մասնակցության բարձրացման, թվային կառավարման ներդրման և այլնի ուղղությամբ: Սակայն, այնուամենայնիվ, կատարված փոփոխությունները բազմաթիվ դրական արդյունքների հետ մեկտեղ ունեն նաև բավականին չլուծված հարցեր և բաց կողմեր: Հենց դրանց ուսումնասիրությունը և առկա հիմնախնդիրների բացահայտումը, ինչպես նաև այդ հիմնախնդիրների լուծման արդյունավետ ուղիների որոնումն էլ տվյալ թեմայի ուսումնասիրությունը դարձնում են արդիական:

Աշխատանքի նպատակը ՀՀ համայնքների կառավարման հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծման ուղղությունների ձևակերպումն է՝ հիմնված միջազգային փորձի համեմատական վերլուծության վրա:

Ելնելով մեր նպատակից՝ մեր առջև խնդիր ենք դրել համեմատական վերլուծության օգնությամբ մանրամասն ուսումնասիրել խնդրո առարկայի բոլոր կողմերը:

Հետազոտության մեթոդաբանություն: Աշխատանքի ընթացքում կիրառվել են վերլուծական, համեմատական, պատմական, իրավաբանական և վիճակագրական մեթոդները:

Աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը: Աշխատան-

քը ներկայացնում է ՏԻՄ համակարգի արդի հիմնախնդիրների վերլուծություն և դրանց լուծման գործնական մոտեցումներ: Արդյունքները կարող են օգտակար լինել տեղական ինքնակառավարման բարեփոխումների քաղաքականության մշակման և հանրային կառավարման արդյունավետության բարձրացման համար:

ՏԻՄ համակարգի իրավական և ինստիտուցիոնալ հիմքերը

ՏԻՄ ձևավորման հիմքն է 1995 թ. հանրաքվեի միջոցով ընդունված Սահմանադրությունը [6]: Դրանից հետո՝ արդեն 1996-ին, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը վերջնականապես հաստատեց տեղական ինքնակառավարման ինստիտուտը ՀՀ-ում:

Սահմանադրությունը և օրենքը ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համայնք ձևավորեցին: Այդուհանդերձ, 1996 թվականի օրենքն ունի «նրբություններ»՝ կապված լիարժեք ինքնուրույնության հետ. ինքնակառավարման սկզբունքների մեջ նշվում է, որ համայնքի ղեկավարն ունի գործառնական դերի երկու ուղղություն՝ ինքնավար կառավարման մարմին և պետական իշխանության ներկայացուցիչ: Որպես պետական իշխանության ներկայացուցիչ՝ ղեկավարը կախվածության մեջ է հայտնվում կենտրոնական մարմնից, ինչը կենտրոնացվածության տարր է ապահովում տեղական ինքնակառավարման համակարգում: Արդյունքում այս բնորոշումը հանվել է 2002 թ. օրենքի տեքստից՝ առավել համապատասխանեցնելով Եվրոպական հռչակագրին:

Կենտրոնացվածությունը փաստող ևս մեկ կետ է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունը, երբ համայնքի ղեկավարը կարող է պաշտոնանկ արվել մարզպետի (Երևանում՝ քաղաքապետ) ներկայացմամբ [7]: Չնայած որպես հակակշիռ առկա է դատական կարգով բողոքարկելու հնարավորությունը, այն նույնպես կենտրոնական իշխանության տարր է:

Զարգացման հաջորդ փուլը անմիջականորեն կապված է արդեն հիշատակված «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի (հռչակագրի)» հետ:

Հայաստանը, 2002 թվականին վավերացնելով եվրոպական խարտիան, պարտավորվել է իրագործել վերջինիս հոդվածների դրույթները: Դրանից հետո վերջին բարեփոխումները համայնքային տնտեսության զարգացման ևս մեկ քայլ էին: Սրա հիմքում ընկած են ինչպես ժողովրդավարության սկզբունքները, այնպես էլ կառավարման արդյունավետության խնդիրը [5]:

Ավելի ուշ՝ 2015-ին, ՀՀ Սահմանադրության փոփոխությունից հետո մշակվեց «Տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենքը, որն

ընդունվեց 2016 թ.-ին: Այդ օրենքում տեղ գտան այնպիսի փոփոխություններ, որոնք ուղղակիորեն բխում էին ՀՀ նոր Սահմանադրությունից, ինչպես նաև նպատակաուղղված էին առավել լայն մասշտաբով օրենսդրական կարգավորումների ներմուծմանը: Դրանք պայմանավորված են Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայով, Տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի լրացուցիչ արձանագրությամբ, ինչպես նաև միջազգային լավագույն փորձով:

Կառավարության՝ համայնքների խոշորացման նոր հայեցակարգի հետ (2011 թ.) ՀՀ-ում վերջնականապես հաստատվեց տեղական ինքնակառավարման մոդելը: Սակայն միայն օրենքով ՏԻՄ-երին լիազորությունների տրամադրումը բավարար չէ իրական ժողովրդավարության հաստատման, տեղական ինքնակառավարման համակարգի և համայնքների զարգացման համար:

Համայնքների կառավարման կառուցվածքային և ֆինանսատնտեսական հիմնախնդիրները

Համայնքների խոշորացման գործընթացից հետո ֆիսկալ ապակենտրոնացման ուղղությամբ գերակա են. համայնքի ֆինանսական անկախության աստիճանի բարձրացումը, համայնքային բյուջեների մուտքերի կայունության և բազմազանության ապահովումը, համայնքներում հանրային ֆինանսների կառավարման, ինչպես նաև ֆինանսական հսկողության և վերահսկողության արդյունավետության, թափանցիկության, հաշվետվողականության և օրինականության բարձրացումը: Առաջնային է ՏԻՄ սեփական և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ապահովումը, համայնքների բյուջեներին պետական ֆինանսական օժանդակության համակարգի կատարելագործումը և արդյունավետության բարձրացումը, փոխատվական կապիտալի շուկայում համայնքների գործունեության զարգացումն ու խթանումը:

Ներկայումս համայնքների բյուջետավորումը փաստացի իրականացվում է պետական հսկողությամբ՝ տարածքային կառավարման օղակի՝ մարզպետարանի միջոցով: Չնայած այն հանգամանքին, որ գույքահարկը և հողի հարկն ամբողջությամբ փոխանցվում են համայնքային բյուջեին, վերջիններիս միջոցով չի ծածկվում ընդհանուր ծախսերի նույնիսկ կեսը: Ուսումնասիրելով տեսնում ենք, որ տեղական հարկերը 2023 թ. ապահովում էին բյուջեի 30-35 %-ը: Առկա է նաև համայնքների կողմից տեղական հարկերի հավաքագրման խնդիր, որն առաջացնում է հարկերի գծով

պարտքեր՝ ապառքներ: Ինչը կարելի է մեկնաբանել որպես ֆինանսական սխալ կառավարման արդյունք [11]:

Որոշ չափով ապահովված են նաև խոշոր քաղաքային բնակավայրերը: Խոսքը այնպիսի քաղաքների մասին է, որոնցում կենտրոնացված են հարկման աղբյուր հանդիսացող օբյեկտներ: Վերջիններս, սակայն, նույնպես ունեն պետական մակարդակի աջակցության խնդիր: Համահարթեցման օրենքի համաձայն՝ դոտացիաների տրամադրման համար պետք է բավարարել որոշակի ցուցանիշներ:

Բացի այդ՝ գոյություն ունի դոտացիայի տրամադրման նվազագույն շեմ:

Առկա է նաև սուբվենցիաների տրամադրման հնարավորություն, որոնք, ի տարբերություն դոտացիաների, ունեն նախապես սահմանված նպատակ և չեն կարող օգտագործվել այլ կարիքների համար: Ֆինանսական տեսակետից փոքր տեսակարար կշիռ են կազմում նաև պատվիրակված լիազորությունները, որոնց կատարման համար պետությունը պարտավորվում է ֆինանսավորել համայնքը:

2024 թ.-ին համեմատելով ՀՀ հարկային և ֆիսկալ ավտոնոմության մակարդակը OECD մեթոդաբանությամբ՝ դասային վերլուծության միջոցով, տեսնում ենք, որ Հայաստանը ցուցաբերում է հարկային ավտոնոմության ցածր մակարդակ, որը համեմատելի է ՏՀԶԿ միամակարդակ երկրների ամենաթույլ դասերի հետ, որտեղ ներառված են Էստոնիան, Իռլանդիան, Իսրայելը, Լիտվան, Նոր Զելանդիան և Մեծ Բրիտանիան: Արդյունքները ցույց են տալիս, որ տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների ավելացումը՝ գործող անուղղակի հարկերից, ինչպիսիք են՝ ակցիզային հարկը և ԱԱՀ-ն, դժվարանում է վարչական անարդյունավետության և հարկային բազայի ճշգրիտ գնահատման խոչընդոտների պատճառով: Իրենց նեղ և կենտրոնացված բնույթի պատճառով ակցիզային հարկերը վատ են հարմարեցված տեղական օգտագործմանը, մինչդեռ ԱԱՀ-ի բարդությունը և դրա եկամուտների բաշխումը մաքսային մարմիններին սահմանափակում են դրա արդյունավետությունը տեղական մակարդակում: Հաշվի առնելով արդյունքները՝ անհրաժեշտ է ուշադրությունը տեղափոխել ուղղակի հարկերի վրա՝ տեղական եկամուտներն ավելի արդյունավետ և կայուն կերպով ավելացնելու համար [13]:

Հարկաբյուջետային թափանցիկության և մատչելիության բարելավման նպատակով՝ Բաց գիտելիքի հիմնադրամի (Open Knowledge Foundation), Հարկաբյուջետային թափանցիկության համաշխարհային նախաձեռնության (GIFT) և Համաշխարհային բանկի ջանքերով ստեղծվել

է Բաց հարկաբյուջետային տվյալների փաթեթ (OFDP) ծրագրային գործիքը [1]: Վերջինս ծրագրային շրջանակ է, որն առաջարկում է հարկաբյուջետային տեղեկատվությունը բաց տվյալների տեսքով ներկայացման ստանդարտներ, որի ճիշտ կիրառությունը, մեր կարծիքով, կարող է շատ խնդիրներ լուծել: Հատկապես՝ նրանում առկա է Բաց ծախսերի գործիքը (Openspending), որը անվճար և բաց հարթակ է հարկաբյուջետային տվյալների որոնման, վիզուալացման և վերլուծության համար:

Բացի տեղական հարկերից և պետական դրամաշնորհներից՝ բյուջետավորման մասին օրենքը նախատեսում է նաև որոշ հարկատեսակների գծով մասհանումներ համայնքային բյուջեներին, ինչպես նաև սահմանում է տեղական տուրքեր: Առաջին դեպքում յուրաքանչյուր տարի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքով նշվում է մասհանման չափը, սակայն այն գրեթե ամեն տարի զրո է: Ինչն էլ ստեղծում է հարկաբյուջետային քաղաքականության բարելավման ուղղությամբ լրացուցիչ ուսումնասիրություններ և ջանքեր գործադրելու անհրաժեշտություն:

Կենտրոնացված բյուջետային վերահսկողությունը սահմանափակում է համայնքների ֆինանսական նախաձեռնողականությունը, ինչն էլ նվազեցնում է տեղական կառավարման արդյունավետությունը: Այս խնդիրը պահանջում է նոր ֆինանսական համահարթեցման մեխանիզմների ներդրում:

Հանրային ծառայությունների մատուցման արդյունավետության հիմնախնդիրը

Համայնքներին վերապահված լիազորությունների ընդլայնումը չհամադրվեց բավարար ֆինանսական և կադրային ռեսուրսներով, ինչի հետևանքով համայնքներում հանրային ծառայությունների մատուցման որակը և ծավալը զգալիորեն տուժեցին: Սա հանգեցրեց հանրային ծառայությունների անհավասարաչափ մատուցման՝ ըստ համայնքների, ինչը խաթարեց բնակչության հավասար իրավունքը պետական բարիքներից օգտվելու առումով: Արդյունքում առաջացան սոցիալ-տնտեսական անհամաչափություններ՝ խթանելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միգրացիան:

Հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը կախված է կառավարման համակարգայնությունից և շահառուի մասնակցությունից: ԵՄ չափորոշիչներով մինչև 2025 թ. նախատեսվում է առցանց մատչելիության 80 % ցուցանիշ, մինչդեռ ՀՀ-ում թվայնացման մակարդակը շարունակում է մնալ մասնակի՝ հատկապես մարզային համայնքներում:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպու-

թյունը (ՏՀԶԿ) և ԵՄ-ն համատեղ ձևակերպել են հանրային ծառայությունների մատուցման հիմնարար սկզբունքներ, որոնց կիրառումը նպաստում է ոլորտի արդյունավետության բարձրացմանը [2]:

Աղյուսակ 1

Հանրային ծառայությունների մատուցման հիմնարար սկզբունքների նկարագրությունը

Սկզբունքի անվանումը	***Բովանդակություն***
Հաճախորդակենտրոնություն	Ծառայությունների նախագծում շահառուի կարիքների հիման վրա
Իրավական որոշակիություն և կանխատեսելիություն	Կանոնակարգման հստակություն, ծառայությունների ընթացակարգերի նախապես որոշելիություն
Արդյունավետություն	Նյութատեխնիկական, ֆինանսական ու ժամանակային ռեսուրսների օպտիմալ օգտագործում
Թվային մատուցման սկզբունքը	Ծառայությունները նախապես նախատեսել թվային մատուցման հնարավորությամբ
Համաչափություն	Միջոցների և նպատակների համաչափ կիրառում
«Մեկ պատուհան»	Ծառայությունների կենտրոնացված մատուցման ձևաչափ
Հավասարություն, թափանցիկություն, անաչառություն	Բոլոր քաղաքացիների համար ծառայությունների մատուցման հավասար պայմանների ապահովում
Հաշվետվողականություն	Ծառայություն մատուցող կառույցի պատասխանատվությունը շահառուի նկատմամբ

Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունների մատուցման ոլորտը դեռևս հեռու է միջազգային լավագույն չափորոշիչներից: Միջազգային չափորոշիչների հետ համեմատություն կատարելով՝ տեսնում ենք, որ հանրային ծառայությունների արդյունավետության բարձրացումը մնում է ՀՀ սոցիալ-տնտեսական քաղաքականության գերակայություններից մեկը՝ կապված նաև տնտեսական համաչափ զարգացման, կենսամակարդակի հավասարեցման և բնակչության ներգրավվածության աստիճանի բարձրացման հետ:

Համեմատական վերլուծություն

Տեղական ինքնակառավարման (ՏԻՄ) համակարգերի ուսումնասիրությունն ու համեմատական վերլուծությունը թույլ են տալիս գնահատել գոյություն ունեցող մոդելների արդյունավետությունը և սինթեզել լավագույն միջազգային փորձը՝ այն հարմարեցնելով տվյալ երկրի սոցիալ-քաղաքական և իրավական միջավայրին: Ինչպես նշում են Է. Լիդստոնն ու Ս. Գոլդսմիթը, «ՏԻՄ հաջողությունն ուղիղ համեմատական է նրա ինստիտուցիոնալ ազատությանը, ֆինանսական կայունությանը և քաղաքացիների մասնակցության իրական մակարդակին» (Lidstone & Goldsmith, 2005) [9]:

ՏԻՄ համակարգերը հաճախ դասակարգվում են ըստ կառավարման կառուցվածքի և կենտրոնի ու տեղական կառույցների միջև իշխանական բաշխման ձևի: Գլոբալ առումով տարբերակվում են չորս հիմնական մոդելներ՝ դասական (անգլո-սաքսոնական), մայրցամաքային (ֆրանսիական), խորհրդային և խառը: Դրանք տարբերվում են տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման կարգով, իրականացման առարկայով և ՏԻՄ համակարգի և պետական մարմինների փոխհարաբերությունների բնույթով ու առանձնահատկություններով:

Տեղական ինքնակառավարման համակարգի հիմնական մոդելները և դրանց դրական ու բացասական կողմերը ներկայացված են աղյուսակ 2-ում:

Հետխորհրդային երկրների ՏԻ մոդելը բնութագրվում է կուսակցական վերահսկողությունից հրաժարումով, ապակենտրոնացման սկզբունքների ներդրումով և տեղական ժողովրդավարությամբ, չնայած որ Ռուսաստանում պահպանվում է երկմակարդակ համակարգը՝ բնակավայրերի և շրջանների կամ օկրուգների բաժանմամբ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մեջ հանրային իշխանության ներառմամբ:

Հանրային կառավարման արդյունավետությունը գնահատելու և տեղական մարմինների ինքնուրույնության աստիճանը չափելի դարձնելու նպատակով ԱՄՆ-ում և Եվրոպական երկրներում մշակվել են հատուկ գործիքներ՝ e-government development index (EGDI) և local autonomy index (LAI): Դրանք հնարավորություն են տալիս որոշակի չափանիշների հիման վրա՝ գնահատել հանրային կառավարման արդյունավետությունը տարբեր նահանգներում և տեղական ինքնուրույնության աստիճանը տարբեր երկրներում: Դրանք գիտնականներին և քաղաքական գործիչներին հնարավորություն են տալիս ստանալ ավելի համեմատելի և փորձարարական տվյալների վրա հիմնված արդյունքներ:

Աղյուսակ 2

ՏԻՄ հիմնական մոդելների համեմատական վերլուծություն

Մոդել	*Երկրներ*	*Դրական կողմեր*	*Բացասական կողմեր*
Դասական կամ անգլո-սաքսոնական	ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հնդկաստան	ՏԻՄ-երը ուղղակի կախվածություն չունեն պետական իշխանությունից, բարձր մակարդակի ինքնակառավարում, հանրային վերահսկողության զարգացած մեխանիզմներ,	ՏԻՄ-երը իրավունք ունեն նախաձեռնել միայն այն գործողությունները, որոնք օրենքով ուղղակիորեն վերագրված են իրենց: ՏԻՄ-երի կոմպետենցիաների մեջ մտնում է՝ ոստիկանության, սոցիալական և հրշեջ ծառայությունների, տեղական ճանապարհների կառավարումը, շինարարության և բնակարանների շահագործման իրականացումը, հասարակական տրանսպորտը և այլն:
Մայրցամաքային կամ ֆրանսիական	Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Բելգիա, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներ	Քաղաքային խորհրդի կոմպետենցիաների մեջ է մտնում տեղական մակարդակի բոլոր խնդիրների լուծումը, բացառությամբ նրանց, որոնք անմիջականորեն վերաբերվում են քաղաքապետին: Տեղական մակարդակում պետական մարմինների գործունեության միասնականություն, անհրաժեշտ մակարդակի կենտրոնացվածություն:	Բարձր վերահսկողություն պետական մարմինների կողմից: Տեղական ինքնակառավարման սահմանափակ դերը ռազմավարական որոշումներում:
Խորհրդային	Նախկին ԽՍՀՄ երկրներ	Որպես դրական կողմ նշվում է «ժողովրդավարական կենտրոնացվածությունը»	Իրականում ոչ թե տեղական ինքնակառավարում, այլ կառավարում:
Խառը	Գերմանիա, Ավստրիա, Ճապոնիա, Լեհաստան, Վրաստան, Բալթյան մի շարք երկրներ	Բարձր ինքնուրույնությունը, որը բնորոշ է դասական մոդելին, միաձուլված՝ մայրցամաքային մոդելին բնորոշ խիստ կանոնակարգվածության ու աստիճանակարգության հետ:	Կառավարման տարբեր մոդելների տարրերի միջև հակասականության պատճառով առաջացած անարդյունավետությունը, պատասխանատվության պոտենցիալ ցրվածությունը, բյուրոկրատացումը, կառավարման բարդությունը

Այսպես, LAI գործիքի օգնությամբ 30(1990-2020) տարվա արդյունքների վերլուծությունը դիտարկելով՝ տեսնում ենք, որ ուսումնասիրվող 57 երկրներում նկատվում է լոկալ ավտոնոմության ինդեքսի աստիճանական աճ, ընդ որում, առավել բարձր տեմպեր գրանցվել է առաջին տասնամյակի ընթացքում: Այնուհետև, այն բավականին դանդաղեց և կայունացավ 2020 թ., արդյունքում ուսումնասիրվող երկրների ընդհանուր աճը վերջին շրջանի համար կազմում է մոտ 7-8 % [12]: Ամենամեծ աճը գրանցել են կենտրոնական և արևելյան եվրոպական երկրները, մասնավորապես՝ Շվեյցարիան և Գերմանիան: Իսկ որոշ երկրներում, այդ թվում՝ Ռուսաստան, Բելառուս, Հունգարիա, ընդհակառակը, նկատվել է բավականին մեծ անկում:

Ինչ վերաբերվում է ՀՀ ՏԻՄ համակարգին, ապա այն միամակարդակ կառուցվածք ունի և իրագործվում է համայնքների մակարդակով, որի բնութագրիչների վերլուծությունը թույլ է տալիս ասել, որ մեր պետությունում ՏԻ մոդելը դասվում է խառը տիպին, սակայն դա միայն օրենսդրորեն, իսկ գործառնական տեսանկյունից՝ այն առավել մոտ է մայրցամաքայինին: Ինչը նշանակում է, որ բարձր է պետությունից կախվածության մակարդակը:

Թվային կառավարման հեռանկարները

Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց պետական կառավարման համակարգում թվային փոխակերպման արագ տարածման պայմաններում համապատասխան իրավակարգավորման մեխանիզմների և կազմակերպական ձևերի մշակումն ու իրականացումը դարձել է թվային կառավարման և պետական ծառայությունների թվային փոխակերպման արդյունավետության մակարդակի բարձրացման հիմնական գործոնը:

Վերջին տարիներին պետական կառավարման թվայնացման քաղաքականությունը զարգանում է «էլեկտրոնային կառավարությունից» դեպի ինտեգրված թվային էկոհամակարգ [3]: Նման մոտեցումը հնարավորություն է տալիս ապահովել պետական, համայնքային և մասնավոր կառույցների փոխգործակցության միասնական հարթակ՝ բարձրացնելով ծառայությունների թափանցիկությունն ու մատչելիությունը:

Այսօր Հայաստանի Հանրապետությունը ևս, գլոբալ միտումներին համահունչ, թևակոխում է զարգացման նոր՝թվային փուլ:

Թվային կառավարման նախաձեռնությունների իրականացումը ներկայումս բախվում է որոշ տեխնոլոգիական դժվարությունների: Այդ ծառայությունների իրականացման համար կառավարությունը պետք է զարգացնի արդյունավետ հեռահաղորդակցական ենթակառուցվածք: Այդ

նպատակով 2010 թ. ՀՀ Կառավարությունը ներդրեց www.e-gov.am և data.gov.am էլեկտրոնային կառավարման հարթակը, որտեղ կենտրոնացրեց ՀՀ պետական գերատեսչությունների էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքներն ու տվյալների շտեմարանները և հարմարավետ միջավայր ստեղծեց դրանց կիրառման համար: 20-ից ավելի ծառայություններ են ներկայացված e-gov.am հարթակում, որը նախատեսված է պետական կառավարման մարմինների, քաղաքացիների և բիզնեսների միջև էլեկտրոնային հաղորդակցության և ծառայությունների մատուցման համար:

ՀՀ թվայնացման պետական քաղաքականությունը ամրագրվել է 2021 թ. փետրվարի 11-ի ՀՀ կառավարության N-183-Լ որոշմամբ: Ռազմավարության հիմնական նպատակն է ապահովել ՀՀ կառավարության, տնտեսության և հասարակության համապարփակ թվային փոխակերպումը [4]:

Կառավարության ծրագիրը շեշտը դնում է «նույնականացման» ենթակառուցվածքի վրա՝ ծառայությունների և գործարքների անվտանգությունն ապահովելու համար: Կարևոր նախագծերի թվում են միասնական էլեկտրոնային կառավարման ծառայությունների հարթակը, կիբերանվտանգության ապահովված կենտրոնը, էլեկտրոնային հարկային հաշվետվությունների համակարգը և էլեկտրոնային առողջապահական պորտալը [14]:

Մասնավորապես կարևոր դեր ունի Եվրամիության EU4Digital ծրագիրը, որը նպաստում է թվային ենթակառուցվածքների, թվային հմտությունների և թվային տնտեսության զարգացմանը Արևելյան գործընկերության երկրների շրջանակում:

Այսօր ՀՀ-ում մեծ նշանակություն ունի EU4Digital ծրագրի II փուլը (2022-2025), որը հիմնված է դրա առաջին փուլի ձեռքբերումների վրա [10]: Ծրագիրը կենտրոնանում է Արևելյան գործընկերության երկրների տնտեսության և կառավարման ամրապնդման վրա՝ հիմնական թեմատիկ ոլորտների թվային փոխակերպման միջոցով:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ելնելով մեր կողմից իրականացված համեմատական վերլուծության արդյունքներից՝ եզրակացնում ենք, որ ՀՀ-ում կատարվել են վարչատարածքային և օրենսդրական բավականին մեծ փոփոխություններ Տեղական ինքնակառավարման զարգացման համար: Բայց դրա հետ մեկտեղ անհրաժեշտ են լուրջ քայլեր ձեռնարկել հարկաբյուջետային և ֆիսկալ ինքնուրույնության քաղաքականության բարելավման, ծառայությունների որակի և թվայնացման արդիականացման ու կատարելագործման ուղղությամբ:

Հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկվում է՝

- Թարմացնել ՏԻՄ-ի մասին օրենսդրությունը՝ հստակեցնելով լիազորությունների և վերահսկողության սահմանները:
- Վերանայել ֆինանսական համահարթեցման համակարգը՝ համայնքների եկամտային հիմքը ընդլայնելու նպատակով:
- Առաջարկել միասնական թվային հարթակ՝ հանրային ծառայությունների մատուցման արդյունավետությունը բարձրացնելու համար:

Գրականություն

1. Բյուջետային տեղեկատվության ներկայացման միջազգային և Հայաստանյան փորձի ուսումնասիրություն, Երևան, 2023, էջ 33:
2. Գսպոյան Գ., Տեղական ինքնակառավարման միջազգային փորձը, «Հանրային կառավարում» գիտական հանդես, N-2-3, 2011, 186 էջ:
3. Մելքումյան Ն, Թվայնացման և թվային փոխակերպման ինստիտուցիոնալ և կազմակերպական հիմքերը ՀՀ պետական կառավարման համակարգում, Գիտական Արցախ, №4 (23), էջ 217-239:
4. Թվայնացումը որպես պետության կայացածության բաղադրիչ, Գիտական Արցախ, №3 (10), 2021, էջ 265-275:
5. Մովսիսյան Մ. և ուրիշներ, Լիազորությունների ապակենտրոնացումը որպես տեղական ինքնակառավարման արդյունավետության բարձրացման ուղղություն, Երևան, 2023, էջ157:
6. ՀՀ Սահմանադրություն, 2015:
7. ՀՀ օրենքը տեղական ինքնակառավարման մասին, 2002:
8. Велибекова Л. А. Отечественный и зарубежный опыт организации местного самоуправления. Управление экономическими системами: электронный научный журнал. 2017, №2, с. 1-10.
9. Шахмалов М. А. Основные мировые модели местного самоуправления. Юридически увестник ДГУ. 2016, №4, с. 88-91.
10. «EU4Digital» նախաձեռնության պաշտոնական կայք (11.10.2025)
11. https://enlightngo.org/post/3662(10.10.2025)
12. https://www.tandfonline.com/doi/full/10.1080/13597566.2023.2267990#abstract(24.10.2025)
13. Tax autonomy survey: Methodological guide. OECD network on fiscal relations across levels of government. Retrieved from https://www.oecd.org/content/dam/oecd/en/topics/policy-sub-issues/fiscal federalism-network/methodologicalguide-tax-autonomy-indicators.pdf(24.10.2025)
14. UNDP_Armenia_DigitalConnectivity_2025_F.pdf (24.10.2025)

Проблемы управления общинами в Республике Армения и возможные пути развития в контексте международного опыта

Согомонян Нарек
Факультет социальных наук,
Управление образованием,
Руководитель магистерской диссертации:
доцент Р. Арутюнян

Резюме

Ключевые слова: *управление сообществом, система местного самоуправления, государственная служба, децентрализация, цифровизация, цифровое управление*

В статье проведен сравнительный анализ моделей местного самоуправления. Рассмотрены основные проблемы в сфере местного самоуправления и оптимальные направления их решения, основанные на передовом международном опыте.

Community Governance Challenges in the Republic of Armenia and Possible Development Paths in the Context of International Experience

Soghomonyan Narek
Faculty of Social Sciences
Education Management,
Academic Supervisor: R. Harutyunyan
Associate Professor

Summary

Key words: *community governance, local government system, public service, decentralization, digitalization, digital governance*

This article presents a comparative analysis of local government models. It examines the key challenges in the field of local self-government and identifies effective approaches to addressing them, drawing on best practices from international experience.

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

УПРАВЛЕНИЕ ОБРАЗОВАНИЕМ

EDUCATION MANAGEMENT

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման խնդիրները

Մինասյան Էմմա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Կրթության կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ., դոցենտ Լ. Բաղդասարյան

Հանգուցային բառեր. *կրթության հիմք, զարգացում, արդյունավետ կառավարում, սոցիալ-հասարակական կարևորություն, երեխայի զարգացում*

Արդի ժամանակներում, երբ կրթության ոլորտի զարգացումը և կառավարման արդյունավետ համակարգերի ձևավորումը համարվում են պետության կայուն զարգացման առանցքային ուղղություններից, առանձնահատուկ կարևորություն է ստանում նախադպրոցական կրթության համակարգի կառավարումը: Այս համատեքստում նախադպրոցական հաստատությունների արդյունավետ կառավարումը վերածվել է, մանկավարժականից զատ, սոցիալ-հասարակական և կազմակերպական առաջնահերթ նշանակության խնդրի: Կառավարման գործառույթների և մեթոդների՝ սկսած պլանավորումից մինչև վերահսկողություն, համաչափ և նպատակային կիրառումը կարող է նշանակալիորեն բարձրացնել նախադպրոցական հաստատությունների գործունեության արդյունավետությունը՝ ապահովելով մանկավարժական գործընթացի կազմակերպվածություն, երեխաների համակողմանի զարգացման նպատակային միջավայր և ծնողների հետ համագործակցային, վստահելի հարաբերությունների ամրապնդում: Նախադպրոցական հաստատության կառավարումը ղեկավարի նպատակաուղղված գործունեությունն է՝ ուղղված հաստատության զարգացմանն ու գործարկմանը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը [1]:

Կառավարման անհրաժեշտությունը նախադպրոցական ուսումնական հաստատության ոլորտում բարձրագույն կարևորություն ունի, քանի որ այս հաստատություններում պետք է ապահովվի ոչ միայն կրթական ծրագրերի արդյունավետ իրականացումը, այլ նաև երեխաների, աշխատակիցների և ծնողների փոխհարաբերությունների արդյունավետ կառավարման համակարգերի ստեղծումը: Նախադպրոցական կրթությունը

հիմնված է տարբեր մարդկանց (ուսուցիչներ, մանկավարժներ, ծնողներ, ղեկավարներ) համագործակցությանն ու համակարգված աշխատանքների վրա, և առանց որոշակի կառավարման համակարգի անհնար է ապահովել այս համագործակցության արդյունավետությունը: Կառավարման գործընթացների միջոցով կազմակերպվում են աշխատանքային բաժանումները, ղեկավարման որոշումները, ինչպես նաև երեխայի զարգացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը, ինչը հիմք է դառնում արդյունավետ կրթական գործընթացի համար: Նախադպրոցական ուսումնական հաստատությունները ոչ միայն կրթական շղթայի հիմքն են, այլ նաև այն միջավայրը, որտեղ դրվում են երեխայի անձնական, սոցիալական և մտավոր զարգացման առաջին ու հիմնարար ակունքները [2]: Կառավարման գործառույթը կառավարման տեսության հիմնարար հասկացություններից է: Այն բնութագրվում է որպես կառավարվող համակարգի վրա կառավարող սուբյեկտի ներգործությունն ապահովող, անընդհատ կրկնվող գործողություն: Կառավարչական գործունեությունը բաղկացած է հաջորդաբար կրկնվող և փոխադարձաբար կապված գործողություններից, այսինքն՝ կառավարման գործառույթներից, որոնք կազմում են կառավարման գործընթացի կարևորագույն բաղադրամասը և արտահայտում են դրա էությունը: Կառավարման գործառույթները դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների, որոնցից առավել ընդհանրական են կառավարման գործընթացի բովանդակությունը և գործունեության ոլորտի պատկանելությունը: Ի սկզբանե և ավելի հաճախ կառավարման գործառույթները դասակարգվել են ըստ առաջին հատկանիշի: Կառավարման տեսության պատմության մեջ, ինչպես նշվել է, դրանք այդ հատկանիշով առաջին անգամ դասակարգել և ամբողջական ձևով բնութագրել է Ա. Ֆայոլը: Ըստ նրա՝ կառավարման գործառույթներն են կանխատեսումը, կազմակերպումը, կարգադրումը, համաձայնեցումը և վերահսկողությունը:

Ավելի ուշ կառավարման տեսաբանները այդ դասակարգմանը ավելացրել են այլ գործառույթներ: Մասնավորապես, առանձնացվել են պլանավորումը, մոտիվացիան (շահադրդումը), համակարգումը, ղեկավարությունը (առաջնորդումը) և այլն [4]:

Կառավարման բովանդակության առումով ավելի ամբողջական է և ներկայումս մեծ մասամբ ընդունվում է հետևյալ դասակարգումը՝ պլանավորում: Պլանավորումը որոշում է «վայրը», որում ընկերությունը կցանկանար լինել ապագայում և այնտեղ տանող «երթուղին» [3] (ներառյալ՝ կանխատեսումը), կազմակերպում (ներառյալ՝ համաձայնեցումը,

կարգադրումը), շահադրդում, վերահսկողություն: Այսպես, հաստատությունը կառավարելու համար հարկ է այն պլանավորել, կազմակերպել, գործադրել շահադրդման մեխանիզմ, իրականացնել վերահսկողություն: Կառավարման մեթոդները պատմական կատեգորիա են: Յուրաքանչյուր սոցիալ-տնտեսական հասարակարգում գործում են որոշակի տնտեսական օրենքներ, ձևավորվում արտադրական հարաբերություններ և դրանց համապատասխան՝ կառավարման մեթոդներ: Կառավարման գործընթացում վերջիններս միշտ գտնվել ու գտնվում են ուղղակի կապի մեջ, գործում են միաժամանակ և ոչ միայն չեն բացառում, այլև փոխադարձաբար լրացնում են միմյանց՝ կազմելով միասնական համակարգ: Կառավարման մեթոդները տարբեր իրադրություններում և ժամանակահատվածներում կիրառվում են տարբեր համամասնությամբ: Մի դեպքում առաջնությունը տրվում է տնտեսական, մյուս դեպքում՝ վարչակազմակերպական կամ սոցիալ-հոգեբանական մեթոդներին:

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավարումն իր բնույթով պահանջում է տարբեր կառավարման մեթոդների համադրություն, որոնց ընտրությունը և կիրառումը մեծապես ազդում են կրթական գործընթացի արդյունավետության վրա [2]: Կառավարման կատարելագործումը կրթության զարգացման ցանկացած ծրագրի համար պետք է լինի գերակա:

Նախադպրոցական կրթության հիմնախնդիրների կարևորագույն ուղղություններից է զարգացնող միջավայրի ստեղծումը: Այն կոչված է նպաստելու յուրաքանչյուր երեխայի ստեղծագործական ներուժի բացահայտմանն ու դրսևորմանը և զարգացման հավասար պայմանների ապահովմանը [5]:

Թեմայի շրջանակում իրականցրել ենք փորձարարական ուսումնասիրություն: Դիտման մեթոդի միջոցով ուսումնասիրել ենք նախադպրոցական ուսումնական հաստատության գործունեությունը՝ այն դիտելով բնական միջավայրում: Դիտման քարտերի օգնությամբ փաստագրվել և վերլուծվել է հաստատության աշխատանքը տարբեր ուղղություններով՝ սկսած պլանավորումից մինչև հսկողություն: Այս գործընթացը նպաստել է տեսական գիտելիքների կապակցմանը գործնական իրականության հետ՝ հնարավորություն ընձեռելով բացահայտելու կառավարման, կազմակերպման և մանկավարժական գործունեության մեջ առկա դժվարությունները, ինչպես նաև դրանց հնարավոր լուծման և բարելավման ուղիները:

Ստորև ներկայացվում է դիտման քարտի օրինակ

Դիտման քարտ — *Կազմակերպման գործառույթ*
Հաստատություն: x նախադպրոցական ուսումնական հաստատություն
Դիտման օր: 2025 թ. մայիսի 21
Կազմակերպչական կառուցվածք:
Տնօրեն
Փոխտնօրեն կրթական աշխատանքի գծով
Մեթոդիստ
Դաստիարակներ
Դաստիարակի օգնականներ
Խոհարար և խոհանոցի աշխատակիցներ
Բուժքույր
Տեխնիկական և վարչական անձնակազմ
առկա խնդիրներ:
Հաստիքների պակաս (դաստիարակներ, դաստիարակի օգնականներ, սպասարկող անձնակազմ)
Սահմանված չեն փոխարինման մեխանիզմները
Առաջարկներ:
Վերանայել և արդիականացնել հաստիքացուցակը
Մշակել փոխարինման ուղեցույց՝ անձնակազմի բացակայության պարագայում

Այնուհետև իրականացրել ենք սոցոմետրիկական մեթոդի միջոցով հարցում Google Forms հարթակի միջոցով, ինչը նպաստել է գործընթացի հասանելիության, օպերատիվության և անանունության ապահովմանը: Այս մեթոդը հնարավորություն է տվել ձևավորել բազմակողմանի և հիմնավոր պատկեր ոլորտում առկա իրավիճակի վերաբերյալ: Հետազոտության շրջանակում անցկացված հարցմանը մասնակցել է 265 անձ:

Այն հարցին, թե ինչ խնդիրների են առավել հաճախ բախվում նախադպրոցական հաստատությունները, հարցվածների *25 %-ը նշել է խմբերում երեխաների թվի գերազանցումը*, ինչը լրջագույն մարտահրավեր է թե՛ կրթադաստիարակչական գործընթացի անհատականացման, թե՛ անվտանգության ապահովման տեսանկյունից: Սա նաև կապված է մանկավարժների գերծանրաբեռնվածության և մասնագիտական այրման վտանգի հետ: *20 %-ը որպես առաջնային խնդիր ընդգծել է ուսումնական*

նյութերի և խաղալիքների պակասը, ինչը խոչընդոտում է խաղային ուսուցման լիարժեք կազմակերպմանը և ստեղծագործ միջավայրի ձևավորմանը: *15.5 %-ը նշել է ֆիզիկական միջավայրի անմխիթար վիճակը*, որը ներառում է շենքային պայմանների մաշվածությունն ու ժամանակակից պահանջներին չհամապատասխանելը: Այս խնդիրն ուղղակիորեն անդրադառնում է ինչպես երեխաների բարեկեցության, այնպես էլ կրթական գործընթացի որակի վրա*: 14.5 %-ը կարևորել է ծնողների հետ անարդյունավետ հաղորդակցությունը*, որը կարող է խաթարել հաստատության և ընտանիքի միջև համագործակցային դաշտը՝ անհրաժեշտ փոխադարձ աջակցության բացակայության պատճառով: Իսկ *25 %-ը ընտրել է կադրերի մասնագիտական անպատրաստվածության խնդիրը*, ինչը խոսում է որակյալ վերապատրաստումների և շարունակական կրթական աջակցության պակասի մասին: Այս պատկերը վկայում է, որ նախադպրոցական հաստատությունների առջև ծառացած խնդիրները բազմաբնույթ են՝ ներառելով թե՛ կառուցվածքային, թե՛ բովանդակային և մարդկային ռեսուրսների բաղադրիչներ: Համապարփակ և նպատակաուղղված քաղաքականություն է պահանջվում՝ այս խնդիրների համակարգված հաղթահարման համար: Հաջորդ կարևոր հարցադրումը վերաբերում էր նախադպրոցական հաստատության ֆինանսավորման մակարդակի գնահատմանը:

Այս հարցի նպատակն էր հասկանալ, թե որքանով են տնօրեններն ու աշխատակազմը գոհ պետական կամ համայնքային բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցներից, և արդյոք դրանք բավարարում են հաստատության ընթացիկ ու ռազմավարական կարիքները:

Հարցվածների *50.2 %-ը նշել է*, որ ֆինանսավորումը մասնակի բավարար է, այսինքն՝ որոշ կարիքներ հոգալու հնարավորություն կա, սակայն ամբողջական զարգացման, նյութատեխնիկական բազայի բարելավման կամ նորարարական ծրագրերի ներդրման համար միջոցները պակասում են: Այս պատասխանը բացահայտում է այն իրողությունը, որ հաստատությունների զգալի հատված գործում է ֆինանսական սահմանափակումների պայմաններում, ինչը կարող է սահմանափակել նորարարական ու մրցունակ կրթական միջավայրի ստեղծումը: Մյուս կողմից, *49.8 %-ը գտել է*, որ ֆինանսավորումը բավարար է բոլոր անհրաժեշտ կարիքները հոգալու համար: Սա դրական միտում է, որը խոսում է առնվազն ֆինանսական կայունության ապահովման մասին՝ հիմնական գործառույթների և ընթացիկ ծախսերի մակարդակով: Այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ այս գնահատականները տատանվում են՝ կախված տա-

բածքային առանձնահատկություններից, կառավարման հմտություններից և տեղական ինքնակառավարման մարմինների աջակցության մակարդակից:

Այս տվյալները վկայում են, որ նախադպրոցական հաստատությունների ֆինանսավորումը ոչ միանշանակ է ընկալվում. համակարգը չունի համատարած բավարարում ստեղծող մեխանիզմներ: Մասնակի բավարարումը ցույց է տալիս, որ ֆինանսական ապահովման ոլորտում դեռևս առկա են բարելավման լայն հնարավորություններ: Հատկապես կարևոր է, որ ֆինանսավորման համակարգը ոչ միայն ապահովի նվազագույն գործառույթների իրականացումը, այլ նաև խթանի նորարարական նախագծերի զարգացումը, տեխնիկական արդիականացումը և մասնագիտական վերապատրաստումների շարունակական ապահովումը:

Հաջորդ հարցադրումը նպատակ ուներ բացահայտելու, թե հարցվածների կարծիքով որոնք են նախադպրոցական հաստատությունների կառավարման բարելավման ամենահրատապ ուղղությունները: Հարցման արդյունքները ցույց են տվել, որ առաջնահերթության տեսանկյունից մասնակիցները ամենից հաճախ շեշտել են *կադրային քաղաքականության բարելավման անհրաժեշտությունը, որը ստացել է 48.1 % ձայներ*: Սա հստակ մատնանշում է այն իրողությունը, որ որակյալ մասնագետների ներգրավումը, պահպանումը և նրանց մասնագիտական զարգացումը դիտվում են որպես կառավարման արդյունավետության հիմնական խթան: Այս միտումը նաև ընդգծում է մարդկային ռեսուրսների դերի կարևորությունը կրթության ոլորտում՝ հատկապես նախադպրոցական հաստատություններում: *21.5 %-ը կարևորել է պետական աջակցությունը և վերահսկողությունը*: Սա վկայում է, որ կառավարման բարելավումը դիտվում է ոչ միայն ներքին կառույցի հարց, այլ նաև համակարգային և ռազմավարական մոտեցում պահանջող խնդիր, որտեղ անհրաժեշտ է պետության գործուն ներգրավվածություն՝ հստակ քաղաքականության, վերահսկողական մեխանիզմների և ռեսուրսների տրամադրման տեսանկյունից: *19.7 %-ը ընտրել է վերլուծական տվյալների հիման վրա որոշումների կայացումը*՝ ցույց տալով, որ տվյալահեն կառավարումը սկսում է կարևորվել նաև կրթական հաստատություններում: Այս միտումը խոսում է առաջադեմ մտածողության տարածման մասին, երբ որոշումները հիմնվում են փաստերի, գնահատումների և արդյունքների վրա, ոչ թե ենթադրությունների: Վերջապես, *10.7 %-ը կարևորել է թափանցիկ ֆինանսական կառավարումը*, ինչը վկայում է, որ թեև այս գործոնը համեմատաբար ցածր տոկոսով է ընդգծվել, այնուամենայնիվ

շարունակում է մնալ արդիական՝ հատկապես վստահության կառուցման, ֆինանսների ճիշտ բաշխման և պատասխանատվության մշակույթի ձևավորման համատեքստում: Հարցման տվյալները վկայում են, որ կառավարման բարելավման գործընթացում հատկապես կարևորվում են մարդկային ռեսուրսների կառավարման մեխանիզմները: Սա լիովին համահունչ է կրթության ոլորտի առանձնահատկություններին, որտեղ մարդկային կապիտալն է ձևավորում կրթության որակը: Միևնույն ժամանակ, պետական վերահսկողության կարիքը և տվյալների վրա հիմնված որոշումների կայացման կարևորման ընդգծումը ցույց են տալիս, որ ոլորտում մեծանա է համակարգային և տվյալահեն մոտեցումների պահանջարկը: Այս միտումների հիման վրա կարելի է եզրակացնել, որ արդյունավետ կառավարման մոդելի ձևավորման համար անհրաժեշտ է համատեղ ուժերով զարգացնել կադրային ներուժը, ամրապնդել պետական աջակցությունը, ներդնել արդի վերլուծական գործիքներ և բարձրացնել ֆինանսական թափանցիկության մակարդակը:

Հաջորդ հարցումը վերաբերում էր վերահսկման գործընթացում անձնակազմի ներգրավվածության մակարդակին: Այս հարցի նպատակն էր պարզել, թե որքանով են մանկավարժները և մյուս աշխատակիցները ներգրավված կառավարման վերահսկող գործառույթներում, մասնավորապես՝ կրթադաստիարակչական գործընթացների գնահատման, խնդիրների բացահայտման և որակի բարելավման աշխատանքներում: Հարցվածների *52.4 %-ը նշել է, որ վերահսկման գործընթացներում առկա է ամբողջական ներգրավվածություն*, ինչը խոսում է բաց կառավարման մշակույթի ձևավորման մասին: Սա նշանակում է, որ հաստատություններում մանկավարժները ոչ միայն կատարում են իրենց պարտականությունները, այլև ակտիվորեն մասնակցում են աշխատանքների պլանավորմանը, իրականացմանը և դրանց արդյունքների վերլուծությանը: Այս մոտեցումը նպաստում է համագործակցային մթնոլորտի ձևավորմանը և բարձրացնում է պատասխանատվության զգացումը: Միևնույն ժամանակ *47, 6 %-ը նշել է մասնակի ներգրավվածություն*, ինչը ենթադրում է, որ որոշ հաստատություններում վերահսկման գործառույթներն ավելի կենտրոնացված են մնում՝ հիմնականում իրականացվելով միայն ղեկավար կազմի կողմից: Սա կարող է սահմանափակել մանկավարժների մասնակցությունը կառավարչական որոշումների կայացման գործընթացին և ազդել աշխատանքի թափանցիկության վրա:

Այս տվյալներից կարելի է եզրակացնել, որ նախադպրոցական հաստատությունների զգալի հատվածում արդեն իսկ կայանում է համագոր-

ծակցային և մասնակցային վերահսկման մոդել, սակայն դեռևս առկա է անցումային վիճակ: Մասնակի ներգրավվածության բարձր ցուցանիշը մատնանշում է, որ որոշ կառույցներում անհրաժեշտ է խթանել աշխատակազմի ակտիվ ներգրավվածությունը վերահսկման գործընթացներում՝ հատկապես որակի գնահատման, ինքնավերլուծության և բարելավման ուղղություններով: Բացի այդ՝ անձնակազմի ներգրավվածությունը ոչ միայն բարելավում է վերահսկման արդյունավետությունը, այլև խթանում է մասնագիտական պատասխանատվությունը, փոխըմբռնումը և թիմային աշխատանքը: Ուստի՝ վերահսկման համակարգի բարելավման առանցքային ուղղություններից մեկը պետք է լինի մասնակցային մոտեցումների խորացումը՝ հիմք ընդունելով վստահության, փոխադարձ հարգանքի և համատեղ պատասխանատվության սկզբունքները:

Հաջորդ կիրառված մեթոդը զրույցն էր, որն ուղղված էր իրականացվող ուսումնասիրության մի այլ կարևոր ուղղության՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման գործընթացում առկա հիմնական խնդիրների բացահայտմանը: Հարցման միջոցով նպատակ է դրվել պարզել, թե որ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններն են խոչընդոտում կառավարման արդյունավետությանն այդ կրթօջախներում: Ստացված պատասխանների վերլուծության արդյունքում հնարավոր դարձավ առանձնացնել մի շարք հիմնախնդիրներ, որոնք նշանակալի ազդեցություն են ունենում ինչպես մանկավարժական աշխատանքի կազմակերպման, այնպես էլ հաստատության ընդհանուր գործունեության վրա.

1. Հաստիքների բաշխման խնդիր: Հաստիքների անհամաչափ բաշխվածությունը կամ անբավարար քանակը առաջնային խնդիրներից է: Երբ հաստատությունում առկա չէ անհրաժեշտ թվով մանկավարժ, դաստիարակ, լոգոպեդ, հոգեբան կամ տեխնիկական անձնակազմ, կառավարման ամբողջ համակարգը թուլանում է: Սա հանգեցնում է աշխատակիցների գերծանրաբեռնվածության, աշխատանքի որակի անկման և կրթադաստիարակչական գործընթացի մասնակի խաթարման: Բացի այդ՝ նման իրավիճակում նույնիսկ ամենաորակյալ մենեջմենթն արդյունավետ գործել չի կարող:

2. Տիպային շենքերի առկայություն: Հարցվածների մի մասը որպես խնդիր նշել է նաև *տիպային շենքերի առկայությունը*, այսինքն՝ նախորդ տասնամյակներում կառուցված ստանդարտ նախագծերով շինությունները, որոնք չեն համապատասխանում ժամանակակից նախադպրոցական կրթության պահանջներին: Այսպիսի շենքերում հաճախ չկան բավարար տարածքներ շարժողական ակտիվության համար, չունեն

հատուկ դասասենյակներ, օրինակ՝ լոգոպեդիկ, էներգաարդյունավետությունը ցածր է, իսկ ներքին միջավայրը՝ մաշված: Հնացած ենթակառուցվածքները խոչընդոտում են կրթական նոր մոտեցումների ներդրմանը՝ խաղային միջավայրի փոփոխում, բաց տարածքների ձևավորում, առողջության պահպանման նոր չափանիշներին համապատասխանություն: Այս խնդիրը նաև բարդացնում է անվտանգության վերահսկողությունը և հարմարավետության ապահովումը ինչպես երեխաների, այնպես էլ աշխատակազմի համար:

3. Խմբերում երեխաների քանակի գերազանցում: Աշխատակիցները հատուկ շեշտել են, որ բազմաթիվ խմբերում երեխաների թիվը գերազանցում է նորմատիվները: Սա անմիջականորեն թուլացնում է վերահսկողությունը դաստիարակչական և անվտանգության մակարդակների վրա: Այս պայմաններում անհնար է յուրաքանչյուր երեխայի նկատմամբ անհատական մոտեցում կիրառել, ինչն իր հերթին անդրադառնում է զարգացման ընդհանուր որակի վրա: Բացի այդ՝ մանկավարժների մասնագիտական այրումը դառնում է սովորական խնդիր:

Եզրակացություն

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների արդյունավետ կառավարումը կրթական համակարգի կայուն զարգացման հիմնարար պայմաններից է: Իրականացված դիտարկումները, հարցումները և զրույցները վկայում են, որ ոլորտում առկա են կառավարման, կադրային քաղաքականության, նյութատեխնիկական և ֆինանսական ապահովման հետ կապված խնդիրներ, որոնք պահանջում են համակարգային և ռազմավարական մոտեցում: Կառավարման գործընթացների կատարելագործումը, մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը, տվյալահեն որոշումների ընդունումը և զարգացնող միջավայրի ապահովումը կարող են դառնալ այն առանցքային ուղղությունները, որոնք կապահովեն նախադպրոցական կրթության որակի բարձրացում և յուրաքանչյուր երեխայի լիարժեք զարգացում:

Առաջարկություններ

Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկում ենք

1. Ներդնել ժամանակակից, տվյալահեն և թափանցիկ կառավարման մեխանիզմներ՝ ապահովելով պլանավորման, վերահսկման և վերլուծության շարունակական գործընթաց:

2. Ընդգրկել մանկավարժներին և ծնողներին որոշումների կայացման

ու վերահսկման փուլերում՝ խթանելով համագործակցային մշակույթը:

3. Ապահովել բավարար և նպատակային ֆինանսավորում՝ անվտանգ ու զարգացնող միջավայր ստեղծելու համար:

4. Սահմանել երեխաների առավելագույն թվաքանակի հստակ նորմատիվներ՝ ապահովելով անհատական մոտեցում և մանկավարժների արդյունավետ գործունեություն: Նշված քայլերի իրականացումն ուղղակիորեն կնպաստի նախադպրոցական կրթական հաստատությունների կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը, մանկավարժական աշխատանքի որակի բարելավմանը, ինչպես նաև երեխայի համակողմանի զարգացման ապահովմանը:

Գրականություն

1. Միտոյան Հասմիկ, Սմբատյան Լալա, Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար, 2010:
2. Մանկապարտեզի տնօրենի ուղեցույց, ՀՀ կրթության, գիտության նախարարություն, Կրթության ազգային ինստիտուտ, 2007:
3. Հովհաննիսյան Արա, Մենեջմենթի հիմունքներ, Երևան, հեղ. հրատ., 2015, 75 էջ:
4. Սուվարյան Յու. Մ., Մենեջմենթ, Երևան, Տնտեսագետ, 2009, 86 էջ:
5. Соловьева О. И. Детксий сад, 1963.

Проблемы управления дошкольными образовательными учреждениями

Минасяан Эмма
Факультет социальных наук,
«Управление образованием»,
руководитель магистерской диссертации:
кандидат педагогических наук, доцент: Л. Багдасарян

Резюме

Ключевые слова: *основа образования, истоки развития, эффективное управление, социально-общественная значимость, развитие ребёнка*

Статья рассматривает проблему эффективности управления дошкольными образовательными учреждениями как важнейшее условие устойчивого развития системы образования. Основное внимание уделено управленческим процессам, степени вовлечённости персонала, финансированию и существующим вызовам. Результаты исследования показывают, что на эффективное функционирование дошкольных учреждений влияют многослойные проблемы, охватывающие организационные, материально-технические, кадровые и коммуникативные аспекты.

Challenges in the Management of Preschool Educational Institutions

Minasyan Emma
Faculty of Social Sciences,
"Education Management",
Academic Supervisor: L. Baghdasaryan
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *foundation of education, origins of development, effective management, societal importance, child development*

The article examines the issue of management efficiency in preschool educational institutions as a crucial condition for the sustainable development of the education system. The primary focus is placed on management processes, staff involvement, funding, and existing challenges. The research findings reveal that the obstacles hindering the effective functioning of preschool institutions are multifaceted, encompassing organizational, material-technical, human, and communicational components.

Դպրոցի կառավարման մոդելները

Պողոսյան Գայանե
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Կրթության կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ., դոցենտ, Լ. Բաղդասարյան

Հանգուցային բառեր. *կրթության որակ, ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, համագործակցություն, կառավարման համակարգի բարելավում*

Կրթության ոլորտում ամեն մի բարեփոխում միտված է կրթության որակի բարելավմանը: Ակնհայտ է, որ միայն բուն կրթական բարեփոխումներով կրթության որակը հնարավոր չէ բարելավել: Կրթության համակարգի զարգացումը պայմանավորված է նախնառաջ տվյալ երկրի տնտեսության, արդյունաբերության, մշակույթի զարգացման մակարդակով: Դրա հետ մեկտեղ, գաղտնիք չէ, որ կառավարման, ուսուցման, ուսումնառության նորարարական տեխնոլոգիաների, ռազմավարությունների կիրառումը կարող է արագացնել կրթության զարգացման տեմպերը: Դրանով պայմանավորված էլ ՀՀ-ում հանրակրթական դպրոցների կառավարման համակարգի բարելավման նպատակով իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են դպրոցի տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների տարանջատմանը: Այս փոփոխությունների նպատակն է ապահովել կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը դպրոցներում:

Հոդվածի նորույթը դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների համակողմանի ուսումնասիրությունն է, ինչպես նաև տվյալ պաշտոնների առկայության ազդեցության ուսումնասիրումը դպրոցի գործունեության վրա:

Հոդվածի նպատակն է բացահայտնել դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնների առկայության դեպքում կրթության կառավարման որակը: Նպատակից բխող խնդիրներն են ուսումնասիրել տեսամեթոդական գրականությունը, ուսումնասիրել ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի և վարչատնտեսական մասի համա-

կարգողի պաշտոնային գործառույթները, պարզել կրթության կառավարման որակը դպրոցի կառավարման համակարգում պաշտոնային փոփոխությունների դեպքում: Տեսական ուսումնասիրության մեթոդներն են՝ դպրոցի կառավարման մոդելների վերաբերյալ փաստաթղթային վերլուծությունները, վերլուծման և համադրման մեթոդները: Փորձարարական հետազոտության մեթոդներն են դիտումը, զրույցը, հարցաթերթը:

Կառավարումը տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան նյութական և հոգևոր բարիքների, ծառայությունների ստեղծմանը նպատակաուղղված աշխատանքի վրա համակարգված կարգավորիչ ներգործությունն է [5, 14]: Ըստ Լազարևի և ուրիշների՝ «Կառավարման գործընթացը գործողությունների հաջորդականություն է, որն իրականացվում է կառավարվող սուբյեկտի կողմից, և որի արդյունքում ձևավորվում և փոփոխվում է կառավարվող օբյեկտը, ճշգրտվում և որոշվում են համատեղ գործունեության նպատակները և նրանց հասնելու միջոցները, բաժանվում է աշխատանքը նրա մասնակիցների միջև, միավորվում են ջանքերը [2, 79]:

Դպրոցը, ինչպես և ցանկացած կրթական հաստատություն, իրենից ներկայացնում է ամբողջական, բաց, արտաքին միջավայրի հետ փոխկապակցված համակարգ, որը փոխգործակցում է արտաքին միջավայրի հետ: Արտաքին միջավայրի հետ դպրոցի կապը երկկողմանի է, և յուրաքանչյուր կրթական հաստատություն կրում է ընդհանուր սոցիալական, քաղաքական, իրավական, մշակութային, էկոլոգիական, ժողովրդագրական գործոնների ազդեցությունը: Միաժամանակ, դպրոցը՝ որպես համակարգ, ունի իր ներքին միջավայրը, որի փոխգործակցող ենթահամակարգերն են՝ աշակերտ–աշակերտ, ուսուցիչ–աշակերտ, ուսուցիչ–ուսուցիչ, ուսուցիչ–ծնող և այլն, որոնք և որոշում են մի կողմից՝ ուսուցման, դաստիարակության և զարգացման նպատակներն ու խնդիրները, մյուս կողմից՝ կրթության բովանդակությանը համապատասխան ձևերի, մեթոդների և միջոցների համակարգը [3, 15]:

Դպրոցում կառավարման հիմքը ուսումնադաստիարակչական գործընթացի համար համապատասխան պայմանների ստեղծումն է: Տնօրենը ոչ միայն կազմակերպողն ու վերահսկողն է, այլ նաև մանկավարժական գործընթացի մասնակիցն է և պատասխանատուն: Նա մասնակցում է մանկավարժական կոլեկտիվի՝ երեխաների հետ տարվող ուսումնադաստիարակչական բոլոր աշխատանքներին: Դպրոցի ղեկավարներն իրականացնում են կառավարումը, մասնակցում այդ ուղղությամբ ընդունված որոշումների կենսագործմանը: Նրանք ոչ միայն պլանավորում են

ուսումնադաստիարակչական աշխատանքները, այլ նաև քայլ առ քայլ կատարում են այդ պլանների իրացումը, դպրոցում ստեղծում այդ աշխատանքները կատարելու բոլոր պայմանները [1, 440]: Դպրոցի կառավարման արվեստը մշտապես ի հայտ է գալիս կոնկրետ իրավիճակում: Այն կայանում է նրանում, որ կառավարող սուբյեկտը հստակ գիտենա, թե երբ, որտեղ և ինչ միջոցներով գործի նպատակն իրագործելու և հաջողության հասնելու համար: Կառավարման արվեստն իր մեջ ներառում է ռազմավարությունը, գործածության ճկուն մարտավարության տիրապետումը, հիմնախնդիրների ստույգ որոշումը և նրանց լուծման հերթականությունը, եղած ուժերի և միջոցների ճիշտ տեղաբաշխումն ու օգտագործումը [4, 31-32]:

Այսպիսով՝ դպրոցը կառավարվող և զարգացող համակարգ է, կենսագործունեության միասնականացված գործընթաց, որը կազմող գործընթացային բաղադրամասերը կապված են դպրոցի համապատասխան ենթահամակարգերի հետ: Իսկ այդ գործընթացներն են՝

- կրթական,
- կառավարչական,
- նորամուծությունների
- կոլեկտիվի ստեղծման և զարգացման [2, 45-46]:

Դպրոցի կառավարման ժամանակակից մոդելների ուսումնասիրությունը բացահայտում է ճկուն կառավարման տեխնոլոգիաների կիրառման միտումը: Կարևոր միտում է նաև այն, որ գործարարության, տնտեսության տարբեր բնագավառներում կիրառվող կառավարման մոդելները նույնպես սահուն անցում են կատարում կոշտ կառավարման մոդելներից դեպի ճկուն կառավարման մոդելները:

Ակնհայտ է, որ ՀՀ կրթության համակարգը պետք է նույնպես հաշվի առնի զարգացած երկրների առաջավոր փորձը: Դպրոցի ճկուն կառավարման ներդրման կարևոր պայմանը գնահատման մեթոդաբանությունն է: Կարևոր է պարզել, թե ինչպես է իրականացվում դպրոցի աշխատանքի գնահատումը: ՀՀ-ում գործում է դպրոցի աշխատանքի արտաքին գնահատումը, այսինքն՝ կառավարման որակի գնահատումը, վերահսկողությունը իրականացվում է տարբեր գործակալությունների, մասնավորապես ՀՀ կրթության տեսչական մարմնի կողմից:

Դպրոցի ճկուն կառավարման մոդելը ներդնելով՝ խնդիր է դրվում կամ արտաքին գնահատումը լրացնել ներքին գնահատման մեխանիզմներով, կամ պարզապես իրականացնել ներքին գնահատում: Դպրոցը պետք է կամ ինքնուրույն իրականացնի ինքնագնահատում կամ հրավիրի

գնահատողների դրսից: Արդի փուլում աստիճանաբար ներդրվում է խառը գնահատման համակարգը, երբ ներքին գնահատումն իրականացվում է արտաքին փորձագետների օգնությամբ:

Դպրոցի ճկուն կառավարման մյուս նախապայմանը սովորողների անհատական կրթական հետագծերի նախանշումը կամ մշակումն է: Ինչոր առումով այն համարվում է նոր դպրոցի մոդել, երբ ամեն մի սովորողի համար մշակվում է անհատական զարգացման պլան:

Այսպիսով՝ եզրակացնում ենք, որ կառավարման մոդելի ընտրությունը էապես նպաստում է դպրոցի գործունեության վրա: ՀՀ- ում հանրակրթական դպրոցների կառավարման համակարգի բարելավման նպատակով իրականացվել են մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք ուղղված են դպրոցի տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի գործառույթների հստակ տարանջատմանը: Այս փոփոխությունների նպատակն է ապահովել կառավարման արդյունավետությունը, թափանցիկությունը և հաշվետվողականությունը դպրոցներում:

Նշված փոփոխությունները ուժի մեջ են մտել 2023 թվականի սեպտեմբերի 1-ից, ինչը հնարավորություն է տալիս դպրոցներին նախապատրաստվել և համապատասխանեցնել իրենց կառավարման կառուցվածքը նոր պահանջներին:

Առաջարկվող մոդելով՝ վարչատնտեսական մասի կառավարիչը կիրականացնի դպրոցի վարչական, տնտեսական և ֆինանսական կառավարումը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի հետ իրականացնելով միայն ուսումնական գործընթացի պլանավորում: Ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենը չի զբաղվի վարչական, տնտեսական և ֆինանսական հարցերով: Նա կզբաղվի միայն մանկավարժական աշխատողների մրցույթների կազմակերպմամբ, ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորմամբ և իրականացմամբ՝ վարչատնտեսական կառավարչի հետ համագործակցելով պլանավորման և դասաբաշխման, տարիֆիկացիայի կազմման հարցերում: Դպրոցի կառավարման նմանօրինակ մոդել կիրառվում է ԱՄՆ-ի, Եվրոպայի կրթական հաստատություններում:

Նախկինում դպրոցի տնօրենը պետք է կարողանար միաժամանակ զբաղվել և՛ ուսումնադաստիարակչական գործընթացով, և՛ ֆինանսատնտեսական հարցերով, ինչը մեծ ծանրաբեռնվածություն էր ստեղծում: Նոր համակարգի շնորհիվ տնօրենը բացառապես կկենտրոնանա կրթության որակի բարելավման վրա, այն է՝ ավելի սերտ կհամագործակցի ուսուցիչների և աշակերտների հետ, զանազան մեթոդական նորամուծու-

թյուններ կներմուծի դպրոց և այլն: Նույն իրավիճակում ֆինանսատնտեսական համակարգողը ավելի ճշգրիտ կպլանավորի դպրոցի ֆինանսական կարգավորվածությունը, կապահովի թափանցիկություն, հաշվետվողականություն:

Կառավարման նոր մոդելի ներդրմամբ՝ երբ առանձնացվել են ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնները, ակնկալվում էր, որ դպրոցները կդառնան ավելի ճկուն, արդյունավետ և հաշվետու կառույցներ: Մեր իրականացրած հետազոտության արդյունքները թույլ են տալիս բազմակողմանիորեն գնահատել այս փոփոխությունների ազդեցությունը դպրոցի գործունեության և կրթության որակի վրա:

Նախ, կարևոր է ընդգծել, որ նոր մոդելի ներդրումը զգալիորեն փոխել է դպրոցի ներսում դերերի բաշխումը: Ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենը, ազատվելով տնտեսական և վարչական գործառույթներից, կարողանում է առավելագույն ուշադրություն դարձնել կրթական գործընթացի կազմակերպմանը, ուսումնական ծրագրերի իրականացմանը, աշակերտների և ուսուցիչների հետ աշխատանքին: Սա ակնհայտ է դառնում հարցման վերլուծությունից: Մասնավորապես, ինչպես ծնողների, այնպես էլ աշակերտների մեծամասնությունը նշում են, որ վերջին շրջանում դպրոցում միջոցառումների և հանդիպումների թիվը զգալիորեն աճել է: Ծնողների 83 %-ը և աշակերտների 86.3 %-ը արձանագրում են, որ միջոցառումների կազմակերպման ակտիվությունը բարձրացել է, իսկ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի հետ հանդիպումների հաճախականությունը նույնպես աճել է՝ համապատասխանաբար 69.1 % ծնողների և 73.8 % աշակերտների գնահատմամբ: Այս փաստերը վկայում են, որ տնօրենի՝ կրթական բովանդակության վրա կենտրոնանալու հնարավորությունը իրականում իր դրական ազդեցությունն է թողնում դպրոցի ներքին կյանքում: Շենքային պայմանների և գույքի բարելավման ուղղությամբ նույնպես արձանագրվել են դրական տեղաշարժեր: Ծնողների 78 %-ը և աշակերտների 81 %-ը նշում են, որ վերջին շրջանում դպրոցները նոր գույք են ստացել, կամ շենքային պայմանները բարելավվել են: Սա, ամենայն հավանականությամբ, արդյունք է այն բանի, որ վարչատնտեսական մասի համակարգողը իր ուշադրությունը կենտրոնացնում է նյութատեխնիկական և տնտեսական խնդիրների լուծման վրա, հետևաբար՝ այս ոլորտում աշխատանքներն ավելի համակարգված և նպատակային են դառնում: Ավելին, դպրոցների մեծ մասում նկատվում է նաև տնտեսական գործընթացների թափանցի-

կության և հաշվետվողականության բարձրացում, ինչը կարևոր է հանրային վստահության և արդյունավետ կառավարման տեսանկյունից: Ուսուցիչների հարցումները նույնպես վկայում են կառավարման նոր համակարգի դրական ազդեցության մասին:

Ուսուցիչների 41.2 %-ը գտնում է, որ նոր կառավարման համակարգը լիովին նպաստում է կրթության որակի բարձրացմանը, իսկ 38.5 %-ը՝ մասամբ: Սա ցույց է տալիս, որ նոր մոդելը, ընդհանուր առմամբ, նպաստում է ուսումնական գործընթացի բարելավմանը, ուսուցիչների և տնօրենի համագործակցության խորացմանը, ինչպես նաև ուսումնական միջավայրի զարգացմանը: Ուսուցիչների կեսից ավելին (50.4 %) նշում է, որ տնօրենի կողմից իրենց աջակցությունն ու ուղղորդումը զգալիորեն ավելացել է, քանի որ վերջինս այժմ ավելի շատ ժամանակ է տրամադրում ուսումնական հարցերին: Սա հատկապես կարևոր է, քանի որ ուսուցիչների մասնագիտական աճն ու աշխատանքային բավարարվածությունը ուղղակիորեն կապված են ղեկավարի աջակցման և համագործակցության մակարդակի հետ: Հետազոտության արդյունքներից կարելի է նաև նկատել, որ կառավարման նոր համակարգը նպաստել է աշխատանքի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացմանը: Ուսուցիչների 63.4 %-ը նշում է, որ դպրոցի աշխատանքն ավելի թափանցիկ և հաշվետու է դարձել, իսկ 25.8 %-ը արձանագրում է փոքր, բայց դրական փոփոխություններ: Սա վկայում է, որ նոր մոդելը ոչ միայն նպաստում է արդյունավետ կառավարմանը, այլև ստեղծում է ավելի բաց և վստահելի միջավայր դպրոցում: Թափանցիկության բարձրացումը կարևոր է նաև այն առումով, որ այն խթանում է դպրոցի համայնքի՝ ծնողների, ուսուցիչների և աշակերտների ավելի ակտիվ ներգրավվածությունը կառավարման գործընթացներում: Հարցված ծնողների 19.7 %-ը և ուսուցիչների 31.6 %-ը նշել են, որ ակտիվորեն մասնակցում են որոշումների կայացմանը, իսկ մեծամասնությունը ներգրավված է քննարկումներին: Սա խոսում է այն մասին, որ դպրոցում ձևավորվում է մասնակցային կառավարման մշակույթ, որտեղ տարբեր շահառուների կարծիքը լսելի և կարևոր է:

Այնուամենայնիվ, չնայած դրական միտումներին, կառավարման նոր համակարգը իր հետ նոր մարտահրավերներ է բերում: Հարցազրույցների և հարցաթերթերի արդյունքները վկայում են, որ դեռևս առկա են օրենսդրական և գործառութային որոշ բացեր, որոնք խոչընդոտում են համակարգի լիարժեք արդյունավետությունը:

Մասնավորապես, տնօրենների և վարչատնտեսական մասի համակարգողների միջև պատասխանատվության և գործառույթների հստակ

սահմանումը միշտ չէ, որ իրականացվում է օրենքի պահանջներին համապատասխան: Հարցազրույցների ժամանակ մի քանի տնօրեններ նշեցին, որ հաճախ առաջանում են կնիքի օգտագործման և ներքին թղթաբանության խնդիրներ: Օրինակ, որոշ դեպքերում տնօրենը ստիպված է կնիք դնել այնպիսի փաստաթղթերի տակ, որոնց համար ինքը պատասխանատու չէ, ինչը կարող է առաջացնել իրավական և գործառութային բարդություններ: Բացի այդ՝ անձնակազմի կառավարման մասնագետի և գործավարի գործառույթների հստակեցման հարցը մնում է բաց, քանի որ այս աշխատակիցները երբեմն միաժամանակ ենթարկվում են և՛ տնօրենին, և՛ համակարգողին, ինչը կարող է առաջացնել կոնֆլիկտային իրավիճակներ և արդյունավետության նվազում:

Հարաբերությունների որակը տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի միջև նույնպես որոշիչ է համակարգի արդյունավետության համար: Հարցազրույցների արդյունքներից պարզ է դառնում, որ այն դպրոցներում, որտեղ երկու պաշտոնյաների միջև ձևավորվում է գործընկերային, վստահելի և բաց համագործակցություն, կառավարման համակարգը գործում է առավել արդյունավետ, իսկ դպրոցում դրական փոփոխություններն առավել տեսանելի են: Սակայն կան դեպքեր, երբ պաշտոնյաների միջև առաջանում են անհամաձայնություններ, որոնք բացասաբար են անդրադառնում դպրոցի ընդհանուր մթնոլորտի և աշխատանքի կազմակերպման վրա: Սա ցույց է տալիս, որ կառավարման նոր մոդելի հաջողությունը մեծապես կախված է ոչ միայն կառուցվածքային փոփոխություններից, այլև մարդկային գործոնից՝ տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի պատրաստակամությունից, փոխադարձ հարգանքից և արդյունավետ հաղորդակցությունից: Վերջապես, պետք է նշել, որ կառավարման նոր համակարգի ներդրումը խթանել է նաև դպրոցի համայնքի՝ հատկապես ծնողների և ուսուցիչների ներգրավվածությունը կառավարման գործընթացում: Թեև ծնողների միայն 19.7 %-ն է ակտիվ մասնակցում որոշումների կայացմանը, մեծամասնությունը տարբեր աստիճաններով ներգրավված է քննարկումներին, ինչը դրական միտում է: Ուսուցիչների շրջանում նույնպես գերակշռում է մասնակցության և ներգրավվածության բարձր մակարդակը, ինչը նպաստում է դպրոցի աշխատանքի թափանցիկությանն ու հաշվետվողականությանը:

Նոր համակարգի արդյունավետ գործարկման համար միանշանակորեն ժամանակ է անհրաժեշտ, հատկապես այն դեպքում, երբ մենք առնչվում ենք այն խնդրին, որ ՀՀ դպրոցների մի մեծ խումբ չունի տնօրեն. նրա գործառույթներն իրականացնում է պաշտոնակատարը: Իսկ պատ-

ճառն այն է, որ տնօրենների ներկայացրած ռազմավարական ծրագրերը չեն համապատասխանում չափանիշներին:

Համակարգի ներդրման հաջորդ ռիսկն էլ այն է, որ տնօրենի և վարչատնտեսական մասի համակարգողի միջև կարող են առաջանալ հակասություններ, բախումներ, որոնք կդանդաղեցնեն դպրոցի կառավարման գործընթացը: Դա կարող է պայմանավորված լինել համագործակցային հմտությունների պակասով:

Մյուս ռիսկը ֆինանսատնտեսական համակարգողի ոչ կրթական փորձառությունն է: Ֆինանսատնտեսական համակարգողը ունի տնտեսագիտական կրթություն և շեշտը դնում է ֆինանսների կառավարման վրա, բայց նա կարող է ոչ բավարար պատկերացում ունենալ դպրոցի կրթական կարիքների վերաբերյալ, ինչը դարձյալ կարող է հակասություններ առաջացնել:

Հաջորդ մարտահրավերը վերաբերում է արդեն ուսուցիչներին և մանկավարժական աշխատողներին, քանի որ երկու տնօրենի առկայությունը կարող է դպրոցի ներքին մթնոլորտի վրա ազդեցություն ունենալ. ուսուցիչները չկողմնորոշվեն, թե որ խնդրի դեպքում ում պետք է դիմեն: Սա ևս ժամանակ և աշխատանք է պահանջվում:

Հետազոտության արդյունքները հստակ ցույց են տալիս, որ նոր կառավարման համակարգի ներդրումը ՀՀ դպրոցներում, մասնավորապես Լոռու մարզում, ունի հիմնականում դրական ազդեցություն: Ընդհանուր առմամբ, դպրոցներում նկատվում է կրթական, դաստիարակչական և կառավարման ոլորտներում ակտիվացում, ինչը արտահայտվում է միջոցառումների քանակի ավելացմամբ, շենքային պայմանների բարելավմամբ և ուսումնական գործընթացի որակի բարձրացմամբ:

Հետազոտության ընթացքում պարզ է դառնում, որ պաշտոնների գործառույթների հստակ տարանջատումը դեռևս ամբողջությամբ չի իրականացվել: Սա առաջացնում է իրավական և գործառնական որոշակի անորոշություններ, որոնք ազդում են դպրոցի կառավարման արդյունավետության վրա: Օրինակ՝ կնիքի կիրառման հարցը շարունակում է մնալ խնդիր:

Այս խնդիրը նաև անդրադառնում է տնօրենների և համակարգողների միջև վստահության և համագործակցության հաստատմանը: Երբ պաշտոնների սահմանները հստակ չեն, կարող են առաջանալ պաշտոնական հակասություններ, որոնք վնասում են դպրոցի ընդհանուր մթնոլորտին և արդյունավետությանը:

Հարցման վերլուծությունները ցույց են տալիս, որ տնօրենների և

վարչատնտեսական մասի համակարգողների միջև համագործակցությունը կարևոր գործոն է նոր համակարգի հաջողության համար: Շատ տնօրեններ ընդգծում են, որ համագործակցության արդյունավետությունը մեծապես կախված է անձնական հարաբերություններից և մթնոլորտից: Երբ հարաբերությունները բարիդրացիական և գործընկերային են, դպրոցում ուսումնական գործընթացի կազմակերպումը և կառավարման մյուս գործառույթները ընթանում են ավելի հարթ և արդյունավետ:

Այնուամենայնիվ, կան նաև դեպքեր, երբ պաշտոնատար անձանց միջև նկատվում են հակասություններ, մասնավորապես ֆինանսական և ռեսուրսային հարցերում, ինչը կարող է խոչընդոտել դպրոցի զարգացման ծրագրերի իրականացմանը: Այս իրավիճակը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ոչ միայն պաշտոնների գործառույթների հստակ սահմանման, այլև համագործակցության մշակույթը զարգացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել:

Հետազոտության տվյալները փաստում են, որ համայնքի՝ ծնողների և ուսուցիչների ներգրավվածությունը դպրոցի կառավարման գործընթացներում զգալիորեն աճել է: Ծնողների մեծամասնությունը զգում է իրենց կարծիքի կարևորությունը և մասնակցում է դպրոցական քննարկումներին: Ուսուցիչների ներգրավվածության մակարդակն էլ բավական բարձր է, ինչը նպաստում է դպրոցում կայացվող որոշումների որակի բարձրացմանը:

Սակայն դեռևս կա զգալի տոկոս ծնողների և ուսուցիչների, որոնք կամ ներգրավված չեն, կամ հազվադեպ են մասնակցում որոշումների կայացման գործընթացներին: Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտ է շարունակական աշխատանք կատարել համայնքի ներգրավվածության մակարդակը բարձրացնելու և նրանց համար ավելի հարմար և հասանելի դարձնելու կառավարման գործընթացները:

Ծնողների և աշակերտների մեծամասնությունը հաստատում է, որ վերջին շրջանում դպրոցներում զգալի բարելավումներ են տեղի ունեցել շենքային պայմանների և նյութատեխնիկական ապահովման առումով: Սա վկայում է, որ վարչատնտեսական մասի համակարգողի առկայությունը նպաստում է ռեսուրսների արդյունավետ կառավարմանը և դպրոցների նյութատեխնիկական բազայի բարելավմանը:

Այս բարելավումները ոչ միայն բարձրացնում են ուսումնական միջավայրի որակը, այլև նպաստում են աշակերտների և ծնողների մոտ դրական վերաբերմունքի ձևավորմանը դպրոցի նկատմամբ, ինչը կարևոր է կրթական գործընթացի հաջողության համար:

Հարցազրույցների հիման վրա պարզ է դառնում, որ վարչատնտեսական մասի համակարգողի ներգրավումը թույլ է տալիս տնօրեններին թեթևացնել իրենց վարչարարական ծանրաբեռնվածությունը: Սա հնարավորություն է տալիս տնօրեններին ավելի շատ ժամանակ հատկացնել ուսումնական գործընթացի կազմակերպմանը, ուսուցիչների աջակցությանը և կրթական ծրագրերի զարգացմանը:

Անձնակազմի կառավարման մասնագետի կարգավիճակը և նրա ենթակայությունը դեռևս անորոշ է, ինչը առաջացնում է հակասություններ և կառավարման արդյունավետության նվազում: Տնօրենների կարծիքով, գործավարը պետք է լինի ուղղակիորեն տնօրենի ենթակայության տակ, քանի որ նա առաջին հերթին ծառայում է ուսումնական գործընթացի կազմակերպմանը և անձնակազմի կառավարմանը:

Այս խնդիրը պահանջում է շտկումներ, որպեսզի անձնակազմի կառավարման գործընթացները լինեն հստակ, արդյունավետ և չառաջացնեն ներքին հակասություններ:

Ուսուցիչների մեծամասնությունը նկատում է դպրոցի աշխատանքի թափանցիկության բարձրացումը նոր համակարգի ներդրման արդյունքում: Սա կարևոր ձեռքբերում է, որը նպաստում է կառավարման որակի բարձրացմանը, պատասխանատվության և վստահության ձևավորմանը դպրոցական համայնքում:

Այնուամենայնիվ, որոշ ուսուցիչներ և ծնողներ նշում են, որ դեռևս կան խնդիրներ թափանցիկության ապահովման հարցում, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է շարունակական ջանքեր գործադրել այս ուղղությամբ՝ կիրառելով նոր տեխնոլոգիաներ և բաց հաղորդակցություն ապահովելով բոլոր շահագրգիռ կողմերի միջև:

Ամփոփելով եզրակացնում ենք, որ նոր համակարգը ունի բազմաթիվ դրական կողմեր, բայց այն իր հետ բերում է նաև մի շարք ռիսկեր, որոնց հաղթահարման համար անհրաժեշտ է հետևողականություն, կանոնակարգվածություն և արդյունավետ համագործակցություն: Համակարգը հաջողությամբ կներդրվի այն դեպքում, երբ հստակ մեխանիզմներ և ռազմավարություն կկիրառվեն: Ամփոփելով առաջարկում ենք համագործակցության հետևյալ մեխանիզմները:

1. Վերանայել վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման հարցը:

2. Հավակնորդը տնօրենի ներկայացրած ռազմավարական ծրագրի նմանությամբ կազմի տվյալ դպրոցի տարեկան նախահաշիվը մինչ պաշտոնին նշանակվելը, ինչպես նաև կազմակերպել վերապատրաստ-

ման դասընթացներ նրանց համար՝ կենտրոնանալով դպրոցների բյուջետային կառավարման առանձնահատկությունների վրա:

3. Տնօրենների և վարչատնտեսական մասի համակարգողների համար կազմակերպել դասընթացներ՝ նրանց միջև արդյունավետ համագործակցային միջավայր ստեղծելու, երկուստեք ի բարօրություն դպրոցի գործելու հոգեբանական ներգործության համար:

4. Իրավական տեսակետից կարգավորել կնիքի, անձնակազմի կառավարման մասնագետի և գործավարի հաստիքների՝ ում կողմից նշանակվելու երկընտրանքի խնդիրը:

5. Պարբերաբար իրականացնել մոնիթորինգ, մշակել և կիրառել եղած թերությունների վերացման մեխանիզմներ:

Գրականություն

1. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Երևան, «Մանկավարժ», 2005, 456 էջ:
2. Ասատրյան Թ., Կարապետյան Ա., Ասատրյան Մ., Ցոլակյան Թ., Կրթության համակարգի կառավարման հիմունքները (մեթոդաբանություն և տեխնոլոգիա), մաս 1, Երևան, «Զանգակ», 2003, 224 էջ:
3. Մովսիսյան Ս., Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, «Լույս», 1988, 244 էջ:
4. Սահակյան Մ., Կառավարման հոգեբանության մի քանի հարցեր, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, հեղինակային հրատարակություն, 2015, 140 էջ:
5. Սուվարյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ, Մենեջմենթ, Երևան, Տնտեսագետ, 2002, 560 էջ:

Модели управления школой

Погосян Гаяне
Факультет социальных наук,
"Управление образованием",
руководитель магистерской диссертации:
кандидат педагогических наук, доцент: Л. Багдасарян

Резюме

Ключевые слова: *качество образования, модели управления школой, сотрудничество, совершенствование системы управления*

В Республике Армения были внесены ряд законодательных изменений, направленных на совершенствование системы управления общеобразовательными школами. Эти изменения ориентированы на разграничение функций директора, ответственного за учебно-воспитательную работу, и координатора административно-хозяйственного отдела. Результаты исследования показывают, что внедрение новой системы управления в школах РА, особенно в школах Лорийской области, оказывает преимущественно положительное влияние.

School Management Models

Poghosyan Gayane
Faculty of Social Sciences,
"Education Management",
Academic Supervisor: L. Baghdasaryan
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *quality of education, school management models, cooperation, improvement of management system*

A number of legislative amendments have been implemented in the Republic of Armenia aimed at improving the management system of general education schools. These amendments focus on separating the functions of the principal responsible for educational and upbringing activities from those of the coordinator of the administrative and economic section. The results of the study show that the introduction of the new management system in Armenian schools, particularly in the schools of the Lori region, has a predominantly positive effect.

Դպրոցական կոլեկտիվի ձևավորման մանկավարժական պայմանները

Վարդանյան Մանյա
«Հասարակական գիտությունների» ֆակուլտետ,
«Կրթության կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. դ., պրոֆեսոր Պ. Գևորգյան

Հանգուցային բառեր. *կառավարում, ղեկավարում, կրթական համակարգ, մանկավարժական աշխատող, դպրոցական կոլեկտիվ*

Ներկայումս անընդհատ փոփոխվող կրթական համակարգը բնութագրվում է նոր մոտեցումների ձևավորմամբ, պետական կրթական նոր չափորոշիչների ներդրմամբ, դպրոցական կոլեկտիվի վրա ժամանակի պահանջներին համապատասխանելու պայմաններ դնելով: Ժամանակակից կրթական համակարգում առաջնային է դառնում ուսումնական հաստատության ներսում համախմբված և համագործակցային մանկավարժական կոլեկտիվի ձևավորումը: Որակյալ կրթության ապահովման կարևոր նախապայմաններից են ուսուցիչների համար ստեղծված այն պայմանները, որտեղ նրանք ոչ միայն ունեն մասնագիտական հմտությունների զարգացման հնարավորություններ, այլև կարողանում են արդյունավետ համագործակցել, կիսվել փորձով, հասնել ընդհանուր կրթական նպատակների: Այս փոփոխվող պայմաններում դպրոցի տնօրենի դերը կոլեկտիվի ձևավորման և կառավարման գործում ևս դարձել է ավելի բազմաշերտ՝ պահանջելով ոչ միայն կառավարչական, այլև հաղորդակցային և մոտիվացիոն հմտություններ: Տնօրենը հանդես է գալիս որպես թիմի առաջնորդ, որի մոտեցումները և արժեքային համակարգը կարող են թե՛ նպաստել համագործակցային մթնոլորտի ձևավորմանը, թե՛ հակառակը՝ առաջացնել ներքին բախումներ ու մասնագիտական անհամաձայնություններ: Բացի այդ՝ այսօր հատկապես կարևորվում է ուսուցչի ընտրության, գնահատման և զարգացման գործընթացների արդար, թափանցիկ կազմակերպումը: Այս պայմաններում տեսականորեն կարևոր և գործնականորեն հրատապ խնդիր է դառնում մանկավարժական կոլեկտիվի կայացումը:

Դպրոցական կոլեկտիվը իրենից ենթադրում է աշակերտական և մանկավարժական կոլեկտիվների կազմ, որոնք սերտ փոխկապակցված են և գտնվում են անընդհատ փոխազդեցության մեջ: Աշակերտական

կազմի համակողմանի և ներդաշնակ զարգացման խնդիրների հաջող իրականացումը մեծապես կախված է մանկավարժներից և նրանց պրոֆեսիոնալ աշխատանքից: Թեմայի արդիականությունը պայմանավորված է մանկավարժական ներուժի ձևավորմամբ, կադրերի ընտրությամբ, մանկավարժական հատուկ պայմանների ստեղծման անհրաժեշտությամբ՝ ի նպաստ ուսումնական հաստատության նպատակի իրականացմանը:

Հետազոտության խնդիրներն են՝ պարզել ուսումնական հաստատությունների արդյունավետ աշխատանքի համար մանկավարժական կոլեկտիվի կարևորությունը, ուսումնասիրել ուսումնական հաստատությունների տնօրենների կողմից կիրառվող կոլեկտիվի ձևավորման միջոցները:

Կատարվել է տեսական գրականության ուսումնասիրություն, կիրառվել են մշակման, առցանց ձևաչափով հարցաթերթիկային հարցման և վերլուծության մեթոդներ:

Դպրոցը կառավարվող և զարգացող համակարգ է, կենսագործունեության միասնականացված գործընթաց, որը կազմող գործընթացային բաղադրամասերը կապված են դպրոցի համապատասխան ենթահամակարգերի հետ: Այդ գործընթացներն են՝ կրթական, կառավարչական, նորամուծությունների, կոլեկտիվի ձևավորման և զարգացման:

Իսկ ի՞նչ է կառավարումը: «Կառավարումը տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան նյութական ու հոգևոր բարիքների, ծառայությունների ստեղծմանը նպատակաուղղված աշխատանքի վրա համակարգված կարգավորիչ ներգործությունն է» [2, 12]:

Դպրոցի կառավարումը կոչված է ապահովելու կառավարվող օբյեկտի գործունեության նպատակաուղղվածությունն ու կազմակերպվածությունը: Նրա հիմնական նպատակն է ապահովել բոլոր միջոցների, ժամանակի, մարդկային ուժերի արդյունավետ և պլանավորված օգտագործումը՝ օպտիմալ արդյունքի հասնելու համար [1, 60]:

Ինչպես նշում էր Ա. Ս. Մակարենկոն, «չի կարելի պատկերացնել կոլեկտիվը պարզապես որպես առանձին անհատների գումար: Կոլեկտիվը սոցիալապես կենդանի օրգանիզմ է: Քանի որ օրգանիզմ է, ունի օրգաններ, պարտականություններ, իրավունքներ, մասերի հարաբերակցություն և փոխկախվածություն: Եթե այս ամենը չկա, չկա կոլեկտիվ, այլ կա պարզապես ամբոխ կամ հավաքածու» [3]:

Լինելով խորաթափանց հոգեբան և տաղանդավոր ուսուցիչ՝ Մակարենկոն համարում էր, որ «իդեալական կոլեկտիվը միայն այն կոլեկտիվն է, որը միաժամանակ զգում է իր միասնությունը, համախմբվածությունը, ուժը և միևնույն ժամանակ զգում է, որ դա ոչ թե համաձայնության եկած

ընկերների խումբ է, այլ հասարակական կարգի երևույթ, կոլեկտիվ, կազմակերպություն, որն ունի որոշակի պարտավորություններ, որոշակի պարտականություն, որոշակի պատասխանատվություն» [3]: Եթե դիտարկենք կրթության տեսանկյունից, ապա իսկական կոլեկտիվի ձևավորումը պահանջում է ոչ միայն համատեղ գործունեություն, այլ նաև արժեքային կողմնորոշումների միասնականություն: Եթե անդամները կիսում են ընդհանուր նպատակներն ու արժեքները, նրանք ավելի արդյունավետ են համագործակցում և հասնում են ավելի լավ արդյունքների: Կոլեկտիվը չի կարող զարգանալ և առաջ շարժվել, եթե նրա անդամների համար չկա ընդհանուր նպատակ, որը բոլորը պետք է ընկալեն որպես կարևոր հեռանկար և սոցիալական շփման, ջանքերի միավորման և դժվարությունների հաղթահարման պատճառ: Հեռանկարը վաղվա ուրախությունն է, որը, ըստ Ա. Մ. Մակարենկոյի, շարժում է թիմին և այն ավելի ուժեղ է դարձնում:

Ուստի «մանկավարժական կոլեկտիվը միմյանց հետ աշխատող մանկավարժների խումբն է, որն ունի ընդհանուր նպատակներ, որոնց իրականացումը նրանց համար անձնական նշանակություն ունի, և իրացնելով միջանձնային փոխհարաբերությունների և փոխգործակցության գործընթացը, նպաստում է ընդհանուր նպատակների իրագործմանը» [1, 171]:

Կրթության համակարգի մշտական զարգացման պայմաններում շատ կարևոր է որակյալ անձնակազմի ընտրությունը և աղապտացիան, որոնք էլ հենց ապահովելու են մանկավարժական կոլեկտիվի ներսում բարոյահոգեբանական անհրաժեշտ մթնոլորտը: Ներկայիս կրթական հաստատությունները ձգտում են ոչ միայն բարձրորակ մասնագետների ներգրավման, այլև պայմանների ստեղծման իրենց հաջող ինտեգրման, մասնագիտական կարողությունների զարգացման և մոտիվացիայի բարձրացման համար: Արդյունավետ ընտրությունը թույլ է տալիս կազմել այն կոլեկտիվը, որը կարող է ապահովել ուսուցման բարձր մակարդակը: Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունում (այսուհետ՝ հաստատություն) ուսուցիչների կազմը համալրվում է թափուր տեղի համար անցկացվող մրցույթի միջոցով: Ցավոք, մրցույթի մասնակիցներից յուրաքանչյուրն ունի հնարավորություն անցնելու աշխատանքի՝ առանց մասնագիտական կարողությունների ստուգման, միայն հարցատոմսերը լավ սովորելով, ինչը դիտվում է որպես թերություն: Չեն ստուգվում մասնագիտական կարողությունները:

Տնօրենի դերը դպրոցի աշխատանքների կազմակերպման և մանկավարժական կոլեկտիվի ձևավորման գործում պարզելու, նրա կողմից

մանկավարժական կոլեկտիվի ձևավորման համար ընդունելի և կիրառելի սկզբունքները և միջոցները վերհանելու, ինչպես նաև նրանց՝ անձնական կառավարման փորձը մեր ուսումնասիրություններում ներառելու համար կատարել ենք առցանց հարցում, որին մասնակցել է 28 տնօրեն Լոռու և Հայաստանի Հանրապետության այլ մարզերից, ընդ որում՝ թե' գյուղական, թե' քաղաքային: Հետազոտությունն անցկացվել է Google Forms հարթակում հարցաթերթիկային հարցման միջոցով:

Առաջին հարցն էր՝ «Վերհիշելով Ձեր՝ կառավարման ոլորտի փորձը՝ խնդրում ենք նշել ուսումնական հաստատության արդյունավետ աշխատանքի կարևոր գործոնները»:

Այս հարցին տնօրենների մեծամասնությունը՝ 82.1 %-ը, նշել է «տնօրենի համագործակցություն դպրոցական կոլեկտիվի հետ»: Հարցման արդյունքներն ապացուցում են, որ դպրոցական հաստատության արդյունավետությունը, տնօրենների ընկալմամբ, հիմնականում պայմանավորված է մարդկանց հետ համագործակցությամբ:

Հարց 2: «Ձեր կարծիքով ո՞րն է տնօրենի դերը դպրոցական (մանկավարժական) կոլեկտիվի ձևավորման գործում»:

Հարցվողները հնարավորություն ունեին ընտրելու պատասխանների մի քանի տարբերակ: Հարցվողների մեծամասնությունը (66, 7 %) նշել է, որ զբաղեցնում է ղեկավարի դեր, ուղղորդում է ողջ գործընթացը՝ միաժամանակ խրախուսելով ինքնագործունեությունը: Փաստորեն, դպրոցների տնօրենների մեծ մասը դիտարկում է իրեն որպես առաջնորդ, ով ղեկավարում է դպրոցական կոլեկտիվի ձևավորումը՝ միաժամանակ խրախուսելով նախաձեռնողականությունն ու համագործակցությունը (66.7 %): Այս մոտեցումը համապատասխանում է կառավարման ժողովրդավարական ոճին: Տնօրենը զբաղեցնում է կենտրոնական տեղ՝ հանդիսանալով հիմնական խթանող ուժը կոլեկտիվի ձևավորման գործընթացում տարբերակը ընտրել էր հարցվողների 44,4 %-ը:

Հարց 3: «Ձեր կարծիքով ո՞ր գործոններն են ամենից շատ նպաստում մանկավարժական կոլեկտիվի ձևավորմանը»:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ մանկավարժական կոլեկտիվի ձևավորման համար տնօրենները առաջնային են համարում համագործակցային որոշումների կայացման մշակույթը (85.7 %), սակայն նրանք կարևորում են նաև խրախուսող մոտեցումը (53,6 %) և մասնագիտական զարգացման հնարավորությունները (53,6 %):

Հաջորդ հարցն էր՝ «Որո՞նք են մանկավարժական կոլեկտիվի ձևավորման դժվարությունների հիմնական պատճառները դպրոցում»:

Հարցվողների 46,4 %-ը չի դիտում մանկավարժական կոլեկտիվի

ձևավորումը որպես բարդ գործընթաց, ինչը կարող է պայմանավորված լինել հստակ կառավարման համակարգերով և ձևավորված մշակույթով, իսկ մոտիվացիայի պակասը (39.3 %) հստակ առանձնանում է որպես լուրջ հարց՝ վկայելով, որ ուսուցիչների ներշնչման, ակտիվ ներգրավման և գնահատման խնդիրները դեռ ակտուալ են:

Հարց 5: «Որո՞նք են մանկավարժական կոլեկտիվի համախմբմանը նպաստող միջոցները»:

Ըստ տնօրենների՝ մանկավարժական կոլեկտիվի համախմբմանը առավելապես նպաստում են գործնական և համագործակցային ձևաչափերը, մասնավորապես՝ համատեղ ծրագրերի իրականացումը (82.1 %) և մասնագիտական խմբերի ակտիվ գործունեությունը (64.3 %): Միաժամանակ, համատեղ միջոցառումները և բաց քննարկումները (50 %) ևս կարևորվում են:

Հարց 6-ը և 7-ը հետևյալն են. «Ձեր կողմից կառավարվող դպրոցում գործո՞ւմ են ուսուցիչների աշխատանքի խրախուսման ձևեր (եթե ոչ, անցեք 9-րդ հարցին)»:

«Ի՞նչ ձևերով եք խրախուսում ուսուցիչների աշխատանքը»:

Տնօրենների 100 տոկոսը ընտրել են «այո» տարբերակը:

Տնօրենների մեծ մասը ուսուցիչների աշխատանքը խրախուսում է պաշտոնական ձևերով (81,5 %), ինչն ընդգծում է ավանդական մոտեցումների գերակշռությունը: Այնուամենայնիվ, հարցման մյուս տարբերակները, որոնք ոչ պակաս կարևորվել են հարցվողների կողմից՝ աջակցելով մասնագիտական աճին վերապատրաստումների, սեմինարների մասնակցության ձևով (55,6 %), նոր նախագծերում և միջոցառումներում ներգրավելով (48,1 %), նրանց փորձը ներկայացնելով դպրոցից ներս և դուրս (44,4 %): Իսկ նյութական խրախուսումը ամենաքիչ նշված տարբերակն է (25,9 %):

Հաջորդ հարցն էր՝ «Ձեր կողմից ղեկավարվող դպրոցում ինչպե՞ս է իրականացվում կոնֆլիկտների կառավարումը»

Ըստ այս հարցի պատասխանների՝ պարզ է դառնում, որ դպրոցների մեծ մասում կոնֆլիկտների կառավարումը իրականացվում է անհատական զրույցների միջոցով (42.9 %), ինչը կարող է դրական լինել՝ թույլ տալով լուծել խնդիրները հնարավորինս շուտ և առանց կոլեկտիվի ներսում լարվածություն առաջացնելու: Միևնույն ժամանակ, որոշ իրավիճակներում նախընտրելի է պաշտոնական և սահմանված ընթացակարգերի պահպանումը: Իսկ բաց քննարկումների քիչ կիրառումը կարող ենք ընդունել որպես խնդիր (25 %), որ կոնֆլիկտների լուծումը հաճախ դիտարկվում է որպես փակ գործընթաց:

Հարց 9: «Համաձա՞յն եք հետևյալ ձևակերպման հետ. ուսումնական հաստատության արդյունավետ կառավարումը նախ և առաջ կապված է կադրերի ընտրության հետ»:

Հարցվողների 53,6 %-ն ընտրել է «այո» տարբերակը, իսկ 46,4 %-ը՝ «մասամբ»: «Ոչ» պատասխանը չի ընտրվել ոչ ոքի կողմից, ինչը փաստում է տնօրենների՝ դպրոցի կառավարման մեջ առաջնահերթությունների մասին:

Հարց 10: «Ձեր կարծիքով ուսուցիչների ընտրության կարգում կա՞ն այնպիսի թերություններ, որ կարող են բացասաբար ազդել հաստատության աշխատանքների վրա (եթե ոչ, անցեք 10-րդ հարցին)»:

Ըստ արդյունքների՝ հարցվողների 60 %-ը ընտրել է «այո» տարբերակը, 32 %-ը՝ «ոչ», 8 %-ը՝ «դժվարանում եմ պատասխանել»:

Հարց 11: «Որո՞նք են Ձեր կարծիքով ուսուցիչների ընտրության կարգում նկատվող թերությունները»:

Մասնակիցների մեծամասնությունը ընտրել է «չեն ստուգվում թեկնածուների մասնագիտական որակները» տարբերակը (65,2 %): Կարևորվել են նաև այն դիտարկումները, որ ընտրությունը հիմնված չէ մասնագիտական գիտելիքների վրա (52,2 %), հնարավոր է տեսականի և պրակտիկայի կապի բացակայություն (39,1 %):

Հարց 12: «Ի՞նչ կանոններ կամ պահանջներ կառաջարկեիք ներդնել ուսուցիչների ընտրության կարգում, որ կօգնեն խուսափել խնդիրներից»:

Պատասխաններից կարելի է հետևություն անել, որ տնօրենները մեծ կարևորություն են տալիս թեկնածուի մասնագիտական պատրաստվածությանը, գործնական հմտություններին: Ուստի միայն դիպլոմը բավարար չէ. անհրաժեշտ է նաև գործնական գնահատում՝ օրինակ՝ փորձնական դասի միջոցով: Նրանք նախընտրում են ուսուցիչների աշխատանքի փորձնական փուլ, որի ընթացքում հնարավոր կլինի գնահատել ոչ միայն մասնագիտական, այլ նաև անձնային, վարքային և թիմային որակները: Տնօրենները նշում են, որ ուսուցչի անձնային նկարագիրը, հաղորդակցման հմտությունները և ներառականություն դրսևորելու կարողությունը նույնքան կարևոր են, որքան մասնագիտական կարողությունները: Նման պայմաններում առաջարկվում է կադրային մատակարարման այլընտրանքային լուծում, օրինակ՝ գործուղել ուսանողներին: «Չունեմ» պատասխանի առկայությունը մատնանշում է կամ վստահություն գործող համակարգի նկատմամբ, կամ դժվարություն՝ ձևակերպելու սեփական առաջարկությունները:

Հաջորդ և եզրափակիչ հարցն է՝ «Ամփոփելով հարցումը՝ խնդրում ենք նշել Ձեր առաջարկները՝ կրթական համակարգում դպրոցական

կոլեկտիվի կառավարման արդյունավետությունը բարձրացնելուն ուղղված»:

Այս բաց հարցին, հարցվողների պատասխանները համախմբելով, ստանում ենք հետևյալ պատկերը. լինել համախմբված և փոխադարձ օգնություն ցուցաբերել միմյանց նկատմամբ: /Պետք է հասարակության մեջ վերականգնել ուսուցչի մասնագիտական դերն ու կարևորությունը, մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում: /Մասնագիտական խմբերի կողմից պարբերաբար արտաքին դիտումներ /դասալսումներ/ կազմակերպելը: /Հաշվետվողականության, հետադարձ կապի ամրապնդում: /Հնարավորինս լինել պահանջկոտ և անաչառ: Հանդիպումներ, դասընթացներ, վերապատրաստումներ:/ Դպրոցներին տալ էլ ավելի մեծ ինքնուրույնություն:/ Համագործակցություն, պատասխանատվության զգացում: /Հաճախակի կազմակերպել այս կոլեկտիվների համար քննարկումներ, սեմինարներ և համատեղ միջոցառումներ:/ 1. Մասնակցային կառավարման ամրապնդում, 2. Թափանցիկ հաղորդակցման համակարգի ներդրում, 3. Մարդկային ներուժի զարգացում և առաջնորդության խթանում, 4. Արդյունավետ մեխանիզմներ գնահատման և հետադարձ կապի համար:/ Վերապատրաստումներ:/ Առաջարկ չունեմ:

Այս հետազոտության արդյունքները վկայում են, որ դպրոցական կոլեկտիվի ձևավորումը և կայունացումը հանդիսանում է ուսումնական հաստատության արդյունավետության առանցքային նախադրյալը: Տնօրենների կողմից կիրառվող կառավարման մեթոդները, խթանման համակարգը, ինչպես նաև ուսուցիչների ընտրության և աշխատանքի վերահսկման մոտեցումները խիստ կարևոր են՝ առողջ կոլեկտիվ և զարգացող կրթական միջավայր ձևավորելու համար: Վերլուծությունը նաև բացահայտեց որոշակի մարտահրավերներ, որոնք դեռևս պահանջում են համակարգային լուծումներ:

Ուսուցիչների համագործակցությունը համարվում է դպրոցի մանկավարժական կոլեկտիվի ձևավորման կարևորագույն նախապայմաններից մեկը: Ուստի եթե դպրոցներն ուզում են բարձրացնել աշակերտների առաջադիմությունը, կրթության որակը, ապա պետք է ստեղծեն խրախուսման այնպիսի համակարգ, որ մարդկային կապիտալն օգտագործվի կրթական համակարգը զարգացնելու նպատակով: Դրա համար կարելի է ավելի արդյունավետ իրականացնել «Լավագույն ուսուցիչ», «Լավագույն տնօրեն» մրցույթները, ինչու չէ, առաջնային դեր տալ նյութական խրախուսմանը:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Դպրոցական կոլեկտիվի ձևավորման

մանկավարժական պայմանները» թեմային առնչվող գիտական գրականությունը և իրականացնելով փորձարարական աշխատանքներ՝ կարող ենք փաստել, որ անձնակազմի կառավարումը քաղաքականություն է, իսկ արդյունավետ և պատասխանատու մանկավարժական կոլեկտիվի ձևավորումը յուրաքանչյուր ուսումնական հաստատության հաջողության հիմնասյունն է: Միանձնյա ղեկավարման մոդելը արդյունավետ չէ, և դպրոցում կայուն արդյունքների հասնելու համար պետք է ձևավորել առողջ, մասնագիտական և համագործակցային կոլեկտիվ, որի նպատակով անձնակազմի կառավարման մեջ տնօրենները պիտի հենվեն օբյեկտիվ վերաբերմունքի, արդարության և կարգապահության, թափանցիկության և վստահության վրա: Կոլեկտիվի ձևավորումը դիտվում է ոչ թե որպես ինքնաբերաբար ընթացող, այլ նպատակաուղղված և կառավարվող գործընթաց, որի գլխավերևում կանգնած է ուսումնական հաստատության տնօրենը, ում լիազորությունների մեջ պետք է լինի մանկավարժական կոլեկտիվի հավաքագրման եղանակի ընտրության, թափուր տեղի մրցույթի անցկացման հնարավորություն:

Գրականություն

1. Ասատրյան Լ. Թ., Ասատրյան Մ. Ա., Սաֆարյան Ն. Ա., Դպրոցի կառավարման հիմունքներ, Երևան, Արտագերս, 2018, 223 էջ:
2. Սուվարյան Յու., Մենեջմենթ, Երևան, 2002, 559 էջ:
3. Макаренко А. С. Коллектив и воспитание личности, Челябинск: Юж. Урал. кн. изд-во, 1988, 261 с.
4. Новикова Л. И. Педагогика детского коллектива: вопросы теории, Москва: Педагогика кн. изд-во, 1978, 144 с.
5. Селиванова О. А. Взгляды Л. И. Новиковой на процесс формирования коллектива в образовательном учреждении. Российская Федерация: Тюмень, 2022.

Педагогические условия формирования школьного коллектива

Варданян Маня
Факультет социальных наук,
«Управление образованием»,
руководитель магистерской диссертации:
доктор педагогических наук, профессор: П. Геворкян

Резюме

Ключевые слова: *управление, лидерство, образовательная система, педагогический работник, школьный коллектив*

Изучив научную литературу по теме «Педагогические условия формирования школьного коллектива» и проведя экспериментальную работу, можем утверждать, что управление персоналом – это политика, а формирование эффективной и ответственной педагогической команды – краеугольный камень успешной работы каждого образовательного учреждения. Модель единоличного руководства неэффективна, и для достижения устойчивых результатов в школе необходимо сформировать здоровую, профессиональную и сплочённую команду.

Pedagogical Conditions for the Formation of the School Team

Vardanyan Manya
Faculty of Social Sciences,
"Education Management",
Academic Supervisor: P. Gevorkyan
Doctor of Pedagogical Sciences, Professor

Summary

Key words: *management, leadership, educational system, pedagogical worker, school team*

Having reviewed the scientific literature on the topic of “Pedagogical Conditions for the formation of the School Team” and conducted experimental work, we can confirm that personnel management is a policy, and the formation of an effective and responsible teaching team is the cornerstone of the success of every educational institution. A model of sole leadership is ineffective, and to achieve sustainable results in a school, it is necessary to build a healthy, professional, and cohesive team.

Հանրակրթական դպրոցում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը որպես ուսուցման արդյունավետության պայման

Օլքինյան Ջուլիետա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ
«Կրթության կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. դ., պրոֆեսոր Պ. Գևորգյան

Հանգուցային բառեր. *Կրթության որակ, նորարարություն, ՏՀՏ գործիքներ, թվային լուծումներ, ավանդական մեթոդներ, ուսուցման գործընթաց*

«Տեխնոլոգիաներն անհրաժեշտ են յուրաքանչյուր դասարանում, յուրաքանչյուր սովորողի և յուրաքանչյուր ուսուցչի համար, քանի որ դրանք մեր ժամանակի թուղթն ու գրիչն են»:
Դավիթ Վարլիկ

Արդի ժամանակներում տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության վրա գնալով մեծանում է: Նրանք ներթափանցում են մարդկային գործունեության բոլոր ոլորտները՝ կատարելագործելով նրանց իրազեկության մակարդակը և բազմաթիվ նոր հնարավորություններ ընձեռելով իրենց մասնագիտության, ուսման և հաղորդակցության մեջ: Կրթության ոլորտը բացառություն չէ: ժամանակակից ուսուցիչը չի պատկերացնում իր աշխատանքն առանց տեղեկատվական տեխնոլոգիաների նորարարական նվաճումների ներդրման և ՏՀՏ գործիքների արդյունավետ օգտագործման [4]:

Ներկայումս մարդկությունը սկսում է հասկանալ այն փաստը, որ այսօր բարձր տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների դարաշրջան է, որտեղ առաջատար դերը խաղում են որակյալ մասնագետները՝ ոչ ավանդական մտածողությամբ և գիտելիքներ ինքնուրույն որոնելու պատրաստակամությամբ: Յուրաքանչյուր զարգացող անհատ գիտակցում է շարունակական կրթության անհրաժեշտությունը իր ողջ կյանքի ընթացքում՝ մտավոր ներուժի ընդլայնումը տարբեր տեխնոլոգիաների, համացանցի և էլեկտրոնային դասագրքերի միջոցով՝ այդպիսով կրթելով ինտելեկտուալ երիտասարդությանը, քանի որ կրթված սերունդը ազգի բարեկեցության ցուցանիշ է [6]:

«Նոր» կատեգորիայի արդիականությունը կրթական ոլորտներում և

այն, թե որքանով է դրա ներդրումն արդիական և թեմատիզացված կրթական դաշտում, կարևոր խնդիր է [7]:

Ընդհանուր առմամբ կրթության ինֆորմատիզացումը կրթական համակարգի արդիականացման բոլոր հիմնական ոլորտների վրա ազդող կարևորագույն մեխանիզմներից է: Իսկ դրա հիմնական նպատակը տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների ընձեռած առավելությունների արդյունավետ օգտագործումն է [5]:

Իսկ ի՞նչ առավելությունների մասին է խոսքը: Պետք է նշել, որ տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կրթական գործընթացում՝ որպես նորարարության դրսևորում, ունի բազմաթիվ առավելություններ: ՏՀՏ-ն անհրաժեշտ են ժամանակակից դասին: Ուսուցման գործընթացում դրանց արդյունավետությունը գնահատելու նպատակով թվարկենք դրանցից մի քանիսը, մասնավորապես՝ ՏՀՏ-ի արդյունավետ կիրառումը հնարավորություն է ընձեռում.

- դրական ազդելով կրթության որակի վրա՝ ուսուցչի աշխատանքը բարձրացնել նոր, ավելի բարձր մակարդակի՝ նպաստելով վերջինիս աշխատանքի արդյունվետ և օպտիմալ կազմակերպմանը,
- ներդնել նոր ուսումնական ծրագրեր, օգտագործել սահիկաշարեր, շնորհանդեսներ, մուլտիմեդիոն ալբոմներ՝ ուսուցման գործընթացը դարձնելով առավել հետաքրքիր և ժամանակակից,
- սովորողներին ծանոթացնել ինքնակրթության ժամանակակից միջոցների հետ, ուղղորդել անհրաժեշտ տեղեկատվության ինքնուրույն որոնման հարցում՝ այդպիսով ձևավորելով նրանց մոտ տեղեկատվական մշակույթ,
- օգնել սովորողներին ավելի հեշտ կենտրոնանալու հիմնական, կարևոր նյութի վրա՝ ամրապնդել տեսողական հիմքը նոր թեմաների յուրացման ժամանակ,
- աշակերտներին ներգրավել հետազոտական և փորձարարական գործունեության մեջ՝ բարձրացնելով սովորողների ճանաչողական հետաքրքրությունը և ներգրավվածությունը ուսման մեջ,
- զարգացնել սովորողների քննադատական, ստեղծագործական մտածողական կարողությունները,
- կազմակերպել արդյունավետ շփում այլ երկրների սովորողների և ուսուցիչների հետ, նաև պասիվ սովորողներին ավելի հեշտ ներգրավել համատեղ աշխատանքի մեջ՝ ուսուցման գործընթացը դարձնելով ավելի ճկուն:

Կրթական գործընթացի տեղեկատվական պայմաններում կարևոր է մանկավարժական գործընթացի սուբյեկտների համար ապահովել սո-

ցիալական տեսանկյունից նշանակալի տեղեկույթի հասանելիությունը հանրակրթական դպրոցի պայմաններում, մեդիակոմպետենտ մասնագետների առկայությունը, անհրաժեշտ ուսումնամեթոդական, էլեկտրոնային ռեսուրսների հարթակի ստեղծումը, որի արդյունքում կրթական միջավայրը կդառնա նաև մեդիամիջավայր [2]:

Տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրումը կրթական գործընթացում թույլ է տալիս ակտիվացնել ուսուցման գործընթացը, կյանքի կոչել ուսուցման գործընթացը զարգացնող նոր գաղափարներ, բարձրացնել դասի տեմպը և ավելացնել սովորողների ինքնուրույն աշխատանքի ծավալը [3]: Այսինքն՝ պարզ է դառնում, որ ՏՀՏ-ի ներդրումը կրթական գործընթացում նպաստում է նաև աշակերտակենտրոն ուսուցմանը: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը նպաստում է նաև դիտողականության բարձրացմանը, թույլ է տալիս գիտելիքների փոխանցման ժամանակ մեծացնել աշակերտի ուշադրությունը, հիշողությունը: Այժմ դպրոցները ՏՀՏ-ի կիրառմամբ հնարավորություն են ստացել մատուցելու նոր տեղեկությունն այնպես, որ բավարարեն յուրաքանչյուր աշակերտի անհատական կարիքներն ու առանձնահատկությունները: Բացի այդ՝ ՏՀՏ-ի կիրառմամբ աշակերտների կողմից կատարված հետաքրքիր և հետազոտական աշխատանքները թույլ են տալիս ակտիվորեն ներգրավել նրանց դասագործընթացի կազմակերպման մեջ:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաներն ուսուցման գործընթացում կարող են հանդես գալ որպես՝

- դասավանդման գործիք՝ ուսուցչի համար,
- հետազոտության գործիք՝ ուսուցչի և աշակերտի համար,
- դասի կազմակերպման, կառուցման գործիք [1]:

Այսինքն՝ տեխնոլոգիաները հզոր գործիք են, որոնք կարող են կրթական գործընթացը դարձնել ավելի արդյունավետ ու գրավիչ և՛ ուսուցիչների, և՛ սովորողների համար: Աշակերտը դառնում է ակտիվ մասնակիցը ուսուցման գործընթացում, իսկ ուսուցիչը հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում է անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու անկախությունը: ՏՀՏ-ի օգտագործումը որակապես է փոխում ուսուցչի դերը: Նա դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր:

Ըստ այդմ էլ՝ կրթության մեջ ՏՀՏ-ի կիրառումը հնարավորություն է տալիս բարձրացնել գիտելիքների մատչելիությունը, ուսուցումը դարձնել ավելի ինտերակտիվ և հարմարավետ՝ այդպիսով դրական ազդելով կրթության որակի վրա:

Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը պարզելու համար իրականացվել են հետազոտական աշխատանքներ թվով չորս դպրոցների աշակերտների և ուսուցիչների հետ:

Սկզբնական փուլում իրականացվել է հարցաթերթիկային հարցում նշված դպրոցների 60 ուսուցիչների և 160 աշակերտների շրջանում, որը հնարավորություն տվեց վերհանել ուսուցիչների վերաբերմունքը ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի կիրառման նկատմամբ, պարզել ուսումնական գործընթացում ՏՀՏ-ի կիրառման հաճախականությունը, ուսուցիչների և աշակերտների կողմից կիրառվող կրթական կայքերը, համակարգչային ծրագրերը, ինտերնետային ռեսուրսները և թե դրանք ինչ ազդեցություն են ունենում ուսուցման գործընթացի վրա:

Հարցաթերթիկային հարցմանը մասնակցած ուսուցիչներից 5-ը՝ արական, 55-ը իգական սեռի են, տարիքային սահմանը 23-ից-73 տարեկան, 15-ը՝ գյուղական, 45-ը՝ քաղաքային դպրոցներից: Հատկանշականն այն է, որ հարցմանը մասնակցած ուսուցիչների մեծամասնությունը՝ 85 %-ը, կողմ էին և պատրաստակամ դասապրոցեսում նորարարական ՏՀՏ գործիքների կիրառմանը:

Ուսուցիչներին ուղղված հարցին՝ այն է թե *«Որքա՞ն հաճախ եք դասապրոցեսը կազմակերպում ՏՀՏ-ի միջոցով»*, ուսուցիչների 2 %-ը պատասխանել է բոլոր դասերին /հիմնականում ինֆորմատիկա և ԹԳՀԳ դասավանդող ուսուցիչները/, 40 %-ը՝ շաբաթական մեկ անգամ, 36 %-ը՝ շաբաթական 2-3 անգամ, 20 %-ը՝ 2 շաբաթը մեկ անգամ և 2 %-ը՝ ամիսը մեկ անգամ: Որպես ՏՀՏ-ի քիչ օգտագործման պատճառ նշվել է դրանց ոչ բավարար առկայությունը:

Որպեսզի պարզենք, թե ուսուցիչները հիմնականում որ նորարարական գործիքներին և մուլտիմեդիոն միջոցներին են նախապատվությունը տալիս և օգտվում ուսումնական գործընթացում, հարցաթերթում ներառված է եղել հետևյալ հարցը, այն է թե.*«Թվարկված ՏՀՏ գործիքներից և մուլտիմեդիոն միջոցներից որո՞նք եք օգտագործում»*, որին արձանագրվել են հետևյալ պատասխանները՝ 28,3 %-ը՝ Power Point, 25 %-ը՝ Quizz, 8,3 %-ը՝ QR կոդեր, 6,7 %-ը՝ Socrative, 6,7 %-ը՝ Kahoot, 5 %-ը և այլն: Այս հարցի արդյունքների վերլուծությունը մեզ բերեց այն եզրակացության, որ հարցման մասնակիցների կողմից հիմնականում կիրառվում են ամենատարածված համակարգչային ծրագրերը, ինչպիսին են Quizz, Power Point և այլն, իսկ այն ծրագրերը, որ վճարովի են, ոչ բոլորին է հասանելի:

Էլեկրոնային աղբյուրներից ուսուցիչների 75 %-ը օգտվում է Lib.armedu.am կրթական պաշարների շտեմարանից, իսկ որպես հեռա-

վար ուսուցման առցանց հարթակ ուսուցիչների մեծամասնությունը նախընտրում է «Team»-ը:

Իսկ հարցին, թե *«Դասապրոցեսի արդյունավետության գնահատման տեսանկյունից ավանդակա՞ն, թե՞ նորարարական /ՏՀՏ-ի աջակցությամբ/ մեթոդների կիրառմանն եք կողմնակից»,* ուսուցիչները պատասխանել են հետևյալ կերպ. նրանց 77 %-ը գտնում է, որ միայն ավանդական մեթոդների և ՏՀՏ-ի կիրառման համակցված տարբերակի դեպքում է հնարավոր իրականացնել արդյունավետ դասապրոցես, 13 %-ը կողմ է միայն ՏՀՏ-ի կիրառմամբ նորարարական մեթոդներին, իսկ 10 %-ը՝ միայն ավանդական մեթոդներին:

Ապա ուսուցիչների հետ զրույցից պարզ դարձավ, որ ավանդական կամ նորարարական մեթոդների ընտրությունը միանշանակ չէ, կախված է դասի թեմայից և աշակերտների տարիքային ու մտավոր առանձնահատկություններից, այսինքն՝ թե նրանք նյութը որ դեպքում ավելի արագ կյուրացնեն:

Յուրաքանչյուր նորարարական գործիքի կիրառում ունի իր և՛ բացասական, և՛ դրական կողմերը : Որպես դրական կողմ հարցաթերթը լրացրած ուսուցիչների մի մասը նշել է, որ շնորհիվ ՏՀՏ-ի կիրառման՝ դասապրոցեսը ավելի արդյունավետ և մատչելի է դառնում, նրանք խնայում են ժամանակ դասապրոցեսի պլանավորման, արդյունքների գնահատման, դիդակտիկ նյութերի պատրաստման և օգտագործման գործում, դասերն ավելի տեսանելի և ընկալելի են դառնում, իսկ աշակերտներն ավելի արագ են յուրացնում թեման, բացի այդ մեծանում է նրանց մոտիվացիան և հետաքրքրությունը ուսումնական գործընթացի նկատմամբ: Ուսուցիչների մյուս մասը՝ հատկապես քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության ուսուցիչները, որպես առավելություն նշում են ՏՀՏ-ի մեծ օժանդակությունը լաբարատոր աշխատանքների ավելի դյուրըմբռնելի և հետաքրքիր իրականացման գործում: Նաև ուսուցիչները նշել են, որ շնորհիվ ՏՀՏ-ի ավելի է մեծանում տեղեկատվական դաշտը, հնարավորություն է ընձեռվում օգտվելու բազմազան կրթական ռեսուրսներից, զարգանում ու կատարելագործվում են ուսուցչի մասնագիտական որակներն ու հմտությունները, տեսանելի և տպավորիչ է դառնում դասանյութի ներկայացումը՝ 3D անիմացիաների և գրաֆիկական մոդելների կիրառման շնորհիվ, իսկ աշակերտներն ավելի արագ են կենտրոնանում և յուրացնում նյութը: Ուսուցիչների մի մասն էլ համոզված է, որ ՏՀՏ-ի ճիշտ և նպատակային կիրառումը բարձրացնում է սովորողների մոտիվացիան, նպաստում է աշակերտակենտրոն մոտեցման ապահովմանը, որի արդյունքում բարձրանում են կրթության որակն ու արդյունավետությունը:

Ուսուցիչների հետ զրույցի ընթացքում պարզվեց նաև, որ այն դասարաններում, որոնցում ուսումնական գործընթացը իրականացվում է նոր ՀՊՁ-ով, որտեղ կարևորվում են կրթական վերջնարդյունքները, անգնահատելի են ՏՀՏ-ի օժանակությունն ու ընձեռած հնարավորությունները հատկապես նախագծային աշխատանքների իրականացման ժամանակ:

Ուսումնասիրության ընթացքում մենք կարևորել ենք, թե ուսուցիչների կարծիքով «*ՏՀՏ-ի օգտագործումը դասապրոցեսին օգնո՞ւմ է արդյոք բարձրացնել՝ 1. դասի արդյունավետությունը, 2. սովորողների մոտիվացիան, 3. կրթության որակը, 4. ուսուցման անհատականացումը, թե՞ 5. ընդհանրապես նպատակահարմար չէ»:* Ուսուցիչների 45 %-ը գտնում է, որ ՏՀՏ-ի կիրառումը դրական է ազդում ընդհանուր *կրթության որակի* վրա, 26,7 %-ը գտնում է, որ բարձրացնում է *դասի արդյունավետությունը, 21.6* %-ը՝ *սովորողների մոտիվացիան, 5* %-ը՝ *ուսուցման անհատականացումը և միայն 1,7* %-ը գտնում է, որ *ՏՀՏ-ի օգտագործումը դասապրոցեսին ընդհանրապես նպատակահարմար չէ:*

Իսկ որպես բացասական կողմ՝ ուսուցիչների 80 %-ը (48 ուսուցիչ) նշել է, որ ՏՀՏ-ի կիրառումը դասապրոցեսում թերություններ և բացասական կողմ չունի, 10 %-ը (6 ուսուցիչ) որպես թերություն է համարել ՏՀՏ-ի բացասական ազդեցությունը առողջության՝ հատկապես տեսողության վրա, մյուս 10 %-ը (6 ուսուցիչ) կարծում է, որ ՏՀՏ-ի չափից շատ օգտագործումը՝ հատկապես արհեստական բանականության չարաշահումը, բթացնում է աշակերտների տրամաբանությունն ու մտածողությունը, խանգարում սովորողներին՝ կենտրոնանալու դասապրոցեսի վրա:

Ուսումնասիրության ավելի համապարփակ արդյունքներ ստանալու համար հետազոտական աշխատանքներ ենք իրականցրել նաև աշակերտների շրջանում: Հարցման ենթարկված աշակերտների 92.5 %-ը (148 աշակերտ) կարծում է, որ երբ ուսուցիչները դասերի ընթացքում օգտագործում են տեսադասեր, տեսանյութեր կամ սահիկաշար, ապա նոր նյութը ավելի լավ է տպավորվում, նոր տեղեկատվությունը ավելի հեշտ է մտապահվում, և դասապրոցեսը ավելի հետաքրքիր է դառնում: Աշակերտների մեծամասնությունն էլ ուսուցիչների նման հիմնականում նախապատվությունը տալիս են անվճար և հասնելի էլեկտրոնային կայքերին և ռեսուրսներին (Power Point, Canva, տեսաֆիլմեր): Հարցաթերթում ընդգրկված էր հարց, թե որքան հաճախ են աշակերտները դիմում արհեստական բանականության օգնությանը և ինչ նպատակով: Աշակերտների 62,5 %-ը նշել է, որ բավականին հաճախ է դիմում արհեստական բանականությանը՝ հիմնականում տեղեկությունների արագ որանման և մաթեմատիկական խնդիրների արագ լուծման նպատակով:

Ուսուցիչների և աշակերտների հետ անցկացված հարցումներից և զրույցներից պարզ դարձավ, որ ուսուցիչները հիմնականում կողմ են դասապրոցեսում ՏՀՏ-ի կիրառմանը՝ հաշվի առնելով դրանց կիրառման առավելությունները, իսկ աշակերտների մեծամասնությունը համարում է, որ անհնար է պատկերացնել ուսումնական գործընթացն առանց համակարգչի, էլեկտրոնային գրատախտակի և ժամանակակից ծրագրերի:

Այսպիսով՝ կատարելով «*Հանրակրթական դպրոցում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը որպես ուսուցման արդյունավետության պայման*» թեմային առնչվող գիտական գրականության վերլուծություն և իրականացնելով փորձարարական աշխատանքներ՝ կարող ենք փաստել, որ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում ուսումնական գործընթացը դարձնում է ճկուն, գրավիչ և հասանելի բոլոր մասնակիցների համար: Այնուամենայնիվ, կարևոր է գտնել հավասարակշռություն թվային լուծումների և դասական մեթոդների միջև, որպեսզի տեխնոլոգիաները չփոխարինեն կենդանի հաղորդակցությունը և անկախ դատողությունը, այլ միայն լրացնեն դրանք: Գլխավորը տեխնոլոգիաները գիտակցաբար և ստեղծագործաբար օգտագործելն է՝ ստեղծելով մի միջավայր, որտեղ կրթական գործընթացը կդառնա օգտակար և արդյունավետ:

Գրականություն

1. Աստվածատրյան Մ., Թերզյան Գ., Թորոսյան Ա., Շարխաթունյան Հ., Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում. ուսուցչի ձեռնարկ, Երևան, «Ասողիկ» հրատարակչություն, 2004. 44 էջ:
2. Թոփուզյան Ա., Գյուլամիրյան Ջ., Պողոսյան Լ., Ասատրյան Ս., Կարապետյան Ն., Ավագյան Լ., «Մեդիակրթությունը տարրական դպրոցում», Երևան 2019,140 էջ:
3. Инновационные технологии в образовании / Под ред. И. И. Абылгазиева, И. В. Ильина /, Москва: МАКС Пресс, 2011, - 141 с.
4. Информационно-коммуникационные технологии и их применение в образовании, https://nadpo.ru/academy
5. Абилдаева А. Х. Использование информационно-коммуникационных технологий в процессе обучения /научная статья/.
6. Ныязбекова К. С. Роль информационных технологий в учебном процессе /научная статья/.
7. Novelty, Innovation and Transformation in Educational Ethnographic Research /Scientific Article/, London, 2024, pp. 230.

Использование информационно-коммуникационных технологий в общеобразовательной школе как условие эффективности обучения

Олкинян Джулиета
Факультет социальных наук, «Управление образованием»,
руководитель магистерской диссертации:
доктор педагогических наук, профессор: П. Геворкян

Резюме

Ключевые слова: *качество образования, инновации, инструменты ИКТ, цифровые решения, традиционные методы, образовательный процесс*

Статья посвящена выявлению эффективности использования ИКТ в общеобразовательных школах, а также того, как эффективное и целенаправленное использование ИКТ может положительно повлиять на качество образования. Исследования показали, что подавляющее большинство учителей (85 %) и учащихся (92.5 %) считают использование ИКТ в учебном процессе влиянием времени и важной частью современного образовательного процесса, поскольку использование инструментов ИКТ в общеобразовательной школе делает образовательный процесс гибким, привлекательным и доступным для всех участников.

The Use of Information and Communication Technologies in Comprehensive Schools as a Condition for the Effectiveness of Learning

Olkinyan Julieta
Faculty of Social Sciences, "Education Management",
Academic Supervisor: P. Gevorkyan
Doctor of Pedagogical Sciences, Professor

Summary

Key words: *quality of education, innovation, ICT tools, digital solutions, traditional methods, educational process*

The article is devoted to identifying the effectiveness of ICT use in comprehensive schools, as well as how effective and targeted use of ICT can positively affect the quality of education. The analysis of the research findings showed that the majority of teachers (85 %) and learners (92.5 %) consider the use of ICT in the educational process to be a necessity of the modern era and an essential component of contemporary education. They believe that the integration of ICT tools in comprehensive schools makes the educational process more flexible, engaging, and accessible for all participants.

Դպրոցի տնօրենի ղեկավարման ոճի ազդեցությունը որոշումների կայացման վրա

Ֆիդանյան Մերի
«Հասարակական գիտությունների» ֆակուլտետ,
«Կրթության կառավարում»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. դ., պրոֆեսոր Պ. Գևորգյան

Հանգուցային բառեր. *կառավարում, ղեկավարում, կրթական կազմակերպություն, որոշում, որոշումների կայացում*

Հասարակության պահանջը միշտ եղել և մնում է ժամանակից հետ չմնալը, և կրթության մոդեռնիզացիան ժամանակակից հասարակությունում այն անբաժանելի մասն է նորարարական գործընթացների, որոնք անհրաժեշտ են մեր կրթական համակարգին: Նոր հարացույցը պահանջում է այդ գործընթացում ներգրավված անձանցից փոփոխություններ, նորամուծություններ, որոնք կօգնեն հասնել ավելի բարձր, որակյալ կրթական արդյունքների՝ այդպիսով բարձրացնելով կրթական հաստատության մրցունակությունը կրթական և մտավոր ծառայությունների շուկայում: Դրան հասնելու համար կրթական հաստատությունում անհրաժեշտ է որակյալ կառավարման համակարգ: Կրթական հաստատություններին անհրաժեշտ են կառավարիչներ, ովքեր տեսնում են ուսումնական միջավայրի բարելավումը լավ գործող կառավարման համակարգի շրջանակներում, ինչպես նաև կարող են ընդունել մանկավարժական խնդիրների լուծման ինքնատիպ և ոչ ստանդարտ մոտեցումներ: Նրանք ազդում են աշակերտների և ուսուցիչների մոտիվացիայի, նպատակասլացության և հաջողությունների վրա: Կրթական գործընթացի կառավարման տակ մենք հասկանում ենք գործունեություն, որը ուղղված է որոշումների ընդունմանը, կազմակերպմանը, վերահսկողությանը, կառավարվող օբյեկտի կարգավորմանը՝ ըստ նախատեսված նպատակի, ինչպես նաև վերլուծությանը և արդյունքների ամփոփմանը՝ հուսալի տեղեկատվության հիման վրա: Այս համատեքստում կարևորվում է տնօրենի կողմից կիրառվող ղեկավարման ոճը, որը կարող է նշանակալի ազդեցություն ունենալ թե՛ կառավարման գործընթացների կատարելագործման, թե՛ կրթական միջավայրի առողջ զարգացման և թե՛ որոշումների կայացման մեխանիզմների վրա՝ որոշումների ընդունման մասնակցային մակարդակից մինչև դրանց իրականացումը, գնահատումը և շարունակական վերանայումը: Ժամանակակից կրթության պահանջները, նորարարական փոփո-

խությունները և մրցակցային միջավայրը պահանջում են այնպիսի ղեկավարներ, ովքեր կարող են ճկունորեն առաջնորդել թիմը՝ ընտրելով համապատասխան ոճ և ձևավորելով արդյունավետ որոշումների կայացման մեխանիզմներ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել դպրոցի տնօրենի կողմից կիրառվող ղեկավարման ոճերի առանձնահատկությունները և բացահայտել դրանց ազդեցությունը դպրոցում որոշումների կայացման արդյունավետության վրա:

Հետազոտության խնդիրներն են՝ ուսումնասիրել դպրոցի կառավարման համակարգի վիճակը, վերլուծել ղեկավարման հիմնական ոճերի կիրառման տեսական հիմնավորումները, պարզել տարբեր դպրոցների տնօրենների աշխատանքում ղեկավարման ոճերի կիրառման առանձնահատկությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տեսական և համեմատական վերլուծության, համադրման և ընդհանրացման (հարցաթերթիկային հարցման) մեթոդները:

Ըստ Փ. Դրաքերի՝ «կառավարումը գործունեության հատուկ տեսակ է, որն անկազմակերպ ամբոխին վերափոխում է արդյունավետ, նպատակասլաց և արտադրողական խմբի», սակայն կառավարման բովանդակությունն արտահայտելու համար ավելի ճշգրիտ է հետևյալ բնորոշումը.

«Կառավարումը տնտեսական օրենքների պահանջներին համապատասխան նյութական ու հոգևոր բարիքների, ծառայությունների ստեղծմանը նպատակաուղղված աշխատանքի վրա համակարգված կարգավորիչ ներգործությունն է» [6, 12-12]:

Կառավարման օբյեկտը մարդու և բնության, առանձին կոլեկտիվների ու նրանց անդամների միջև առաջացող տնտեսական ու հասարակական հարաբերություններն են: Մարդը և՛ կառավարող է, և՛ կառավարվող, իսկ առանց նրա կամ նրա անուղղակի մասնակցության չկա կառավարում:

Կառավարումը պահանջում է ճանաչել օբյեկտը: «Ինչքան ամբողջական, լրիվ մշակված և համակարգված է ինֆորմացիան օբյեկտի մասին, այնքան հուսալի և գործուն է կառավարման համակարգը» [3, 196]:

Դպրոցը՝ որպես կառավարման օբյեկտ, ժամանակակից մոտեցումներով դիտարկվում է ոչ միայն որպես կրթական հաստատություն, այլև որպես յուրահատուկ սոցիալական կազմակերպություն: Հասարակական և սոցիալական միջավայրը ձևավորում է դպրոցի գործունեության բնույթը և ստեղծում համապատասխան պայմաններ կառավարման արդյունավետ կազմակերպման համար: Դպրոցը միավորված և զարգացող հա-

մակարգ է, որտեղ կենսագործունեությունը իրականացվում է փոխկապակցված գործընթացների միջոցով: Դրանք են՝ կրթական, կառավարչական, նորարարական գործընթացները, ինչպես նաև կոլեկտիվի ձևավորման և զարգացման գործընթացները:

Դպրոցի կառավարումը՝ որպես սոցիալական կառավարման ձև, առաջին հերթին նշանակում է մարդկանց որոշակի խմբի՝ տնօրենի, փոխտնօրենների, ուսուցիչների և ծնողների նպատակային ազդեցությունը աշակերտների գիտակցության ու վարքի ձևավորման վրա: Միևնույն ժամանակ այն ներառում է հասարակական կյանքի տարբեր ոլորտների հետ ուսումնադաստիարակչական գործունեության կապի ուսումնասիրությունը՝ հասկանալու նրանց փոխազդեցությունն ու դերը կառավարման գործընթացի կատարելագործման մեջ: «Սոցիալական կառավարման ոլորտում ընկած է «մարդ-մարդ» սխեման, որը և որոշում է ներդպրոցական կառավարման համակարգի յուրահատկությունը» [4, 57]:

Ելնելով վերը քննարկվածից՝ կարելի է սահմանել, որ «դպրոցի կառավարումը» գիտություն է, որն ուսումնասիրում է ներդպրոցական համակարգի կառուցվածքը, նրա կառավարման խնդիրները, կանխատեսման, ախտորոշման, նրա տեսական հիմնավորման, պլանավորման, որոշումների ընդունման և իրականացման, արդյունքների վերլուծության գործառույթները, կրթական իննովացիոն գործընթացները, նրանց զարգացման արգասավոր պայմաններն ու ուղիները:

Հանրակրթական դպրոցի կառավարման բարձրագույն մարմինը համարվում է հաստատության խորհուրդը, սակայն դպրոցի առօրյա և ընթացիկ գործունեության ուղղակի ղեկավարման պատասխանատվությունը դրված է տնօրենի վրա: Տնօրենի լիազորությունները, պարտականությունները, պաշտոնի նշանակման և ազատման կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Դպրոցի տնօրենը գործում է բազմակողմանի գործունեության դաշտում՝ լուծելով կազմակերպական և մանկավարժական բարդ խնդիրների լայն շրջանակ: Այդ պատճառով նա պետք է համատեղի մանկավարժի և գիտակից քաղաքացու բարձր հատկանիշներ՝ դրսևորելով սեր ու հոգատարություն մարդու դաստիարակության նկատմամբ, կարգապահություն, արդարություն, հետևողականություն, ինչպես նաև կարողություն՝ ճանաչելու և շտկելու սեփական սխալները: Բացի այդէ տնօրենը պետք է կարողանա հավաքել, վերլուծել և ընդհանուրացնել կրթադաստիարակչական գործընթացներին առնչվող տվյալները, ինչպես նաև իրականացնել հետազոտական և ստեղծագործական որոնումներ: «Տնօրենը պետք է լինի ոչ միայն փորձված մանկավարժ, այլև հմուտ կազմակերպիչ, քաղաքագետ, սոցիոլոգ և

հոգեբան, որը մշտապես բարձրացնում է իր գիտական և գաղափարական մակարդակը, կատարելագործում է իր աշխատանքի ոճը և մեթոդները, կարողանում է դպրոցում ստեղծել աշխատողների և սովորողների համերաշխ, գործունյա կոլեկտիվներ» [4, 62]: Դպրոցի տնօրենի այդպիսի հատկությունների դրսևորումը գործունեության մեջ կազմում են նրա բարձր հեղինակության և անձնական դրական օրինակի հաստատուն հիմքը: Սակայն բավական չէ, որ տնօրենը ձգտի ունենալ այդպիսի հատկություններ: Նրա խնդիրն է այնպես աշխատել, որ այդ հատկությունները ձեռք բերեն նաև մյուս ղեկավար աշխատողները:

Ժամանակակից դպրոցի կառավարումը բարդ, պատասխանատու և մեծ նվիրվածություն պահանջող գործընթաց է: Այն ենթադրում է, որ տնօրենը պետք է ոչ միայն խորապես տիրապետի մանկավարժական գործունեության առանձնահատկություններին ու նրբություններին, այլև ունենա կառավարման արվեստի, ինչպես նաև հարակից ոլորտների տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ: Այսինքն՝ «դպրոցի տնօրենը պետք է տիրապետի կառավարման սկզբունքներին և գործառույթներին: Սակայն դպրոցի ղեկավարումը կառավարչական հմտությունների կիրառումը չէ: Այն պահանջում է նաև ստեղծել բարենպաստ հոգեբանական միջավայր միջանձնային հարաբերությունների հաստատման համար: Իսկ դա տնօրենից պահանջում է այնպիսի կառավարման ոճի դրսևորում, որոնց գործադրումն ավելի դժվար է, քան պատկերացնում ենք» [4, 58-59]:

Դպրոցի տնօրենի աշխատանքի ոճի բարոյահոգեբանական գծերը պայմանավորված են նրա անձնական առանձնահատկություններով, գիտելիքների մակարդակով և գործնական որակներով: Կոլեկտիվում աշխատելու, ուսուցիչների, աշակերտների հետ շփվելու ընթացքում տնօրենը օգտագործում է կառավարման տարբեր սկզբունքներ, գործառույթներ, մեթոդներ, ձևեր ու միջոցներ, որոնց ընտրությունը պայմանավորված է երկու գործոններով՝ կոնկրետ իրավիճակով և անձնական հակումներով, որոնք և իրենց հերթին պայմանավորում են ղեկավարման արդյունավետությունը և նրա հաղորդակցման ցանցի ընդգրկվածությունը:

Կառավարման մարմինների կազմը և ուսուցիչների մասնակցության աստիճանը նրանց աշխատանքներում, կազմակերպություններում համակարգման մեթոդները, լիազորությունների և պարտականությունների բաշխման առանձնահատկությունները կախված են նրանից, թե ինչ տեսակի կառավարում է օգտագործվում դպրոցում:

Կառավարման ոճը այս կամ այն խնդրի կամ հիմնահարցի լուծման համար ղեկավարին առավել բնորոշ, նրա կողմից նախընտրելի մեթոդ-

ների և հնարների համակցությունն է: Ղեկավարի աշխատանքի ոճը պայմանավորված է ոչ միայն նրա անձի հոգեբանական առանձնահատկություններով՝ նրա աշխարհայացքով, մասնագիտական վարպետությամբ, խառնվածքով, բնավորությամբ, այլև օբյեկտիվ, նրանից դուրս գործոններով՝ ղեկավարման կոնկրետ խնդիրներով, պայմաններով, բովանդակությամբ, մանկավարժական կոլեկտիվի մակարդակով, բնութագրով և այլ հանգամանքներով:

Կառավարման տեսության և հոգեբանական գրականության մեջ բնութագրված են կառավարման երեք ոճեր՝ ավտորիտար, դեմոկրատական և լիբերալ: Դպրոցի կառավարման մեջ այսօր տարբերակվում են կոլեկտիվի հետ տնօրենի աշխատանքի մի շարք ոճեր՝ ավտորիտար, ժողովրդավարական, լիբերալ, խառը, վարչական, նրբազգաց կառավարման, համընդգրկուն, գործարար:

Տնօրենի ղեկավարման ոճը զգալիորեն ազդում է կազմակերպությունում որոշումների կայացման գործընթացի բնույթի և արդյունավետության վրա: Միևնույն ժամանակ, նույն մոտեցումը կիրառող տարբեր ղեկավարների ընդունած որոշումները հաճախ կարող են տարբեր լինել: Այս տարբերությունները պայմանավորված են որոշումներ ընդունելու անհատական ոճով: Շատ ղեկավարների բնորոշ է որոշակի իշխող ոճի հետևելը, սակայն հաճախ նրանք կիրառում կամ համադրում են մի քանի տարբեր ոճեր՝ կախված իրավիճակից: Դա բնական է, քանի որ աշխատանքի ընթացքում ղեկավարը ստիպված է լինում կայացնել տարբեր բնույթի որոշումներ, որոնք պահանջում են տարբեր մոտեցումներ: «Շատ արդյունավետ աշխատող ղեկավարներ կարողանում են «փոխվել» մի ոճից մյուսը՝ կախված ստեղծված իրավիճակից» [2, 296-306]:

Հետազոտությունն անցկացվել է Google Forms հարթակում, հարցաթերթիկային հարցման միջոցով՝ նպատակ ունենալով պարզել, թե ղեկավարման որ ոճն են նախընտրում տարածաշրջանի տնօրենները, և ինչպես է տնօրենի ղեկավարման ոճը ազդում որոշումների կայացման գործընթացի արդյունավետության վրա: Հարցաթերթը լրացրել են Լոռու մարզի դպրոցների 52 տնօրեններ: Ներկայացնենք մի քանի կարևոր հարցերի վերլուծություններ: Հարցվածների մեծ մասը՝ 56,9-ը, աշխատում են գյուղերի դպրոցներում, 31,4-ը՝ քաղաքի ծայրամասային դպրոցներում, իսկ 11,7-ը՝ քաղաքի կենտրոնական հատվածի դպրոցներում: Այսինքն, դպրոցները հիմնականում տեղակայված են ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական համայնքներում, ինչը ապահովում է տվյալների համեմատականության հնարավորություն: Անդրադառնանք տնօրենների ղեկավարման ոճին և որոշումների կայացմանը վերաբերող հարցերին:

Առաջին հարցը հետևյալն էր՝ «ինչպես կգնահատեք Ձեր ղեկավարման ոճի ազդեցությունը մանկավարժական կոլեկտիվի մթնոլորտի ձևավորման վրա»: Տնօրենների մեծամասնությունը՝ 74,5-ը, պատասխանել է, որ կոլեկտիվում ձևավորվել է բաց, ջերմ և միասնական մթնոլորտ՝ առաջնորդված համագործակցային ոճով:

Հարց 2. «Ո՞ր տարբերակն է առավել բնորոշ որոշում կայացնելու ձեր մոտեցմանը»:

Հարցվածների մեծամասնությունը (84,3 %) շեշտում է, որ խթանում է մասնակցային որոշումների կայացումը, ինչը վկայում է ժողովրդավարական և համագործակցային մոտեցման գերակայության մասին, իսկ 15,7-ը ներգրավում է ուսուցիչներին որոշում կայացնելու գործընթացում:

Հաջորդ հարցն էր՝ «Ինչպե՞ս կբնութագրեք ղեկավարման Ձեր հիմնական ոճը»: 80 %-ը նախընտրում է ժողովրդավարական ղեկավարման ոճը, սակայն 18 %-ը նախընտրում է խառը մոտեցում՝ ըստ իրավիճակի:

«Որքա՞ն հաճախ եք ուսուցիչների կարծիքը հաշվի առնում որոշումների կայացման ժամանակ» հարցին ստացել ենք հետևյալ պատկերը. մասնակիցների 62,7 %-ը հաճախ, իսկ 23,5-ը մշտապես հաշվի է առնում ուսուցիչների կարծիքը որոշումների կայացման ժամանակ, ինչը կրկին վկայում է ժողովրդավարական մոտեցման կիրառման մասին: Միայն մեկ պատասխան է եղել, որտեղ ուսուցիչների կարծիքները գրեթե հաշվի չեն առնվում:

Հաջորդ հարցն է՝ «Ուսուցիչները որքանո՞վ են ազատ իրենց աշխատանքներում որոշումներ կայացնելիս»: Հարցման արդյունքներից երևում է, որ տնօրենների 49 %-ը կարծում է՝ ուսուցիչները իրենց համարում են հիմնականում ազատ՝ որոշումներ կայացնելու հարցում: Նրանք զգում են որոշակի ինքնուրույնություն, բայց նաև գիտակցում են վերադաս մարմինների սահմանած սահմանափակումները: Սա վկայում է մի կառավարման մոդելի մասին, որտեղ որոշումների ներքաղաքական կամ հիերարխիկ վերահսկողություն կա, բայց միևնույն ժամանակ ուսուցիչներին տրվում է որոշակի ինքնուրույնություն: Մոտ 33,3 %-ը նշում են, որ ուսուցիչները մասամբ են ազատ՝ հաճախ ստիպված լինելով համաձայնեցնել որոշումները: Այս տվյալները վկայում են, որ դպրոցի տնօրենների մեծ մասը որդեգրել են **կիսաժողովրդավարական ղեկավարման ոճ,** որտեղ որոշումների կայացման մեջ խրախուսվում է ուսուցիչների մասնակցությունը, բայց կան նաև սահմանափակումներ՝ պայմանավորված ներքին կանոնակարգերով կամ վերադաս կառույցների պահանջներով:

«Որքանո՞վ է Ձեր դպրոցում որոշումների կայացման գործընթացում

ընդգրկված աշակերտական խորհուրդը» հարցին ստացել ենք հետևյալ պատասխանները. դպրոցների մեծ մասը նախատեսում է աշակերտական խորհրդի ակտիվ մասնակցություն որոշումների կայացման գործընթացում (54.9 %), սակայն որոշ դեպքերում աշակերտները կարող են միայն կարծիք արտահայտել, իսկ վերջնական որոշումը շարունակում են կայացնել վարչական մարմինները: Որոշակիորեն ավելի բարձր է ծնողական խորհրդի ներգրավվածությունը, բայց շատ դեպքերում այն սահմանափակվում է խորհրդատվական մակարդակով:

«Որո՞նք են այն հիմնական գործոնները, որոնք ազդում են Ձեր որոշումների կայացման վրա» հարցի պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշումների կայացման վրա գերիշխող ազդեցություն ունեն օրենսդրական պահանջները (66.9 %), ինչը վկայում է համակարգի բարձր կենտրոնացվածության մասին:

Կրթական կազմակերպության արդյունավետ կառավարումը պայմանավորված է որոշումներին հաջորդող արձագանքների և վերաբերմունքի ճկունությամբ: Որոշման քննադատության դեպքում ղեկավարի արձագանքը բացահայտում է նրա առաջնորդության ոճը, հաղորդակցության մշակույթը և փոփոխությունների հանդեպ վերաբերմունքը: Այս ամենից ելնելով՝ ցանկացանք պարզել, թե ինչպես են տնօրենները արձագանքում քննադատությանը:

«Ինչպե՞ս եք արձագանքում, երբ կայացված որոշումը քննադատվում է» հարցի արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցների ղեկավարների 90 %-ը պատրաստ է արձագանքել քննադատությանը, եթե այն հիմնավորված է:

Ղեկավարման ժամանակակից մոտեցումները կարևորում են որոշումների կայացման հետևանքների մշտադիտարկումը և ազդեցության գնահատումը: Հետադարձ կապը հիմնարար գործիք է, որը թույլ է տալիս վերանայել որոշումները, շտկել ընթացակարգերը և ապահովել շարունակական զարգացում: Եթե դպրոցում ներդրված են համակարգված մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր է ստանալ արձագանքներ ընդունված որոշումների վերաբերյալ, ապա այդ կառույցը դառնում է ավելի ճկուն, բաց և պատասխանատու: Ուստի, վերջին հարցը հետևյալն էր.

«Ձեր դպրոցում կա՞ն համակարգված մեխանիզմներ, որով հետադարձ կապ եք ստանում Ձեր որոշումների ազդեցության մասին»:

Հարցման արդյունքները ցույց են տալիս, որ դպրոցների մոտ կեսից ավելին (57,1 %) ունեն համակարգված մեխանիզմներ՝ որոշումների ազդեցությունն գնահատելու և հետադարձ կապ ապահովելու համար, մինչդեռ 42,9 %-ը նշում է, որ նման մեխանիզմներ չկան:

Թեև հարցման արդյունքները ընդհանուր առմամբ վկայում են, որ տնօրենների մեծ մասը որդեգրել է ժողովրդավարական և համագործակցային ղեկավարության մոտեցում, հարկ է նշել, որ ստացված պատասխանները միշտ չէ, որ լիովին արտացոլում են իրական գործնական իրավիճակը: Գործունեության ընթացքում հաճախ նկատվում են տարբերություններ տնօրենների նշած ղեկավարման ոճերի միջև և այն, թե ինչպես են նրանք իրականում կազմակերպում որոշումների կայացման գործընթացը:

Հավանական է, որ որոշ դեպքերում պատասխանները պայմանավորված են սոցիալական ցանկալիության գործոնով՝ այսինքն՝ տնօրենները հակված են ներկայացնել իրենց գործունեությունը առավել ընդունելի կամ դրական լույսի ներքո: Իրականում դպրոցական միջավայրում դեռևս նկատվում են որոշ հիերարխիկ մոտեցումներ, երբ որոշումները կայացվում են ավելի կենտրոնացված ձևով, իսկ ուսուցիչների, ծնողների կամ աշակերտների մասնակցությունը մնում է սահմանափակ կամ ձևական:

Այդուհանդերձ, այն հանգամանքը, որ հարցվածների զգալի մասը կարևորում է համագործակցությունը և հետադարձ կապի համակարգերի առկայությունը, կարելի է դիտարկել որպես դրական միտում՝ վկայելով, որ ժողովրդավարական մշակույթի տարրերը աստիճանաբար ամրապնդվում են դպրոցական կառավարման համակարգում: Կարևոր է, որ այս միտումները շարունակեն խորանալ ոչ թե միայն ձևական, այլև գործնական մակարդակում՝ արտացոլվելով դպրոցի ամենօրյա որոշումներում, հարաբերություններում և արժեքային համակարգում:

Այս հետազոտության վերլուծությունը բացահայտեց որոշակի մարտահրավերներ, որոնք դեռևս պահանջում են համակարգային լուծումներ:

Առաջին հերթին, անհրաժեշտ է խորացնել աշակերտների, ծնողների և ուսուցիչների մասնակցությունը որոշումների կայացմանը՝ ապահովելով իրական ներգրավվածություն, ոչ միայն խորհրդատվական մակարդակում:

Երկրորդ՝ ուսումնասիրության ընթացքում ձևավորված առաջարկները ցույց են տալիս, որ դպրոցների ղեկավարները տեսնում են իրենց զարգացման ճանապարհը՝ որպես շարունակական ուսուցման և բարելավման գործընթաց: Այս տեսակետը խթան է կրթության կառավարման ոլորտում վերապատրաստումների և որակի վերահսկման համակարգերի ներդրման համար:

Հետևաբար, կարելի է փաստել, որ դպրոցի ղեկավարության արդյու-

նավետության բարձրացման ուղիները պիտի կառուցվեն ոչ միայն հմտությունների զարգացման, այլև ղեկավարման արժեքների՝ վստահության, թափանցիկության և գործընկերության խորացման վրա: Միայն այդ պայմաններում հնարավոր կլինի ձևավորել դպրոց, որը կլինի ոչ միայն կրթական, այլև հանրային արժեքների կրող:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «Դպրոցի տնօրենի ղեկավարման ոճի ազդեցությունը որոշումների կայացման արդյունավետության վրա» թեմային առնչվող գիտական գրականությունը և իրականացնելով փորձարարական աշխատանքներ՝ կարող ենք փաստել, որ հարցված տնօրենների մեծ մասը օգտագործում են ժողովրդավարական կամ ճկուն ոճ, բարձր են գնահատում համագործակցությունը, բաց երկխոսությունը և որոշումների համատեղ կայացումը: Նրանք ձգտում են ստեղծել արդյունավետ և բաց կառավարման մոդել, որտեղ կարևորում են քննարկումները, հետադարձ կապը, քննադատության ընդունումը և որոշումների արդյունավետության գնահատումը: Որ ոճին նախապատվություն տալ՝ կախված է կոնկրետ կազմակերպությունից, այնտեղ ստեղծված իրավիճակից և ղեկավարի անհատական առանձնահատկություններից:

Գրականություն

1. Ասատրյան Լ. Թ., Ասատրյան Մ. Ա., Սաֆարյան Ն. Ա., Դպրոցի կառավարման հիմունքներ, Երևան, Արտագերս, 2018:
2. Հովհաննիսյան Ա. Ա., Մենեջմենթի հիմունքներ, Երևան, հեղինակային հրատարակություն, 2015:
3. Ղույումչյան Գ., Մանկավարժություն, գիրք II, Երևան, 2017:
4. Մովսիսյան Ս., Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, 1980:
5. Սաֆարյան Ն., Նոր մոտեցումներ դպրոցի տնօրենի կառավարչական գործունեությանը, Մանկավարժության և հոգեբանության հիմնախնդիրներ, Միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես, ՀՊՄՀ, 2014:
6. Սուվարյան Յու., Մենեջմենթ, Երևան, 2002:

Влияние стиля руководства директора школы на эффективность принятие решений

Фиданян Мери
Факультет социальных наук,
«Управление образованием»,
руководитель магистерской диссертации:
доктор педагогических наук, профессор: П. Геворкян

Резюме

Ключевые слова: *управление, лидерство, образовательная организация, стиль руководства, принятие решений*

Изучив научную литературу, связанную с темой «Влияние стиля руководства директора школы на принятие решений», и проведя экспериментальные исследования, можем утверждать, что большинство опрошенных директоров используя демократический или гибкий стиль, стремятся создать эффективную и открытую модель управления, в которой особое внимание уделяется обсуждениям, обратной связи, принятию критики и оценке эффективности решений.

The Influence of the School Principal's Leadership Style on Decision-Making

Fidanyan Meri
Faculty of Social Sciences,
"Education Management",
Academic Supervisor: P. Gevorkyan
Doctor of Pedagogical Sciences, Professor

Summary

Key words: *management, leadership, educational organization, leadership style, decision-making*

Based on a comprehensive review of the scientific literature on *"The Influence of the School Principal's Leadership Style on Decision-Making"* and the results of experimental research, it can be concluded that the majority of the surveyed principals predominantly adopt democratic or flexible leadership styles. These leaders seek to establish an effective and transparent management model grounded in dialogue, constructive feedback, openness to criticism, and systematic evaluation of decision-making outcomes.

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ПСИХОЛОГИЯ ЛИЧНОСТИ И ПСИХОЛОГИЧЕСКОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ

PERSONALITY PSYCHOLOGY AND COUNSELING PSYCHOLOGY

Սթրեսակայունության և ապրումակցման ուսումնասիրությունը բժիշկների մոտ

Աբովյան Նարինե
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Վ. Միրզոյան

Հանգուցային բառեր. *սթրես, սթրեսակայունություն, կարեկցանք, բժիշկ, հոգեբանություն*

Նախաբան

Վերջին տասնամյակներում սթրեսը գտնվում է տարբեր գիտությունների ուսումնասիրության ուշադրության կենտրոնում՝ բժշկության, կենսաբանության, հոգեբանության, սոցիոլոգիայի: Սթրեսը օրգանիզմի ոչ սպեցիֆիկ պատասխանն է իրեն ներկայացված յուրաքանչյուր պահանջին: Սթրեսը գործընթաց է, որն իր մեջ ներառում է ֆիզիոլոգիական և հոգեբանական բաղադրիչներ: Սթրեսի միջոցով օրգանիզմը ինքնապաշտպանվում է և հարմարվում նոր իրադրությանը: Սթրեսորները կարող են լինել ֆիզիկական, հոգեբանական, տհաճ և հաճելի: Մարդը արձագանքում է ինչպես իրական գործող վտանգի, այնպես էլ սպասվող, հավանական վտանգին:

Գործունեության բոլոր ոլորտներում աշխատողները ենթարկվում են սթրեսային գործոնների: Բացառություն չեն նաև բուժաշխատողները, և նրանց աշխատանքը նույնպես զգալիորեն ենթարկվում է սթրեսի, որը ձևավորվում է մասնագիտության առանձնահատկությունների ազդեցության տակ: Սա առաջին հերթին պայմանավորված է հիվանդների կյանքի և առողջության համար բարձր պատասխանատվությամբ: Երկրորդ, հիվանդների բացասական հույզերը մշտապես ազդում են, որոնք ներառում են ցավ, տառապանք, դյուրագրգռություն և այլն՝ իրենց հետքը թողնելով բուժաշխատողների հոգեկանի վրա: Երրորդ՝ անկանոն աշխատանքային գրաֆիկը, որը ենթադրում է ամենօրյա հերթափոխի պրակտիկա, որն իր հերթին խախտում է մարդու կենսառիթմը՝ կապված աշխատանքի և հանգստի փոփոխության հետ՝ հետևաբար նվազեցնելով մարմնի հարմարվողականությունը: Չորրորդ պատճառը շատ բուժհաստատություններում վարձատրության և պատասխանատվության մակարդակի անհամապատասխանությունն է, որն իր հերթին առաջացնում

է դժգոհություն մասնագիտությունից և դրանից բխող անձնական սթրեսը:

Մասնագիտական տարբեր խմբերի մասնագետների աշխատանքի կազմակերպումը՝ կապված ինտենսիվ և հաճախ լարված միջանձնային հաղորդակցության հետ, վերջին տարիներին դարձել է հոգեբանության և բժշկության աճող ուշադրության առարկա: Սա լիովին վերաբերում է բուժաշխատողներին, ուսուցիչներին և հոգեբաններին: Նման մասնագետների աշխատանքի արդյունավետ կազմակերպման հարցում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում մասնագիտականսթրեսի կամ «այրման» համախտանիշի խնդիրը: Այն համարվում է բազմաչափ երևույթ, որն արտահայտվում է մտավոր և ֆիզիոլոգիական ռեակցիաներով մարդու աշխատանքային գործունեության մի շարք իրավիճակների նկատմամբ, մինչդեռ մասնագիտական սթրեսի բացասական հետևանքները դիտարկվում են մի քանի հարթություններում՝ ազդեցություն աշխատանքի արդյունքների վրա, մտավոր և ֆիզիկական առողջության վրա: Մասնագիտական գործունեության երեք տարբեր տեսակների «այրման» ձևավորման և ընթացքի բնութագրերի համեմատությունը ցույց է տալիս, որ մարդկանց հետ աշխատող մասնագետները փորձ ունեն. Տեղ է գտնում ամենից հաճախ մասնագիտական սթրեսը:

Բժշկի մասնագիտությունը համարվում է ամենաբարդ և պատասխանատու մասնագիտություններից մեկը, քանի որ այն անմիջականորեն առնչվում է մարդկային կյանքի պահպանման հետ [8]: Բժիշկները գրեթե ամեն օր բախվում են սթրեսային իրավիճակների՝ կապված հիվանդների առողջական վիճակի, մահվան դեպքերի, ծանր որոշումների ընդունման և ժամային ճնշման հետ: Այս պայմաններում առանձնապես կարևոր է բժշկի սթրեսակայունությունը և ապրումակցման կարողությունը՝ որպես մասնագիտական արդյունավետության և հոգեբանական կայունության կարևոր գործոններ [7]:

Սթրեսակայունությունը հոգեբանական հատկանիշ է, որը բնութագրում է անհատի կարողությունը՝ պահպանելու ներքին հավասարակշռությունը և արդյունավետ գործելու բարձր ճնշման, հուզական լարվածության կամ անսպասելի իրավիճակներում: Բժիշկների մոտ սթրեսակայունության մակարդակը մեծապես որոշում է մասնագիտական հյուծման, սխալների և հոգեբանական տհաճության հավանականությունը: Բարձր սթրեսակայունություն ունեցող բժիշկները հաճախ ցուցաբերում են ավելի հանգիստ արձագանք, արագ որոշում կայացնելու կարողություն և արդյունավետ համագործակցություն թիմի հետ:

Ապրումակցումը (էմպաթիան) բժշկի մասնագիտական էթիկայի հիմնական բաղադրիչներից է: Այն ենթադրում է հիվանդի հուզական վիճակի

ընկալում, հասկանալը և համերաշխ վերաբերմունքը: Սակայն չափազանց ուժեղ ապրումակցումը կարող է հանգեցնել հուզական այրման, երբ բժիշկը հոգեբանականորեն սպառվում է: Ուստի անհրաժեշտ է պահպանել հավասարակշռություն՝ համակցելով հուզական ներգրավվածությունը և մասնագիտական սառնասրտությունը [3, 54]:

Սթրեսը կառավարելու համար կարևոր է ճանաչել իրավիճակները/պայմանները, որոնք կարող են առաջացնել սթրեսների, բացահայտել դրանց նշանները և ներդրումներ կատարել դրանց վերացման ռազմավարություններում: Բժշկական ուսուցման և մասնագիտության մեջ պետք է գնահատվեն այնպիսի թեմաներ, ինչպիսիք են սթրեսի կառավարումը և ճկունությունը [1, 72]:

Իրենց ֆունկցիոնալ պարտականությունները կատարելիս բուժաշխատողները (բժիշկները և բուժքույրական անձնակազմը) ենթարկվում են մասնագիտական և հոգեբանական մեծ սթրեսի, հատկապես բարձր ռիսկային պայմաններում, ինչպիսին է համաճարակը: Սա առաջացնում է ընդգծված մասնագիտական սթրես և հանգեցնում մասնագիտական (հոգեբանական, հոգեհուզական) այրման:

Բժշկական աշխատողների մոտ սթրեսը չունի խիստ առանձնահատկություններ, այն կարող է տատանվել դյուրագրգռությունից, հոգնածության բարձրացումից և նևրոտիկ և հոգեսոմատիկ խանգարումներից: Նյարդային բարձր ակտիվության տեսակը՝ զուգակցված անհատականության գծերի հետ, շատ բան է նշանակում, օրինակ՝ մելամաղձոտ անձնավորությունն ավելի հակված է դառնալու հուսահատ և անհանգիստ իր աշխատանքային գործունեության մեջ, մինչդեռ խոլերիկ մարդը, իր հերթին, ունի ագրեսիվություն դրսևորելու ավելի մեծ հնարավորություն. վերաբերմունք հիվանդի նկատմամբ:

Վ. Ա. Վինոկուրան, որ մասնագիտական սթրեսի ուսումնասիրման մասնագետ է, կարծում է, որ սթրեսն առաջին հերթին աշխատողի մասնագիտական մոտիվացիայի նվազման ցուցիչ է, իսկ հուզական այրումը և նվիրվածությունը մասնագիտությանը հակադիր են աշխատակիցների վերաբերմունքի նկատմամբ: Մի շարք ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ բժշկական մասնագետների շրջանում աստիճանաբար աճող հուզական այրումը և մասնագիտական դեֆորմացիան աշխատանքի սթրեսի ֆոնին հաճախ ուղեկցվում են բացասական, երբեմն զուգորդված թաքնված ագրեսիվությամբ, հիվանդների նկատմամբ վերաբերմունքով, որը դրսևորվում է միակողմանի հաղորդակցական քննադատության տեսքով [5]:

Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ մասնագիտական գործունեու-

թյան հուսալիությունը, արդյունավետությունը և հաջողությունն ապահովող բոլոր գործոններից էականորեն կարևորվում են կայուն հոգեկանը, պահվածքը և աշխատակիցների վերաբերմունքը սթրեսի մեջ գտնվող հիվանդների նկատմամբ: Սա ծնում է սթրեսի դիմադրության հայեցակարգը, որը հաջող գործունեության համար անհրաժեշտ սթրեսի դիմադրության ցուցիչ է: Սթրեսի դիմադրությունը բացատրելու առաջին տարբերակը որոշվում է մարզումների ընթացքում ձեռք բերված անձի հատկանիշով, երկրորդ տարբերակը հնարավորություն է տալիս զգալ նվազագույն զգացմունքային և ֆիզիկական ծախսեր սթրեսի ժամանակ, ոչ միայն պահպանելով մտավոր և ֆիզիկական ակտիվության բարձր մակարդակը, բայց միաժամանակ բարձրացնելով աշխատուժի արդյունավետությունն ու արտադրողականությունը [2, 85]:

Սթրեսի դիմադրության, այն ձևավորող գործոնների, մասնագիտական գործունեության առանձնահատկությունների և հոգեկան առողջության միջև կապերի ամրապնդումն ու հետախուզումը մեծ նշանակություն ունեն անընդհատ փոփոխվող պայմաններում գործող բուժաշխատողների համար:

Ա. Մ. Տրապեզնիկովան, Է. Ի. Ֆինոգենկոն իրենց հետազոտության նպատակը դրեցին ուսումնասիրել բուժաշխատողների շրջանում սթրեսի դիմադրության առանձնահատկությունները: Հուզական ֆոնի վիճակի վերաբերյալ կանխարգելիչ և ախտորոշիչ հետազոտությունների ընթացքում զգալի ուշադրություն է դարձվում նյարդահոգեբանական անկայունությանը, որը բխում է անհատի հոգեսոմատիկ առողջությունից: Նյարդահոգեբանական խանգարումների նկատմամբ բարձր դիմադրությունը, առողջ ինքնագնահատականը և շրջապատող իրականության գնահատումը արտացոլում են սուբյեկտների բավականին բարձր սթրեսային դիմադրությունը: Մարդիկ ունեն մտավոր խանգարումների ցածր հավանականություն, վարքի կարգավորման բարձր մակարդակ և, համապատասխանաբար, սթրեսի դիմադրություն, մարդիկ ենթակա չեն նյարդահոգեբանական անսարքությունների, նրանք լի են էներգիայով և ամբողջությամբ նվիրվում են իրենց գործունեությանը: Նաև Ա. Մ. Տրապեզնիկովան և Է. Ի. Ֆինոգենկոն նշում են, որ այնպիսի բաղադրիչ, ինչպիսին է մոտիվացիան, նույնպես բավականին կարևոր է, որն օգնում է ուժեղացնել դիմադրությունը նյարդային պոռթկումներին: Համապատասխան մոտիվացիայի դեպքում աշխատակիցները կարողանում են երկար ժամանակ ինտենսիվ աշխատել: Ծայրահեղ իրավիճակներում նրանք արդյունավետորեն մոբիլիզացվում են և կենտրոնանում առաջադրանքն ավարտելու վրա: Ցանկացած գործունեություն սկսելիս հաջողության մոտիվացված մարդը

ենթադրում է դրա դրական ավարտը արդյունավետ արդյունքով [6]:

Նման մարդկանց բնորոշ է նախաձեռնողականությունը, վստահությունը, պատասխանատվությունը և ակտիվությունը: Առաջադրանքը լուծելու համար սահմանված նպատակի բարդությունը ուղղակիորեն կախված է նրանից, թե որքան ուժեղ է դրա իրականացման շարժառիթը, ինչպես նաև կախված է շարժառիթների ուժից: Եթե շարժառիթը շատ թույլ է, ապա մարդը կամ ընդհանրապես ռիսկի չի դիմում և ընտրում է ամենահեշտ գործերը, կամ, ընդհակառակը, չափից դուրս ռիսկի է դիմում՝ ընտրելով մեծ բարդության առաջադրանքներ: Այսպիսով, նվաճումների մոտիվացիան արտացոլում է սթրեսի նկատմամբ բավականին բարձր դիմադրություն: Եթե մարդը մոտիվացված է իր գործունեության մեջ անհաջող ելք ունենալու համար, ապա նրան բնորոշ են անհանգստության աճը և ինքնավստահության մակարդակի նվազումը: Սթրեսի դիմադրությունը՝ որպես պրոֆեսիոնալ բաղադրիչ, բավականաչափ զարգացած չէ նման մարդկանց մոտ: Նկատվում են նաև հետևյալ գծերը՝ պատասխանատու առաջադրանքների կատարումից խուսափելու ցանկություն, իրավիճակային անհանգստության աճ, խուճապային մոտ հուզական վիճակներ՝ չափազանց պատասխանատու առաջադրանքների կատարման ժամանակ: Եթե աշխատանքային գործունեության ընթացքում ժամանակի պակաս է լինում, ապա կատարված աշխատանքի արդյունքը նվազում է: Բնութագրվում է հանձնարարված առաջադրանքն ավարտելու նվազած համառությամբ:

Ըստ Ա. Մ. Տրապեզնիկովայի և Է. Ի. Ֆինոգենկոյի՝ երբ դրական մոտիվացիան գերակշռում է բացասականին, դա ցույց է տալիս, որ սուբյեկտները ոչ մի խոչընդոտ չունեն արդյունավետ մասնագիտական գործունեության համար, նրանք պատրաստ են հիվանդների հետ հաջող փոխգործակցության և մասնագիտականկատարելագործման:

Այսպիսով, անցկացված հետազոտության ֆոնին կարելի է եզրակացնել, որ սթրեսի դիմադրությունը՝ որպես մասնագիտական որակ, շատ կարևոր է այնպիսի մասնագիտության մեջ, ինչպիսին բուժաշխատողն է:

Մ. Ն. Պուստաշնևան ուսումնասիրել է բուժաշխատողների սթրեսային դիմադրության մակարդակը հուզական այրման համախտանիշի հետ մեկտեղ:

Հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ բժիշկների մեծամասնությունը զգացել է հուզական հյուծվածություն, իսկ որոշների մոտ ձևավորվել է ցինիկ վերաբերմունք իրենց աշխատանքի նկատմամբ, սակայն եղել են նաև այնպիսիք, ովքեր լիովին գոհ են եղել իրենց մասնագիտական գործունեությունից (ընդամենը 10 %) և չեն հիասթափվել՝ ընտրե-

լով այս մասնագիտությունը. Դա պայմանավորված է նրանով, որ բժիշկ-ները մշտապես զգում են սոցիալ-տնտեսական, մասնագիտական և ընտանեկան խնդիրների բեռը, որոնք ազդում են ինչպես իրենց, այնպես էլ բազմաթիվ հիվանդների վրա, և ազդում են հատկապես «ոչ հիմնական» հիվանդների խնդիրները, ովքեր ունեն խանգարված հոգեբանական կարգավիճակ, ինչը բժիշկների շրջանում նվազեցնում է սթրեսի դի-մադրության մակարդակը և խնամքի որակը [7]:

Ա. Կարաչարովան իր ուսումնասիրության մեջ նշում է հուզական արձագանքումը, հուզական հավասարակշռությունը և սթրեսային դի-մադրությունը՝ որպես բուժաշխատողների հոգեհուզական կարևոր բա-ղադրիչներ: Սթրեսի դիմադրություն ասելով հեղինակը հասկանում է հուզական ծանրաբեռնվածությանը և լարված իրավիճակներին դիմակա-յելու ունակությունը, որոնք մեծ ջանքեր են պահանջում մարմնից և հոգե-կանից:

Սթրեսակայունության ինքնագնահատման մեթոդիկայի մեթոդիկա-յին, ըստ Ս. Կոուխենի և Գ. Վիլիանսոնի, մասնակցել են 20 բուժաշխա-տակիցներ [4]:

Արդյունքները տոկոսային հարաբերակցությամբ ամփոփվել են հետևյալ աղյուսակում

Աղյուսակ 1

Սթրեսակայունության ինքնագնահատման արդյունքները

	Շատ վատ	***Վատ***	***Նորմալ***	***Լավ***	***Շատ լավ***
Արդյունք %	0	10 %	36 %	54 %	0

Արդյունքներից կարելի է եզրակացնել, որ սթրեսակայունության մա-կարդակը գտնվում է միջին մակարդակում, այսինքն հարցվողները հիմ-նականում իրենց համարում են սթրեսակայուն:

Սթրեսակայունության գնահատման հաջորդ մեթոդիկան ներառում է 16 հարց, որին անհրաժեշտ է պատասխանել այո կամ ոչ: Ստացված արդյունքների շնորհիվ հնարավոր է գնահատել բուժաշխատակցի մոտ սթրեսակայունության աստիճանը: Որքան բարձր է միավորը, այնքան բարձր է սթրեսակայունության աստիճանը: Արդյունքները ներկայացված են աղյուսակում.

Աղյուսակ 2

Սթրեսակայունության աստիճանի գնահատման արդյունքները

	0-13 միավոր	***13-36 միավոր***	***36+ միավոր***
Արդյունք	0 %	82 %	18 %

Արդյունքները վկայում են այն մասին, որ բուժաշխատողների մոտ սթրեսակայունության մակարդակը բավականին բարձր է: Դա բացատրվում է նրանով, որ հարցվողների մեծամասնությունը ունեն 5+ տարվա աշխատանքային փորձ, որի ընթացքում սթրեսակայունության մակարդակը գնալով բարձրանում է:

Վերջին մեթոդիկան բաղկացած է 33 հարցից, որոնց պետք է պատասխանել այո կամ ոչ: Պատասխանների հիման վրա դասակարգումը իրականացվել է բարձր, միջին և ցածր խմբերում: Արդյունքները ներկայացված են աղյուսակում

Աղյուսակ 3

Սթրեսակայունության աստիճանի գնահատման արդյունքները

	0-10 միավոր	*11-19 միավոր*	*20-33 միավոր*
Արդյունք	0 %	64 %	36 %

Արդյունքները վկայում են այն մասին, որ երկարաժամկետ աշխատանքը բժշկական ոլորտում, որտեղ բուժաշխատակիցները անընդհատ բախվում են մարդկային գործոի հետ, նրանց դարձնում է ավելի քիչ ապրումակցող:

Այսպիսով, բժիշկների մոտ սթրեսակայունության և ապրումակցման զարգացումը պետք է դիտվի որպես մասնագիտական պատրաստության կարևոր բաղադրիչ: Հոգեբանական վերապատրաստումները, ինքնակարգավորման մեթոդները և թիմային աջակցությունը կարող են նպաստել բժիշկների հուզական կայունության բարձրացմանը: Հոգեբանական առողջ բժիշկը ոչ միայն ավելի արդյունավետ է իր աշխատանքում, այլև ապահովում է հիվանդների նկատմամբ մարդասիրական և զգայուն վերաբերմունք:

Այսպիսով, ամփոփելով մեր կատարած տեսական և գործնական ուսումնասիրությունները, կարող ենք ասել, որ.

▪ Սթրեսը մարդու կյանքի անբաժանելի մասն է: Դրա ազդեցությունն ուղղակիորեն կախված է տվյալ խնդրի նկատմամբ անհատի վերաբերմունքից և կյանքի տարբեր սթրեսային իրավիճակներին դիմակայելու պատրաստակամության աստիճանից: Հետևաբար, շատ կարևոր է կարողանալ արդյունավետորեն կառավարել մարմնի արձագանքը սթրեսային գրգռիչներին:

▪ Սթրեսի դիմադրությունը կարևոր և անբաժանելի բաղադրիչ է բուժաշխատողների մասնագիտական գործունեության մեջ: Կանոնավոր միջանձնային փոխազդեցությունները, մշտական շփումը հիվանդների և

նրանց հարազատների հետ կազմում են աշխատակիցների աշխատանքի առանձնահատկությունները: Ինտենսիվ աշխատանքային գործունեություն, ներառյալ անկանոն աշխատանքային գրաֆիկը, բարձր պատասխանատվությունը, սուբյեկտիվորեն նշանակալի սթրեսային գործոնների առկայությունը,– այս ամենը ցույց է տալիս այնպիսի գործոնի կարևորությունը բուժաշխատողների գործունեության մեջ, ինչպիսին է սթրեսի դիմադրությունը:

▪ Ապրումակցման մակարդակը դեռևս գտնվում է միջին մակարդակում, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ապրումակցումը բժիշկների և բուժաշխատակիցների մոտ դրսևորվում է որոշակի ժամանակահատված աշխատելուց հետո: Այսինքն՝ բարձր ապրումակցման մակարդակ դրսևորվում է ավելի տարեց և փորձառու բուժաշխատակիցների շրջանում: Սակայն դա միանշանակ չէ, և ավելի մանրամասն արդյունքների համար անհրաժեշտ է պարբերաբար և հետևողական ուսումնասիրություն:

Գրականություն

1. Ճշմարիտյան Ա. Ս., «Սթրեսի տեսակները և մակարդակները», 1991:
2. Սելյե Հ., Սթրես առանց դիսթրեսի, Երևան, 1988:
3. Аксенова Е. И., Камынина Н. Н., Турзин П. С. Профессиональный стресс медицинских работников: обзор зарубежных практик, 2023.
4. Тест самооценки стрессоустойчивости (с. Коухена и г. Виллиансона), https://studfile.net/preview/5570943/page:15/
5. Фетискин Н. П., Козлов В. В., Мануйлов Г. М. Социально-психологическая диагностика развития личности и малых групп. Москва. Изд-во Института Психотерапии. 2002, http://www.miu.by/kaf_new/mpp/027.pdf
6. Шадрина А. Ю. Стресс и стрессоустойчивость медицинских работников, 2016. file:///C:/Users/Admin/Downloads/stress-i-stressoustoychivost-meditsinskih-rabotnikov.pdf
7. Академия Медицинского Образования. Профессиональный стресс и эмоциональное выгорание врачей. https://medobr.com/news/professionalnyy-stress-i-emotsionalnoe-vygoranie-vrachey/
8. Как стресс влияет на работоспособность? https://redmadrobot.ru/razvitie-komand/kak-stress-vliyaet-na-rabotosposobnost

Исследование стрессоустойчивости и эмпатии у врачей

Абовян Нарине
Факультет социальных наук,
"Психология личности и психологическое консультирование",
Научный руководитель:
кандидат психологических наук, доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова: *стресс, стрессоустойчивость, эмпатия, врач, психология*

Стресс – это неспецифическая реакция организма на любое предъявленное ему требование. Это процесс, включающий физиологические и психологические компоненты. С помощью стресса организм защищает себя и адаптируется к новой ситуации. Во всех сферах деятельности люди подвергаются воздействию стрессовых факторов. Не являются исключением и медицинские работники, деятельность которых в значительной степени подвержена стрессу, формирующемуся под влиянием особенностей профессии.

Study of Stress Resilience and Empathy among Physicians

Abovyan Narine
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Counseling Psychology",
Supervisor: V. Mirzoyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *stress, stress resilience, empathy, physician, psychology*

Stress is a non-specific reaction of the body to any demand placed on it. It is a process that includes physiological and psychological components. With the help of stress, the body protects itself and adapts to a new situation. In all areas of activity, people are exposed to stressful factors. Medical workers are no exception, whose activities are largely subject to stress, which is formed under the influence of the specifics of the profession.

Աբյուզինգի դրսևորման առանձնահատկությունները ամուսնական հարաբերություններում

Մխիթարյան Միլենա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Հ. Ավագիմյան

Հանգուցային բառեր. *ամուսնական հարաբերություններ, աբյուզիվ վարք, ագրեսիվություն, խանդ, ինքնագնահատական*

Ներածություն

Ժամանակակից հասարակությունում ընտանեկան հարաբերությունների որակը և կայունությունը կարևոր նշանակություն ունեն անհատի հոգեբանական բարեկեցության, ինքնաիրացման և սոցիալական ներդաշնակ կյանքի ապահովման համար: Սակայն վերջին տարիներին նկատվում է մի մտահոգիչ միտում՝ ամուսնական հարաբերություններում հաճախ արձանագրվում են աբյուզիվ (բռնատիրական, վերահսկող, նվաստացնող) վարքի դրսևորումներ, որոնք կարող են ունենալ ինչպես բաց, այնպես էլ թաքնված ձևեր: Աբյուզինգի խնդիրը հատկապես արդիական է մեր օրերում, երբ սոցիալական ցանցերի ազդեցությամբ, տնտեսական և մշակութային փոփոխությունների ֆոնին փոխվում են զույգերի փոխհարաբերությունների ձևերն ու նորմերը: Այս երևույթը հաճախ արտահայտվում է վերահսկողության, խանդի, հուզական մանիպուլյացիաների և հոգեբանական ճնշման ձևով՝ ստեղծելով անառողջ հարաբերություններ և խաթարելով ամուսնության կայունությունը:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ աբյուզիվ վարքը ոչ միայն հանգեցնում է ընտանեկան կոնֆլիկտների ու բաժանությունների, այլև երկարաժամկետ հոգեբանական հետևանքներ է թողնում անձի ինքնագնահատականի, վստահության, սոցիալական ադապտացիայի և ծնողական դերի վրա: Ներկայումս դեռևս բավարար չափով չեն ուսումնասիրված աբյուզիվ վարքի հոգեբանական հիմքերը և այն գործոնները, որոնք նպաստում են նման վարքի ձևավորմանը ամուսնական փոխհարաբերություններում:

Հետազոտության **նպատակն** է բացահայտել ամուսնական հարաբերություններում աբյուզիվ վարքի դրսևորումների առանձնահատկությունները:

Հետազոտության **օբյեկտն** են ամուսնական հարաբերությունները, իսկ **առարկան**՝ դրանցում աբյուզիվ վարքի դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

1) Իրականացնել աբյուզիվ վարքի տեսական վերլուծություն,
2) Կատարել կիրառված մեթոդիկաների արդյունքների վերլուծություն,
3) Կատարել հետազոտության արդյունքների համահարաբերակցային վերլուծություն:

Հետազոտությունում օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները՝ Յակոբսոնի և Ջ. Գոթմանի հուզական աբյուզինգի հարցաշար, Ռ. Լիխիի խանդի հարցաշար, Ա. Ռուկավիշնիկովի միջանձնային հարաբերությունների մեթոդիկա և Ա. Բասսի ու Ա. Դարկի ագրեսիվության մակարդակի որոշման հարցաշար: Տվյալների վերլուծության համար կիրառվել է Սպիրմենի համահարաբերակցային վերլուծություն:

Այս ուսումնասիրությունը նպաստում է ընտանեկան հարաբերություններում աբյուզիվ վարքի դրսևորումների և դրանց հոգեբանական հիմնավորումների ընկալմանը և առաջարկում է գործնական լուծումներ՝ ուղղված զույգերի հաղորդակցման բարելավմանը, ագրեսիայի կանխարգելմանը և հարաբերությունների ներդաշնակության ամրապնդմանը:

Տեսական գրականության վերլուծություն

Ամուսնական հարաբերությունների կայունացման գործընթացը որոշվում է ընտանիքի հոգեբանական կառուցվածքով, գործոններով և մեխանիզմներով՝ որպես իր տեսակի մեջ եզակի, յուրահատուկ համակարգ, որն ունի իր առանձնահատկությունները: Ընտանիքի և ամուսնության հարցերի առավել ակտիվ ուսումնասիրությունը տեղի է ունեցել քսաներորդ դարի 80-90-ական թվականներին: Այս ժամանակահատվածում ուսումնասիրություններ են իրականացվել ամուսինների անձնային բնութագրերի նմանության աստիճանի, նրանց դերի և արժեքային կողմնորոշումների ուսումնասիրության վերաբերյալ (Ա. Ն. Վոլկովա, Տ. Վ. Գալկինա, Դ. Մայերս, Դ. Վ. Օլշանսկի և այլն): Աշխատանքի զգալի մասը նվիրված էր ամուսինների արժեքային կողմնորոշումների խնդրի ուսումնասիրությանը և ընտանեկան դերերի ոլորտին [11, 25]:

Ըստ Ա. Ա. Օսիպովայի՝ կայուն ամուսնությունը բնութագրվում է հետևյալ հատկանիշներով՝ հարգալից վերաբերմունք միմյանց նկատմամբ, հանդուրժողականություն մյուսի առանձնահատկությունների և թերությունների նկատմամբ, միասին լինելու ցանկություն, ազնվություն,

առաջատար արժեքային կողմնորոշումների և հետաքրքրությունների նմանություն: Միևնույն ժամանակ հեղինակը կարծում է, որ բավականին հաճախ կայուն ամուսնությունը ենթադրում է ամուսինների արժեքների և շահերի միասնության և նրանց անձնային որակների հակադրության համադրություն: Ընտանիքի անդամների՝ համատեղ կյանքի բոլոր ասպեկտների շուրջ բանակցելու կարողությունը նույնպես կարևոր է ընտանեկան հարաբերությունների կայունության համար [6, 231]:

Միևնույն ժամանակ, է. Գ. Սիլյաևան հոգեբանական համատեղելիությունը սահմանում է որպես զուգընկերների կողմից փոխադարձ ընդունում միմյանց հաղորդակցության և համատեղ գործունեության գործընթացում՝ հիմնված օպտիմալ անձնային և հոգեֆիզիոլոգիական հատկությունների վրա [10, 39-41]:

Հոգեբանական բռնությունը սոցիալապես անընդունելի վարքագծի նորմ է, որը միշտ չէ, որ ճանաչվում է աբյուզերի (բռնարարի) կողմից, սակայն հզոր բացասական ազդեցություն է թողնում տուժողի հոգեկանի վրա, ինչը հանգեցնում է անհատի հոգեսպանության. հուզական վերականգնում, որը նպաստում է փորձառությունների կուտակմանը և, որպես հետևանք, անհատի «ես-հայեցակարգի» շրջմանը [1, 7]:

Աբյուզիվ հարաբերությունները տարբերվում են բռնության բնույթով՝ ֆիզիկական, բարոյահոգեբանական, սեռական, տնտեսական [16]:

Ըստ տևողության՝ դրանք կարող են լինել կարճաժամկետ կամ երկարատև: Ամենատարածված դրսևորումը ֆիզիկական վնաս պատճառելն է: Իրականացվում է ազատության սահմանափակման, ծեծի, խոշտանգումների միջոցով [16]:

Հոգեբանական աբյուզինգը դրսևորվում է բարոյական ճնշմամբ, նվաստացմամբ, հարկադրանքով: Ագրեսորը սպառնում է վնասել առողջությանը, սահմանափակում է ազատությունը: Մեղմ տարբերակներում սա անտեսումն է, անապահովության զգացումները, ընկերների/ընկերուհիների հետ զբոսանքի արգելքը: Ծայրահեղ ձևերով՝ սպանության սպառնալիքներ, շանտաժի, մանիպուլյացիայի միջոցով տուն պահելը:

Սեռական աբյուզինգը դրսևորվում է անձի կողմից սեռական կարիքները բավարարելու նպատակով սպառնալիքների և ֆիզիկական հարկադրանքի միջոցով: Բնութագրվում է ահաբեկմամբ, շանտաժով և մանիպուլյացիայով: Սեռական շփումը գնահատվում է որպես «ամուսնական պարտականություն». մեկը պետք է ենթարկվի մյուսին: Այս բացատրությունը ագրեսորին թողնում է անպատիժ, իսկ զոհն ընդունում է մի դիրք, որում ստիպված է դիմանալ: Հարկադրված սեռական հարա-

բերությունը հաճախ ուղեկցվում է այլասերվածությամբ և ծեծով [16]:

Տնտեսական աբյուզինգը հարաբերություն է, երբ անձը, ով հասանելի է ֆինանսներին և այլ նյութական բարիքներին, խստորեն սահմանափակում է դրանց օգտագործումը զուգընկերոջ կողմից: Այս տարբերակը դրսևորվում է նվաստացումներով, իրավունքների ոտնահարմամբ, էմոցիոնալ և հոգեբանական անհարմարություններով:

Դիտարկենք աբյուզը տղամարդու կողմից, երբ զոհ է դառնում կինը [16]:

Ինչո՞ւ: Երեք հիմնական պատճառով.

1. Աբյուզը տղամարդկանց կողմից ավելի տարածված է:
2. Արական աբյուզը շատ ավելի վտանգավոր է կնոջ համար, քանի որ տղամարդը մեծ ֆիզիկական սպառնալիք է ներկայացնում, ավելի հաճախ զենք ունի և դիմում է ուժի:
3. Կինը, հատկապես երեխայի ծնվելուց հետո, հաճախ կախվածության վիճակում է գտնվում տղամարդուց, և նրա համար ավելի դժվար է հեռանալ աբյուզիվ հարաբերություններից [3, 15]:

Քանի որ կինը ֆիզիկապես ավելի թույլ է, քան տղամարդը, կանացի աբյուզը, ամենայն հավանականությամբ, կապված է հոգեբանական, տնտեսական և մասամբ սեռական ազդեցության հետ: Քանի որ ցանկացած աբյուզի նպատակը ճնշումն ու վերահսկումն է, աբյուզիվ տեխնիկան, ըստ էության, մանիպուլյացիան է: Նրանց օգնությամբ կինը փորձում է լիակատար վերահսկողություն ձեռք բերել իր տղամարդու վրա, ստիպել նրան որոշումներ կայացնել և կատարել (կամ չկատարել) գործողություններ՝ իր հարմարավետության և անվտանգության համար [21]:

Հետազոտության ընտրանքը և մեթոդիկաները

Հետազոտությանը մասնակցել է 60 ամուսնական զույգ:

Հետազոտության նպատակին համապատասխան կիրառվել են հետևյալ հոգեբանական մեթոդիկաները՝

1. Ն. Յակոբսոնի և Ջ. Գոթմանի հուզական աբյուզինգի հարցաթերթիկը՝ զուգընկերային հարաբերություններում հուզական և հոգեբանական աբյուզի դրսևորումները գնահատելու համար [22]:
2. Ռ. Լիխիի խանդի հարցաշարը՝ զուգընկերային հարաբերություններում խանդի ինտենսիվությունը և դինամիկան որոշելու նպատակով [10]:
3. Ռուկավիշնիկովի միջանձնային հարաբերությունների մեթոդիկան՝ զույգերի փոխհարաբերություններում ներքին և արտաքին վերահսկողության, կամային և հուզական վերահսկման, ինչպես

նաև ագրեսիվ դրսևորումների վերլուծության համար [23]:

4. Բաս-Դարկի ագրեսիվության հարցաթերթիկը՝ ագրեսիայի տարբեր ձևերի (ֆիզիկական, վերբալ, անուղղակի և այլն) մակարդակները գնահատելու համար:

Ստացված արդյունքները մշակվել են ոչ պարամետրիկ վիճակագրական մեթոդներով, մասնավորապես՝ Սպիրմենի համահարաբերակցային վերլուծությամբ (ρ)՝ բացահայտելու աբյուզիվ վարքի, խանդի, միջանձնային հարաբերությունների և ագրեսիվության ցուցանիշների միջև փոխկապակցությունները (տե՛ս աղյուսակ 1)[1] [11]:

Ն. Յակոբսոնի և Ջ. Գոթմանի «Հուզական աբյուզինգի հարցաշարի» շրջանակներում ստացվեց, որ տղամարդկանց մոտ հուզական աբյուզինգի միջին ցուցանիշը ավելի բարձր է, քան կանանց մոտ: Այս երևույթը կարելի է բացատրել նրանով, որ տղամարդիկ իրենց հուզական աբյուզիվ դրսևորումները հաճախ օգտագործում են որպես վերահսկողության և իշխանության միջոց, մինչդեռ կանայք ավելի հակված են բաց արտահայտելու իրենց հույզերը և քիչ են դիմում աբյուզիվ ռազմավարությունների:

Ռ. Լիխիի «Խանդի հարցաշարի» շրջանակներում պարզվեց, որ կանայք ավելի բարձր են խանդի մակարդակով: Դա պայմանավորված է նրանով, որ կանայք հարաբերություններում կարևորում են կապվածության կայունությունը և զուգընկերոջ նվիրվածությունը, ինչն էլ խանդի դրսևորումները դարձնում է ավելի ինտենսիվ: Տղամարդկանց մոտ խանդը ավելի քիչ է, սակայն հաճախ դրսևորվում է վերահսկող կամ աբյուզիվ վարքագծի միջոցով:

---

[1] Հուզական աբյուզի յուրաքանչյուր սանդղակի համար. ≥95 – բարձր մակարդակ, 73-94 – միջին մակարդակ, ≤ 72 – ցածր մակարդակ:

Խանդի յուրաքանչյուր սանդղակի համար. ≥12 – բարձր մակարդակ, ≤ 11 – ցածր մակարդակ:

Միջանձնային հարաբերությունների յուրաքանչյուր սանդղակի համար. 0-1 և 8-9՝ էքստրեմալ ցածր և բարձր մակարդակներ, 2-3 և 6-7 ցածր և բարձր մակարդակներ, 4-5՝ միջին մակարդակ:

Ֆիզիկական ագրեսիայի, բանավոր ագրեսիայի, նեգատիվիզմի, մեղքի զգացման համար.0-30՝ ցածր մակարդակ, 31-52՝ միջին մակարդակ, 53-74՝ բարձրացված մակարդակ, 75-85՝ բարձր մակարդակ, 86-97՝ շատ բարձր մակարդակ:

Անուղղակի ագրեսիայի, նյարդայնության, կասկածամտության և վիրավորանքի համար.0-14՝ ցածր մակարդակ, 15-36՝ միջին մակարդակ, 37-58՝ բարձրացված մակարդակ, 59-69՝ բարձր մակարդակ, 70-92՝ շատ բարձր մաարդակ:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Աղյուսակ 1

Տղամարկանց և կանանց վիճակագրական ցուցանիշները

№	Գործոններ	Տղամարդ				Կին			
		M	*SD*	*SE*	*95 % CI*	*M*	*SD*	*SE*	*95 % CI*
1	Աբյուզինգ	62.15	27.80	3.59	[54.97, 69.33]	54.38	23.53	3.04	[48.30, 60.46]
2	Խանդ	17.50	11.15	1.44	[14.62, 20.38]	21.72	13.52	1.75	[18.22, 25.21]
3	Ie/Iw-Էքստ./ Ինտ.	8.57	2.13	0.28	[8.02, 9.12]	6.27	2.58	0.33	[5.60, 6.93]
4	Ce/Cw- Հաղ.արտ. / ներ.կողմ.	8.10	2.93	0.38	[7.35, 8.85]	9.20	3.66	0.47	[8.27; 10.13]
5	Ae/Aw-Աֆեկտիվէքստ. / ինտ.	9.83	4.42	0.57	[8.71; 10.95]	8.07	3.30	0.43	[7.23; 8.91]
6	Ֆիզիկական ագրեսիա	6.03	2.82	0.36	[5.32; 6.74]	4.25	1.51	0.20	[3.87; 4.63]
7	Բանավոր ագրեսիա	5.70	1.66	0.21	[5.28; 6.12]	5.00	2.10	0.27	[4.47; 5.53]
8	Անուղղակի ագրեսիա	3.83	2.01	0.26	[3.32; 4.34]	5.57	2.28	0.29	[4.99; 6.15]
9	Նեգատիվիզմ	4.57	1.70	0.22	[4.14; 5.00]	4.20	2.24	0.29	[3.63; 4.77]
10	Նյարդայնություն	5.08	2.48	0.32	[4.45; 5.71]	5.30	1.82	0.24	[4.84; 5.76]
11	Կասկածամտություն	3.93	1.97	0.25	[3.43; 4.43]	4.78	1.82	0.24	[4.32; 5.24]
12	Վիրավորանք	3.70	1.97	0.25	[3.20; 4.20]	5.37	2.34	0.30	[4.78; 5.96]
13	Մեղքիզգացում	3.93	2.78	0.36	[3.22; 4.64]	5.30	2.64	0.34	[4.63; 5.97]

Ա. Ռուկավիշնիկովի «Միջանձնային հարաբերությունների հարցաշարի» շրջանակներում ստացվեց մի քանի կարևոր արդյունք: Նախ՝ տղամարդիկ ավելի բարձր են էքստերնալության մակարդակով. նրանք հակված են իրենց հաջողություններն ու անհաջողությունները վերագրել արտաքին գործոնների ազդեցությանը՝ ճակատագրին, մարդկանց կամ իրավիճակին: Կանայք ավելի ինտերնալ են. նրանց բնորոշ է սեփական վարքագծի և արդյունքների պատասխանատվությունը վերագրել ինքնին իրենց: Այս ամենը ցույց է տալիս, որ կանայք հարաբերություններում ունեն ավելի մեծ ինքնաներդրում և ինքնաքննադատություն, մինչդեռ տղամարդիկ հակված են իրենց սխալներն արդարացնել արտաքին հանգամանքներով:

Հաղորդակցման կողմնորոշվածության տեսանկյունից կանայք զգալիորեն բարձր են. նրանք կարևորում են շփման որակը, ձգտում են էմպատիկ փոխհարաբերությունների, բաց քննարկումների: Տղամարդիկ, ընդհակառակը, ավելի զուսպ են այս ասպարեզում: Աֆեկտիվ էքստերնալության մասով տղամարդիկ առավել դրսևորող են՝ հույզերը արտահայտելով արտաքինում, ինչը հաճախ վերածվում է կոնֆլիկտային իրավիճակների: Կանայք ավելի ինտերնալ են՝ հույզերը պահելով ներքինում, ինչը մեծացնում է հուզական լարվածության կուտակման ռիսկը:

Ա. Բասսի և Ա. Դարկի «Ագրեսիվության մակարդակի որոշման» հարցաշարի արդյունքները ցույց տվեցին, որ տղամարդիկ գերակշռում են ֆիզիկական և բանավոր ագրեսիայի ցուցանիշներով: Դա կարելի է կապել սոցմշակութային դերերի հետ. տղամարդկանց մոտ ագրեսիան հաճախ դիտվում է որպես ուժի և վերահսկողության ցուցանիշ: Կանանց մոտ ֆիզիկական ագրեսիան էականորեն ցածր է, սակայն նրանք գերակշռում են անուղղակի ագրեսիայի ցուցանիշներով, որը դրսևորվում է միջնորդավորված ձևերով՝ մանիպուլյացիա, խուսափողական վարք, լուռ դժգոհություն: Նեգատիվիզմի ցուցանիշները տղամարդկանց մոտ մի փոքր ավելի բարձր են. նրանք հակված են բացահայտ ընդդիմանալու կամ հակառակվելու, մինչդեռ կանայք հաճախ իրենց անհամաձայնությունն արտահայտում են ներքին ապրումների միջոցով: Նյարդայնության ցուցանիշները ավելի բարձր են կանանց մոտ.դա կապված է նրանց մեծ հուզական զգայունության և միջանձնային հարաբերություններում լարվածության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի հետ:

Կասկածամտությունը և վիրավորանքը նույնպես կանանց մոտ ավելի բարձր են. կանայք զգայուն են մտերիմների վերաբերմունքի նկատմամբ և հաճախ հակված են հուզականորեն վերապրել նույնիսկ փոքր տհաճ իրավիճակներ:

Մեղքի զգացումը ևս կանանց մոտ ավելի բարձր է. նրանք հակված են իրենց գործողությունների նկատմամբ խիստ գնահատման, ինչը պայմանավորված է ինչպես դաստիարակությամբ, այնպես էլ սոցիալական սպասումներով:

Աղյուսակ 2

Տղամարդկանց և կանանց աբյուզինգի և հոգեբանական ցուցանիշների կոռելացիաները (ρ - Spearman)[2]

Յուցիչ	*ρ (Spearman)*
Խանդ	0.758***
Ie/Iw-Էքստերնալություն / Ինտերնալություն	0.619***
Ce/Cw- Հաղորդակցմանարտաքին / ներքին կողմնորոշվածություն	-0.305*
Ae/Aw-Աֆեկտիվ էքստերնալություն / ինտերնալություն	0.494***
Ֆիզիկական ագրեսիա	0.752***
Բանավոր ագրեսիա	0.597***
Նյարդայնություն	0.488***
Կասկածամտություն	0.600***
Վիրավորանք	0.422***
Մեղքի զգացում	-0.510***

Տղամարդկանց և կանանց համախառն արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ աբյուզիվ վարքը զգալիորեն փոխկապակցված է մի շարք անհատական և հուզական գործոնների հետ, որոնք արտացոլում են հարաբերություններում վերահսկողության, անվստահության և ագրեսիվ արձագանքների դինամիկան:

Առավել ուժեղ կապը դիտվել է ֆիզիկական ագրեսիայի ($\rho = 0.752^{***}$) և խանդի ($\rho = 0.758^{***}$) հետ, ինչը ցույց է տալիս, որ աբյուզիվ վարքը հաճախ ուղեկցվում է բարձր ագրեսիվ պոտենցիալով և սեփականության զգացումով զուգընկերոջ նկատմամբ:

Նման անձանց համար հարաբերություններում գերակշռում է վերահսկելու, տիրապետելու և ենթարկեցնելու ձգտումը, որը, ըստ հոգեբանական բացատրությունների, հաճախ ծագում է ներքին անապահովությունից, ինքնագնահատականի անկայունությունից և կորստի նկատմամբ վախից:

Զգալի է նաև կապը կասկածամտության ($\rho = 0.600^{***}$) հետ, ինչը վկա-

[2] * – $p \leq 0.05$ ** – $p \leq 0.01$ *** – $p \leq 0.001$

յում է, որ աբյուզիվ վարք դրսևորող անձինք հակված են չափազանց անվստահության և վերահսկողության: Նման կասկածամտությունը սովորաբար բխում է ինտրապսիխիկ անհանգստությունից. մարդը սեփական ներքին անապահովությունն արտահանում է արտաքինի վրա՝ զուգընկերոջ վարքը դիտարկելով որպես մշտական սպառնալիք: Այն հանգեցնում է մեղադրանքների և սահմանափակող վարքագծի ձևավորմանը:

Աբյուզինգի և նյարդայնության (ρ = 0.488***) միջև առկա միջին ուժգնության կապը ցույց է տալիս, որ աբյուզիվ անձանց համար բնորոշ է բարձր հուզական անկայունությունը: Նրանք դժվարանում են զսպել իրենց զայրույթը, արագ արձագանքում են բարձր իմպուլսիվությամբ և հաճախ գործի են դնում ագրեսիան՝ որպես ներքին լարվածությունը թուլացնելու ձև:

Բարձր է նաև աբյուզինգի և I-Էքստերնալություն / Ինտերնալություն (ρ = 0.619***) ցուցանիշների միջև կապը, ինչը կարող է վկայել, որ աբյուզիվ անձինք, ովքեր ցուցադրում են բարձր էքստերնալություն, հակված են սեփական մեղքը կամ սխալները դնել արտաքին աշխարհի վրա, ինչը թույլ է տալիս խուսափել ներքին ինքնաքննությունից և մեղքի զգացումից:

Նշանակալի է նաև Ae/Aw – Աֆեկտիվ էքստերնալություն /Աֆեկտիվ ինտերնալություն (ρ = 0.494***) կապը, որն ընդգծում է աբյուզիվ անձանց հակումն արտահայտելու իրենց հույզերը անմիջականորեն, ինտենսիվ և չկառավարվող ձևով:

Այն խոսում է էմոցիոնալ ինքնակարգավորման պակասի մասին, երբ զայրույթը կամ վիրավորանքը չի վերամշակվում ներսում, այլ արտահայտվում է վարքային մակարդակում:

Բացասական և նշանակալի կապը մեղքի զգացման (ρ = -0.510***) հետ վկայում է, որ աբյուզիվ վարք դրսևորող անձինք հակված են մեղքի զգացումից խուսափելուն և սեփական վարքի արդարացմանը: Այս երևույթը կարող է դիտվել որպես հոգեբանական պաշտպանական մեխանիզմ, որը թույլ է տալիս պահպանել սեփական «վերահսկողի» դիրքը և խուսափել ներքին պատասխանատվությունից:

Բացի այդ՝ նկատվել է թույլ բացասական կապ Ce/Cw – հաղորդակցման արտաքին / ներքին կողմնորոշվածություն (ρ = -0.305 *) սանդղակի հետ, ինչը ցույց է տալիս, որ աբյուզիվ անձինք հաճախ ցածր ներքին կողմնորոշվածություն ունեն, ինչը նշանակում է, որ դժվարությամբ են վերահսկում իրենց վարքի իմպուլսները և զսպում զայրույթը:

Աղյուսակ 3

Տղամարդկանց աբյուզինգի և հոգեբանական ցուցանիշների կոռելացիաները (p - Spearman)[3]

Ցուցիչ	*ρ (Spearman)*
Խանդ	0.783***
Ie/Iw-Էքստերնալություն / Ինտերնալություն	0.735***
Ae/Aw-Աֆեկտիվ էքստերնալություն /ինտերնալություն	0.581***
Ֆիզիկական ագրեսիա	0.959***
Բանավոր ագրեսիա	0.570***
Նյարդայնություն	0.443***
Կասկածամտություն	0.703***
Վիրավորանք	0.446***
Մեղքի զգացում	-0.519***

Աբյուզինգի և խանդի միջև հայտնաբերվել է շատ ուժեղ դրական կապ (ρ = 0.783***): Այն ցույց է տալիս, որ որքան ավելի բարձր է տղամարդկանց մոտ խանդի մակարդակը, այնքան ավելի մեծ է աբյուզիվ վարքի դրսևորումը: Խանդը կապված է վերահսկողության և տիրապետելու ձգտման հետ, երբ վստահությունը զուգընկերոջ նկատմամբ ցածր է, իսկ սեփական ինքնագնահատականը՝ խոցելի, խանդը վերածվում է զուգընկերոջ վարքագիծը վերահսկելու հիմնական մեխանիզմի, ինչը նպաստում է բռնարար և ճնշող դրսևորումների:

Աբյուզինգի և ֆիզիկական ագրեսիայի միջև հայտնաբերվել է չափազանց ուժեղ կապ (ρ = 0.959***): Այս կապը փաստում է, որ աբյուզիվ վարքի առանցքային բաղադրիչը հենց ֆիզիկական բռնությունն է: Տղամարդկանց դեպքում այն առավել հաճախ է ի հայտ գալիս՝ պայմանավորված ինչպես անհատական հոգեբանական գործոններով, այնպես էլ սոցիալական նորմերով, որոնք երբեմն արդարացնում են ուժի կիրառումը:

Աբյուզինգի և բանավոր ագրեսիայի միջև ստացվել է նշանակալի կապ (ρ = 0.570***), ինչը վկայում է, որ աբյուզիվ տղամարդիկ բռնի վարք դրսևորում են ոչ միայն ֆիզիկական, այլև խոսքային մակարդակում: Վիրավորական արտահայտությունները, կշտամբանքները և նվաստացնող խոսքերը ծառայում են որպես զուգընկերոջ ինքնագնահատականը նվազեցնելու և նրա վրա վերահսկողություն իրականացնելու միջոց:

Աբյուզինգի և նյարդայնության միջև հայտնաբերվել է միջին ուժգնու-

[3] * – p ≤ 0.05 ** – p ≤ 0.01 *** – p ≤ 0.001

թյան դրական կապ (ρ = 0.443***), ինչը ցույց է տալիս, որ աբյուզիվ վարք դրսևորող տղամարդիկ հաճախ ունեն զայրույթի վերահսկման դժվարություններ: Նրանք հակված են արձագանքել ուժեղ, երբեմն անկանխատեսելի և անկառավարելի ձևով՝ նույնիսկ ոչ կարևոր կամ մանր պատճառների դեպքում:

Աբյուզինգի և կասկածամտության միջև հայտնաբերվել է բարձր ուժգնության դրական կապ (ρ = 0.703***), ինչը ենթադրում է, որ աբյուզիվ տղամարդիկ հաճախ բնորոշվում են չափազանց կասկածամտությամբ և անվստահությամբ: Նրանք հակված են կասկածի տակ դնել զուգընկերոջ խոսքերը, գործողությունները և մտադրությունները, ինչի հետևանքով հարաբերություններում ի հայտ են գալիս մշտական հարցաքննություններ, մեղադրանքներ և վերահսկողության դրսևորումներ:

Աբյուզինգի և վիրավորանքի միջև ստացվել է դրական և նշանակալի կապ (ρ = 0.446***), ինչը վկայում է, որ աբյուզիվ տղամարդիկ հակված են հաճախ վիրավորվելու, ինչը վերածվում է կոնֆլիկտների և ագրեսիվ արձագանքների: Նրանց համար ցանկացած դիտողություն կամ առաջարկ հաճախ ընկալվում է որպես անձնական վիրավորանք:

Աբյուզինգի և մեղքի զգացման միջև հայտնաբերվել է ուժեղ բացասական կապ (ρ = -0.519***), քանի որ աբյուզիվ վարք դրսևորող տղամարդիկ սովորաբար հազվադեպ են զգում մեղավորություն իրենց գործողությունների համար: Նրանք դժվարությամբ են ըմբռնում զուգընկերոջ ապրումները և հաճախ արդարացնում են իրենց ագրեսիվ վարքը:

Աբյուզինգի և խանդի միջև կանանց մոտ նույնպես ստացվել է բարձր դրական կապ (ρ = 0.699***): Խանդը կնոջ մոտ հաճախ պայմանավորված է հարաբերության մեջ կորստի վախով և սեփական արժեքի հարցադրմամբ: Երբ ինքնագնահատականը կախված է զուգընկերոջ վերաբերմունքից, ամեն մի արտաքին սպառնալիքը ընկալվում է որպես վտանգ: Խանդի զգացումը այս պարագայում վերածվում է աբյուզիվ վարքի՝ մշտական վերահսկողության, մեղադրանքների և ճնշումների:

Աբյուզինգի և Ie/Iw – էքստերնալություն / ինտերնալության միջև կապը դրական է (ρ = 0.407***), ինչը ցույց է տալիս, որ կանայք, ովքեր հակված են ավելի ինտերնալ կողմնորոշվածության, հաճախ չեն արտահայտում իրենց դժգոհությունները: Կուտակված լարվածությունը վերածվում է պասիվ-ագրեսիվ դրսևորումների կամ հանկարծակի բռնկումների:

Աղյուսակ 4

Կանանց աբյուզինգի և հոգեբանական ցուցանիշների կոռելացիաները (p - Spearman)[4]

Փոփոխական	*ρ (Spearman)*
Խանդ	0.699 ***
Ie/Iw – Էքստերնալություն / Ինտերնալություն	0.407 ***
Ce/Cw – Հաղորդակցման արտաքին / ներքին կողմնորոշ-վածություն	-0.365 ***
Ae/Aw – Աֆեկտիվ էքստերնալություն / Աֆեկտիվ ինտերնալություն	0.368 ***
Ֆիզիկական ագրեսիա	0.450 ***
Խոսքային ագրեսիա	0.599 ***
Անուղղակի ագրեսիա	0.303 **
Նյարդայնություն	0.512 ***
Կասկածամտություն	0.443 ***
Վիրավորանք	0.365 ***
Մեղքի զգացում	-0.487 ****

Աբյուզինգի և Ce/Cw – հաղորդակցման արտաքին / ներքին կողմնորոշվածության միջև բացասական կապը (ρ = -0.365***) վկայում է, որ աբյուզիվ կանայք հաճախ խուսափում են բաց խոսակցություններից: Հուզական պահանջների չարտահայտված լինելը բերում է ներքին լարվածության, որն արտահայտվում է անուղղակի աբյուզիվ վարքով՝ անտեսում, մերժում, մանիպուլյացիա:

Աբյուզինգի և Ae/Aw – աֆեկտիվ էքստերնալություն / աֆեկտիվ ինտերնալության միջև կապը դրական է (ρ = 0.368***), ինչը ցույց է տալիս, որ կանայք, ովքեր իրենց հույզերը արտահայտում են անմիջականորեն, հաճախ դժվարանում են զսպել հուզական բռնկումները:

Աբյուզինգի և ֆիզիկական ագրեսիայի կապը (ρ = 0.450***) ցույց է տալիս, որ կանանց մոտ նույնպես առկա է ֆիզիկական բռնության գործոնը, թեև այն հաճախ ոչ այնքան ինտենսիվ է, որքան տղամարդկանց մոտ: Այնուամենայնիվ, կենցաղային կոնֆլիկտներում կնոջ ֆիզիկական ագրեսիան ծառայում է որպես հուզական լարվածության արտահայտման միջոց և դառնում է աբյուզի բաղկացուցիչ:

Աբյուզինգի և խոսքային ագրեսիայի միջև կապը բարձր է (ρ =

[4] * – p ≤ 0.05 ** – p ≤ 0.01 *** – p ≤ 0.001

0.599***): Խոսքը այս պարագայում դառնում է հիմնական «զենքը»՝ զուգընկերոջ վրա վերահսկողություն հաստատելու համար: Վիրավորական արտահայտությունները, նվաստացնող խոսքերը կամ մշտական քննադատությունը նվազեցնում են զուգընկերոջ ինքնագնահատականը և ձևավորում կախվածության դինամիկա:

Աբյուզինգի և անուղղակի ագրեսիայի միջև կապը թույլ դրական է (ρ = 0.303**), ինչը ցույց է տալիս, որ կանանց մոտ աբյուզիվ վարքը հաճախ կարող է արտահայտվել ոչ թե բացահայտ հարձակումներով, այլ թաքնված ձևերով: Անուղղակի ագրեսիան դրսևորվում է սարկազմով, քմծիծաղով, ցուցադրական անտեսմամբ կամ «լռությամբ պատժելով»:

Աբյուզինգի և նյարդայնության միջև կապը բարձր է (ρ = 0.512***), քանի որ աբյուզիվ կանայք ունեն ցածր հուզական կայունություն: Նյարդային լարվածությունը և գրգռվածությունը հաճախ վերածվում են աբյուզիվ վարքի՝ չհանդուրժելով նույնիսկ փոքր վեճերը:

Աբյուզինգի և կասկածամտության միջև կապը դրական է (ρ = 0.443***): Կասկածամիտ կանայք հակված են անվստահության, վերահսկողության և մշտական մեղադրանքների: Կասկածի զգացումը բխում է սեփական խոցելիությունից և հարաբերության կորստի վախից, սակայն արտահայտվում է աբյուզիվ ձևով՝ հարցաքննություններով, ճնշումով և անվստահությամբ:

Աբյուզինգի և վիրավորանքի կապը (ρ = 0.365***) ցույց է տալիս, որ կանայք, ովքեր հեշտությամբ վիրավորվում են, հակված են այդ զգացումը վերածել աբյուզիվ վարքի: Վիրավորանքի հիմքում հաճախ ընկած է ինքնագնահատականի անկայունությունը. նույնիսկ փոքր դիտողությունը ընկալվում է որպես մեծ հարձակում:

Վերջապես, աբյուզինգի և մեղքի զգացման միջև ստացվել է ուժեղ բացասական կապ (ρ = -0.487***): Սա ցույց է տալիս, որ աբյուզիվ կանայք, ինչպես նաև տղամարդիկ, քիչ են զգում մեղավորություն իրենց վարքի համար: Մեղքի զգացման պակասը պայմանավորված է էմպատիայի ցածր մակարդակով. երբ չկա ուրիշի ապրումները ըմբռնելու կարողություն, հեշտ է արդարացնել աբյուզիվ վարքը:

Արդյունքները ցույց են տալիս, որ աբյուզիվ վարքը երկու սեռերի մոտ էլ ձևավորվում է հուզական անկայունության, վերահսկողության ձգտման և անվստահության համակցությամբ: Տղամարդկանց մոտ այն առավել հաճախ դրսևորվում է ֆիզիկական և ուղիղ խոսքային ագրեսիայի միջոցով, իսկ կանանց մոտ՝ խոսքային և անուղղակի ագրեսիայի ձևով: Աբյուզինգի և խանդի բարձր փոխկապակցվածությունը վկայում է հարաբերություններում տիրապետելու և կորստից վախի դինամիկայի մասին:

Ընդհանուր առմամբ, աբյուզիվ վարքը հիմնված է ներքին անհանգստության, ինքնագնահատականի անկայունության և հուզական ինքնակարգավորման պակասի վրա, որոնք տարբեր ձևերով դրսևորվում են տղամարդկանց և կանանց մոտ:

Եզրակացություն

Վերլուծելով արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ աբյուզիվ վարքը ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց շրջանում կապված է վերահսկողության, կասկածամտության, նյարդայնության և հույզերի կարգավորման դժվարությունների հետ: Տարբերությունն այն է, որ տղամարդկանց աբյուզը հաճախ ուղղակի է՝ ներառում է ֆիզիկական, բանավոր և հուզական ագրեսիվ դրսևորումներ, իսկ կանանց մոտ ավելի հաճախ նկատվում է անուղղակի կամ թաքնված ագրեսիա՝ օրինակ՝ մանիպուլյացիա, լռությամբ պատժում կամ վիրավորանքներ:

Տղամարդիկ հույզերն արտահայտում են անմիջապես, ինչը կարող է հանգեցնել կոնֆլիկտային և պայթունային իրավիճակների, մինչդեռ կանայք հույզերն ավելի հաճախ պահում են ներսում, ինչը առաջացնում է լարվածության կուտակում և հնարավոր անսպասելի արձագանքներ: Խանդը տղամարդկանց մոտ հաճախ ծառայում է վերահսկողության գործիք, իսկ կանանց մոտ արտահայտում է կորստի վախն ու հարաբերության կայունության ձգտումը: Մեղքի զգացման ցածր մակարդակը երկու սեռերի դեպքում նպաստում է սեփական վարքի արդարացմանը և աբյուզիվ դինամիկայի պահպանմանը, սակայն կանանց մոտ այն ավելի շոշափելի է հարաբերության հոգեբանական առումով, քանի որ նրանք հակված են ներքին լարվածությունը թաքցնել և կիրառել անուղղակի ռազմավարություններ:

Ընդհանուր առմամբ, տղամարդկանց և կանանց աբյուզիվ վարքագծերը ունեն ընդհանուր հիմք՝ կապված հուզական և հոգեբանական գործոնների հետ, սակայն դրսևորումների ձևն ու ռազմավարությունները տարբեր են՝ պայմանավորված սեռով և անհատի միջանձնային, հուզական, ինչպես նաև հոգեբանական հատկություններով:

Գրականություն

1. Анатольевна Р. С., Ивановна М. Е. Абьюз от А до Я (токсичные отношения, агрессия, жестокость и насилие в семье), Перо 2024, 608 с.
2. Владимирович В. М. Выйти из абьюза и остаться в живых, Издательство АСТ, 170 с.
3. Силяевой Е. Г. Психология семейных отношений с основами семейного консультирования. / Под ред. 3-е изд., стереотип, Москва: Академия, 2005, 156 с.
4. Туник Е. Психодиагностика супружеских отношений. Санкт-Петербург: Питер, 2014, 96 с.
5. Осипова А. А. Общая психокоррекция. Учебное пособие, Москва: Сфера, 2007, 423 с.

Էլեկտրոնային հղումներ

6. https://www.forbes.ru/forbes-woman/464825-strah-v-ozidanii-medovogo-mesaca-cto-takoe-ab-uz-i-kak-ego-raspoznat
7. https://www.krasotaimedicina.ru/diseases/psychiatric/relational-aggression
8. https://goo.su/KtaaI
9. https://testoteka.narod.ru/mlo/1/18.html
10. http://loveread.ec/read_book.php?id=80537&p=8
11. https://www.nekrasovspb.ru/doc/18bassdarki %D0 %B8.pdf

Особенности проявления насилия в супружеских отношениях

Мхитарян Милена
Факультет социальных наук,
“Психология личности и психологическое консультирование”,
руководитель магистерской диссертации:
кандидат психологических наук, доцент Г. Авагимян

Резюме

Ключевые слова: *супружеские отношения, абьюзивное поведение, агрессия, ревность, самооценка*

В статье представлены особенности проявления абьюзинга в супружеских отношениях и индивидуально-эмоциональные факторы, влияющие на него. В исследовании приняли участие 60 супружеских пар. Исследование проводилось с использованием методик оценки абьюзивного поведения, ревности, межличностных отношений и агрессии. Результаты показывают, что существуют статистически значимые различия между средними показателями мужчин и женщин, отражающими гендерные особенности проявления абьюзивного поведения.

Characteristics of Violence in Marital Relationships

Mkhitaryan Milena
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Psychological Counseling"
Academic Supervisor: H. Avagimyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *marital relationships, abusive behavior, aggression, jealousy, self-esteem*

The article presents the characteristics of abuse in marital relationships and the individual and emotional factors that influence it. The study included 60 married couples, using methods for assessing abusive behavior, jealousy, interpersonal relationships, and aggression. The results show that there are statistically significant differences between the average indicators of men and women, which reflect the gender characteristics of the manifestation of abusive behavior.

Արտթերապիայի պրակտիկ կիրառումը տագնապայնության բարձր մակարդակ ունեցող կրտսեր դպրոցականների հետ

Ներսիսյան Սուսաննա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանության և հոգեբանական խորհրդատվության»,
մագիստրոսական թեզտ ղեկավար
հ. գ. թ., դոցենտ Ն. Կոստանդյան

Հանգուցային բառեր. *կրտսեր դպրոցական, տագնապայնություն, տագնապ, արտ թերապիա*

Նախաբան

Արտթերապիան հոգեթերապևտիկ միջամտության ձև է, որի ընթացքում արվեստը կիրառվում է որպես ապաքինող գործոն: Ընդ որում՝ այն կարող է կիրառվել որպես առանձին թերապևտիկ ուղղություն, ինչպես նաև որպես մեթոդ այլ ուղղություններում: Մանկական հոգեթերապիայում նույնպես արտթերապիան կարող է լինել և՛ որպես առանձին թերապևտիկ ուղղություն, և՛ որպես հոգեթերապևտիկ այլ միջամտությունների կողքին երեխայի հետ աշխատանքի միջոց: Արտթերապիան կարող է հաջողությամբ կիրառվել, քանի որ այն խաղի պես թույլ է տալիս երեխային, շրջանցելով գիտակցման ցավոտ կետերը, հասնել թերապևտիկ արդյունքի: Ինչպես և խաղը, արվեստը կարող է երեխայի համար փոխարինել բառերին. այն թույլ է տալիս երեխային արտահայտել իր ներաշխարհը, ապրումները, տագնապները, բացասական հույզերը: Արվեստի օգնությամբ արտահայտված ենթագիտակցական, ճնշված, չգիտակցված նյութը կարող է շրջանցել դիմադրությունը, պաշտպանական մեխանիզմները և դուրս գալ արտաքին աշխարհ: Երեխայի համար ստեղծագործելը նույնքան բնական է, որքան և խաղը: Հոգեթերապևտիկ սենյակում ստեղծվում են երեխայի ինքնարտահայտման լայն հնարավորություններ՝ անկախ նրա կարողություններից, ընդունակություններից: Ստեղծագործելով երեխան կիսում է իր մտքերն ու զգացմունքները, կանոնավորում իր ներաշխարհը, ճանաչում արտաքին աշխարհը, կարողանում է շոշափել որոշակի ձևեր իր քառսային ներաշխարհում: Հոգեթերապևտը խրախուսում և քաջալերում է երեխայի արտահայտչական և ստեղծագործական գործընթացը, նա երբևիցե չի գնահատում և քննադատում երեխայի ստեղծագործական ընդունակությունները: Հոգեթերապևտը նպաստում է, որ երեխան տարբեր միջոցներով՝ նկարչություն, ծեփակերտում, խմորով աշխա-

տանք և այլն, կարողանա խոսել իր ներքին անհանգստություններից, խնդիրներից, ապրումներից: Արտթերապևտիկ մեթոդները հաջողությամբ կիրառվում են տարբեր խնդիրների դեպքում: Արտթերապևտիկ հնարներ կիրառելիս հոգեթերապևտն ուշադրությունը կենտրոնացնում է թե՛ ստեղծագործական ընթացքի, թե՛ վերջնական արդյունքի վրա, ընդ որում՝ այն կարող է կրել բավականին խորհրդանշական բնույթ, ինչը նույնպես կարևոր է հոգեթերապևտի համար [4]: Հոգեթերապևտիկ պրոցեսում արտթերապիան կարող է ունենալ հետևյալ նպատակները.

- ախտորոշում,
- զարգացում,
- կատարսիս,
- ինքնադրսևորում, լիցքաթափում:

Ըստ Գ. Լենդրեթի՝ գեղարվեստական ընթացքի մեկնաբանությունը կարելի է համեմատել «աչքերով լսել» արտահայտության հետ [9]: Իրոք, արվեստը կարող է «բացել» թերապևտի, երբեմն նաև երեխայի աչքերը նրա անձնային և ընտանեկան խնդիրների վրա նոր տեղեկույթի բացահայտման գործում: Առավել խորքային հասկացման հասնելու համար թերապևտը պետք է կիրառի մեկնաբանությունների երեք ասպարեզ՝ ընթացքը, ձևը, բովանդակությունը [3]: Ժամանակակից արտթերապիան գործնական հոգեբանական աշխատանքի արագ զարգացող և խոստումնալից ոլորտ է, որը ներառում է ստեղծագործական գործունեության, այդ թվում՝ տեսողական արվեստների օգտագործման վրա հիմնված մոտեցումների լայն տեսականի [8]:

Հոգեբանները, բժիշկները, սոցիալական աշխատողները և նկարիչները ակտիվորեն օգտագործում են արտթերապիայի տեխնիկաները: Արտթերապիայի մոտեցման կիրառման շրջանակը հոգեբանության և մանկավարժության մեջ անընդհատ ընդլայնվում է արտթերապիայի բազմաֆունկցիոնալության և լայն ներուժի շնորհիվ: Արտթերապիայի տեխնոլոգիաները հատկապես լայն տարածում են գտել տարբեր տարիքի երեխաների հետ աշխատանքում, այդ թվում՝ տարբեր հոգեբանական խնդիրներ ունեցող մարդկանց հետ [7]:

Հասանելի գրականության համաձայն՝ տագնապայնությունը կրտսեր դպրոցականների համար լուրջ հոգեբանական խնդիրներից մեկն է: Ֆ. Բ. Բերեզինան տագնապայնությունը դիտարկում է որպես բարդ, փոխկապակցված վիճակ՝ բազմազան դրսևորումներով: Նա նկարագրում է այսպես կոչված տագնապային շարքը, որը ներառում է մի քանի աֆեկտիվ երևույթներ, որոնք հաջորդում են միմյանց որոշակի հաջորդականությամբ՝ տագնապի աճին զուգընթաց.

- ներքին լարվածության զգացում,
- հիպերեստեզիայի ռեակցիաներ,
- անհանգստությունն ինքնին որպես այս շարքի կենտրոնական տարր,
- վախ,
- մոտալուտ աղետի անխուսափելիության զգացում և տագնապային-վախեցնող գրգռում [2]:

Հոգեբանների կարծիքով՝ սուբյեկտի անհանգստության մակարդակը պետք է միշտ համապատասխանի իրավիճակի պահանջներին: Անհամապատասխան ուժգնությամբ և տևողությամբ անհանգստությունը խաթարում է անհատի հարմարվողական վարքագիծը՝ հանգեցնելով սթրեսի կուտակմանը, դրա հաճախակիացմանը և հոգեսոմատիկ խանգարումների զարգացմանը [6]:

Այս վիճակը խանգարում է կենտրոնացմանը և ակադեմիական կարողությունների զարգացմանը՝ այդպիսով ամբողջությամբ խաթարելով ակադեմիական գործունեությունը:

Պետք է նշել, որ կրտսեր դպրոցականների հիմնական բնութագրիչներից մեկը ակադեմիական գործունեության և դպրոցական ուսումնական միջավայրի բարձր նշանակությունն է: Այսպիսով, Ա. Ա. Ալխազիշվիլիի և Ն. Վ. Իմեդաձեի կողմից մոտ 40 տարի առաջ անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ փորձարարական դասարանների երեխաների մոտ ուսումնական ակտիվության մակարդակը, որտեղ կրթությունը ուղղված էր ներքին ուսումնական դրդապատճառների զարգացմանը, զգալիորեն ցածր էր, քան ստուգիչ խմբերում, որտեղ աշակերտների վրա գերակշռում էին արտաքին սոցիալական դրդապատճառները [1]:

Գ. Միլլերը դասակարգել է 7-12 տարեկան երեխաների վախերը՝ դրանք կրճատելով չորս հիմնականի՝ ֆիզիկական վնասվածքի և բաժանման վախ, բնական երևույթների, կենդանիների և այլնի վախ, սոցիալական անհանգստություն և խառը խումբ [5-ական]: Նմանատիպ աշխատանք է կատարել Տ. Ն. Վասիլևան՝ ռուսական տարրական դպրոցի երեխաների նմուշի վրա: Նրա տվյալների համաձայն՝ այս տարիքային խմբում առաջատար վախը մահվան վախն է, որին նվազման կարգով հաջորդում են տարերքի վախը և պատժի վախը: Երեխաները իրենց դպրոցական անհաջողությունը և վատ գնահատականները համարում են պատժի պատճառ: Ոմանք վախենում են միայն ծնողների դժգոհությունից, իսկ մյուսները՝ իրական ֆիզիկական պատժից: Նշվում է նաև պահանջները չկատարելու վախը, ինչը ցույց է տալիս սոցիալական ակտի-

վության կարևորությունը և պատասխանատվության, պարտականության և պարտավորության զգացողության ամրապնդումը [5]:

Ա. Մ. Պրիխոժանը պարզել է, որ տարբեր տարիներին անհանգստության գագաթնակետերը ցույց են տալիս այն կարիքները, որոնց բավարարումը ամենակարևորն է երեխաների բարեկեցության համար: Հեղինակի տվյալների համաձայն՝ 1990-ականների վերջին բոլոր տարիքի դպրոցականների շրջանում վախերի թվի աճ է գրանցվել՝ համեմատած 1970-ական և 1980-ական թվականների հետ, երբ դասական վախերը տարբեր ժամանակներում ի հայտ էին գալիս աղջիկների (10-11 տարեկան) և տղաների (12-13 տարեկան) մոտ [10]:

Ժամանակակից դպրոցականների մոտ դպրոցական վախերը դարձել են ավելի բազմազան բովանդակությամբ: «Հնացած» (բարձրությունից, մթությունից, արյունից, որոշակի կենդանիներից և այլն վախ) և «կախարդական» վախերի ծանրությունը մեծանում է:

Վերոնշյալ ուսումնասիրությունները, որոնք կատարվել են տարբեր հեղինակների կողմից, մեզ հանգեցնում են այն եզրակացության, որ կրտսեր դպրոցականների մոտ տագնապայնության խնդիրը շարունակում է բավականին արդիական մնալ: Հետևաբար, մենք որոշեցինք մեր աշխատանքում անդրադառնալ այս հարցին՝ օգտագործելով արտթերապիայի մոտեցում: Ուսումնասիրության նպատակն էր ուսումնասիրել խմբային արտթերապիայի ներուժը տարրական դպրոցի երեխաների մոտ տագնապայնության նվազեցման համար:

Հետազոտության մեթոդիկաների և ընտրակազմի նկարագրություն: Հետազոտության կատարման համար ընտրվել են հետևյալ մեթոդիկաները՝

Տագնապայնությունը գնահատելու համար օգտագործվել է հետևյալ մեթոդական գործիքը՝ Թեմփլ Դորկի «Ընտրիր ճիշտ դեմքը» պրոյեկտիվ տագնապայնության թեստը, որ նախատեսված է կյանքի բնորոշ իրավիճակներում 4-10 տարեկան երեխաների բնորոշ տագնապայնությունը գնահատելու համար: Այս մեթոդը կարող է ծառայել ոչ միայն որպես երեխայի ընդհանուր հուզական վիճակի ցուցիչ, այլև օգնել բացահայտելու տագնապի աղբյուրը: Տագնապայնությունը նվազեցնելու նպատակով կիրառվել է «Փխրուն վախեր» մեթոդը [11]:

Հետազոտությունն անցկացվել է Դեբեդի դպրոցում, որի համար ընտրվել են 50 հոգի՝ 30 տղա և 20 աղջիկ կրտսեր դպրոցականներ:

Արդյունքների վերլուծություն: Փորձարարական հետազոտությունն անցկացվել է երկու փուլով: Առաջին փուլում կրտսեր դպրոցականներին ցուցադրվել են նկարներ, որոնց մեջ նրանք ընտրել են հերոսի դեմքը՝

պարզելու համար նրանց տագնապայնության մակարդակը: Ստացված պատկերը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Կրտսեր դպրոցականների տագնապայնության մակարդակը

Մասնակից (տղա)	***Տոկոս***	***Մասնակից (աղջիկ)***	***Տոկոս***
1	14 %	1	21 %
2	50 %	2	50 %
3	42 %	3	50 %
4	42 %	4	57 %
5	50 %	5	57 %
6	42 %	6	42 %
7	42 %	7	42 %
8	42 %	8	35 %
9	42 %	9	63 %
10	7 %	10	42 %
11	21 %	11	42 %
12	28 %	12	56 %
13	56 %	13	50 %
14	63 %	14	42 %
15	50 %	15	42 %
16	50 %	16	56 %
17	70 %	17	50 %
18	56 %	18	42 %
19	21 %	19	28 %
20	35 %	20	42 %
21	56 %		
22	50 %		
23	42 %		
24	50 %		
25	7 %		
26	42 %		
27	42 %		
28	50 %		
29	42 %		
30	42 %		

Հետազոտությունից պարզ դարձավ, որ 50 հետազոտվողներից 10-ը ունեն միջինից բարձր տագնապայնության մակարդակ (50 % և ավել), 11-ը ունի տագնապայնության միջին մակարդակ (50 %), իսկ 29-ը՝ միջինից ցածր տագնապայնության մակարդակ (50 %-ից ցածր):

Երկրորդ փուլում 10 (տագնապայնության միջինից բարձր մակարդակ ունեցող) հետազոտվողների հետ խմբային աշխատանքի միջոցով անց է կացվել «Փխրուն վախեր» արտթերապևտիկ մեթոդը:

Մեթոդի կիրառումից հետո կրկին չափվել է սովորողների տագնապայնության մակարդակը:

Աղյուսակ 2

Դեռահասների տագնապայնության արտահայտվածության մակարդակը մեթոդի կիրառումից հետո

Աղջիկ	***Տոկոսը առաջ***	***Տոկոսը հետո***	***Տղա***	***Տոկոսը առաջ***	***Տոկոսը հետո***
1	57 %	56 %	1	56 %	50 %
2	57 %	50 %	2	63 %	56 %
3	63 %	50 %	3	70 %	50 %
4	56 %	56 %	4	56 %	56 %
5	56 %	50 %	5	56 %	56 %

Եզրակացություն

Տեսական հետազոտությունների և փորձարարական հետազոտության արդյունքների քանակական և որակական վերլուծությունը հնարավորություն է տալիս կատարելու հետևյալ եզրահանգումը. մեր կողմից ուսումնասիրված երևույթը՝ տագնապայնությանը, նվազում է կրտսեր դպրոցականների մոտ, երբ կիրառում ենք արտթերապևտիկ մեթոդներ:

Գրականություն

1. Алхазишвили А. А., Имедадзе Н. В. Исследование уровня тревожности в экспериментальном и обычном классах. Экспериментальные исследования по проблемам перестройки начального обучения. Тбилиси, 1969.
2. Березин В. Ф. Психическая адаптация и тревога. Психические состояния. Хрестоматия. Санкт-Петербург: Питер, 2000, с. 219-229.
3. Бремс К. Полное руководство по детской психотерапии, Москва: ЭКСМО Пресс, 2002, 640 с.
4. Бурно Б. Терапия творческим самовыражением, Москва: Академический проект, 1999, 364 стр.
5. Васильева Т. Н. Психологическая и социологическая служба в школе. Чего боятся младшие школьники? Образование, 2001. № 6.
6. Исаев Д. Н. Эмоциональный стресс, психосоматические и соматопсихические расстройства у детей. Санкт-Петербург: Речь, 2005.
7. Киселёва М. В. Арт-терапия в работе с детьми. Санкт-Петербург: Речь, 2006.
8. Копытин А. И. Теория и практика арт-терапии. Санкт-Петербург: Питер, 2002.
9. Лэндрет Г. Игровая терапия: искусство отношений, Москва: Институт практической психологии, 1998, 368 стр.
10. Прихожан А. М. Тревожность у детей и подростков: психологическая природа и возрастная динамика. Москва, Воронеж: ЮНИТИ, 2000.
11. https://nacedu.by/assets/files/tehniki-art-terapii-dlya-raboty-s-detskimi-strahami-i-trevogoj(1).pdf

Практическое применение арт-терапии с младшими школьниками с высоким уровнем тревожности

Нерсисян Сусанна
Факультет социальных наук,
«Школьная педагогика и методика»,
руководитель магистерской диссертации:
кандидат психологических наук, доцент Н. Костандян

Резюме

Ключевые слова: *младший школьник, тревожность, тревога, арт-терапия*

Арт-терапия – это форма психотерапевтического вмешательства, в которой искусство используется как исцеляющий фактор. При этом она может применяться как отдельное терапевтическое направление, а также как метод в других направлениях. В статье представлено влияние практического применения арт-терапии на младших школьников с высоким уровнем тревожности.

Practical Application of Art Therapy with Younger Schoolchildren with High Levels of Anxiety

Nersisyan Susanna
Faculty of Social Sciences,
"School Pedagogy and Methodology"
Academic Supervisor: N. Kostandyan
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *primary school student, anxiety, worry, art therapy*

Art therapy is a form of psychotherapeutic intervention in which art is used as a healing factor. It can be used as a separate therapeutic direction, as well as a method in other directions. The article presents the influence of the practical application of art therapy on younger schoolchildren with a high level of anxiety.

Աշխատանքային նախաձեռնողականության և աշխատակազմի հոգեբանական մթնոլորտի միջև փոխկապվածությունը

Մարգսյան Գոհար
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Վ. Միրզոյան

Հանգուցային բառեր. *աշխատանք, աշխատակազմ, հոգեբանական մթնոլորտ, նախաձեռնողականություն*

Ներկա ժամանակներում աշխատանքի հոգեբանությունը համարվում է հոգեբանության անկախ ճյուղ, որը թույլ է տալիս առավելագույն արդյունավետությամբ օգտագործել մարդու աշխատանքը՝ հաշվի առնելով նրա անհատական առանձնահատկությունները: Աշխատանքի հոգեբանությունը կենտրոնացած է անձի և նրա շահերի վրա, արտադրության կորուստները նվազագույնի հասցնելու և աշխատանքային գործունեության օպտիմալացման վրա: Աշխատանքային հարաբերություններն ու աշխատակիցների նախաձեռնողականությունը ուղղակիորեն ազդում են աշխատանքի արդյունավետության և աշխատավայրում մարդու հուզական հարմարավետության վրա:

Սույն հետազոտության նպատակն է բացահայտել աշխատակիցների նախաձեռնողականության և աշխատանքային կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի միջև փոխկապվածությունը:

Հոդվածի արդիականությունը այն է, որ այն դեպքերում, երբ աշխատավայրում մասնագետները բախվում են սեփական նախաձեռնողականության սահմանափակումների հետ, կոլեկտիվում առաջանում է բացասական հոգեբանական մթնոլորտ, ինչն էլ մի կողմից նվազեցնում է աշխատանքի արդյունավետությունը, մյուս կողմից՝ վատթարացնում աշխատակիցների հոգեբանական վիճակը:

Հոգեբանական մթնոլորտը հույզերի բնութագրումն է, որոնք առաջանում են մարդկանց հետ հարաբերություններում՝ հիմնված նրանց համակրանքների, հետաքրքրությունների, նախասիրությունների և հակումների համընկնման վրա: Սոցիալ-հոգեբանական մթնոլորտը կազմակերպության ներսում ձևավորվող համախմբված հոգեբանական վիճակների, վերաբերմունքի և փոխհարաբերությունների համակարգն է, որը բնութագրում է աշխատակիցների միջև սոցիալական փոխազդեցության որակը,

համագործակցության մակարդակը և ընդհանուր հուզական ֆոնը: Հոգեբանական մթնոլորտը ներառում է երեք ոլորտներ.

- սոցիալական միջավայր՝ բոլոր մասնակիցների նպատակների և խնդիրների գիտակցում, իրավունքների և պարտականությունների պահպանում,
- բարոյական մթնոլորտ՝ խմբում ընդունված արժեքների միասնությունը, ընդունումը, հետևողականությունը,
- հոգեբանական մթնոլորտ՝ ոչ ֆորմալ հարաբերությունները թիմում [1]:

Առաջին անգամ «հոգեբանական մթնոլորտ» եզրույթն օգտագործել է Ն. Ս. Մանսուրովը՝ արտադրական խմբի ուսումնասիրության համատեքստում: Որոշ ժամանակ անց հոգեբանները սկսեցին տարբերակել սոցիալ-հոգեբանական և բարոյահոգեբանական մթնոլորտ հասկացությունները:

Գոյություն ունեն թիմում հոգեբանական մթնոլորտն ուսումնասիրելու չորս մոտեցումներ.

- մթնոլորտը թիմի հավաքական գիտակցությունն է: Հասարակության յուրաքանչյուր անդամի կողմից թիմում փոխհարաբերությունների, աշխատանքային պայմանների, դրանք խթանելու մեթոդների իրազեկում,
- մթնոլորտը թիմի տրամադրությունն է: Այսինքն՝ առաջատար դերը վերապահված է ոչ թե գիտակցությանը, այլ հույզերին,
- մթնոլորտը մարդկային փոխազդեցության ոճ է, որն ազդում է նրանց հարաբերությունների վրա,
- մթնոլորտը ցուցիչ է խմբի անդամների համատեղելիության, նրա անդամների բարոյահոգեբանական միասնության, ընդհանուր կարծիքների, ավանդույթների և սովորույթների առկայության [1]:

Հոգեբանական մթնոլորտի՝ որպես երևույթի առանձնահատկությունն այն է, որ այն ստեղծվում է հենց անձի կողմից, ով կարողանում է ազդել մթնոլորտի վրա, բարելավել ու փոխել այն:

Հոգեբանական մթնոլորտը կարող է լինել բարենպաստ և անբարենպաստ: Բարենպաստ հոգեբանական մթնոլորտը բնութագրվում է միմյանց նկատմամբ աշխատակիցների բարեկամական վերաբերմունքով, ընկերասիրությամբ, փոխադարձ խստապահանջությամբ, որն էլ որոշում է ստեղծագործական արդյունավետ գործունեությունը, փոխադարձ օգնությունը, ուրախությունը հաղորդակցությունից և հաղորդակցման բացությունից, անվտանգությունը և հարմարավետությունը, լավատեսությունը, վստահությունը սեփական անձի և թիմի նկատմամբ, ազատ և

ստեղծագործ մտածելու, սեփական ներուժը բացահայտելու և իրացնելու հնարավորությունները:

Անբարենպաստ կամ անառողջ մթնոլորտը ներառում է հակառակ բնութագրերը. հոռետեսություն, անվստահություն և անհարգալից վերաբերմունք, սառնություն և գաղտնիություն հարաբերություններում, անձնական ներուժի զսպում, դյուրագրգռություն, լարվածություն և հակամարտություն, անորոշություն, թյուրիմացություն, սխալի, պատժի և մերժման վախ, կասկածանք:

«Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատման» ուղեցույցում նշվում է, որ հոգեբանական առողջ մթնոլորտը բարձրացնում է արտադրողականությունը և աշխատուժի արդյունավետությունը: Անբարենպաստ մթնոլորտն առաջացնում է անվտանգության հաճախակի միջադեպեր և նվազեցնում արտադրողականությունը 20 %-ով [1]:

Առողջ մթնոլորտը բավարարում է աշխատակիցների պահանջմունքները և համահունչ է հասարակության նորմերին ու արժեքներին:

Հոգեբանական մթնոլորտի ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեն ղեկավարի անհատական առանձնահատկությունները: Պետք է ուշադրություն դարձնել նրա անձնական որակներին, վերաբերմունքին այլ աշխատակիցների նկատմամբ, հեղինակությանը, ղեկավարման ոճին: Դրական մթնոլորտ է ստեղծվում ղեկավարի կողմից, ով սկզբունքային է, պատասխանատու, ակտիվ, կարգապահ, բարի, արձագանքող և շփվող, ունի կազմակերպչական հմտություններ: Կոպտությունը, եսասիրությունը, անհամապատասխանությունը, անհարգալից վերաբերմունքը և կարիերիզմը բացասաբար են ազդում մթնոլորտի առողջության վրա:

Բարենպաստ հոգեբանական մթնոլորտ ձևավորվում է այն ժամանակ, երբ մասնակիցները հստակ տեսնում են թիմային նպատակները, հասկանում և ընդունում դրանք: Որքան բարձր է թիմի զարգացման մակարդակը, այնքան բարենպաստ է մթնոլորտը: Սակայն նույնիսկ թիմի հոգեբանական զարգացման ցածր մակարդակի դեպքում կարող է բարենպաստ մթնոլորտ ձևավորվել, եթե պահպանվում են աշխատակիցների մոտիվների, հետաքրքրությունների, համոզմունքների, իդեալների, վերաբերմունքի, պահանջմունքների միասնությունը և ճիշտ համատեղում նրանց անհատական հատկանիշները:

Բարենպաստ հոգեբանական մթնոլորտ ինքնին չի կարող առաջանալ: Սա ամբողջ թիմի լավ համակարգված և քրտնաջան աշխատանքի, ղեկավարի իրավասու կազմակերպչական գործունեության արդյունք է: Պետք է նպատակաուղղված աշխատանք տարվի բարենպաստ մթնոլորտ

ստեղծելու համար: Սա պատասխանատու և ստեղծագործ մոտեցում է, որը ներառում է մարդկանց հոգեբանության իմացություն, հարաբերություններում հավանական իրավիճակները կանխատեսելու, հույզերը և դրանց կարգավորումը հասկանալու կարողություն: Բարենպաստ մթնոլորտի ստեղծումը սկսվում է յուրաքանչյուր անհատի փոփոխությունից: Որպեսզի միջանձնային հարաբերությունները բարենպաստ զարգանան, անհրաժեշտ է աշխատել սեփական բացասական բնավորության գծերի վրա, ձևավորել դրական բարոյական հատկություններ (մարդկանց նկատմամբ հարգանք, նրանց արժանապատվության և պատվի ճանաչում, ուշադրություն, այլ մարդկանց համոզմունքների և շահերի ճանաչում, վստահություն, քաղաքավարության և վարքագծի կանոնների պահպանում, օբյեկտիվ գնահատական և ինքնագնահատական, տակտի զգացում, օգտագործել քաղաքավարի բառեր և արտահայտություններ, պահպանել էթիկետը, մշակել հուզական և մտավոր ինքնակարգավորման սեփական մեթոդները (անհրաժեշտ է գրգռվածության, վրդովմունքի, այրման, նյարդայնության, զայրույթի, հոգնածության, հուզմունքի, ապատիայի կանխարգելման և վերացման համար), իմանալ կոնֆլիկտային իրավիճակներում վարքագծի ռազմավարությունները, կարողանալ գրագետ լուծել դրանք, խուսափել դատողությունների և վարքագծի ծայրահեղությունից, եսակենտրոնությունից, բարձր ակնկալիքներից: Թիմի յուրաքանչյուր անդամ յուրովի պետք է լինի արժեքավոր, եզակի և դրական, իսկ խմբի պայմաններում պետք է լրացնեն միմյանց, չխանգարեն կամ մյուսներին թողնեն ստվերում [2]:

Աշխատանքային նախաձեռնողականությունը և սոցիալ-հոգեբանական մթնոլորտը համարվում են փոխազդող և փոխլրացնող կազմակերպչական երևույթներ: Բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտը խթանում է աշխատակիցների նախաձեռնողականությունը, իսկ նախաձեռնողական վարքը նպաստում է այդ մթնոլորտի դրական փոխհարաբերությունների պահպանմանը և զարգացմանը:

Հոգեբանները տարբերակում են պատասխանատու և անպատասխանատու նախաձեռնողականություններ: Առաջինը ուժեղ ինտելեկտի և զարգացման բարձր մակարդակի նշան է, ներառյալ մասնագիտական զարգացումը: Իսկ վերջինն ավելի շատ վկայում է իրական գործողությունների նկատմամբ պատասխանատվություն կրելու անկարողության մասին [4]:

Աշխատակազմի հոգեբանական մթնոլորտի և աշխատակիցների նախաձեռնողականության միջև կապի ուսումնասիրության համար իրականացրել ենք հետազոտություն: Հետազոտությանը մասնակցել են 30

հետազոտվողներ, որոնցից 15-ը Ագարակի միջնակարգ դպրոցի ուսուցիչներն էին, մյուս 15-ը՝ Ստեփանավանի «Շող» կենտրոնի աշխատակիցները:

Աշխատակազմի հոգեբանական մթնոլորտի ուսումնասիրման համար կիրառվել է Ա. Ֆ. Ֆիդլերի մեթոդիկան: Նախաձեռնողականության ուսումնասիրման համար կիրառվել է Վեքսլերի ինտելեկտի սանդղակի (1974) 9-րդ ենթաթեստին համապատասխանող նախաձեռնողականության հարցարանը [1; 3]:

Ա. Ֆ. Ֆիդլերի «Աշխատակազմի հոգեբանական մթնոլորտի ուսումնասիրման» մեթոդիկայի արդյունքները ներկայացված են տրամագիր 1-ում:



Տրամագիր 1. Հոգեբանական մթնոլորտը թիմում

«Շող» կենտրոնի աշխատակիցների մոտ նկատելի է առավել դրական հոգեբանական մթնոլորտ, քան դպրոցի աշխատակիցների մոտ:

Իրականացնելով նախաձեռնողականության հարցարանը՝ ստացանք հետևյալ արդյունքները (տրամագիր 2).



Տրամագիր 2. Նախաձեռնողականության մակարդակը դպրոցում և «Շող» կենտրոնում

Այսպիսով, ինչպես երևում է վերոնշյալ տրամագրում, «Շող» կենտրոնի աշխատակիցների նախաձեռնողականության մակարդակը ավելի բարձր է դպրոցի աշխատակազմի հետ համեմատությամբ: Սակայն պետք է նշել նաև, որ երկու աշխատակազմերի մեջ էլ չեն գրանցվել ցածր արդյունքներ: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ «Շող» կենտրոնի աշխատակիցներն ունեն միջին տարիք, իսկ դպրոցի աշխատակիցների մեծամասնությունը ունեն հասուն տարիք: Բարձր նախաձեռնողականությունը կենտրոնում պայմանավորված է նրանով, որ աշխատակիցների աշխատանքային փորձը շատ ավելի քիչ է, քան դպրոցում:

Իրականացնելով նաև համահարաբերակցական վերլուծություն հոգեբանական մթնոլորտի և նախաձեռնողականության միջև՝ բացահայտեցինք ուղիղ կապ r≈0,58, ինչը նշանակում է, որ այդ կապը միջինից բարձր է:

Եզրակացություն: Ամփոփելով կատարված աշխատանքը՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ «Շող» կենտրոնում, որտեղ աշխատակիցների միջև առկա է առավել դրական հոգեբանական մթնոլորտ, նախաձեռնողականության մակարդակն ավելի բարձր է: Համաձայն համահարաբերակցական վերլուծության տվյալների՝ հոգեբանական մթնոլորտի և նախաձեռնողականության միջև առկա է ուղիղ կապ: Այս ամենից պարզ է դառնում, որ մի կողմից նախաձեռնողականությունը նպաստում է կոլեկտիվի հոգեբանական մթնոլորտի ստեղծմանը, մյուս կողմից՝ հոգեբանական մթնոլորտի առկայությունը նպաստում է նախաձեռնողականության զարգացմանը:

Գրականություն

1. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում (մեթոդական ուղեցույց), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2017:
2. Трошина С. Психологический климат в коллективе: что это такое. «Просвещение», Москва, 1995, с. 235
3. Фидлер А. Ф. Методика оценки психологической атмосферы в коллективе.
4. https://www.superjob.ru/pro/5115/ 23.09.25

Взаимосвязь трудовой инициативы и психологического климата в коллективе

Саргсян Гоар
Факультет социальных наук,
«Психология личности и психологическое консультирование»,
руководитель магистерской диссертации:
кандидат психологических наук, доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова: *труд, коллектив, психологический климат, инициативность*

В данной статье мы изучили выявление взаимосвязи между инициативностью работников и психологическим климатом в трудовом коллективе. Был проведен корреляционный анализ. В результате исследований мы установили, что существует положительная взаимосвязь между инициативностью работников и психологическим климатом.

The Interrelation between Employee Initiatives and the Psychological Climate of the Staff

Sargsyan Gohar
Faculty of Social Sciences,
"Psychology of Personality and Psychological Counseling",
Academic Supervisor: V. Mirzoyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *work, staff, psychological climate, initiative*

This article examines the relationship between employee initiative and the psychological climate within a work team. A correlation analysis was conducted to explore this relationship. The results of the work showed that there is a positive correlation between the staff's initiative and the team's psychological climate.

Մանիպուլյացիայի ուսումնասիրությունը դեռահասների մոտ

Սիմոնյան Միլենա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Վ. Միրզոյան

Հանգուցային բառեր. *մանիպուլյացիա, վերահսկողության ձև, նպատակային կառավարում, դեռահասություն, ինքնագնահատական, ինքնավստահություն*

Ներկա ժամանակներում մանիպուլյացիա տերմինը մեծ ճանաչում ունի: Այն հանդիպում է տարբեր տարիքային խմբերում և դրսևորվում է գործունեության տարբեր ոլորտներում: Մանիպուլյացիային անդրադարձել են ականավոր հոգեբաններից Ֆրոմը, Պերլզը, Գլասերը և այլք: Մանիպուլյացիան՝ որպես մարդկանց թաքնված կառավարելու դրսևորում, շատ հաճախ հանդիպում է դեռահասների շրջանում, որը կարող է պայմանավորված լինել բազմաթիվ արտաքին ու ներքին գործոններով: Դրանց թվում են՝ դաստիարակությունը, համացանցային և հեռուստատեսային հոլովակների խրախուսիչ ազդեցությունը երևույթին, սոցիալական միջավայրը, և շատ այլ գործոններ, որոնք բխում են վերը նշվածներից: Նաև հենց այս տարիքային փուլն է համարվում առավել ցայտուն ինքնադրսևորման շրջան, որտեղ դեռահասները սկսում են հաճախ ցույց տալ իրենց գերակայությունը դիմացինի նկատմամբ, հաստատել իրենց հեղինակությունը, և իրենց ուզածին հասնել մանիպուլացնելու միջոցով:

Այս հոդվածի նպատակն է ուսումնասիրել մանիպուլյացիան դեռահասների մոտ և փորձարական ճանապարհով ցույց տալ, թե որքանով են մանիպուլացնում դեռահասները, և թե ինչպես է այն կապված ինքնագնահատականի և ինքնավստահության հետ:

Մինչ օրս կուտակվել են մանիպուլյացիայի բազմաթիվ սահմանումներ, որոնք առաջարկվել են տարբեր հետազոտողների կողմից:

- Մանիպուլյացիան հոգեկան ազդեցություն է, որն իրականացվում է գաղտնի, հետևաբար՝ ի վնաս այն անձանց, ում վրա այն ուղղված է:
- Նպատակային կառավարում:
- Հոգևոր վերահսկողություն, որն իրականացվում է հարկադրանքի արդյունքում իռացիոնալ և հուզական ազդեցության տակ:
- Մարդու ստրկացման միջոց:

- Մարդկանց նկատմամբ վերահսկողության ձև, որն իրականացվում է ոչ բռնի եղանակով:
- Թաքնված հարկադրանք, մտքերի, մտադրությունների, զգացմունքների, հարաբերությունների, վերաբերմունքի, վարքի ծրագրավորում:
- Ցանկացած գնով կառավարելու, տիրելու, հաղթելու ցանկություն՝ մարդկանց վերաբերվելով որպես իրերի:
- Վերաբերմունք ուրիշի նկատմամբ՝ որպես միջոցի, առարկայի, գործիքի:
- Վարպետորեն կառավարում կամ օգտագործում:

Մանիպուլյացիան թաքնված կառավարումն է, որով նախաձեռնողը հասնում է իր էգոիստական նպատակներին՝ վնաս պատճառելով դրա ազդեցությունը ստացողին: Թաքնված կառավարմամբ հասցեատիրոջը տրվում է այնպիսի տեղեկատվություն, որի հիման վրա նա կարծում է, թե ինքն է կատարել որոշումը, որը պլանավորված է եղել նախաձեռնողի կողմից:

Հաճախ թաքնված վերահսկողությունը հետապնդում է սոցիալապես հաստատված նպատակներ: Դա վերաբերում է առաջին հերթին հոգեթերապևտիկ և հոգեշտկիչ աշխատանքին, ինչպես նաև կրթության գործընթացին: Օր.՝ երբ ծնողն աննկատ կերպով խրախուսում է երեխային օգտակար գործողություններ ձեռնարկել առողջության, աշխատանքի, ուրիշների հետ հարաբերությունների և այլնի հետ կապված: Կամ երբ ղեկավարը վերահսկում է իր ենթակաների գործողությունները՝ ի շահ ոչ միայն ընկերության, այլև հենց աշխատակիցների: Այս տեսակի թաքնված կառավարումը կոչվում է ասերտիվ. դա կարողություն է վստահորեն և արժանապատվորեն պաշտպանելու իր իրավունքները՝ չոտնահարելով ուրիշների իրավունքները:

Վերոնշյալից պարզ է դառնում, որ թաքնված վերահսկողությունը կարող է իրականացվել նախաձեռնողի տարբեր նպատակներով և մտադրություններով:

Մանիպուլյացիայի տարածվածությունը

2001 թ. հարցում են անցկացրել տարբեր ղեկավարների շրջանում (տնօրեններ, գլխավոր ինժեներներ, ծառայությունների և գերատեսչությունների ղեկավարներ և այլն): «Երբևէ աշխատավայրում մանիպուլյացիայի ականատես եղե՞լ եք» հարցին դրական է պատասխանել հարցվածների մոտ 80 %-ը: Ընտանիքին վերաբերող նույն հարցին հարցվածների 29 %-ը (անկախ տարիքից) նշել է, որ հաճախ կամ շատ հաճախ են դառնում մանիպուլյացիայի զոհ (տղամարդիկ ավելի հաճախ են պատասխա-

նել, քան կանայք): Հարցվածների 43 %-ը խոստովանում է, որ իրենք են մանիպուլյացիա անում աշխատավայրում: Ընտանիքում կանայք ավելի շատ են մանիպուլյացիա անում, քան տղամարդիկ (համապատասխանաբար 38 և 23 %), ավագ ղեկավարները՝ ավելի հաճախ, քան կրտսերները (համապատասխանաբար 48 և 38 %): Միաժամանակ հարցվածների 85-88 %-ը կցանկանար սովորել մանիպուլյացիա անել, 92-95 %-ը կցանկանար պաշպանվել մանիպուլյացիաներից: Այսպիսով կարելի է վստահորեն ասել, որ մանիպուլյացիան սոցիալապես նշանակալի և տարածված երևույթ է: Մանիպուլյացիան՝ որպես տեխնոլոգիա, թաքնված կառավարման իշխանություն է տալիս մարդկանց, իսկ իշխանությունը, ինչպես հայտնի է, հզորագույն թմրանյութ է: Քանի որ մանիպուլյացիայի ընթացքում միշտ զոհ է լինում, զարմանալի չէ, որ նման վարքագիծը վատթարացնում է մարդկանց միջև հարաբերությունները: Հաղթելով նորից ու նորից հաջողակ մանիպուլյատորն իր շուրջը ստեղծում է « այրված դաշտ». տուժելով նրա արարքներից՝ մարդիկ պարզապես երես են թեքում կամ հեռանում: Եվ ի վերջո մանիպուլյատորը պարտություն է կրում (կարիերայում, ընտանեկան կյանքում, սիրո, ընկերության մեջ): Մինչ նա հաղթում է փոքր բաներում, ի վերջո պարտվում է մեծ բաներում [1]:

Շոստրոմն առանձնացրել է 8 տիպի մանիպուլյատորների տեսակներ՝

1. Բռնակալ – ցույց է տալիս իշխանություն և ուժ: Որպեսզի կառավարի իր զոհերին, ճնշում է նրանց, պատվիրում, հղում է անում իշխանություններին և այլն: Բռնակալի տարատեսակներ կարող են լինել վերահսկիչը, դեսպոտը և այլն:

2. Լաթ – սովորաբար հանդես է գալիս որպես բռնակալի զոհ և ներկայացնում նրա ուղիղ հակառակը: Նա ցուցադրում է իր զգացմունքայնությունը և խոցելիությունը, մոռանում է, չի լսում, պասիվ է և լուռ: Տեսակներն են՝ անշնորհք, հիմար, քամելեոն, ամաչկոտ, համակերպվող:

3. Հաշվիչ – ամեն գնով ձգտում է հաշվարկել և վերահսկել ամեն ինչ և բոլորին: Նա խաբում է, շփոթեցնում, փորձում է գերել և կրկնակի ստուգել ուրիշներին: Տեսակներն են՝ խարդախ, գայթակղիչ, խաբեբա, շանտաժիստ:

4. Կպչուն – Հաշվիչի լրիվ հակառակը: Նա ընդգծված կախվածության մեջ է, ցանկանում է առաջնորդվել, խնամք է փնտրում և պատրաստ է խաբվել: Նա թույլ է տալիս ուրիշներին իր գործն անել իր փոխարեն: Տեսակներն են՝ մակաբույծ, նվնվացող, հավերժական երեխա, հիպոխոնդրիկ, անօգնական:

5. Խուլիգան – ցույց է տալիս ագրեսիվություն, կոշտություն և թշնա-

մանք: Նա վերահսկում է ուրիշներին սպառնալիքների միջոցով: Տեսակներից են՝ անարգող, ատող, ավազակ, սպառնացող:

6. Փառահեղ տղա – ցույց է տալիս ջերմություն, հոգատարություն, ուշադրություն, նա ուղղակի սպանում է իր բարությամբ: Նրա հետ ավելի դժվար է գործ ունենալ, քան կռվարարի. դու չէիր կռվի գեղեցիկ տղայի հետ: Տեսակներից են՝ հոգատար, նվիրված և այլն:

7. Դատավոր – Նա ընդգծված թերահավատ է, նա ոչ մեկին չի վստահում, անընդհատ դատապարտում է ու վրդովված է, հուզիչ ու վրեժխնդիր: Տարբերում են՝ քննադատ, ամեն ինչ իմացող, տեղեկացուցիչ, հետաքննիչ, վրիժառու:

8. Պաշտպան – ցույց է տալիս սխալների հանդեպ աջակցություն և հանդուրժողականություն: Նա անընդհատ զիջում է, և թույլ չի տալիս տեր կանգնել այլ մարդկանց, անկախություն ձեռք բերել: Տեսակներից են՝ մխիթարիչը, նահատակը, օգնականը [3]:

Մանիպուլյատիվ ազդեցության մոդելը հետևյալ տեսքն ունի՝

1. Հասցեատիրոջ մասին տեղեկատվության հավաքագրում՝ ներգրավվելով խայծը շփման մեջ,
2. Ֆոնային գործոնների կիրառում,
3. Ազդեցություն թիրախների վրա,
4. Գործողության խթանում հասցեատիրոջը [2]:

Դեռահասության տարիներին մարդը սկսում է առաջին անգիտակցական-գիտակցական մանիպուլյացիաները՝ ծնողներին դարձնելով «փորձարարական»: Հենց 12-14 տարեկան հասակում է երեխան ամենից շատ փակվում. արդյունքում մեր առջև կանգնած է մի մարդ, ով դեռ չի կողմնորոշվել կյանքում, չի խոսում մեծահասակների հետ ինչ-որ անձնական թեմաներ, և ընդհանուր առմամբ մեկուսացած է նրանցից, ովքեր կարող են կանխել որևէ բացասական իրավիճակ, ինչպես նաև դեռահասների ամբոխ, ովքեր կարող են լավագույն մտադրությունները չունենալ, բայց քանի որ նրանք բոլորը նույն «մակարդակի» են, դա չի խանգարի սկսել շփվել դեռահասի հետ՝ նրան մանիպուլյացիայի զոհ դարձնելով:

Բայց ինչու են դեռահասները սկսում մանիպուլացնել: Որպես կանոն՝ նրանք նույն երեխաներն են, ովքեր փնտրում են իրենց: Դեռահասն ունի նպատակներ, որոնք կօգնեն հասնել այլ դեռահասներ. նրանց անհրաժեշտ է շատ ավելին, քան ուղղակի նյութականն է: Դա հոգեբանական օգնություն, աջակցություն, հարմարվողականություն և միավորում է այլ հասակակիցների դեմ: Ուսումնասիրենք դեռահասների մանիպուլյացիայի դասակարգումներ.

1. «Հարմարեցրու ինձ, եթե…»

Բայց ինչ է նշանակում հարմար, հարմարվողականություն, և ինչո՞ւ են մարդիկ վախենում այն կորցնել: Մաս են կազմում մանկության տարիներին տրավմա ստացած երեխաները: Երեխաներ, որոնց ուշադրություն չեն դարձրել, խիստ նախատել են յուրաքանչյուր սխալի համար, ստացել են ֆիզիկական և հոգեբանական բռնություն: Երեխաները, որոնք ականատես են դարձել վախեցնող և տրավմատիկ տեսարանների փխրուն հոգեկանի համար: Նրանք դառնում են «հակասոցիալական հրեշներ», որոնք մերժում են ամեն մարդկայինը: Այսպիսի դեռահասները փորձում են ուշադրություն գրավել վառ գույներով, բարձրաձայն զրույցներով և տարօրինակ, երբեմն աննորմալ գործողություններով: Եվ երբ այդպիսի երեխաները գտնում են ընկերներ, ովքեր իրենց նման չեն, ովքեր ուշադրություն են դարձնում նրանց և հարթացնում են « տարօրինակության» անկյունները, նրանք պահում են նրանց: Նրանք փորձում են գրավել իրենց կողմը, այնպես անել, որ նրանք նույնիսկ արտաքինից նման լինեն, որպեսզի ավելի ուժեղ կապվեն իրենց հետ: Սա մանիպուլյացիայի փուլերից մեկն է:

1. «Դարձիր իմ սոցիալական վերելակը կամ մեղավոր զգացեք»:

Մանիպուլյացիայի հաջորդ դեպքն է, երբ մարդուն ուղղակի օգտագործում են սոցիալական կարգավիճակը բարձրացնելու համար: Օրինակ՝ նրանք սկսում են ընկերանալ ավելի գրավիչ կամ հանրաճանաչ մեկի հետ, որպեսզի մյուսները սկսեն ուշադրություն դարձնել հենց մանիպուլյատորին:

1. « Ես ավելի լավ տեսք կունենամ ձեր ֆոնի վրա»

Այս դեպքում դեռահասը փնտրում է մի մարդու, ով ինչ-որ ցուցանիշներով հետ կմնա իրենից, որպեսզի իր ֆոնին ավելի լավ տեսք ունենա:

1. « Արա այն, ինչ ասում եմ, կամ դավաճան կլինես»:

Դեռահասության շրջանում «դավաճանության» մանիպուլյացիան ընդհանրապես տարածված է: Եթե զոհը ցանկանա ինչ-որ բան անել, որը հարմար չէ մանիպուլյատորին, կսկսվի ճնշումը, և այդ արարքը կդիտարկվի որպես դավաճանություն: Եվ այդ ժամանակ զոհը ընտրություն կունենա՝ կամ « դավաճանել», կամ չանել այն, ինչ ուզում է՝ մնալով մանիպուլյատորի հետ շփման մեջ: Ի վերջո ակնհայտ է, որ եթե այս արարքը իրականում չի համապատասխանում « դավաճանություն» հասկացությանը, ապա դա այդպես չէ: Հիշենք, որ մենք հաշվի ենք առնում հենց դեռահասությունը, որում աշխարհի գաղափարը դեռ չի ձևավորվել, և հասակակիցները, ովքեր կյանքի այս ժամանակահատվածում հեղինակություն են, կարող են խստորեն խեղաթյուրել ցանկացած հասկացու-

թյուն, իրենց հարմար սահմանումների համար, կամ պարզապես չեն հասկանում դա:

1. «Ընկերացիր ինձ հետ իմ թշնամիների դեմ, կամ էլ դու ևս իմ թշնամին կդառնաս»::

Դեռահասության տարիներին բոլորը սկսում են ձեռք բերել ինչպես ընկերներ, այնպես էլ առաջին թշնամիներին: Եվ որոշ մարդկանց մոտ այդ հակակրանքը կարող է վերածվել ատելության, որը սահմանակից է ոչ ադեկվատին: Եվ լավ է, եթե դա մնա հակամարտություն երկու կողմերի միջև, բայց պատահում է նաև, որ դեռահասները սկսում են այդ թշնամանքի մեջ ներքաշել նաև ուրիշներին: Առանց պատճառի ներքաշել օտար մարդկանց կոնֆլիկտի մեջ ոչ ոք չի անի, բայց ընկերներին ներգրավելը միանգամայն խելամիտ գաղափար է [4]:

Ինքնագնահատականը որպես հոգեբանական երևույթ առաջին անգամ քննարկել է ամերիկացի հոգեբան և փիլիսոփա Ուիլյամ Ջեյմսը 1890 թվականին: Նա կարծում էր, որ ինքնագնահատականը արտացոլում է մարդու փորձառությունների արդյունքը՝ կախված մարդու սկզբնական վերաբերմունքից և սպասումներից: Աբրահամ Մասլոուն ինքնագնահատականը համարում էր մարդկային կարիքների համակարգի կարևոր տարր: Ինքնագնահատականը սուբյեկտիվ ինքնագիտակցություն է, ընկալում և վերաբերմունք սեփական անձի նկատմամբ: Ինքն իրեն գնահատելիս մարդը վերլուծում է անձնական փորձը, հմտությունները, վարքագիծը, գործողությունները, վերելքներն ու վայրեջքները [5]:

Ինքնավստահությունը սեփական կարողությունների, գիտելիքների և հմտությունների նկատմամբ հավատն է, որը կարող է լինել դրական (եթե բավարար է), և բացասական (եթե չափազանց է): Իսկ թե ինչպես են կապված ինքնագնահատականը և մանիպուլյացիան, ինքնավստահությունը և մանիպուլյացիան դեռահասների մոտ, փորձել ենք ներկայացնել ստորև կատարված հետազոտության մեջ:

Հետազոտության կազմակերպում և իրականացում

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել մանիպուլյացիան, ինքնագնահատականը, ինքնավստահությունը և դրանց փոխկապակցվածությունը դեռահասների մոտ:

Նպատակին հասնելու համար առաջ քաշվեցին հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել դեռահասների մանիպուլյացիայի մակարդակը,
2. ուսումնասիրել դեռահասների ինքնագնահատականի մակարդակը,
3. ուսումնասիրել դեռահասների ինքնավստահության մակարդակը,
4. ուսումնասիրել մանիպուլյացիայի և ինքնագնահատականի, մանի-

պուլյացիայի և ինքնավստահության փոխկապակցվածությունը դեռահասների մոտ:

Հետազոտության ընտրանք են կազմում 12-14 տարեկան 60 դեռահասներ

Հետազոտության մեթոդիկաներ կիրառվել են՝

1. Ա. Ս. Պռուտչենկովի «Մանիպուլյատոր» թեստը,
2. Ս. Վ. Կովալյովի թեստ-հարցարանը ինքնագնահատականի մակարդակը որոշելու համար,
3. Ռայդասի «Ինքնավստահություն» թեստը:

Ստորև ներկայացնում ենք դեռահասների հետ կապված հետազոտության արդյունքները (աղյուսակ 1-4):

Աղյուսակ 1

Մանիպուլյացիայի և ինքնագնահատականի ցուցանիշները դեռահասների մոտ

Մանիպուլյացիա	***Ինքնագնահատական***	***%***
1. Մանիպուլյացիա - Բարձր	Ինքնագնահատական - Ցածր	42
2. Մանիպուլյացիա - Բարձր	Ինքնագնահատական - միջին	27
3. Մանիպուլյացիա - Բարձր	Ինքնագնահատական - բարձր	3
4. Մանիպուլյացիա - Միջին	Ինքնագնահատական - միջին	5
5. Մանիպուլյացիա - Միջին	Ինքնագնահատական - ցածր	5
6. Մանիպուլյացիա - Միջին	Ինքնագնահատական - բարձր	3

Աղյուսակ 2

Մանիպուլյացիայի և ինքնավստահության ցուցանիշները դեռահասների մոտ

Մանիպուլյացիա	***Ինքնավստահություն***	***%***
Բարձր	Ինքնավստահ	32
Բարձր	Միջին	33

Աղյուսակ 3

Մանիպուլյացիայի և ինքնավստահության ցուցանիշները դեռահասների մոտ

Մանիպուլյացիա	***Ինքնավստահություն***	***%***
Միջին	Միջին	18
Միջին	Ինքնավստահ	12

Աղյուսակ 4

Մանիպուլյացիայի, ինքնագնահատականի, ինքնավստահության ցուցանիշները

Մանիպուլյացիա	*Ինքնագնահատական*	*Ինքնավստահություն*	*%*
Բարձր	Ցածր	Ինքնավստահ	17
Բարձր	Ցածր	Միջին	23

Ըստ մեր կատարած հետազոտության տվյալների, որը ներկայացված է աղյուսակ 1-ում, առավել բարձր ցուցանիշ է կազմել մանիպուլյացիայի բարձր մակարդակը և ինքնագնահատականի ցածր մակարդակը՝ 42 %. դեռահասն իր դիրքը պաշտպանելու, այլ դեռահասների կողմից ընդունվելու, հասարակության մեջ տեղ գրավելու համար հաճախ դիմում է մանիպուլյացիայի, բայց առավել հաճախ այն դեռահասները, ովքեր ունեն ցածր ինքնագնահատական: Իրենց կարողությունները, հնարավորությունները, ինքնագիտակցությունը ցածր համարելով, բայց միաժամանակ հասակակիցների ընդունմանն արժանանալուն և խմբում տեղ գրավելու պահանջմունքի բավարարմանը հասնելուն, դեռահասները դիմում են մանիպուլյացիայի: Բարձր մանիպուլյացիայի դեպքում հիմնականում առկա է ինքնավստահությունը. դա արդյունք է նրա, որ մանիպուլացնելու համար հարկավոր է ինքնավստահության դրսևորում, ինչը թույլ է տալիս դեռահասին, դիմացինի մոտ դիրք և իշխանություն գրավել:

Գրականություն

1. Шейнов В. Манипулирование и защита от манипуляций. с. 1-2.
2. Шейнов В. Манипулирование и защита от манипуляций. с. 2.
3. Шостром Е. Анти-Карнеги. с. 7-10.
4. https://mel.fm/amp/blog/polina-lebedeva6/74609-prosto-sovri-roditelyam-pochemu-podrostki-poddayutsya-na-manipulyats-druzey-chem-eto-opasno-i-kak-predotvratit
5. https://mip.institute/journal/chto-takoe-samoocenka-i-kak-ona-formiruetsya-u-cheloveka

Исследование манипуляций у подростков

Симонян Милена
Факультет социальных наук,
"Психология личности и психологическое консультирование",
Руководитель магистерской диссертации:
кандидат психологических наук, доцент В. Мирзоян

Резюме

Ключевые слова: *манипуляция, форма контроля, целеориентированное управление, подростковый возраст, самооценка*

Термин «манипуляция» в наши дни очень популярен. Это встречается в разных возрастных группах и проявляется в разных сферах деятельности. Проблема манипуляции рассматривалась такими выдающимися психологами, как Фром, Перлз, Глассер и другими. В данной статье мы изучили манипуляции среди подростков с помощью экспериментального подхода, чтобы показать, насколько подростки подвержены манипуляциям, и как это связано с самооценкой и уверенностью в себе.

Study of Manipulation in Adolescents

Simonyan Milena
Faculty of Social Sciences,
Psychology of Personality and Psychological Counseling,
Academic Supervisor: V. Mirzoyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *manipulation, form of control, goal-oriented, control, adolescence, self-esteem*

The term manipulation is very popular these days. It occurs in different age groups and manifests itself in different fields of activity. Manipulation has been addressed by such prominent psychologists as Fromm, Perlz, Glasser, and others. In this article, we explored manipulation among adolescents using an experimental approach to show how susceptible adolescents are to manipulation and how this relates to self-esteem and self-confidence.

Դեռահասների հոգեհուզական վիճակների առանձնահատկությունները

Սուքիասյան Ռուզաննա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Մ. Մազմանյան

Հանգուցային բառեր. *դեռահասներ, հոգեհուզական վիճակ, ակտիվություն, տրամադրություն, ինքնազգացողություն*

Ներածություն

Դեռահասության տարիքում ձևավորվում են բարոյական արժեքներ և կյանքի հեռանկարներ, առաջանում է իրազեկում սեփական անձի, իր հնարավորությունների, կարողությունների, հետաքրքրությունների մասին, ինքն իրեն զգալու և չափահաս դառնալու ցանկություն, հասակակիցների հետ շփվելու ցանկություն, կյանքի վերաբերյալ ընդհանուր տեսակետներ, հարաբերությունների վերաբերյալ մարդիկ, սեփական ապագայի վրա են ձևավորվում, այլ կերպ ասած՝ ձևավորվում են կյանքի անձնական իմաստներ:

Դեռահասության հիմնական նոր զարգացումներն են՝ սեփական գործողությունների գիտակցված կարգավորումը, այլ մարդկանց զգացմունքներն ու շահերը հաշվի առնելու և իրենց վարքագծում դրանց վրա կենտրոնանալու ունակությունը: Նոր կազմավորումները ինքնուրույն չեն առաջանում, այլ երեխայի սեփական փորձի արդյունք են, որոնք ստացվել են սոցիալական գործունեության տարբեր ձևերի կատարմանը ակտիվ մասնակցության արդյունքում:

Թեմայի արդիականությունը: Հուզական ոլորտի ձևավորումը բավականին բարդ մտավոր գործընթաց է, որի վրա ազդում են մի շարք ներքին (անհատական անձի բնութագրերը) և արտաքին (սոցիալ միջավայր) պատճառները: Անհատականության ձևավորման գործընթացում հուզական ոլորտը ենթարկվում է էական փոփոխությունների, որոնք անբարենպաստ պայմաններում կարող են բացասաբար ազդել մարդու անհատականության հետագա զարգացման վրա:

Հետազոտության նպատակը. բացահայտել և նկարագրել դեռահասների հուզական ոլորտի զարգացման բնորոշ առանձնահատկությունները:

Հետազոտության օբյեկտը 12-15 տարեկան դեռահասներն են, իսկ առարկան՝ դեռահասների հուզական զարգացման առանձնահատկությունները:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Դեռահասների հոգեբանական առանձնահատկությունների վերլուծություն գրականության ուսումնասիրության հիման վրա.
2. Դիտարկել դեռահասության հուզական զարգացման առանձնահատկությունները:
3. Ուսումնասիրել դեռահասների հուզական զարգացման ուսումնասիրության գործնական մեթոդները:

Հետազոտությունում օգտագործվել են հետևյալ մեթոդիկաները՝ «ինքնազգացողություն, ակտիվություն և տրամադրություն» մեթոդիկան, Այզենկի հուզական վիճակների ինքնագնահատման թեստը:

Տեսական գրկանության վերլուծություն

Դեռահաս տարիքում վերջապես ձևավորվում է ինտելեկտուալ ապարատը, որը հնարավորություն է տալիս բովանդակալից կառուցել սեփական աշխարհայացքը, անհատական արժեքային համակարգը և «ես-հայեցակարգը»: «Ես»-ի պատկերն այս պահին անկայուն է, պակաս դրական՝ համեմատած տարրական դպրոցական տարիքի հետ, այս փոփոխությունների գագաթնակետը տեղի է ունենում մոտավորապես 12-13 տարեկանում: Հենց այս ժամանակահատվածում է սկսվում «ես»-ի հետ կապված ողջ տեղեկատվության ինտեգրումն ու ընկալումը [3, 11-15]:

Է. Էրիկսոնի էպիգենետիկ հայեցակարգում դեռահասությունը կենտրոնական տեղ է զբաղեցնում, դեռահասը լուծում է դերի ինքնության զգացողության զարգացման հիմնական խնդիրը, որը կլանում է ոչ միայն ներկայիս դերերի նույնականացման համակարգը, այլև նախորդ փուլերում կուտակված փորձը: Էրիկ Էրիկսոնի զարգացման փուլերի տեսության համաձայն՝ դեռահասության հիմնական կոնֆլիկտն է «ինքնությունն ընդդեմ դերի շփոթության»: Այս փուլում դեռահասները ակտիվորեն փորձում են հասկանալ, թե ովքեր են, ինչ են ուզում կյանքից և իրենց տեղը աշխարհում [2, 25]:

Պ. Լաֆրենիի ուսումնասիրության արդյունքների համաձայն՝ դեռահասները վեց անգամ ավելի հաճախ են իրենց երջանիկ զգում, քան իրենց ծնողները, իսկ շատ դժբախտ՝ երեք անգամ ավելի հաճախ: Բացի այդ՝ դեռահասները, ըստ նրանց, շատ ավելի հավանական էին, քան մեծահասակները, զգալու անհարմար և անհանգստություն, ինչպես նաև ձանձրույթ և ապատիա [1, 74]:

Ըստ Ե. Պ. Իլյինայի՝ դեռահասներն ավելի հակված են ուրախություն արտահայտելու, քան զայրույթ, վախ և տխրություն: Զայրույթի հակումը մի փոքր ավելի պարզ է արտահայտվում, քան վախի և տխրության: Ուրախությունը, զայրույթը և տխրությունն առավել ինտենսիվ են ապրում 12-13 տարեկանում, իսկ վախի սրությունը այս շրջանում, ընդհակառակը, նվազում է [4, 63]:

Ըստ Լ. Ա. Ռեգուշայի՝ տղաների մոտ հուզական անկայունության գագաթնակետը տեղի է ունենում 11-13 տարեկանում, իսկ աղջիկների մոտ՝ 13-15 տարեկանում: Պարզվում է, որ 13 տարին երկուսի համար էլ հուզական անկայունության գագաթնակետն է: Այս տարիքում է, որ դեռահասների և մեծահասակների միջև փոխազդեցությունն ամենադժվարն է [1, 26]:

Ըստ Վ. Գ. Կազանսկայայի՝ դեռահասները հակված են իրենց զգացմունքների վրա, ինչպես դրական, այնպես էլ բացասական: Արդյունքում դեռահասները, հատկապես աղջիկները, երբեմն բառացիորեն «լողանում են իրենց զգացմունքների մեջ» և առանց մեծ ոգևորության արձագանքում ուրիշների՝ իրենց օգնելու, ինչ-որ կոնկրետ գործով հետաքրքրելու փորձերին [4, 35]:

Ըստ Ս. Լ. Ռուբինշտեյնի՝ «էմոցիաները, առաջին հերթին, երեխայի բնական վարքագիծն են, ինքնաբերականությունը, շնորհքն ու ազատությունը», որը նվազում է մեծանալու հետ: Ն. Ն. Լանգեն հույզերը համեմատում է մտավոր շարժումների հետ, Վ. Է. Դրուժինինը դրանք սահմանում է որպես հոգեկան վիճակներ՝ կապված մարդու բնածին ռեակցիաների, նրա կարիքների և դրդապատճառների հետ, և Յու. Ա. Ռոդկովան և Ի. Ս. Կոբոզևը՝ որպես «ակնթարթային ռեակցիաներ գրգռիչներին, որոնք ազդում են մարդու ֆիզիոլոգիական վիճակի վրա» [3, 61]:

Հետազոտության ընտրանքը և մեթոդիկան

Հետազոտությանը մասնակցել են 40 դեռահասներ:

Հետազոտության նպատակին համապատասխան կիրառվել են հետևյալ հիմնական մեթոդիկաները.

1. «ինքնազգացողություն, ակտիվություն և տրամադրություն» մեթոդիկան [5],

2 Այզենկի հուզական վիճակների ինքնագնահատման թեստը [6]:

Հետազոտության արդյունքների վերլուծություն

Աղյուսակ 1

Աղջիկների և տղաների վիճակագրական ցուցանիշներ

	Տղաներ			*Աղջիկներ*		
	Բարձր	*Միջին*	*Ցածր*	*Բարձր*	*Միջին*	*Ցածր*
Ինքնազգացողություն	50 %	25 %	25 %	25 %	35 %	40 %
Ակտիվություն	65 %	20 %	15 %	25 %	30 %	45 %
Տրամադրություն	55 %	35 %	10 %	20 %	45 %	35 %

«Ինքնազգացողություն, ակտիվություն և տրամադրություն» մեթոդիկայի շրջանակներում պարզվեց, որ աղջիկների մոտ հուզական մակարդակը ավելի բարձր է, քան տղաների: Տղաները հակված են ավելի կայուն հոգեվիճակի:

Երկրորդը թեստը, որը մենք ընտրել ենք, Այզենկի հուզական վիճակների ինքնագնահատման թեստն է:

Աղյուսակ 2

Աղջիկների և տղաների վիճակագրական ցուցանիշներ

	Տղաներ	*Աղջիկներ*
Անհանգստություն	10 %	30 %
Ֆրուստրացիա	0	15 %
Ագրեսիա	1.5 %	0
Ռիգիդրոնություն	0	0

Եզրակացություն

Դեռահասների հոգեհուզական վիճակները բազմաչափ են և զարգացող: Նրանք բնութագրվում են հույզերի ինտենսիվությամբ և անկայունությամբ, ինքնության ձևավորման գործընթացով, սոցիալական հարաբերությունների կարևորության աճով, ինչպես նաև ավելի բարձր ռիսկով հոգեկան առողջության խնդիրների զարգացման համար: Հասկանալով այս առանձնահատկությունները՝ մենք կարող ենք ավելի արդյունավետ աջակցել դեռահասներին այս բարդ զարգացման փուլը հաղթահարելու գործում:

Դեռահասների հոգեհուզական աշխարհը բնութագրվում է զգալի բարդությամբ և դինամիկությամբ: Ուղեղի զարգացման, նախադիմային կեղևի և լիմբիկ համակարգի ակտիվության անհամաչափությունը հանգեցնում է հույզերի ավելի ինտենսիվության և անկայունության, ինչը

դեռահասներին դարձնում է ավելի հակված ռիսկային վարքագծի և հոգեկան առողջության խնդիրների առաջ: Այս փուլում ինքնության ձևավորումը, ինքնագիտակցության զարգացումը և սոցիալական հարաբերությունների աճող կարևորությունը ևս նշանակալի ազդեցություն ունեն դեռահասների հոգեհուզական վիճակի վրա:

Գիտական գրականության ուսումնասիրությունը հստակ ցույց է տալիս, որ դեռահասները ենթարկվում են հուզական մեծ տատանումների, հաճախ զգում են ինքնության շփոթություն, ունենում են խնդիրներ սոցիալական ինտեգրման և հարաբերությունների կառուցման հետ, ինչպես նաև ավելի բարձր ռիսկի են ենթակա հոգեկան առողջության խանգարումների, այդ թվում՝ դեպրեսիայի, անհանգստության, ինքնասպանության և ինքնավնասման հարցերում:

Հասկանալ այս առանձնահատկությունները չափազանց կարևոր է, քանի որ այն հնարավորություն է ընձեռում ծնողներին, մանկավարժներին, հոգեբաններին և հասարակությանը մշակելու ավելի արդյունավետ ռազմավարություններ՝ աջակցելու դեռահասներին այս բարդ և վճռորոշ զարգացման փուլը հաղթահարելու համար:

Գրականություն

1. Божович Е. Д. Психология особенного развития личности подростка. Москва: Мир, 1969.
2. Драпкин Б. З. Подростковый возраст. Журнал здоровье. 1988.
3. Ковалев А. Г. Возрастная психология. Москва: Наука, 2000.
4. Райс Ф. Психология подросткового и юношеского возраста. Санкт-Петербург: Питер, 2000.

Էլեկտրոնային հղումներ

5. https://педагогическийресурс.рф/upload/iblock/fc9/fc9c137ff3c7688cf7519ebab556e02c.pdf
6. https://www.delendik.com/wp-content/uploads/2019/10/Test-Temper.pdf

Особенности психоэмоционального состояния подростков

Сукиасян Рузанна
Факультет социальных наук,
"Психология личности и психологическое консультирование",
Руководитель магистерской диссертации:
кандидат психологических наук, доцент М. Мазманян

Резюме

Ключевые слова: *подростки, эмоциональное состояние, активность, настроение, самочувствие*

В исследовании приняли участие 40 подростков. Анализ полученных данных показал, что у мальчиков в целом наблюдается более стабильное психическое состояние по сравнению с девочками. В то же время у девочек зафиксирован более высокий уровень эмоциональной выраженности. Результаты теста самооценки эмоционального состояния по методике Г. Айзенка также свидетельствуют о повышенном уровне тревожности у девочек.

Peculiarities of the Psycho-Emotional State of Adolescents

Sukiasyan Ruzanna
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Psychological Counseling",
Academic Supervisor: M. Mazmanyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *teenagers, emotional state, activity, mood, well-being*

The study involved 40 adolescents. Analysis of the data showed that boys generally demonstrate a more stable mental state compared to girls. At the same time, girls exhibit a higher level of emotional expression. The results of Eysenck's Emotional State Self-Assessment Test also indicate a higher level of anxiety among girls.

Զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունները

Տիգրանյան Նունե
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
հ. գ. թ., դոցենտ Հ. Ավագիմյան

Հանգուցային բառեր. *զարգացման խանգարում, ուշադրություն, ընկալում, հիշողություն, մտածողություն, հուզական ոլորտ, կրտսեր դպրոցական, հոգեբանական առանձնահատկություններ*

Ժամանակակից կրթական համակարգում առանձնահատուկ ուշադրության կենտրոնում են գտնվում այն երեխաները, ովքեր ունեն զարգացման տարբեր աստիճանի խանգարումներ: Նրանց ճանաչողական և հուզական ոլորտների յուրահատկությունները պայմանավորում են ուսուցման դժվարությունները, հաղորդակցական խնդիրները և վարքային առանձնահատկությունները: Զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն նրանց կրթական ներառման, այլև հոգեբանական աջակցման արդյունավետ մեթոդների մշակման տեսանկյունից:

Գիտական հետազոտությունները վկայում են, որ զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների մոտ դիտվում են ուշադրության կայունացման, հիշողության ծավալի և կամային վերահսկման գործընթացների թուլացած դրսևորումներ, ինչպես նաև հուզական ոլորտի լաբիլություն, որը բնորոշվում է արտահայտված և երբեմն չկարգավորված էմոցիոնալ արձագանքներով:

Կրտսեր դպրոցական տարիքում գերակայող ֆունկցիան մտածողությունն է, և առաջատար է դառնում ուսումնական գործունեությունը: Ուսումնական գործունեության շրջանակներում ձևավորվում են հոգեբանական նորագոյացություններ, որոնք բնութագրում են կրտսեր դպրոցականի զարգացման ամենակարևոր ձեռքբերումները և հանդիսանում են այն հիմքը, որն ապահովում է զարգացումը հաջորդ տարիքային փուլում:

Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ կերպով զարգանում են իմացական ոլորտները, դրանք դառնում են գիտակցված և կամածին:

Երեխան սովորում է կառավարել ուշադրությունը, հիշողությունը և մտածողությունը:

Էրիկ Էրիկսոնն այս տարիքային փուլը դիտարկում էր որպես երեխային սիստեմատիկ գիտելիք և հմտություն փոխանցելու, աշխատասիրություն ձևավորելու շրջան: Այս տարիքին բնորոշ հիմնական հատկություններն են՝ ակտիվ գործելու ձգտումը, մրցակցելը, սեփական ուժերը տարբեր գործունեություններում փորձելը, նախաձեռնողականությունը:

Դրա շնորհիվ ինտենսիվորեն զարգանում և վերակառուցվում են հենց մտածական գործընթացները, որից էլ կախված է մնացած հոգեկան ֆունկցիաների զարգացումը: Կրտսեր դպրոցական տարիքում ուշադրությունը, հիշողությունն ու ընկալումը հանդիսանում են ուսումնական գործունեության հիմնական հիմքը: Զարգացման խանգարումներ ունեցող երեխաների մոտ տվյալ գործընթացները դրսևորվում են յուրահատկություններով, որոնք անմիջականորեն անդրադառնում են ուսուցման արդյունավետության վրա: Արդի մանկավարժական և հոգեբանական հետազոտությունները ցույց են տալիս, որ ճանաչողական դժվարությունները պայմանավորված են ոչ միայն նեյրոհոգեբանական գործոններով, այլև սոցիալ-հոգեբանական միջավայրի անբավարար հարմարվողականությամբ: Ուստի, դրանց ուսումնասիրությունը կարևոր է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական տեսանկյունից:

Հետազոտության օբյեկտը

Զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների հոգեբանական գործընթացներն ու վարքային դրսևորումները:

Հետազոտության առարկան

Ուշադրության, հիշողության, մտածողության և հուզական ոլորտի առանձնահատկությունները զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների մոտ:

Հետազոտության նպատակը

Բացահայտել և վերլուծել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկությունները զարգացման խանգարումների պայմաններում՝ նպատակ ունենալով պարզել նրանց ճանաչողական և հուզական ոլորտների խանգարումների ազդեցությունը ուսումնական գործընթացի վրա:

Հիմնական խնդիրները

1. Ընտրել և կիրառել հոգեդիագնոստիկ գործիքներ՝ ուսումնասիրելու երեխաների ճանաչողական գործընթացները:

2. Համադրել ստացված արդյունքները և պարզել որակական առանձնահակությունները:
3. Ներկայացնել տեսական և կիրառական եզրակացություններ՝ ուսումնամեթոդական առաջարկությունների հիման վրա:

Հետազոտության վարկածը

Ենթադրվում է, որ զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների ուշադրությունը, հիշողությունը և մտածողությունը բնորոշվում են ցածր կենտրոնացվածությամբ, դանդաղ տեմպով և հուզական անկայունությամբ՝ ի տարբերություն բնականոն զարգացման տեմպ ունեցող հասակակիցների:

Հետազոտության մեթոդիկաների և ընտրակազմի նկարագրությունը

Հետազոտության արդյունքները հասկանալու, դրանցից եզրակացություններ անելու համար անհրաժեշտ է կիրառել այս կամ այն մեկնաբանության մեթոդը, պահպանել չեզոքություն և օբյեկտիվություն [1, 193]: Հետազոտությունը կատարվել է ներառական կրթություն իրականացնող Վանաձորի երկու դպրոցներում: Ընտրվել են 7–10 տարեկան 20 աշակերտներ՝ որոնցից 10-ը՝ զարգացման խանգարումներ ունեցող, 10-ը՝ բնականոն զարգացում ունեցող: Ընտրանքը կազմվել է դպրոցի հոգեբանի առաջարկությամբ և ապահովվել է էթիկական նորմերի պահպանում:

Հետազոտությունը կատարվել է հետևյալ հոգեդիագնոստիկ գործիքների միջոցով

1. **Լյուշերի գունային թեստ**՝ հուզական վիճակի և ներքին լարվածության գնահատման նպատակով:
2. **Բենդերի վիզուալ-շարժական գեշտալտ թեստ**՝ ընկալման և զծային մտածողության զարգացման գնահատման համար:
3. **Վեքսլերի թեստի ենթաթեստեր**՝ ուշադրության, կարճաժամկետ հիշողության և ինտելեկտուալ մակարդակի որոշման նպատակով:

Արդյունքները վերլուծվել են համեմատական մեթոդով՝ հաշվի առնելով տարիքը, սեռը և ուսումնական առաջադիմությունը:

Արդյունքների վերլուծությունը

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս համեմատական պատկեր ստանալ զարգացման խանգարումներ ունեցող և նորմալ զարգացում ունեցող կրտսեր դպրոցականների հոգեբանական գործընթացների միջև: Հատկապես լուրջ քննարկման առարկա պետք է դառնա մտածողական ոլորտի վերլուծությունը: Մտածական ոլորտի դրսևորումները հիմնականում վերաբերվում են մտածողության բացասական, հոռետես տիպի ձևավորմանը [3, 12]:

Ստորև ներկայացված են տվյալների տոկոսային ցուցանիշները և դրանց գիտական մեկնաբանությունը:

Ուշադրության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ զարգացման խանգարում ունեցող աշակերտների միայն 18 %-ն ունի բարձր ուշադրության մակարդակ, մինչդեռ նորմատիպիկների շրջանում այդ ցուցանիշը հասնում է 45 %-ի: Միջին մակարդակը գրանցվել է համապատասխանաբար 42 % և 40 %, իսկ ցածր մակարդակը՝ 40 % և 15 %: Այս տարբերությունները վկայում են, որ զարգացմամբ խնդիր ունեցող երեխաների մոտ ուշադրության կայունությունը և կենտրոնացման տևողությունը սահմանափակ են, ինչը կարող է բացատրվել նյարդահոգեբանական անբավարարությամբ և հոգեկան գործընթացների դանդաղ ռիթմով: Նորմատիպիկ աշակերտների դեպքում նկատվում է ուշադրության ավելի կայուն դինամիկա և արդյունավետ վերահսկման կարողություն:

Ստացված պատկերը ներկայացված է տրամագիր 1-ում:



Տրամագիր 1. Ուշադրության մակարդակներ ըստ խմբերի

Հիշողությունը գիտակցության, հոգեկան կյանքի հիմքն է: Հիշողությունը բարդ հոգեկան գործընթաց է, ունի զուգորդման տարբեր ձևեր.

1. ըստ ընդհանրության, երբ ընկալման պատկերներն առաջ են բերում այն մտապատկերները, որոնք անցյալում ապրվել են դրանց զուգահեռ կամ անմիջապես դրանցից հետո,
2. ըստ նմանության, երբ ընկալման պատկերները մեր գիտակցության մեջ առաջ են բերում այն մտապատկերները, որոնք որոշակի ցուցանիշներով նման են վերջիններիս,
3. ըստ հակասության, երբ ընկալման պատկերները մեր գիտակցու-

թյան մեջ առաջ են բերում այն մտապատկերները, որոնք որևէ կերպ հակասում և դրանց հակառակն են:

Հիշողության հետազոտությունը բացահայտեց, որ զարգացման խանգարում ունեցող խմբի կարճաժամկետ հիշողության արդյունավետությունը 48 % է, իսկ երկարաժամկետ հիշողությունը՝ 40 %: Նորմատիպիկ խմբի համապատասխան ցուցանիշներն են՝ 70 % և 75 %: Այս տվյալները վկայում են, որ առանձնահատկություններ ունեցող երեխաների մոտ հիշողությունը ոչ միայն ավելի սահմանափակ ծավալ ունի, այլև դժվարությամբ է պահպանվում երկարաժամկետ հարթությունում: Դա պայմանավորված է մետակոգնիտիվ հմտությունների անբավարար զարգացմամբ և տեղեկատվության կազմակերպման թույլ ռազմավարություններով:

Ստացված պատկերը ներկայացված է տրամագիր 2-ում:



Տրամագիր 2. Հիշողության զարգացման ցուցանիշներ

Մտածողության մակարդակների վերլուծությունը ցույց տվեց, որ զարգացման խանգարում ունեցող երեխաների տրամաբանական մտածողությունը կազմում է 38 %, վերբալ մտածողությունը՝ 42 %, իսկ պատկերավոր մտածողությունը՝ 55 %: Նորմատիպիկ խմբի մոտ այդ ցուցանիշներն են՝ տրամաբանական մտածողություն՝ 68 %, վերբալ մտածողություն՝ 70 % և պատկերավոր մտածողություն՝ 80 %:

Այս համեմատությունը ցույց է տալիս, որ խնդիր ունեցող երեխաների մոտ գերակշռում է պատկերավոր մտածողությունը, մինչդեռ բնականոն զարգացող երեխաների մոտ՝ վերբալ-տրամաբանական: Սա վկայում է, որ զարգացման խանգարումների դեպքում ինտելեկտուալ գործընթացները հիմնվում են ավելի շատ զգայական և տեսողական ասոցիացիաների վրա, քան վերբալ-աբստրակտ մտածողության:

Ստացված պատկերը ներկայացված է տրամագիր 3-ում:



Տրամագիր 3. Մտածողության մակարդակների վերլուծություն

Հուզական կայունության գնահատման արդյունքում արձանագրվել է, որ զարգացման խանգարում ունեցող աշակերտների 25 %-ն ունի բարձր կայունություն, 50 %-ը՝ միջին, և 25 %-ը՝ ցածր, մինչդեռ նորմալ զարգացում ունեցող երեխաների մոտ բարձր կայունությունը կազմել է 60 %, միջինը՝ 30 %, և ցածրը՝ 10 %:

Այս տարբերությունը վկայում է, որ զարգացման խանգարում ունեցող երեխաները առավել զգայուն են միջավայրային ադապտացիայի և միջանձնային հարաբերությունների նկատմամբ, ունեն հուզական լաբիլություն և ինքնակարգավորման դժվարություններ: Նորմալ զարգացում ունեցող աշակերտների մոտ հուզական ռեակցիաները առավել հավասարակշռված են և վերահսկելի, ունեն կամային ուշադրություն: Կամային ուշադրությունը պայմանավորված է ոչ միայն համապատասխան միջավայրով, այլև սոցիալական մշակույթով [2, 176]:

Ստացված պատկերը ներկայացված է տրամագիր 4-ում:



Տրամագիր 4. Հուզական կայունության գնահատման

Ընդհանուր վերլուծությունը ցույց է տալիս, որ նորմատիպիկ խմբի ցուցանիշները բոլոր գործընթացներում միջինում 75-82 % են, մինչդեռ զարգացման խանգարում ունեցողների մոտ՝ 55-67 %:

Այս հարաբերակցությունը վկայում է, որ հոգեբանական գործընթացների զարգացումը զարգացման խնդիր ունեցող երեխաների մոտ ունի ոչ միասնական բնույթ. ուշադրությունը, հիշողությունը և մտածողությունը ձևավորվում են անհավասարաչափ, իսկ հուզական ոլորտը հաճախ դառնում է լրացուցիչ դժվարությունների աղբյուր:

Ստացված պատկերը ներկայացված է տրամագիր 5-ում:



Տրամագիր 5. Ուշադրության, հիշողության, մտածողության և հուզական կայունության համեմատական վերլուծություն

Միաժամանակ կարելի է նշել, որ ճիշտ կրթական միջավայրի և նպատակային հոգեբանական աջակցության դեպքում այս տարբերությունները կարող են նվազել՝ պայմանավորելով անհատական առաջընթաց:

Կատարելով կրտսեր դպրոցականների հոգեբանական գործընթացների համեմատական վերլուծությունը ըստ խմբերի՝ պարզ է դառնում, որ զարգացման խանգարում ունեցող աշակերտների ուշադրության, հիշողության, մտածողության և հուզական կայունության ցուցանիշները զգալիորեն ցածր են նորմալ զարգացում ունեցող հասակակիցների համեմատ: Զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականների մոտ դիտվում է.

- ուշադրության ցածր կենտրոնացում և արագ հոգնածություն,
- տեսողական-շարժական կոորդինացիայի դժվարություններ,

- կարճաժամկետ հիշողության ծավալի նվազում,
- հուզական անհավասարակշռություն՝ հաճախակի վախեր, անհանգստություն, ինքնագնահատականի անկայունություն:

Ստացված պատկերը ներկայացված է տրամագիր 6-ում:



Տրամագիր 6. Կրտսեր դպրոցականների հոգեբանական գործընթացների համեմատական վերլուծություն

Միևնույն ժամանակ նկատվում է դրական դինամիկա՝ ուսուցչի և հոգեբանի համակարգված միջամտության դեպքում, և այն հիմք է դառնում դրական վերաբերմունք ձևավորելու գործում: Վերաբերմունքն ընդամենը վարքագիծը պայմանավորող գործոններից մեկն է: Իր հերթին՝ վարքագիծը որոշակի ժամանակահատվածում և որոշակի փոխհարաբերությունների համակարգում վարքի, այն է՝ գործունեության արտաքին, օբյեկտիվ դիտման համար մատչելի դրսևորումն է [4, 495]:

Վերլուծությունը հաստատեց վարկածը՝ ընդգծելով, որ ճանաչողական և հուզական գործընթացների անկայունությունը զարգացմամբ պայմանավորված խանգարումների հիմնական հոգեբանական բնութագրիչներից է:

Եզրակացություն

Զարգացման խանգարումներ ունեցող կրտսեր դպրոցականները առանձնանում են հոգեբանական գործընթացների դանդաղ տեմպով,

ուշադրության անկայունությամբ և հուզական լաբիլությամբ [5, 117]: Այս առանձնահատկությունները պետք է դիտարկվեն ուսումնական և սոցիալական միջավայրի ձևավորման ընթացքում՝ ապահովելով անհատական մոտեցում, հոգեբանական աջակցություն և ներառական մեթոդների կիրառում: Հոգեբանական պատրաստվածությունը բարդ կազմավորում է, որը պահանջում է դրդապատճառային, ինտելեկտուալ, կամային ոլորտների զարգացման բարձր մակարդակ: Սովորաբար առանձնացնում են հոգեբանական պատրաստվածության երկու ասպեկտներ՝ անձնային և ինտելեկտուալ: Երկուսն էլ կարևոր են ինչպես ուսումնական գործունեության հաջող ընթացքի, այնպես էլ նոր պայմաններին արագ հարմարման համար: Հետազոտության տվյալները կարող են ծառայել որպես մեթոդական հիմք մանկավարժների և դպրոցական հոգեբանների համար՝ տարբերակված ուսուցման և հոգեբանական աջակցության կազմակերպման գործում:

Գրականություն

1. Ավանեսյան Հ., Փորձարարական հոգեբանություն, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2021:
2. Գրիգորյան Վ. Հ., Հոգեֆիզիոլոգիա, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2007:
3. Խանամիրյան Ի., Գևորգյան Դ., Երեխան և հոգետրավման, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2017:
4. Նալչաջյան Ա., Հոգեբանության հիմունքներ, «Հոգեբան» հրատարակչություն, Երևան, 1997:
5. Белопольский В. И., Лови О. В. Зрительно-моторный гештальт-тест Л. Бендера: Москва: «Когито-Центр», 2008.
6. https://vk.com/doc117151223_681424229?hash=jOesZg8kNwybA2VUkK0LtymHkmaAzRoaXPdvJkxGt2z

Психологические особенности младших школьников с проблемами развития

Тигранян Нуне
Факультет социальных наук,
«Психология личности и психологическое консультирование»,
руководитель магистерской диссертации:
кандидат психологических наук, доцент: А. Авагимян

Резюме

Ключевые слова: *нарушение развития, внимание, восприятие, память, мышление, эмоциональная сфера, младший школьник, психологические особенности*

В статье рассматриваются психологические особенности младших школьников с нарушениями развития. Установлено, что у детей данной категории наблюдаются сниженная концентрация внимания, замедленные темпы мыслительной деятельности и эмоциональная неустойчивость. Полученные результаты могут быть использованы для совершенствования психологического сопровождения инклюзивного образования.

Psychological Characteristics of Primary School Children with Developmental Problems

Tigranyan Nune
Faculty of Social Sciences,
"Personality Psychology and Psychological Counseling",
Academic Supervisor: H. Avagimyan
Candidate of Psychological Sciences, Associate Professor

Summary

Key words: *developmental disorder, attention, perception, memory, thinking, emotional sphere, primary school student, psychological characteristics*

The article examines the psychological characteristics of primary school children with developmental disorders. The study revealed that children in this group demonstrate reduced attention span, slower cognitive processing, and emotional instability. The findings may be used to improve psychological support strategies within inclusive education.

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

ШКОЛЬНАЯ ПЕДАГОГИКА И МЕТОДИКА

SCHOOL PEDAGOGY AND METHODOLOGY

Դիվերգենտ մտածողության զարգացումն ուսուցման գործընթացում

Գրիգորյան Աննա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ., դոցենտ Լ. Բաղդասարյան

Հանգուցային բառեր. *կրթական գործընթաց, բազմակողմանի մտածողություն, ստեղծագործական աճ, խթանող միջավայր, գաղափարներ, ճանաչողական մտածողություն*

Արժեքային հիմնավորում

Այժմ կրթական համակարգի առանցքային նպատակներից է անձի բազմակողմանի զարգացումը, որը ապահովում է նրա պատրաստվածությունն ու մրցունակությունը անընդհատ փոփոխվող և բարդացող աշխարհում: Գլոբալ մարտահրավերների և տեխնոլոգիական հեղափոխության պայմաններում կարևոր նշանակություն է ստանում ոչ ստանդարտ, ստեղծագործական մտածողության զարգացումը, որի հիմքում ընկած է դիվերգենտ (բազմակողմանի) մտածողությունը: Վերջինս ենթադրում է միևնույն խնդրի բազմաթիվ այլընտրանքային լուծումների և մոտեցումների գեներացում, ինչպես նաև ճկունություն, նորարարություն և ինքնատիպություն մտավոր գործունեության ընթացքում:

Այսօր, երբ տեղեկատվական հոսքերը աննախադեպ արագությամբ աճում են, իսկ խնդիրները պահանջում են միջառարկայական և բազմաճյուղ լուծումներ, պարզ գիտելիքների վերարտադրումը բավարար չէ: Անհրաժեշտ է զարգացնել մտածողություն, որը հնարավորություն կտա անհատին արդյունավետ հարմարվել նոր պայմաններին, ստեղծել նոր արժեքներ և նախաձեռնող գաղափարներ:

Նախկինում կրթությունը գիտելիքահեն էր, մինչդեռ ժամանակակից կրթությունը դարձել է կարողունակահեն, և այս համատեքստում առանձնահատուկ դեր ունեն քննադատական մտածողությունը, ստեղծագործականությունն ու համագործակցային կարողությունները: Հետևաբար, դիվերգենտ մտածողության զարգացումը հանդիսանում է կրթական գործընթացի կարևոր բաղադրիչ, քանի որ այն նպաստում է նորարար գաղափարների առաջացմանը, խնդիրների արդյունավետ լուծմանն ու անհատի ինքնադրսևորմանը:

Դիվերգենտ մտածողության զարգացման պայմաններ

Դիվերգենտ մտածողության զարգացման հիմնական նախադրյալներից է խթանող կրթական միջավայրը: Կրթական կազմակերպությունները կարող են դառնալ այն հարթակը, որտեղ սովորողները բացահայտում և զարգացնում են իրենց ստեղծագործական կարողությունները: Այս մոտեցումը համահունչ է 21-րդ դարի կրթական չափորոշիչներին, նպաստում է սերնդի պատրաստմանը գլոբալ մարտահրավերների հաղթահարման և նորարարական հասարակության կերտման գործում:

Ուստի առաջարկվում է.

- ավելի հաճախ անցկացնել ախտորոշիչ թեստեր,
- կիրառել մեթոդներ, որոնք ուղղված են դիվերգենտ մտածողության խթանմանը,
- ապահովել խաղային, ստեղծագործական, բաց, համագործակցային միջավայր [1]:

Հետազոտության արդիականությունը

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ դիվերգենտ մտածողությունը հանդիսանում է նորարարությունների հիմքը: Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմամբ հնարավոր է ձևավորել այնպիսի պայմաններ, որոնք

- խթանում են ոչ ստանդարտ մտածելակերպը,
- բարձրացնում են ճանաչողական ակտիվությունը,
- նպաստում են ինքնուրույն և հիմնավորված որոշումների կայացմանը:

Դիվերգենտ մտածողության զարգացումը **վաղ տարիքից** դրական ազդեցություն է թողնում՝ ակադեմիական աճի, սոցիալական ադապտացիայի, մասնագիտական հաջողությունների վրա:

Հոդվածի նպատակն ու խնդիրները

Նպատակն է. պարզել դիվերգենտ մտածողության զարգացման հնարավորությունները ուսումնական գործընթացում:

Խնդիրներն են.

1. ուսումնասիրել դիվերգենտ մտածողության վերաբերյալ գիտական գրականություն,
2. բացահայտել դիվերգենտ մտածողության մակարդակը աշակերտների շրջանում,
3. սահմանել դրա զարգացման նպաստող պայմանները:

Տեսական նշանակությունը. իրականացվել է գրականության վերլուծություն, որը կարող է կիրառվել հետագա հետազոտություններում:

Գործնական նշանակություն. առաջարկվող տեխնիկաները կիրառելի են ուսումնական գործունեությունում և կարող են նպաստել դիվերգենտ մտածողության զարգացմանը:

Դիվերգենտ մտածողության բովանդակային մեկնաբանություն

Դիվերգենտ մտածողությունը (կամ բազմակողմանի մտածողությունը) մտածողական գործընթաց է, որը ուղղված է միևնույն խնդրի տարբեր լուծումների կամ գաղափարների ստեղծմանը: Այն հակադիր է կոնվերգենտ մտածողությանը, երբ նպատակն է գտնել միակ, ճիշտ լուծում: Դիվերգենտ մտածողությունը առավելապես դրսևորվում է ստեղծագործական գործունեության մեջ, որտեղ առաջնային են նորարարությունն ու բազմազանությունը:

Դիվերգենտ մտածողության առանձնահատկություններն են.

- **բազմազանություն՝** միևնույն հարցի տարբեր լուծումների գեներացում,
- **նորարարություն՝** ավանդականից տարբերվող, համարձակ գաղափարների առաջացում,
- **մտավոր ազատություն՝** սահմանափակումներից դուրս մտածելու կարողություն [3]:

Դիվերգենտ մտածողությունը զարգանում է մի քանի փուլով.

1. խնդրի ճիշտ ձևակերպում,
2. տարբեր գաղափարների գեներացում,
3. գաղափարների վերլուծություն և համեմատում,
4. լավագույն լուծման ընտրություն կամ լուծումների համակցում:

Հետազոտության ընթացքը

Հետազոտությունը իրականացվել է 67 աշակերտների մասնակցությամբ: Դիվերգենտ մտածողության զարգացման դինամիկան գնահատվել է հատուկ մշակված գործիքակազմով, որն ընտրվել է հոգեբանական բնութագրերի և ուսումնական գործընթացի մեթոդաբանական առանձնահատկությունների հիման վրա:

Կիրառվել են հուսալի և վավերական մեթոդներ, որոնք հնարավորություն են տվել ստանալ քանակական և որակական տվյալներ:

Հետազոտությունը ընթացել է երեք փուլով.

1. բոլոր աշակերտները անցել են Ջ. Բրուների «Մտածողության տիպի և կրեատիվության մակարդակի ախտորոշման» թեստը,
2. ընտրվել են դիվերգենտ մտածողությանն ընդգծված հակվածություն ունեցող 12 աշակերտներ, որոնց տրվել են ստեղծագործական խնդիրներ և ոչ ստանդարտ սցենարներ,
3. խաղային, ստեղծագործական և սիմուլյացիոն վարժությունների

կազմակերպում, ապա կրկնակի թեստավորում՝ արդյունքի գնահատմամբ:

Աղյուսակ 1

Ջ. Բրուների «Մտածողության տիպի և կրեատիվության մակարդակի ախտորոշում» թեստ

Մտածողության տեսակ	*Նախասիրությունների տիպ*	*«Այո» պատասխաններ*	*«Ոչ» պատասխաններ*	*Միավոր*
Նարատիվ	Հումանիտար	18	4	18
Պարադիգմատիկ	Տեխնիկական/ճշգրիտ	14	21	14
Կրեատիվություն	Ստեղծագործական	16	3	16

Երկրորդ փուլում կազմվել է հարցաշար: Հարցերը կազմվել են ոչ ֆորմալ, որակական ստուգման նպատակով, որպեսզի ավելի խորքային պարզենք երեխաների ստեղծարարությունը:

Աղյուսակ 2

Դիվերգենտ մտածողության ախտորոշման հարցաշար

№	*Հարց*
1	Ի՞նչ կլիներ, եթե աշխարհում բոլորը խոսեին մեկ լեզվով: Ի՞նչ առավելություններ կտար դա:
2	Ինչպիսի՞ն կլիներ 1800-ական թվականները համացանցի առկայության դեպքում:
3	Եթե Ձեզ բոլորը մոռանան, ո՞րը կլինի Ձեր առաջին հարցը:

Ներկայացված պատասխանների վերլուծությունը վկայում է, որ սովորողները դրսևորում են դիվերգենտ մտածողության միջին աստիճան: Նրանց պատասխանները խիստ բնորոշ են բազմակողմանի, հիպոթետիկ և ստեղծագործական մտածողությանը՝ ընդգծելով ոչ միայն երևույթների տարբերակված ընկալումը, այլ նաև պատճառահետևանքային կապերի որոնման, երևույթների հնարավոր զարգացումների կանխատեսման և ինքնուրույն վերլուծության կարողությունը:

Ընդհանուր առմամբ, սովորողների մոտ նկատվում է՝

- ճկուն մտածողություն,
- մշակութային և պատմական համատեքստերի իմացություն, օրիգինալության տարրեր,
- ոչ ստանդարտ մոտեցումների կիրառում՝ խնդիրներին պատասխանելիս:

Կատարված հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ դիվերգենտ մտածողությունը կարելի է նպատակային ձևով զարգացնել համապատասխան մեթոդների, միջավայրի և գործիքակազմի կիրառմամբ: Փորձարարական աշխատանքի ընթացքում նկատվել է աշակերտների մտածողության ճկունության, օրիգինալության և ստեղծագործական աճ: Փորձարարական աշխատանքի ընթացքում 67 աշակերտների մասնակցությամբ անցկացված փուլային աշխատանքները ցույց տվեցին, որ ստեղծագործական առաջադրանքները, խաղային մեթոդները և ոչ ստանդարտ խնդիրների լուծման վարժությունները զգալիորեն նպաստում են մտածողության ճկունության և օրիգինալության բարձրացմանը:

Ստորև առաջարկվում են տեխնիկաները՝ զարգացնելու աշակերտների դիվեգենտ մտածողությունը:

«Օգտագործիր առարկանայլ կերպ» վարժություն

Տրվում է առարկա (օրինակ՝ մատիտ), և աշակերտները պետք է մտածեն նրա ոչ ստանդարտ կիրառությունների մասին:

Դերային խաղեր

Աշակերտները ստանում են տարբեր դերեր և լուծում խնդիրներ իրենց դերում՝ զարգացնելով բազմակողմանի մտածողությունը:

Արվեստի ինտեգրում

Ներկառուցել նկարչություն, երաժշտություն կամ թատերական ձևեր դասավանդման մեջ՝ խթանելու ստեղծագործական մոտեցումը:

Երկու իրերի համադրություն

Ուսանողները փորձում են միավորել երկու անսովոր կամ տարբեր իրեր՝ ստեղծելով նոր, անսովոր գաղափարներ (օրինակ՝ «պահարան+ սմարթֆոն»՝ ի՞նչ նորարական սարք կարող է ստացվել):

Գրականություն

1. Богдановская Ю. А. Конвергентное и дивергентное мышление в учебном процессе, 2014.
2. Kolb Y. Learning Styles and Learning Spaces: Enhancing Experiential Learning in Higher Education, 2005.
3. https://www.indeed.com/career-advice/career-development/type-of-thinking

Развитие дивергентного мышления в процессе обучения

Григорян Анна
Факультет социальных наук,
«Школьная педагогика и методика», II курс,
руководитель магистерской диссертации:
кандидат педагогических наук, доцент: Л. Багдасарян

Резюме

***Ключевые слова**: образовательный процесс, многостороннее (всестороннее) мышление, творческий рост, стимулирующая среда, идеи, когнитивное мышление*

В статье раскрывается сущность дивергентного мышления, его основные характеристики, отличие от конвергентного мышления. Экспериментальная работа проведена с 67 учащимися с целью оценки и развития уровня дивергентного мышления. Были использованы тесты Дж. Брунера на тип мышления и креативность.

Developing Divergent Thinking in the Learning Process

Grigoryan Anna
Faculty of Social Sciences
"School Pedagogy and Methodology",
Academic Supervisor: L. Baghdasaryan
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

***Key words**: educational process, versatile (multifaceted) thinking, creative growth, stimulating environment, ideas, cognitive thinking*

The article reveals the essence of divergent thinking, its main characteristics, and the distinction from convergent thinking. The experimental work was conducted with 67 learners with the aim of assessing and developing the level of divergent thinking. J. Bruner's tests on types of thinking and creativity, as well as questionnaires, were used.

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

ФИЗИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ И СПОРТИВНАЯ ПОДГОТОВКА

PHYSICAL EDUCATION AND SPORTS TRAINING

Սպորտի կառավարման գործընթացների արդյունավետությունը

Բեգլարյան Սաուն
Հասարակական գիտությունների ֆակուլտետ
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ., դոցենտ Ա. Բարսեղյան

Հանգուցային բառեր. *սպորտային մենեջմենթ, մենեջմենթի գործընթացի տարրեր, զարգացում, կոմերցիալացում, կառավարման գործունեություն*

Արդիականությունը: Սպորտի զարգացումը՝ իր ժամանակակից ընկալմամբ, սկսվել է դեռևս XVIII դարում՝ Անգլիայում: Այն ձևավորվեց որպես ասպետական ռազմական վարժությունների փոխարինող՝ նոր ձևավորվող միջին խավի՝ ջենթլմենների և էսկվայրների համար:

Այդ ժամանակ սպորտն ուներ սիրողական բնույթ, իսկ սպորտային ապրելակերպը ներառում էր հանգստի տարբեր ձևեր՝ ճանապարհորդությունից մինչև մարմնամարզություն և բռնցքամարտ:

Սիրողական սպորտի զարգացումը իրականացվում էր տարբեր կամավոր ակումբների և միությունների աջակցությամբ: Այսօր սպորտը վերածվել է մի տեսակ համաշխարհային հանդիսատեսային երևույթի, որտեղ ներգրավված են պրոֆեսիոնալ մարզիկներ, թիմեր, հանդիսատես և երկրպագուներ:

Սպորտն այժմ հանդիսանում է համաշխարհային զվարճանքի և հանգստի արդյունաբերության առանցքային ճյուղերից մեկը՝ մրցակցելով կինոյի և հեռուստատեսության հետ, իսկ մարզիկները դարձել են պոպ-մշակույթի աստղեր [1, 7; 6, 11; 7, 7]:

Ժամանակակից աշխարհում օրինակ՝ **թենիսը** համարվում է համաշխարհային զվարճանքի կոմերցիոն արդյունաբերության մի մաս, որը պահպանվում և խթանվում է համաշխարհային լրատվամիջոցների կողմից: Թենիսի կոմերցիալացման և մեդիատիզացիայի հետևանքները խոր ազդեցություն են թողել ժամանակակից պրոֆեսիոնալ մշակույթի և սպորտային կառույցների վրա:

1. Նախ՝ փոխվել են մարզիկների արժեքային կողմնորոշումները: Եթե նախկինում առաջնայինը ինքնազարգացումն ու անձնական բավարարվածությունն էր, ապա այսօր գերիշխում է հանդիսատեսին զվարճացնելու և սեփական շահերը բավարարելու մոտիվացիան:

2. Երկրորդ՝ ներկայիս թենիսում վերահսկողությունը հաճախ գտնվում է այն կազմակերպությունների ձեռքում, որոնք անմիջականորեն չեն մասնակցում մարզական գործընթացին՝ օրինակ՝ ATP, WTA, հովանավորներ, ԶԼՄ-ներ:

3. Երրորդ՝ կոմերցիալացման հետևանքով թենիսը, որը երբեմնի հոբբի էր կամ մարմնի զարգացման միջոց, ավելի ու ավելի է վերածվում բիզնեսի: Մարդիկ կառուցում են իրենց մարզական կարիերան որպես **բիզնես նախագիծ**, որտեղ տնտեսական մրցակցությունը երբեմն գերազանցում է սպորտային բաղադրիչին:

Եթե խոսենք մենեջմենթի մասին թենիսում և սպորտում ընդհանրապես, ապա կարելի է առանձնացնել մի քանի կարևոր ասպեկտներ [1; 3; 6; 11; 7; 16]:

Առաջինը՝ **սպորտային մենեջմենթի տեսությունը**: Սպորտային մենեջմենթը համարվում է մասնագիտացված ճյուղային մենեջմենթի տեսակ, որն զբաղվում է սպորտային կազմակերպությունների կառավարմամբ: Այս մոտեցման հիմքում կազմակերպությունը հանդիսանում է սպորտային մենեջմենթի առանցքային հասկացությունը:

Մենեջմենթի տեսանկյունից սպորտը միայն «մարդու նպատակային շարժողական գործունեություն» կամ մրցակցային գործընթաց չէ: Այն ոչ միայն ֆիզիկական կարողությունների զարգացման միջոցների և մեթոդների համախումբ է, այլ նաև **սոցիալական կառավարման օբյեկտ**:

Այսպիսով, սպորտը պետք է դիտարկել որպես ֆիզկուլտուրայի և սպորտի կազմակերպությունների բազմություն՝ մարզադպրոցներ, ակումբներ, թիմեր (ֆուտբոլ, հոկեյ, թենիս, բռնցքամարտ և այլն), մարզադաշտեր, ֆեդերացիաներ և այլ կառույցներ:

Բացի այդ՝ մասնագետները տարբերակում են մի քանի ֆունկցիոնալ տեսակներ՝

ստրատեգիական մենեջմենթ, ֆինանսական մենեջմենթ, անձնակազմի մենեջմենթ, նախագծային և նորարարական մենեջմենթ, ինչպես նաև մարքեթինգային մոտեցումներ սպորտում [4, 5; 8, 12; 14]:

Սպորտային մենեջմենթը կապված է շուկայական տնտեսության հիմնական գործոնների հետ՝ սեփականության ձևերի, մրցակցության, ազատ ընտրության իրավունքի (ինչպես սպորտային ձեռնարկատիրոջ, այնպես էլ սպորտային ծառայությունների սպառողի համար), նաև՝ ձեռնարկատիրոջ եկամտի կախվածություն՝ կապված իր աշխատանքի արդյունքների և սպորտային ծառայությունների շուկայի իրավիճակի հետ:

Սպորտի ընդգրկումը շուկայական հարաբերությունների համակար-

գում բերում է այս ոլորտի կառավարման յուրահատուկ առանձնահատկություններին:

Սպորտային կազմակերպության նպատակները սովորաբար ամրագրվում են երեք հիմնական փաստաթղթերում՝

- կազմակերպության **կանոնադրության մեջ**,
- **ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման հայեցակարգում**,
- **թիրախային ծրագրում**, որը վերաբերում է տվյալ մարզաձևին կամ տարածքային միավորին (շրջան, քաղաք, մարզ և այլն):

Բացի ընդհանուր նպատակից՝ յուրաքանչյուր կազմակերպությունում ձևակերպվում են նաև **մասնավոր նպատակներ**, որոնք փաստաթղթերում հաճախ կոչվում են կազմակերպության **խնդիրներ** [9; 10; 13]:

Սպորտային մենեջմենթի համակարգում առանձնացվում են ընդհանուր և կոնկրետ ֆունկցիաներ, որոնք փոխկապակցված են և գործում են միասնական գործընթացի շրջանակում:

Ահա օրինակային աղյուսակ 1-ը, որը ցույց է տալիս դրանց փոխկապակցությունը.

Աղյուսակ 1

Սպորտային կազմակերպության մենեջմենթի ֆունկցիաների փոխազդեցությունը

Կոնկրետ ֆունկցիաներ	*Պլանավորում*	*Կազմակերպում*	*Մոտիվացիա*	*Վերահսկում*
Աշխատողների ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքի կազմակերպում	X	X	X	X
Արտադրական ֆիզկուլտուրայի կազմակերպում	X	X	X	X
Մարքեթինգ և գովազդ	X	X	X	X
Բարձրակարգ մարզիկների և մարզական պաշարի պատրաստում	X	X	X	X
Սպորտային միջոցառումների անցկացում	X	X	X	X
Անձնակազմի ընտրություն, արդյունավետ օգտագործում և որակավորման բարձրացում	X	X	X	X
Կազմակերպության ֆինանսական մենեջմենթ	X	X	X	X

Սպորտային կառավարման բոլոր ընդհանուր և հատուկ գործառույթները գործում են միասնության մեջ՝ ձևավորելով կազմակերպչական և տեխնոլոգիական որոշակի գործընթաց: Գիտական վերլուծությունը և ֆիզկուլտուրայի ու սպորտի բաղադրիչների դասակարգումը հնարավորություն են տալիս առանձնացնել սպորտային ակումբների կառավարման հիմնական ֆունկցիաները, ինչպես դա ներկայացված է աղյուսակում:

Կառավարման գործընթացը իրենից ներկայացնում է ցիկլային գործողությունների մի ամբողջություն, որ ուղղված է խնդրի բացահայտմանը, դրա օպտիմալ լուծման որոնմանը և ընդունված որոշման արդյունավետ իրագործմանը, որի վերջնական արդյունքը խնդրի վերացումն է [1-3]:

Կառավարչական խնդիրը առաջանում է այն դեպքում, երբ կառավարվող օբյեկտի փաստացի վիճակի որոշ պարամետրեր չեն համապատասխանում պլանավորված կամ սահմանված պարամետրերին:

Խնդրային իրավիճակի աղբյուրը կազմակերպության մեջ կարող է լինել.

- նախատեսված վիճակից շեղումներ, որոնք նկատվում են տվյալ պահին կամ կանխատեսվում են ապագայում,
- նպատակների կամ պլանային ցուցանիշների փոփոխություն,
- արտաքին կամ ներքին գործոնների ազդեցություն կառավարվող օբյեկտի վրա:

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ մենեջմենթը սպորտում նույնքան անհրաժեշտ է, որքան կառավարման ցանկացած այլ ոլորտում:

Ժամանակակից սպորտում հաճախ առաջանում են կազմակերպչական բնույթի բազմաթիվ խնդիրներ, որոնք պահանջում են հատուկ պատրաստված կադրեր՝ սպորտային մենեջերներ, որոնք ունակ են դրանք ճիշտ ձևակերպել և լուծել՝ անկախ մարզաձևից՝ լինի դա թենիս, բռնցքամարտ, թե քերլինգ:

Բացի այդ՝ սպորտը լայն իմաստով ոչ պակաս նշանակալի հասարակական երևույթ է, քան սպորտային ռեկորդները կամ մրցանակները:

Սպորտը հանդիսանում է միլիոնավոր մարդկանց ուրախություն պարգևող գործունեություն, որտեղ ներգրավված են հսկայական քանակությամբ կամավոր և հանրային օգնականներ:

Վերջին տարիներին մեր երկրում նկատվում է մեծ հետաքրքրություն ինչպես պրոֆեսիոնալ, այնպես էլ զանգվածային սպորտի հանդեպ:

Պետությունն ու մասնավոր հատվածը մեծ ֆինանսական միջոցներ

են հատկացնում սպորտի զարգացմանը, սակայն դա միշտ չէ, որ հանգեցնում է սպասված արդյունքի:

Արդյունքում՝ որոշ սպորտային ակումբների սեփականատերեր ստիպված են լինում փակել դրանք՝ շահութաբեր չլինելու պատճառով, իսկ պետության ղեկավարները և միլիոնավոր երկրպագուներ՝ հիասթափվել և մեղավորներ փնտրել հերթական ձախողման համար՝ Օլիմպիական խաղերում, աշխարհի կամ Եվրոպայի առաջնություններում:

Այս իրադրության մեջ ավելի հաճախ է հնչում գրագետ սպորտային մենեջմենթի անհրաժեշտության միտքը, քանի որ միայն այս ոլորտի մասնագետներն են ունակ արդյունավետ կառավարել սպորտային ներդրումները:

Հենց այս պատճառով սպորտային կազմակերպությունների կողմից աճում է հետաքրքրությունը պրոֆեսիոնալ մենեջերների նկատմամբ:

Ի՞նչով են զբաղվում սպորտային մենեջերները: Նրանց հիմնական գործառույթները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- **Սպորտային մենեջերները** աշխատում են օլիմպիական շարժման կառավարման մարմիններում՝ տարբեր մակարդակներում:
- Նրանք զբաղվում են **սպորտային միջոցառումների կազմակերպմամբ և կառավարմամբ**՝ սկսած քաղաքի, մարզի, հանրապետության առաջնություններից մինչև աշխարհի առաջնություններ և օլիմպիական խաղեր:
- Նրանք ղեկավարում են սեփական **սպորտային բիզնես-նախագծեր**՝ կոմերցիոն մրցաշարեր, սպորտային փառատոններ, զանգվածային մրցումներ:
- Նրանք կազմակերպում են **մարզական թիմերի աշխատանքը**՝ իրականացնելով անձնակազմի և մարզիկների ընտրություն, տոմսային ծրագրերի մշակում, կազմակերպության ռազմավարությունների ձևավորում, ինչպես նաև աշխատանք երկրպագուների և արտաքին շահառուների հետ:

Շուկայի պայմաններին բնորոշ են անորոշությունն ու ձեռնարկատիրական ռիսկը:

Դրանք պահանջում են, որ մենեջերները լինեն ինքնուրույն և պատասխանատու իրենց որոշումների համար:

Սպորտային մենեջերի պրոֆեսիոնալիզմը դրսևորվում է՝

- կազմակերպության կառավարման տեխնոլոգիաների և շուկայի օրենքների իմացությամբ,

- կոլեկտիվի համախմբված աշխատանքը կազմակերպելու ունակությամբ,
- կազմակերպության զարգացման հեռանկարները կանխատեսելու կարողությամբ:

Այսօր սպորտային մենեջմենթի հիմնական խնդիրները կապված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի ֆինանսական մասի զարգացման օբյեկտիվ ուղիների որոնման հետ:

Այդ նպատակով ապագա մասնագետները ուսումնասիրում են.

- ֆիզկուլտուրայի կազմակերպությունների տիպաբանությունը և դրանց կառավարման մեթոդները,
- պետական և ոչ պետական մարմինների դերը սպորտի զարգացման գործում,
- ինչպես նաև տնտեսական հարաբերություններում էթիկայի հիմունքները:

Նման ուսուցման գլխավոր նպատակը այն է, որ ֆիզկուլտուրայի և սպորտի կազմակերպությունները ժամանակակից շուկայական հարաբերությունների պայմաններում դառնան **կայուն և մրցունակ**, չզիջեն արտասահմանյան մակարդակին:

Խոստումնալից ոլորտներ են համարվում ալպինիզմը, բռնցքամարտը, վոլեյբոլը, գոլֆը, թեթև աթլետիկան, գեղարվեստական մարմնամարզությունը, թենիսը, լողը, բադմինթոնը, ֆուտբոլը և բասկետբոլը: Այս մարզաձևերում սպորտային մենեջմենթը շարունակում է որոնել նոր զարգացում և առաջխաղացման ուղիներ:

Պետք է նշել, որ սպորտի կառավարման խնդիրները կապված են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի ֆինանսական մասի զարգացման օբյեկտիվ ուղիների որոնման հետ: Այդ նպատակով ապագա մասնագետները դատում են ոչ թե ըստ նրա, թե ինչ է նա անում անձամբ, այլ՝ ինչպես է նա կարողանում ներշնչել և կազմակերպել մյուսների աշխատանքը:

Կառավարչական գործունեությունը սպորտի գործարկման և զարգացման ամենակարևոր գործոններից մեկն է:

Պատմականորեն մեր երկրում ձևավորվել էր այն իրավիճակը, որ սպորտի կառավարմամբ զբաղվում էին մարզիչները, հրահանգիչները և մեթոդիստները:

Շատերը միաժամանակ համատեղում էին մարզչական-դաստիարակչական աշխատանքը՝ ակումբի, սպորտային միության կամ ֆեդերա-

ցիայի կառավարման գործընթացների հետ, թեև նրանց պաշտոնական պարտականությունները նման գործառույթներ չէին նախատեսում:

Սակայն ժամանակի ընթացքում սպորտում ձևավորվեց մենեջմենթը՝ որպես առանձնահատուկ մասնագիտական գործունեություն, որը դարձավ աշխատանքի բաժանման և համագործակցության արդյունք: Ինչպես նշվել է, սպորտային մենեջերների ի հայտ գալու հիմնական պատճառը եղավ շուկայական տնտեսությունը, որը առաջադրեց նոր պահանջներ ղեկավարներին՝ տնտեսական մրցակցության պայմաններում արդյունավետ աշխատելու համար:

Այսպիսով՝ սպորտային մենեջերների պատրաստման փորձի և շուկայական պահանջների վերլուծությունը ցույց է տալիս, որ սպորտային կազմակերպությունների մեծ մասը այսօր **մասնագիտացված հմտություններով և ունակություններով մենեջերների** կարիք ունի:

Ահա դրանցից հիմնականները.

- ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաների և ծրագրերի իմացություն,
- անգլերենի տիրապետում,
- կազմակերպության տեղեկատվական քաղաքականության ձևավորման կարողություն,
- գրասենյակի աշխատանքի կազմակերպում,
- մարքեթինգային և կառավարչական ռազմավարությունների իմացություն,
- մրցումների կանոնակարգերի և կանոնների իմացություն՝ սպորտային իրադարձությունների կազմակերպման համար:

Ցավոք, ներկայումս պետք է արձանագրել, որ սպորտային մենեջերների շուկան դեռևս լիովին չի ձևավորվել: Այնուամենայնիվ, **մասնագիտական ստանդարտների և պարտադիր ատեստավորման մեխանիզմների ներդրումը** թույլ կտա մի կողմից՝ գնահատել սպորտային կառավարման կադրերի իրական ներուժը, իսկ մյուս կողմից՝ որոշել ոլորտում առավել առաջնահերթ մասնագիտությունները:

Գրականություն

1. Գյոզալյան Ա., Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մենեջմենթ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2016:
2. Հովհաննիսյան Ա., Մենեջմենթի հիմունքներ. դասագիրք, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Երևան, 2015, 617 էջ:
3. Алешин В. В., Переверзин И. И. Менеджмент и маркетинг на европейских стадионах. Москва: Советский спорт, 1999.
4. Алёшин В. В., Переверзин И. И. Менеджмент спортивного сооружения. Москва, 1996.
5. Веснин В. Р. Менеджмент: учебник (4 -е изд.), Москва: Проспект. 2012, - 616 с.
6. Дафт Р. Л. Менеджмент; 6-е изд., Санкт-Петербург: Питер, 2004. 864 с.
7. Друкер П. Ф., Макьярелло Дж. А. Менеджмент. Санкт-Петербург: Вильямс, 2010. 704 с.
8. Ефимов В. К. и др. Управление в сфере физической культуры и спорта: Учебное пособие, ч.1. Малаховка: МГАФК, 1996.
9. Кравченко А. И. История менеджмента. 5-е изд., Санкт-Петербург: Трикста, 2005. 560 с.
10. Кузин В. В., Кутепов М. Е. Спонсорство в спорте. Москва: РГАФК, 1994.
11. Кузин В. В., Кутепов М. Е. Многоуровневая подготовка спортивных кадров за рубежом. Москва: ФОН, 1999.
12. Кутепов М. Е., Сапронов О. П. Спортивный менеджмент в муниципалитетах зарубежных стран. Москва: РГАФК, 1999.
13. Камалетдинов В. Т. Культура управленческой деятельности. Челябинск: Урал, ГАФК, 2000, 167 с.
14. Михалёв В. И. Управление сферой спорта на межрегиональном уровне. Омск: СибГАФК, 1998.
15. Оу И. Японский менеджмент. Санкт-Петербург: ЛитРес, 2007, -160 с.
16. Фатхутдинов Р. А. Стратегический менеджмент. Учебник. 7-е изд., испр. и доп., Москва: Дело, 2005, - 448 с.

Эффективность процессов спортивного менеджмента

Бегларян Сасун
Факультет социальных наук,
«Физическое воспитание и спортивная подготовка»,
руководитель магистерской диссертации:
кандидат педагогических наук, доцент А. Барсегян

Резюме

Ключевые слова: *спортивный менеджмент, элементы процессов управления, развитие, коммерциализация, управленческая деятельность*

В статье рассматривается роль менеджмента в современном спорте, объясняется, что представляет собой менеджмент и какую роль он играет в формировании современной спортивной индустрии. Установлено, что спортивный менеджмент является самостоятельным видом профессиональной деятельности. Он направлен на эффективное достижение целей организаций физической культуры и спорта, функционируя в рыночных условиях и максимально эффективно используя материальные, трудовые и информационные ресурсы.

The Effectiveness of Sports Management Processes

Beglaryan Sasun
Faculty of Social Sciences,
"Physical Education and Sports Training",
Academic Supervisor: A. Barseghyan
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *sports management, elements of management processes, development, commercialization, management activities*

The article presents the role of management in contemporary sports, explaining what management entails and the role it plays in shaping the modern sports industry. It has been established that sports management is an independent type of professional activity, aimed at the effective achievement of the objectives of physical culture and sports organizations, operating under market conditions and utilizing material, human, and informational resources in the most efficient way possible.

«Շախմատ» առարկայի ուսուցման ժամանակակից մեթոդաբանությունը՝ հիմնված ՀՊՉ-ի պահանջների և ինտերակտիվ մոտեցումների վրա

Մարտիրոսյան Լիա
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ., դոցենտ Վ. Նազարյան

Հանգուցային բառեր. *շախմատ, չափորոշիչ, ինտերակտիվ մեթոդներ, կարողունակություն, դասագիրք*

Շախմատը որպես պարտադիր ուսումնական առարկա Հայաստանի հանրակրթական դպրոցներում ներդրվեց 2011 թվականին՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև Հայաստանի շախմատի ակադեմիայի և շախմատի ֆեդերացիայի նախաձեռնությամբ: Այս կարևոր կրթական նորարարությամբ Հայաստանը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որտեղ շախմատը դասավանդվում է պետական մակարդակով՝ որպես առանձին պարտադիր առարկա:

Շախմատ առարկայի ներդրումն իրականացվեց Հանրակրթական պետական չափորոշչի (ՀՊՉ) հիման վրա՝ հաշվի առնելով ժամանակակից կրթության հիմնարար սկզբունքները:

Հայաստանի Հանրապետությունում «Շախմատի»՝ որպես ուսումնական առարկայի դասավանդումը յուրատիպ պայմաններ է ստեղծում սովորողների որոշումների ընդունման արագության, ժամանակի և տարածության մեջ փոփոխությունների համարժեք ընկալման, շարժումների կոորդինացիայի, ուշադրության կենտրոնացվածության զարգացման համար [10, 117-129]:

«Շախմատ» առարկայի ուսուցման նպատակն է տարրական դպրոցի սովորողների մոտ խթանել որոնողական գործունեությունը՝ ուղղված փոփոխվող շախմատային իրավիճակներում կողմնորոշվելուն, շախմատային խնդիրների լուծման տարբերակներ գտնելուն, սովորողների կոնվերգենտ և դիվերգենտ, քննադատական և ստեղծագործական մտածողությունը զարգացնելուն: Շախմատ» ուսումնական առարկայի յուրացման ընթացքում զարգանում են սովորողների մտավոր գործողությունների ներքին պլանավորման, բարդ իրավիճակներում որոշումների ըն-

դունման, ինքնավերլուծության կարողությունները, հուզական ինտելեկտը, ինչպես նաև վարքի ինքնակազմակերպումը, կարգապահությունը և պատասխանատվությունը [2]:

Ժամանակակից կրթական մոտեցումները առաջնահերթություն են տալիս կարողունակահեն կրթության մոդելին, որը հիմք է հանդիսանում ուսուցման գործընթացի կազմակերպման համար: Այդ մոտեցումները մանրամասն ներկայացված են 2021 թվականին ընդունված հանրակրթության նոր պետական չափորոշիչում, որը սահմանում է սովորողի գիտելիքների, հմտությունների, արժեքների և դիրքորոշումների զարգացումը [1]:

Շախմատը իր բովանդակությամբ և կառուցվածքով ստեղծում է առավել նպաստավոր միջավայր՝ չափորոշիչում սահմանված կրթական նպատակներն ու կարողունակությունները իրականացման համար:

Քանի որ «Շախմատ» առարկան դասավանդվում է տարրական դպրոցում, առավել արդյունավետ է դասագործընթացում կիրառել ինտերակտիվ և խաղային մեթոդներ, որոնք խթանում են սովորողների ուշադրության կենտրոնացմանը, ստեղծագործական և քննադատական մտածողությանը:

Այս բոլոր պահանջներն ու մոտեցումները հաշվի առնելով՝ 2023–2025 թվականներին մշակվել են նոր դասագրքերը՝ «Շախմատ 2» [3], «Շախմատ 3» [4] և «Շախմատ 4» [5], ինչպես նաև դրանց ուսումնաօժանդակ նյութերը, որոնք ուղղված են կարողունակահեն կրթության և ինտերակտիվ ուսուցման նպատակների արդյունավետ իրականացմանը:

Դասագրքերում պահպանված են մանկավարժության գիտականության, մատչելիության, աստիճանական բարդացման, կյանքի և պրակտիկայի հետ կապի սկզբունքները: Բովանդակությունը ներառում է այնպիսի նյութեր, որոնք ապահովում են միջառարկայական կապեր, կյանքից օրինակներ: Դասերը կառուցված են ուսուցման պարուրաձև սկզբունքով՝ պահպանելով գիտականությունը և հաշվի առնելով կրտսեր դպրոցականների հնարավորությունները [6, 6]:

Ստորև ներկայացված են դասագրքերից կոնկրետ օրինակներ, ինչպես նաև առաջարկվող ինտերակտիվ մեթոդների կիրառության տարբերակներ:

Դասագրքում ներկայացված տվյալ թեմայի առաջադրանքի (օրինակ 1) դեպքում արդյունավետ է կիրառել խմբային աշխատանքի մեթոդը, որը համարվում է ինտերակտիվ ուսուցման հիմնական ձևերից մեկը: Այս

մեթոդը նպաստում է սովորողների համագործակցային հմտությունների, փոխօգնության, հաղորդակցման և վերլուծական մտածողության զարգացմանը, ինչպես նաև խթանում է յուրաքանչյուր մասնակցի ակտիվ ներգրավվածությունը ուսուցման գործընթացում:

Կազմեք չորսական սովորողներից խմբեր:

Ուշադիր կարդացեք և կատարեք առաջադրանքը:

Տրամագիր 3-ի բոլոր մասերում քայլը սպիտակներինն է:

Փորձեք մեկ քայլից հայտարարել մատ:



Տրամագիր 3

Օրինակ 1. «Շախմատ 2» դասագիրք, «Մատ» թեմա [3, 41]

Խմբային աշխատանքի մեթոդը մշակվել և զարգացվել է սոցիալական կառուցիվիզմի տեսության շրջանակում՝ հիմնվելով Լև Վիգոտսկու (L. Vygotsky, 1978) [7, 84-91] գաղափարների վրա, ըստ որի՝ սովորողը գիտելիք է կառուցում համագործակցության և փոխգործակցության միջոցով:

Հաջորդ առաջադրանքը ներկայացված է 4-րդ դասարանի դասագրքում (օրինակ 2): Այն նպատակահարմար է կազմակերպել մտագրոհի մեթոդով, որը խթանում է սովորողների ակտիվ մասնակցությունը, ստեղծագործ մտածողությունը և փոխներգործուն քննարկումները:

Այս մեթոդի հեղինակն է Ա. Ֆ. Օսբոռնը [11]: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ սովորողները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն սովորողները [9, 27]:

Տրամագիր 3-ում քայլը սպիտակներինն է: Ընկերոջդ հետ քննարկի՛ր և պատասխանի՛ր հարցերին:

1. Ինչպիսի՞ դիրքեր ունեն արքաները:
2. Ո՞ր կողմի խաղաքարերն են ավելի ակտիվ:
3. Ինչպիսի՞ն է կողմերի զինվորային կառուցվածը:
4. Որո՞նք են դիրքի թույլ դաշտերը:
5. Սպիտակներն ինչպե՞ս կարող են գրավել թույլ դաշտերը և հասնել հաղթանակի:



Տրամագիր 3

Օրինակ 2. «Շախմատ 4» դասագիրք, «Ընթացիկ պլան.թույլ դաշտեր» թեմա [5, 61]

Ինչպես հայտնի է, ինտերակտիվ մեթոդներից ամենաարդյունավետներից մեկը նախագծային ուսուցման մեթոդն է: Այս մոտեցման տեսական հիմքերը մշակել է XX դարի ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուին [8]:

Նախագծային ուսուցումը ներկայացնում է ուսումնաճանաչողական գործունեության այն ձևը, որը հիմնված է համագործակցային և փորձառական ուսուցման սկզբունքների վրա: Այս մեթոդի շրջանակներում սովորողները ներգրավվում են կարճաժամկետ կամ երկարաժամկետ նախագծային աշխատանքներում, որոնց ընթացքում նրանք փորձում են լուծել տարբեր առարկաների բովանդակությանը և իրական կյանքի խնդիրներին առնչվող առաջադրանքներ:

Նախագծային ուսուցման մեթոդը ոչ միայն նպաստում է գիտելիքների գործնական կիրառմանը, այլև զարգացնում է սովորողների ստեղծագործականությունը, ինքնուրույնությունը և պատասխանատվության զգացումը: Այն հնարավորություն է տալիս յուրաքանչյուր սովորողի ճանաչելու և բացահայտելու սեփական կարողությունները՝ դուրս գալով դասարանային սահմաններից: Դասագրքերում ներկայացված են նախագծային աշխատանքի կազմակերպման բազմազան ձևեր և տարբերակներ, որոնք հնարավորություն են տալիս սովորողներին կիրառել իրենց գիտելիքներն ու հմտությունները իրական իրավիճակներում: Ստորև ներկայացված է դրանցից մեկը՝ օրինակ 3, որը կարելի է կիրառել որպես նախագծային ուսուցման արդյունավետ ձև դասարանում:

Հավաքի՛ր կենսագրական տեղեկություններ աշխարհահռչակ շախմատիստ Լևոն Արոնյանի մասին:

Օրինակ 3
«Շախմատ 2» դասագիրք, «Ամփոփում. դաս-մրցույթ. մատ մեկ քայլից» թեմա [3,77]

Եզրակացություն

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Շախմատ» առարկայի դասավանդման գործընթացում ժամանակակից մեթոդաբանության կիրառումը, ինչպես նաև նոր դասագրքերի և ուսումնաօժանդակ նյութերի նպատակային և արդյունավետ օգտագործումը հնարավորություն են տալիս հասնել հանրակրթության պետական չափորոշչով սահմանված կրթական վերջնարդյունքներին:

Ավելին, իր կառուցվածքով և բովանդակությամբ շախմատի ուսուցումը նպաստում է ոչ միայն մասնագիտական, այլև անձնային և սոցիալական կարողությունների ձևավորմանը՝ զարգացնելով սովորողների նախաձեռնողականությունը, ինքնուրույն մտածողությունը և համագործակցային հմտությունները:

Այս ամենը վկայում է, որ ժամանակակից մոտեցումներով կազմակերպված շախմատի դասավանդումը կարող է դառնալ կրթության ընդհանուր որակի բարձրացման կարևոր գործոն՝ նպաստելով ստեղծագործ, քննադատաբար մտածող և պատասխանատու անձի ձևավորմանը:

Գրականություն

1. Հանրակրթության պետական չափորոշիչ, ՀՀ Կառավարության որոշում N 136-ն, 2021:
2. Հանրակրթական ուսումնական հաստատություններում «Շախմատ» առարկայի 2-4-րդ դասարանների առարկայական չափորոշիչ, ՀՀ ԿԳՄՍ հրաման N37, 2023:
3. Մարտիրոսյան Լ., Միսակյան Ս., Մովսիսյան Ն., «Շախմատ 2» դասագիրք, Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ, 2023:
4. Մովսիսյան Ն., Մարտիրոսյան Լ., «Շախմատ 3» դասագիրք, Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ, 2024:
5. Մարտիրոսյան Լ., Սարգսյան Շ., «Շախմատ 4» դասագիրք, Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ, 2025:
6. Մարտիրոսյան Լ., Սարգսյան Շ., Կոստանյան Է., «Շախմատ 4» մեթոդական ուղեցույց. Երևան, Հայաստանի շախմատի ակադեմիա հիմնադրամ, 2025:
7. Վիգոտսկի, Լ. Ս. (1978). Միտքը հասարակության մեջ. Բարձրագույն հոգեբանական գործընթացների զարգացումը. Քեմբրիջ, Մասաչուսեթս. Հարվարդի համալսարանի հրատարակչություն:
8. Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան (wikipedia.org)-Նախագծային մեթոդ – (հասանելի է 2022թ, հոկտեմբեր):
9. Խաչատրյան Սերոբ, Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, 2020:
10. Sargsyan A., Khachatryan A., Lputyan G. Current Level of Psychological Components of Assimilation of Chess as a School Subject and Ways of Their Activation. Theoretical and Practical Issues of Chess Education in School, International Chess Conference, Tsaghkadzor, 2016.
11. Osborn A. F. Applied Imagination, New York, 1953.

Современная методика преподавания предмета «Шахматы» на основе требований Государственного стандарта общего образования и интерактивных подходов

Мартиросян Лия
Факультет социальных наук,
«Физическое воспитание и спортивная подготовка»,
руководитель магистерской диссертации:
кандидат педагогических наук, доцент В. Назарян

Резюме

Ключевые слова: *шахматы, стандарт, интерактивные методы, компетентность, учебник*

Статья представляет современные методы преподавания предмета «Шахматы» в начальной школе, основанные на Государственном стандарте общего образования и интерактивных подходах. Введение шахмат в качестве обязательного предмета в Армении с 2011 года способствует развитию навыков принятия решений, пространственного мышления, концентрации внимания и координации движений у учеников.

Contemporary Methodology for Teaching the Subject "Chess" Based on the Requirements of the State Standard of General Education and Interactive Approaches

Martirosyan Lia
Faculty of Social Sciences,
"Physical Education and Sports Training",
Academic Supervisor: V. Nazaryan,
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *chess, standard, interactive methods, competency, textbook*

The article presents modern methodologies for teaching chess in elementary schools, based on the State Standard of General Education and interactive approaches. Introduced in Armenia in 2011 as a compulsory subject, chess promotes decision-making skills, spatial awareness, attention control, and coordination among students.

Լողի դերն ու նշանակությունը պատանիների մարզման գործընթացում

Մեսրոպյան Մանուկ
Հասարակական գիտությունների ֆակուլտետ,
«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ»,
մագիստրոսական թեզի ղեկավար՝
մ. գ. թ., դոցենտ Վ. Նազարյան

Հանգուցային բառեր. *լող, սպորտ, լողավազան, ֆիզիկական զարգացում, դեռահասներ*

Արդիականություն: Ժամանակակից հասարակության զարգացման փուլում անհրաժեշտ է ունենալ ոչ միայն ինտելեկտուալ և ստեղծագործող, այլև ֆիզիկապես առողջ մարդիկ: Այս համատեքստում պետք է նշել, որ առողջ ապրելակերպի ձևավորման գործում սպորտը ունի մեծ դեր: Անկասկած, շարժողական ակտիվությամբ պետք է զբաղվել դեռ մանկությունից՝ այն ժամանակ, երբ ձևավորվում են օրգանիզմի բոլոր համակարգերը:

Ընտրելով այնպիսի սպորտաձև, որը դրական ազդեցություն կունենա երիտասարդների հոգեէմոցիոնալ ոլորտի և ֆիզիկական կարողությունների վրա, կարևոր է կանգ առնել լողի վրա:

Լողի համալիր պարապմունքները անհրաժեշտ են մարդկանց կյանքի ընթացքում ներդաշնակ զարգացման համար: Ջրում անցկացվող պարապմունքները բազմակողմանի օգուտ են տալիս՝ պահպանում են առողջությունը, բարելավում մտավոր գործընթացներն ու էմոցիոնալ վիճակը մարդու զարգացման տարբեր փուլերում: Լողի բազմաթիվ տեսակներից մասնագետները հատկապես առանձնացնում են երկուսը՝ առողջարար և բուժական լողը [3, 7; 6, 11; 7, 7]:

Առողջարար լողը առողջության և ֆիզիկական զարգացման ամրապնդման ամենաարդյունավետ միջոցներից մեկն է: Այն բնորոշվում է մրցակցային ցածր մակարդակով, մասնակիցների միջև մրցակցության բացակայությամբ, ուղղված է առողջության բարելավմանը, ինքնազարգացմանը, ինչպես նաև բեռների աստիճանական և հաջորդական ավելացմանը:

Բուժական լողը միավորում է երկու գործընթաց՝ հատուկ մարզական և մանկավարժական: Այն ունի առանձնահատուկ նշանակություն բուժական ֆիզկուլտուրայի (ԼՖԿ) համակարգում՝ համատեղելով ընդհանուր

ազդեցությունը (առողջության ամրապնդում, շարժողական հմտությունների զարգացում, կամային որակների ձևավորում) և հատուկ ազդեցությունը (օրգանիզմի խախտված ֆունկցիաների վերականգնում):

Լողի **համընդհանուրությունը** արտահայտվում է հետևյալ սկզբունքներով [2, 7; 1, 11; 4, 7].

▪ Լողը համընդհանուր սպորտաձև է, որտեղ շարժման ընթացքում ակտիվանում են բոլոր մկանները՝ հավասարաչափ բեռնվածությամբ: Կանոնավոր լողի պարապմունքների շնորհիվ յուրաքանչյուր մարդ կարող է կատարելագործել իր մարմնի գծերը՝ առանց երկար վազքերի կամ ժամերով մարզասրահում վարժություններ անելու:

▪ Լողը անվտանգ է հոդերի և ողնաշարի համար՝ ի տարբերություն աթլետիկայի, որտեղ միշտ կա ձգվածքի կամ տեղահանում ստանալու վտանգ: Այն մարդիկ, ովքեր ունեն շարժողական համակարգի խնդիրներ, բայց չեն ցանկանում հրաժարվել շարժումից, լողի մեջ գտնում են հիանալի տարբերակ՝ մարմնին անհրաժեշտ էներգիա հաղորդելու համար:

▪ Լողը նաև օգնում է ամրապնդել իմունային համակարգը և բարձրացնել օրգանիզմի պաշտպանական ֆունկցիաները:

Լողի դրական ազդեցության հիմնական ուղղություններից մեկն էլ շնչառական համակարգի գործունեության մակարդակի բարձրացումն է: Մեծ դեր ունի օրգանիզմի հագեցումը թթվածնով: Այս դեպքում կարևոր է հիշել տերմինաբանական կողմը. «աերոբ» բառը նշանակում է «թթվածնով»:

Լողը ֆիզիկական դաստիարակության համակարգում ներկայացված է որպես.

▪ Կենսական անհրաժեշտ հմտություն և մասսայական միջոց բազմակողմանի ֆիզիկական դաստիարակության, կոփման, առողջացման և տարբեր տարիքի մարդկանց ակտիվ հանգստի գործում.

▪ Մարդկանց կյանքի, աշխատանքի, երկրի պաշտպանության նախապատրաստման մասնագիտական, կիրառական միջոց.

▪ Բարձրագույն նվաճումների մարզաձև:

Լողը ոչ միայն սպորտի տեսակի կամ հանգստի ձև է, այլև կենսակերպի մի մաս, որն իր մեջ ներառում է առողջապահական, հոգեբանական, սոցիալական և մշակութային բազմաշերտ արժեքներ: Հին Հունաստանում և Հռոմում լողը եղել է դաստիարակության կարևոր բաղադրիչ, իսկ այսօր այն համարվում է համաշխարհային սպորտի և առողջ կենսակերպի հիմնական բաղադրիչներից մեկը [1, 7; 2, 10; 3, 4]:

Կանոնավոր լողով զբաղվելը նպաստում է մարդու ամբողջական զարգացմանը՝ մարմնի ամրացումից մինչև մտավոր և հոգեկան հավա-

սարակշռության ձեռքբերում:

I. Ֆիզիոլոգիական և առողջական ազդեցություններ

1. Սրտանոթային համակարգ

Լողը համարվում է բարձր արդյունավետությամբ աերոբիկ ծանրաբեռնվածություն: Մշտական լողորդների մոտ նկատվում է՝

- սրտի հզորացման և դիմադրողականության բարձրացում,
- արյան շրջանառության բարելավում,
- խոլեստերինի մակարդակի նվազում,
- արյան ճնշման կայունացում:

Գիտական ուսումնասիրությունների համաձայն՝ շաբաթական առնվազն 3 անգամ 40-60 րոպե լողացող մարդկանց մոտ սրտանոթային հիվանդությունների ռիսկը նվազում է մոտ 30-40 %:

2. Մկանային համակարգ և շարժողական զարգացում

Լողի ժամանակ գործի է դրվում մոտ 90 % մկանային համակարգը: Տարբեր լողաոճերը տարբեր ձևով են ակտիվացնում մկանային խմբերը.

- **Կրոլ** – զարգացնում է հիմնականում ձեռքերի և ուսերի մկանները, ինչպես նաև ազդրերը,
- **Բրաս** – ուժեղացնում է կրծքային մկանները, ոտքերը և մեջքը,
- **Բատերֆլայ** – համարվում է ամենաբարդ ոճը, որը պահանջում է ամբողջ մարմնի ներդաշնակ աշխատանք,
- **Թիկնալող**– հատկապես օգտակար է ողնաշարի համար:

Լողի շնորհիվ ձևավորվում է հավասարակշռված մկանային համակարգ, կանխվում է միակողմանի ծանրաբեռնվածությունը, ինչպես հաճախ լինում է այլ մարզաձևերի դեպքում:

3. Ողնաշար և հոդեր

Ջուրը նվազեցնում է մարմնի քաշը մինչև 90 %-ով, և հենց այս պատճառով լողը համարվում է «անվնաս մարզաձև» հոդերի համար: Այն լայնորեն կիրառվում է՝

- սկոլիոզի կանխարգելման,
- կեցվածքի շտկման,
- վնասվածքներից հետո վերականգնման մեջ:

Լողավարժությունները հիանալիորեն ամրացնում են մեջքի խորը մկանները, որոնք ապահովում են ողնաշարի ճիշտ դիրքը:

4. Շնչառական համակարգ

Լողորդները սովորում են շնչել ռիթմիկ և խորապես: Այդ պատճառով նրանց մոտ նկատվում է թոքերի կենսական ծավալի մեծացում, շնչառական մկանների ամրապնդում և թթվածնի արդյունավետ յուրացում: Այս առանձնահատկությունը հատկապես կարևոր է՝

- ասթմայով տառապող մարդկանց,
- շնչառական խնդիրներ ունեցող երեխաների,
- սպորտով զբաղվողների համար:

5. Կալորիական ծախս և նյութափոխանակություն

Լողը միջին ինտենսիվությամբ այրում է մոտ 500–700 կկալ մեկ ժամում, իսկ բարձր ինտենսիվությամբ կարող է հասնել մինչև 900 կկալ: Դա լողը դարձնում է գիրության դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցներից մեկը:

II. Հոգեբանական և մտավոր ազդեցություններ

Լողը համարվում է նաև հոգեկան առողջության պահպանման հզոր միջոց:

1. Սթրեսի նվազեցում

Ջուրը հանգստացնող ազդեցություն ունի նյարդային համակարգի վրա: Կանոնավոր լողը օգնում է նվազեցնել կորտիզոլի՝ սթրեսի հորմոնի մակարդակը:

2. Ուշադրության կենտրոնացում

Լողի տեխնիկան պահանջում է բարձր կենտրոնացում, շնչառության վերահսկում, ձեռքի և ոտքի շարժումների ներդաշնակեցում: Սա զարգացնում է ուշադրության կայունությունը և հիշողությունը:

3. Դեպրեսիայի և անհանգստության նվազեցում

Լողի ժամանակ արտադրվում են էնդորֆիններ և սերոտոնին, որոնք բարելավում են տրամադրությունը: Բազմաթիվ հոգեբույժներ լողը խորհուրդ են տալիս որպես բուժական միջոց մեղմ դեպրեսիաների և անհանգստության համար:

III. Սոցիալական ազդեցություններ

Լողավազանը միայն մարզվելու վայր չէ, այն նաև հաղորդակցության միջավայր է:

- Երեխաների մոտ զարգանում է թիմային մտածողություն և կարգապահություն:
- Մեծահասակների համար լողավազանը դառնում է առողջ կենսակերպ ունեցող մարդկանց հավաքատեղի:
- Մրցակցային լողը ձևավորում է հաղթելու կամք, աշխատասիրություն և համբերատարություն:

Լողի առողջարարական նշանակությունը շատ մեծ է: Դժվար է գտնել մի այլ մարզաձև, որ այդպես համաչափ է զարգացնում մարդու օրգանիզմը:

Լողորդի բնորոշ առանձնահատկություններից է այն, որ նա ֆիզիկական վարժությունները կատարում է ջրում: Ինչպես հայտնի է, ջուրը

որոշակի ճնշում է գործադրում մարդու մարմնի վրա, շփվում մաշկի հետ: Այս ճնշումն ու շփումը զգալիորեն նպաստում են օրգանիզմի շատ ֆունկցիաների բարելավմանը: Ջրի մեջ նույնիսկ սոսկ ընկղմվելը մի քանի անգամ խթանում է օրգանիզմի որոշ ֆունկցիաների աշխատանքը: Այսպես, օրինակ. շնչառությունը դառնում է հաճախակի, արագանում են սրտամկանի կծկումները, բարձրանում է նյութափոխանակությունը օդի հետ համեմատած մոտ չորս անգամ ավելի: Ջրում կատարվող ցանկացած շարժում ուղեկցվում է դիմադրության հաղթահարումով, որից լողորդը ստանում է զգալի ծանրաբեռնվածություն: Այդ ծանրաբեռնվածությունը, որը բաժին է ընկնում մկանախմբերին և օրգանիզմի բազմաթիվ օրգաններին, նպաստում է նրանց ֆունկցիոնալ հնարավորությունների ընդլայնմանը, բարերար ազդում կեցվածքի և ֆիզիկական զարգացման վրա [5, 5]:

Լողավազանում վարժությունների կատարման ընթացքում ձևավորվում է շարժումների որոշակի ռիթմիկություն, որի շնորհիվ ավելանում է շարժումների դինամիկան, շնչառությունը դառնում է հաճախակի: Թոքերը ավելի հավասարաչափ են ընդարձակվում և լցվում թթվածնով, ինչը նպաստում է շնչառական համակարգի տարբեր հիվանդությունների կանխարգելմանը՝ թոքերի լավ օդափոխման և հավասարաչափ շնչառության շնորհիվ:

Նաև պետք է հիշել, որ լողավազանում պարապմունքների ընթացքում մարդու օրգանիզմի վրա ազդում են որոշակի՝ շփման, դիմադրության և բարձրացման (լողունակության) ուժեր: Այդ բոլոր ուժերից յուրաքանչյուրը դրական ազդեցություն ունի օրգանիզմի մկանային համակարգի վրա, այդ թվում՝ միջթաղանթային (դիաֆրագմայի) մկանների: Որոշակի խորության վրա ջուրը մարդու շարժումներին դիմադրում է օդից 12 անգամ ավելի, իսկ դրա խտությունը մոտ 700 անգամ մեծ է օդի խտությունից: Այդ պատճառով մկանների վրա գործվող աննկատ բեռը օգնում է դրանք պահել լավ տոնուսում և զարգացնել դիմացկունությունը [1, 8; 2, 6; 3,11]:

Այսպիսով, ձևավորվում է շնչառական համակարգի լրացուցիչ մարզում և զարգացում:

Հետևաբար, լողի դրական ազդեցությունը շնչառական համակարգի զարգացման վրա պայմանավորված է խորը և ռիթմիկ շնչառությամբ, ինչպես նաև ջրի ճնշման բարենպաստ ազդեցությամբ մարդու դիաֆրագմայի վրա:

Լողը անփոխարինելի ազդեցություն ունի նաև սրտանոթային համակարգի վրա: Այս դեպքում դրական դեր է խաղում այն հանգամանքը, որ վարժությունները կատարվում են երկու հարթությունում՝ ուղղահայաց և

հորիզոնական: Բացի այդ՝ վարժությունները կարելի է իրականացնել թե՛ խոր, թե՛ մակերեսային ջրում:

Ջրի ճնշումը ենթամաշկային երակային համակարգի վրա, խոր դիաֆրագմային շնչառությունը և մարմնի կիսաթեթև (թեթևության) վիճակը նպաստում են արյան հոսքին դեպի սիրտը և ընդհանուր առմամբ թեթևացնում են նրա աշխատանքը:

Լողի պարապմունքների ազդեցությամբ սրտանոթային համակարգի կառուցվածքում և գործառույթներում տեղի են ունենում դրական փոփոխություններ: Մասնագետները նշում են, որ սրտամկանի ծավալն ու աշխատանքային ուժը մեծանում են, իսկ սրտի զարկերի հաճախականությունը՝ նվազում: Այսինքն՝ մարդիկ, ովքեր տառապում էին տախիկարդիայից, բավական կարճ ժամանակում դադարում են զգալ հաճախակի սրտխփոցներից առաջացած անհարմարությունը: Բացի այդ՝ լողով զբաղվող դեռահասների սրտի սիստոլիկ ծավալը զգալիորեն բարձր է, քան նրանց մոտ, ովքեր սպորտով չեն զբաղվում:

Լողի պարապմունքները դրական ազդեցություն ունեն նաև նյարդային համակարգի վրա. ջուրը հանգստացնող ազդեցություն է թողնում մարդու հոգեէմոցիոնալ վիճակի վրա: Թեթև մթնոլորտը, անհատական մոտեցումը և ճիշտ ընտրված վարժությունների համալիրը հնարավորություն են տալիս հասնել ներքին հավասարակշռության և հոգևոր հանգստության:

Բացի այդ՝ պետք է նկատի ունենալ, որ ջրում կատարվող վարժությունները օգնում են մարմնի ձևի կոռեկցիային: Դա ևս դրական ազդեցություն է ունենում օրգանիզմի բոլոր համակարգերի աշխատանքի և հոգեէմոցիոնալ վիճակի վրա: Երիտասարդները դառնում են ավելի հանգիստ, հավասարակշռված, թուլացած (ռելաքսացված), միաժամանակ բարձրանում է նրանց ինքնագնահատականը, ինչը դրական է անդրադառնում նյարդային համակարգի գործունեության վրա:

Ակվաաէրոբիկայի պարապմունքների առանձնահատկությունն այն է, որ խոր լողավազանում բացակայում է ամուր հենարան. այս դիրքը մեծացնում է շարժողական հնարավորությունները և նպաստում դրանց զարգացմանը: Օրինակ՝ բարձրանում է մարմնի և վերջույթների հիմնական հոդերի շարժունակության մակարդակը: Ջրի հիդրոստատիկ «թեթևությունը» օգնում է ակտիվացնել հեղուկների շրջանառությունը հոդերի շրջանում՝ նվազեցնելով կանգային երևույթները:

Մկանների աշխատանքը հենարանի բացակայության պայմաններում (երբ գերակշռում է դինամիկ կծկման ռեժիմը) նպաստում է վեր-

ջույթների ոսկորներում աճող աճառների (էպիֆիզար աճառների) երկարատև պահպանմանը:

Այսպիսով՝ լողը դեռահասների վրա ունի բազմակողմանի դրական ազդեցություն: Նախ՝ այն օգնում է կանխարգելել օրգանիզմի տարբեր հիվանդությունները, ինչը հատկապես կարևոր է դեռահասության շրջանում: Բացի այդ՝ ջրում մարզումները ամրացնում են սրտանոթային համակարգը, բարելավում շնչառական ֆունկցիան, պահպանում մկանների ուժն ու մաշկի առաձգականությունը: Ջրային վարժությունները դրական ազդեցություն են ունենում հիշողության, ուշադրության և շարժումների կոորդինացիայի վրա:

Գրականություն

1. Աշխարյան Հ. Գ., Լողի ուսուցման և մարզման մեթոդիկա, Երևան, 2008:
2. Աշխարյան Հ. Գ., Զաքարյան Ա. Ա., Լողի ուսուցման և մարզման մեթոդիկա, Երևան, 1994:
3. Միրքյան Վ. Դ., Լողի ուսուցման մեթոդիկա, Երևան, 1989:
4. Абсалямов Т. М. Научное обеспечение подготовки спортсменов. Омск, 2008.
5. Ганчар И. Л. Теория преподавания плавания. Технологии обучения и совершенствования в плавании. Одесса: Астропринт, 2006.
6. Давыдов В. Ю. Отбор в плавании по морфофункциональным и силовым показателям спортсменов разных типов полового развития. Учебно-методическое пособие. Волгоград, 2001.
7. Ермаков В. П., Якунин Г. А. Развитие, обучение и воспитание детей. Справочно-методическое пособие для учителя. Москва, 1990.

Роль и значение плавания в процессе тренировки подростков

Месропян Манук
Факультет социальных наук,
«Физическое воспитание и спортивная подготовка»,
руководитель магистерской диссертации:
кандидат педагогических наук, доцент В. Назарян

Резюме

Ключевые слова: *плавание, спорт, бассейн, физическое развитие, подростки*

В статье уделено внимание плаванию как виду спорта, решающему широкий круг сложных задач. Особое внимание сосредоточено на влиянии плавания на физическое и психолого-эмоциональное развитие подростков. Плавание является важным компонентом воспитания и в настоящее время считается одним из основных элементов мирового спорта и здорового образа жизни. Регулярные занятия плаванием способствуют всестороннему развитию человека – от укрепления тела до достижения умственного и эмоционального равновесия.

The Role and Importance of Swimming in the Training Process of Teenagers

Mesropyan Manuk
Faculty of Social Sciences,
"Physical Education and Sports Training",
Academic Supervisor: V. Nazaryan,
Candidate of Pedagogical Sciences, Associate Professor

Summary

Key words: *swimming, sport, swimming pool, physical development, teenagers*

The article examines swimming as a sport that addresses a wide range of complex developmental challenges. Particular attention is paid to its influence on the physical and psycho-emotional development of adolescents. Swimming is regarded as an essential component of education and is widely recognized as a fundamental element of global sport and a healthy lifestyle. Regular engagement in swimming promotes comprehensive personal development, contributing not only to physical strengthening but also to the achievement of psychological well-being and emotional balance.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Վարդանյան Հայարփի
Մեքենայական ուսուցման մեթոդների միջոցով գրական տեղծագործություններն ըստ ժանրերի դասակարգող համակարգի նախագծում 8

ՔԻՄԻԱ

Կոծինյան Տաթևիկ
Քիմիա առարկայի դասավանդման պրոցեսում գունավոր ռեակցիաների ուսումնասիրությունը և կիրառումը ավագ դպրոցի բնագիտական հոսքում 22

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հակոբյան Լիլիթ
Ռուսական դիվանագիտությունը ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին 38

Հակոբյան Մերգեյ
Մասոնության ծագումը Ռուսաստանում և նրա ազդեցությունը ներքաղաքական զարգացումների վրա 52

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Սողոմոնյան Նարեկ
ՀՀ համայնքների կառավարման հիմնախնդիրները և զարգացման հնարավոր ուղիները միջազգային փորձի համատեքստում 66

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Մինասյան Էմմա
Նախադպրոցական ուսումնական հաստատությունների կառավարման խնդիրները 79

Պողոսյան Գայանե
Դպրոցի կառավարման մոդելները 90

Վարդանյան Մանյա
Դպրոցական կոլեկտիվի ձևավորման մանկավարժական պայմանները 102

Օլքինյան Ջուլիետա
Հանրակրթական դպրոցում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը որպես ուսուցման

արդյունավետության պայման..... 111

Ֆիդանյան Մերի
Դպրոցի տնօրենի ղեկավարման ոճի ազդեցությունը
որոշումների կայացման վրա..... 119

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Աբովյան Նարինե
Սթրեսակայունության և ապրումակցման
ուսումնասիրությունը բժիշկների մոտ..... 130

Մխիթարյան Միլենա
Աբյուզինգի դրսևորման առանձնահատկությունները
ամուսնական հարաբերություններում 139

Ներսիսյան Սուսաննա
Արտթերապիայի պրակտիկ կիրառումը տագնապայնության
բարձր մակարդակ ունեցող կրտսեր դպրոցականների հետ..... 155

Սարգսյան Գոհար
Աշխատանքային նախաձեռնողականության և աշխատակազմի
հոգեբանական մթնոլորտի միջև փոխկապվածությունը 163

Սիմոնյան Միլենա
Մանիպուլյացիայի ուսումնասիրությունը դեռահասների մոտ..... 170

Սուքիասյան Ռուզաննա
Դեռհասների հոգեհուզական վիճակների առանձնահատկությունները 179

Տիգրանյան Նունե
Զարգացման խնդիրներ ունեցող կրտսեր դպրոցականների հոգեբանական
առանձնահատկությունները..... 185

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԵԹՈԴԻԿԱ

Գրիգորյան Աննա
Դիվերգենտ մտածողության զարգացումն ուսուցման գործընթացում 196

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

Բեգլարյան Սասուն
Սպորտի կառավարման գործընթացների արդյունավետությունը 203

Մարտիրոսյան Լիա
«Շախմատ» առարկայի ուսուցման ժամանակակից մեթոդաբանությունը՝
հիմնված ՀՊՉ-ի պահանջների և ինտերակտիվ մոտեցումների վրա 212

Մեսրոպյան Մանուկ
Լողի դերն ու նշանակությունը պատանիների մարզման գործընթացում 219

СОДЕРЖАНИЕ

ПРОГРАММНАЯ ИНЖЕНЕРИЯ

Варданян Айарпи
Проектирование системы жанровой классификации литературных произведений с использованием методов машинного обучения 8

ХИМИЯ

Коцинян Татевик
Изучение и применение цветных реакций в процессе обучения предмета химии в старших классах естественнонаучного профиля 22

ИСТОРИЯ

Акопян Лилит
Русская дипломатия во время Французской революции 38

Акопян Сергей
Зарождение русского масонства и его влияние на развитие политической мысли 52

ОБЩЕСТВЕННОЕ УПРАВЛЕНИЕ

Согомонян Нарек
Проблемы управления общинами в Республике Армения и возможные пути развития в контексте международного опыта 66

УПРАВЛЕНИЕ ОБРАЗОВАНИЕМ

Минасян Эмма
Проблемы управления дошкольными образовательными учреждениями 79

Погосян Гаяне
Модели управления школой 90

Варданян Маня
Педагогические условия формирования школьного коллектива 102

Олкинян Джулиета
Использование информационно-коммуникационных технологий в общеобразовательной школе как условие эффективности обучения 111

Фиданян Мери
Влияние стиля руководства директора школы
на эффективность принятие решений 119

ПСИХОЛОГИЯ ЛИЧНОСТИ И ПСИХОЛОГИЧЕСКОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ

Абовян Нарине
Исследование стрессоустойчивости и эмпатии у врачей..... 130

Мхитарян Милена
Особенности проявления насилия в супружеских отношениях..... 139

Нерсисян Сусанна
Практическое применение арт-терапии с младшими школьниками
с высоким уровнем тревожности 155

Саргсян Гоар
Взаимосвязь трудовой инициативы и
психологического климата в коллективе 163

Симонян Милена
Исследование манипуляций у подростков 170

Сукиасян Рузанна
Особенности психоэмоционального состояния подростков 179

Тигранян Нуне
Психологические особенности младших школьников с проблемами развития 185

ШКОЛЬНАЯ ПЕДАГОГИКА И МЕТОДИКА

Григорян Анна
Развитие дивергентного мышления в процессе обучения..... 196

ФИЗИЧЕСКОЕ ВОСПИТАНИЕ И СПОРТИВНАЯ ПОДГОТОВКА

Бегларян Сасун
Эффективность процессов спортивного менеджмента..... 203

Мартиросян Лия
Современная методика преподавания предмета «Шахматы» на основе требований
Государственного стандарта общего образования и интерактивных подходов 212

Месропян Манук
Роль и значение плавания в процессе тренировки подростков 219

CONTENTS

SOFTWARE ENGINEERING

Vardanyan Hayarpi
Design of a Genre Classification System for Literary Works
Using Machine Learning Methods 8

CHEMISTRY

Kotsinyan Tatevik
Study and Application of Color Reactions in the Process
of Teaching Chemistry in Senior Classes of the Natural Science Profile 22

HISTORY

Hakobyan Lilit
Russian Diplomacy during the French Revolution 38

Hakobyan Sergey
The Origin of Russian Freemasonry and its Influence
on the Development of Political Thought 52

PUBLIC MANAGEMENT

Soghomonyan Narek
Community Governance Challenges in the Republic of Armenia and
Possible Development Paths in the Context of International Experience 66

EDUCATION MANAGEMENT

Minasyan Emma
Challenges in the Management of Preschool Educational Institutions 79

Poghosyan Gayane
School Management Models 90

Vardanyan Manya
Pedagogical Conditions for the Formation of the School Team 102

Olkinyan Julieta
The Use of Information and Communication Technologies
in Comprehensive Schools as a Condition for the Effectiveness of Learning 111

Fidanyan Meri
The Influence of the School Principal's Leadership Style
on Decision-Making 119

PERSONALITY PSYCHOLOGY AND COUNSELING PSYCHOLOGY

Abovyan Narine
Study of Stress Resilience and Empathy among Physicians 130

Mkhitaryan Milena
Characteristics of Violence in Marital Relationships 139

Nersisyan Susanna
Practical Application of Art Therapy with Younger Schoolchildren
with High Levels of Anxiety 155

Sargsyan Gohar
The Interrelation between Employee Initiatives
and the Psychological Climate of the Staff 163

Simonyan Milena
Study of Manipulation in Adolescents 170

Sukiasyan Ruzanna
Peculiarities of the Psycho-Emotional State of Adolescents 179

Tigranyan Nune
Psychological Characteristics of Primary School
Children with Developmental Problems 185

SCHOOL PEDAGOGY AND METHODOLOGY

Grigoryan Anna
Developing Divergent Thinking in the Learning Process 196

PHYSICAL EDUCATION AND SPORTS TRAINING

Beglaryan Sasun
The Effectiveness of Sports Management Processes 203

Martirosyan Lia
Contemporary Methodology for Teaching the Subject “Chess”
Based on the Requirements of the State Standard of
General Education and Interactive Approaches 212

Mesropyan Manuk
The Role and Importance of Swimming
in the Training Process of Teenagers 219

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՄԱԳԻՍՏՐՈՍ

2

ՎԱՆԱՁՈՐ
2025

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ,
КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ФОНД «ВАНАДЗОРСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ О. ТУМАНЯНА»

МАГИСТР

2

ВАНАДЗОР
2025

RA MINISTRY OF EDUCATION, SCIENCE,
CULTURE AND SPORT

“VANADZOR STATE UNIVERSITY
NAMED AFTER H. TUMANYAN” FOUNDATION

MASTER STUDENT

2

VANADZOR
2025

Լեզվական խմբագիրներ՝ *Վալերի Փիլոյան, Զառա Ալեքյան*
Համակարգչային ձևավորումը՝ *Աշխեն Գալստյանի*

Языковые редакторы: *Валерий Пилоян, Зара Алекян*
Компьютерное оформление: *Ашхен Галстян*

Linguistic Editors: *Valeri Piloyan, Zara Alekyan*
Computer Design: *by Ashkhen Galstyan*